

ՆԱՐ ՏՐԵՎՈՒ

Ի ՏՈՒՐԻ

# ՄՈՒՀԱՅԻՆ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՏԵԿԱՆ ԵԽ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՄՌՈ Ա. ԳԻՐ

№ 10

ՀԱԿՏԵՄԵՐ

1901

ԹԻՖԼԻՍ

Տպոգրաֆія Груз. Издат. Т—га. | Տպարան Վրաց. Հնկերութեան.  
1901

## № 10

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.	ՀԱԼՈՒՑՐԻ ՈՐՍԸ, պումա, Վ. Միրամենի	5
2.	ԹՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԵՍՎԱԼՈՄՈՒԹԻՒՆ, Խաժակի	31
3.	ԱՊԱՐԱՆԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԻ, յօդ. Ս. Մ. Թասհակեանի	41
4.	ՖՐՈՄՈՆ ԿՐՏՄԵՐ, վէտ, Ալֆ. Դոգէի, թարգմ. Տ. Յ.,	56
5.	ՏԵԵԶԵՐՔԻ ԵՒ ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ, էրնստ Հևկէլի,	
	թարգմ. Ս. Տ. Գասպարեանի	88
6.	ԲԻԵՇՆՍՍՈՒՆ, յօդ. Ե. Թոփչեանի	97
7.	ԳԻՒԳԻ ՄՈՒԹԻՒԿ, Ա. Հողից կարուածներ, Լիօնի	113
8.	ԹԱՄԱՐ, բանասոռ. Լերմօնտովի, թարգմ. Ալ. Ծաւ-	
	տուրեանի	171
9.	ԱԼԻՔՆԵՐ ԵՒ ԽՈԿՈՒՄՆԵՐ, բանասոռ. Ալ. Ծաւու-	
	րեանի	173
10.	ՄԱՍՈՒԼԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ, յօդ. Ե. Թ.	174
11.	ՄԵՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ.—(4) „Պատակ”, Լ. Ա.—(4) Մ. Յով-	
	հաննիսեան, «Փենակ. Պատմութիւն», Ա. Ա.—(4) Նիկ.	
	Տէր-Անոնդեանի „Մալրենի Լեզու”, Ա. ա., Հար.—	
	46) Յ. Արարածեանց. „Մալրենի Լեզու”, Ա. ա., Հար.—	
	—(47) Յ. Ավալով, „Իրաց. Գրյուն և՛՛ Ռուսիա”, Լ.—(48)	
	Յ. Բուդուկեանի վերջին զրքուիները, բժ. Վ. Ա.	183
12.	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ; «Հողային տուրքը» և հարկերը	
	Կովկասում, Գլ. VII. Տնտեսական անհասասարութեան	
	պատճառները. Անհատառարութեանը վերջ զնելու զրծ-	
	տարութիւնները.—Հարկային սիստեմի բարեփոխու-	
	թիւնը իրու սոցիալական հարցի լուծման միջոցներից	
	մէկը.—Պրօդրեսսի և ժառանգութեան տուրքերի սկըզ-	
	բոնքը.—Ելի տուրքերի չափն ու նշանակութիւնը	
	անդիմական երկիրների, Գերմանիայի, Ֆրանսիայի	
	համար Գրանց գարգանուլը նուսասաւանում.—Ճառան-	
	զութեան, «բնակարանների», «ալղինարերութեան	
	և ապագանազրերի» պրօդրեսսի ընաւորութիւն ունեցող	
	տուրքերը. Գլ. VIII. «Հողային տուրքի» ղերը հարկերի	
	անըլի արգարացի բաժանման վերաբերմամբ.—Նիսուա,	
	Գեշրու, Աշտարակ, Խաղեան և Եռուաւէր զիւղերի օրի-	
	նակները.—Հողային տուրքը սկիզբն է կարողութեան և	
	պրօդրեսսի անելի արդարացի տուրքերի.—Վերջի ձեւի	
	տուրքերը անհրաժեշտ են նաև մի քանի արդարացի	
	«աղաթների» վերանալու պատճառով.—Ելի սովորու-	
	թիւնների բացակայութիւնը կարելի է միայն լրացնել	

Նոր շրջան I տարի

Հրատ. XIII տարի

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱՎԿԱՆ ԵԽ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա.Մ.Ա.Գ.Ի.Բ

№ 10

ՀՈԿՏԵՄԲԵՐ

1901

ԹԻՖԼԻՍ

Տիպոգրաֆія Груз. Издат. Т—ва. | Տպարան Վրաց Հրատ. Ընկերութեան.  
1901

Дозволено цензурою Тифлисъ, 22-го октября 1901 г.

## № 10

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.	ՀԱԼՈՒԱՐԻ ՈՐՍԸ, պօէմա, վ. Միրաբեանի	5
2.	ԹՐՔՈԿԱՆ ՀԱՄԻՍԼԱՄՈՒԹԻՒՆ, Խաժակի	31
3.	ԱՊՈՐԱՆԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ, յօդ. Ս. Մ.-Դսահակեանի	41
4.	ՖՐՈՍՈՆ ԿՐՏՍԵՐ, վէպ, Ալֆ. Դոգէի, թարգմ. Տ. Յ., թարգմ. Տ. Յ., 56	
5.	ՏԻԵԶԵՐՔԻ ԵՒ ԵՐԿՐԻ ԶՈՐԳԱՑՈՒՄԸ, էրնատ Հեկկէլի,	
	թարգմ. Ս. Տ.-Դասպարեանի	88
6.	ԲԻԵՇՆՍՈՆ, յօդ. Ե. Թոփչեանի	97
7.	ԳԻՒՂԻ ՄԱՐԴԻԿ, Ա. Հողից կարուածներ, Լեօփ	113
8.	ԹՈՄՄԾ, բանաստ. Լերմօնտօվի, թարգմ. Ալ. Ծառեանի	171
9.	ԱԼԻՔՆԵՐ ԵՒ ԽՈԿՈՒՄՆԵՐ, բանաստ. Ալ. Ծառեանի	173
10.	ՄԱՄՈՒԼԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ, յօդ. Ե. Թ.	174
11.	ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—45) „Վասկ“, Լ. Ա.—44) Մ. Յովհաննիսեան, «Քննակ. Պատմութիւն», Սօ. Մ.—45) Նիկ. Տէր-Ղևոնդեանի „Մայրենի Լեզու“ Ա. տ., Հար.—46) Յ. Արարաշեանց. „Մայրենի Լեզու“, Ա. տ., Հար.—47) Յ. Ավալու, „Պրւ. Ռցաւ ու Ռուսիա“, Լ.—48) Բժ. Բուղուղեանի վերջին դրէպէկները, բժ. Վ. Ա. .	183
12.	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ, «Հողային տուրքը» և հարկերը Կովկասում. Գլ. VII. Տնտեսական անհասասարութեան պատճառները.—Անհաւասարութեանը վերջ դնելու դժու- ռարութիւնները.—Հարկային սիստեմի բարեփոխու- թիւնը իրեւ սօցիալական հարցի լուծման միջոցներից մէկը.—Պօզրեսսի և ժառանգութեան տուրքերի մէրգ- րունքը.—Այդ տուրքերի չափն ու նշանակութիւնը անգլիական երկիրների, Կերմանիայի, Ֆրանսիայի համար: Դրանց զարգանալը Ռուսաստանում.—«Ժառան- գութեան», «բնակարանների», «արդինարերութեան» և «պարմանագրերի» պրօդրեսսի բնաւորութիւն ունեցող տուրքերը: Գլ. VIII. „Հողային տուրքի“ վերը հարկերի աւելի արդարացի բաժանման վերաբերմամբ.—Ախոսա, Գեղրու, Աշոտարակ, Սաղեան և Շուլաէր զիւղերի օրի- նակները.—Հողային տուրքը մկիզըն է հարողութեան և պրօդրեսսի աւելի արդարացի տուրքերի.—Վերջի ձեմ տուրքերը անհրաժեշտ են նաև մի քանի արդարացի դադաթների՝ վերանալու պատճառով.—Այդ սովորու- թիւնների բացակայութիւնը կարելի է միայն լրացնել	

Համապատասխան օրէնքներ հրատարակելով.—Մինչև այդ, կարելի է օգտուել համարնքների լայն իրաւոնք- ներից, բաժանել հարկերը համայնքի հայեցազոթեամբ. —Մեր ինտելիգենցիայի ղերը հարկալին խնդրի բարե- կարգման գործում, Ա. Զաւարեանի . . . . .	200
13. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՏԱՀԻՑ, Հայոց թատրոն, Լ. Ս. . . . .	220
14. ՏՆԱՑՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՑՈՒՄ, Ե. Թ. . . . .	224
15. ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խօսք և գործ.—Ցուցահանդէսի ա- ռիթով կալացած ժողովներ.—Իրաւաբանական օգնու- թիւն ազգաբնակութեան.—Գեղարուեստական զպրոցի նշանակութիւնը.—Բագուի առևտրական զպրոցը.—Մեր հասարակութեան քնքուշ վերաբերմունքը դէպի կեղծ մանկները.—Հաղորդակցական միջոցների սպակառու- թիւնը մեր երկրում.—Հեղուկ վասելիքի անմատչելիու- թիւնը մեր գաւառական գործարանների համար.— „Նեճքայ“ շարաթաթերթի խափանումը.—Բարձրագոյն բէսկրիպտ, Լեւոն Ստրզեման . . . . .	238
16. ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ. Գեղջկուհին Արարատեան դայտում, Ա.—ԴՕ . . . . .	246
17. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ըուդոլֆ Վիրխով իբրև մարդ- կութեան կատարեալ տիպար.—Աւտոպիաների նշանա- կութիւնը.—Վիրխովի քաղաքացիական առաքինութիւն- ները.—Վիրխովի մի հակապատկերը.—Միսս Ստոնի ա- ռևանգումը իբրև մակեղօնացիների բողոք քաղաքա- կիրթ աշխարհի անտարբերութեան դէմ, Լ. Ս. . . . .	252
18. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ. . . . .	256
19. ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ. . . . .	263
20. ՅԱՅՏԾՈՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. . . . .	266
21. ՅԱԻԵԼՈՒԱԾ. «ՅԱՐՈՒԹԻՒՆ», Վէպ Լ. Տօլստօյի, թարգ- Տ. Յովհաննիսեանի . . . . .	289—296

# ԷԱԼՈՒԱՐԻ ՈՐՍԸ

(Պօեմա)

I

Ծագում է մանուկ արել գարնան  
Կովկաս լեռների ձիւնի պատնէշից,  
Զարթնում են մէկ-մէկ սարերն աննրման  
Զմրան անվրդով քնի մըշուշից.  
Ահա Լալուարի<sup>1)</sup> վիթխարի ուսին  
Բազմում է արփին թարմացած ոյժով,  
Սարեր ու ձորեր իրար երեսին  
Նայում են, ժըպառում ամպի մըշուշով...  
Վերջին ձիւներն էլ ահա հալ ընկան,  
Աբտասուց իսկոյն լեռների հըսկան.  
Ամեն մի ձորից աղբիւր է հոսում,  
Ամեն մի թըփից բիւլբիւլ է խօսում.  
Եւ դալար հովիտ, և՛ ժայռի կըրծքեր,  
Արձագանք տալով գարուն են հընչում.  
Զըմրան փարախից հովուական երգեր  
Զեփիւռի թեռվ սարերն են թոչում.  
Ծաղկալից աշխարհ անվերջ ձորերի  
Բացւում է, ժըպառում կոկոնից զուարթ,  
Փարթամ զեզութեան ոգին Գուզարքի  
Նընչում է գարնան բոյրով անարատ.  
Ամպերն էլ իրար համբոյրներ տալով,  
Զըւում են կայտառ, Լալուարը զըրկում,  
Առաջին անգամ թունդ որոտալով,  
Գուզարք աշխարհին ողջոյն են երգում.  
Եւ հայրենիքում վայլակ-կայծակի  
Գիշերուայ զըռշմած գաղանի համբոյրներ,

1) Լոռուայ ամենաբարձր սարլու  
Հոկտեմբեր, 1901.

Երգում են երկրին սէրը երկնքի,  
Դողում են սիրուց սարեր ու ձորեր.  
Եւ խորհրդաւոր մի թովիչ ձայնով  
Խօսում են նրանք իրար հետ փարւում,  
Երգում են, խրնգում, հազար բերանով  
Լալուարի վիթխար հասակը գովում:

Ահա գարնան հետ և շարան-շարան  
Դաշտավայրերից գէպի զով սարեր  
Ջըգուեց սայլերի, ուղտերի քարուան—  
Փախչում են շոփից թէ թուրք, թէ հայեր,  
Թընդում են ձորում զանզի հընչիւններ,  
Զիերի խրխինջ, պայտերի գոփիւն,  
Մէկ-մէկի կրցած անվերջ քարուաններ  
Քաշում է նառը, ահեղ մընչում.  
Ո՞րը տանում է ալաշխի<sup>1)</sup> քեչան,  
Կուժն ու խնոցին, ճիպուն ու չաթան<sup>2)</sup>,  
Ո՞րն էլ զարդարուած գիր<sup>3)</sup> ու փընջերով.  
Օրօրւում, անցնում լեսան լանջերով.  
Բայց նառն ինքնագոն քայլում է հանդարտ  
Բոժոժ ու զանգեր վրգին ու կըրծքին  
Եւ օրօրելով կապերոներ ու զարդ,  
Գեղեցիկ հարսն է նա տանում մէջքին.  
Մերթ բարկանալով, կանգնում է հըպարտ,  
Մերթ փրփուր թափում կատղած բերանով,  
Մերթ երկար շուրթը կախելով բարդ-բարդ,  
Նա պարծենում է գեղեցիկ բեռով:  
Բոնել է ճամփէն թունդ իրարանցում,  
Դոփում են ձիեր, սանձերը կըրծում—  
Ազնիւ մետաքսից ոսկեթել գործած,—  
Ազաջարիներ<sup>4)</sup> թամբերին զըցած,  
Հուժկու կըրծքերից կապած թալիսման<sup>5)</sup>  
Արևելեան ճոխ արծաթն ու ոսկին;  
Ճերմակ զաթիպան, քօղն տմպի նման  
Փըռփըռում են գեղ հարսների գէմքին:

1) Հովուական վրանի մեծ տեսակը:

2) Բարակ ճիպասներից հիւսած վրանի շրջասլառ:

3) Թղթերում կարած՝ չար աչքից սակահովով աղօթքներ:

4) Մետաքսից գործուած ձիու ծածկոց:

5) Թղթերում կարած՝ չար աչքի զէմ աղօթքներ:

Լեռների տօնն է, մարդ և անասուն  
Ուրախ երգերով գիմում են սարեր,  
Մոռնալով ձրմրան քաշած վայնասուն,  
Ծաղիկ վնջելով անցնում են ձորեր.  
Անցնում են արագ քոչ-քոչի միջով.  
Գարնան արեից փայլում են զէնքեր,  
Եւ թարմ կենաւրոյք թաւիչ կանաչով  
Բայցում են, ժրպառում սարուորի գէմքեր.  
Փարբիկ երեխոն արինդ մէջքին կապած՝  
Խեղճ հովուք կինն էլ վաղում է սաքով,  
Օգնում է մարգուն՝ գոհ և սրտաբաց  
Բախտի որոշած ծանըր վիճակով.  
Մայում են, բայցում զառն ու մաքին,  
Թընգում կավերի, հորթերի բառաչ.  
Իսկ ալրտօննալով գոմէջը ձագին  
Կանչում է զանգաղ վազելով առաջ.  
Վազում են յոպնած շըները հօտի  
Եւ լեզուն հանած թանչին են տալիս.  
Լըսուում է յանկարծ ձայնը լակոտի,  
Որ քոչից ընկած կալանչ է զալիս:

Քարուանի ծայրը սարերը հասաւ,  
Հասաւ ու ձուլուեց թուխ ամպերի հետ.  
Վըրան-վըրանի յետից բըսաւ  
Ծաղիկների մէջ զոյն-զոյն սիրաւէտ.  
Ալաչուխ, դադա <sup>1)</sup>, անվերջ վըրաններ,  
Շըրջան կազմելով սառն ազրի ավին,  
Ինչպէս ծեր արծուի կարկատած բըներ,  
Յենուեցին մէկ-մէկ բարձըր քարափին.  
Դաշտեցի հայն էլ սառ ջրի կարօտ՝  
Եկել է, զըրել բինչն այս տմառ  
Լօք <sup>2)</sup>, Լալուար, Լեջան <sup>3)</sup> աղբիւրների մօտ,  
Շոքերից ազատ ազրելու համար:  
Գուգարք սարերի սիզաւէտ լանջին  
Բազմել են հայի, թուրքի բինոներ,  
Բայց գարձեալ խանուած քոչ-քոչի միջին՝  
Դեռ երերում են ուղտի քարուաններ:

<sup>1)</sup> Հովուական վրանի փոքր և հասարակ տեսակը:

<sup>2)</sup> Կօռուաչ սարերից մէկը:

<sup>3)</sup> Կօռուաչ սարերից մէկը:

Խըրինջում է ձին, կովը բառաշամ,  
Բոլորն էլ իրանց իւրան են ճանաչում.  
Մայում է անուշ ամլիկը<sup>1)</sup> գառան,  
Սարեր ու ձորեր նորից կեանք առան:

Գիշերը հասաւ. մըթին է ճամփան.  
Մարում է կամաց աղմուկը քոչի.  
Առուակի ափին քարուաններն իջան.  
Կանչում են՝ «տըլիրք, ապրանք չը կորչի»:  
Զիւրի ջոկնը, ուզտերի քարուան,  
Սայլերի ճըռոսց, ոչխար ու տաւար  
Գըսնելով ձորում գիշերն իջևան,  
Հանգիստ են առնում միւս օրուան համար:  
Կըրակի վըրայ առուակի ափին  
Մի տեղ ընթրիք են շատայ պատրաստում,  
Մի տեղ էլ կորած գառանն ու նորթին  
Սար ու ձոր ընկած հովիւն է կանչում.  
Մի այլ տեղ ուրախ շրջան բոլորած՝  
Ուտում են նըրանք կաթն ու խորոված.  
Գիշերն էլ արդէն մնջում է, լրում,  
Յոգնած քոչուորին հանգիստ քուն բերում.  
Միայն մի կով է գարձեալ բառաշում  
Եւ քունը կըտրած հորթուկին կանչում.  
Լըսելով նըրան գիշերն անդադար,  
Հեռում է տըխուր ծերունի անսոառ:  
Ամպի փէշերը կախած մի ծայրին՝  
Լալուարն էլ կարծես նայն վիշտն է զգում,  
Ինչպէս վիրաւոր արծիւր ժայռին,  
Թիւերը փոած քոչուորին հոկում:  
Բայց Լօք սարերի կանաչ լանջերում  
Մի բինա էլ կայ, որ դեռ չի քընում.  
Այնտեղ խարոյէի շուրջը բոլորած՝  
Տեսած ու լրած արկածն են պատմում,  
Եւ մեծ ու փոքրը ականջներ լարած՝  
Աշուղ Գիքօյի երգերն են լլսում.  
Պատմում է, երգում աշուղն անցեալից,  
Զորերում տեսած հին իգիթներից.

1) Մօր հետ անբաժան ապրող և ծծող դառն

Կըրակին զըցած կաղնի մեծ գերաս՝  
Սարւորն էլ արթուն լրսում է նըրան։  
«Լըսել էք, արդերք, ում ալաչուին է  
Լալուարին բազմած արծուի նըման։  
Լըսել էք՝ էն ում օջաղի ծուխն է  
Խեղճ ու նաշարին միշտ լինում զարման<sup>1)</sup>։  
Լըսել էք՝ ինչպէս բաղէն ինքնակամ  
Նըրանից ազատ որս չի պըտըրտում։  
Նըրա մի ձէնը, անունը անգամ  
Մարդուն, հարամուն սարսափ ևն ազդում։  
Եւ ուզում է միշտ ամեն մի սարուոր  
Էն ալաշուխին լինել դրացի։  
Յիշելով նըրա տիրոջն ալեսր,  
Առանց օրհնելու չի նըստում հացի»։

Տըղերքն զմայլած աշուղի սազով՝  
Փարուեցան նըրա զառամած վըզով։  
—«Շատ բան ենք լսել Աւաղի մասին,  
Բայց դեռ կարօտ ենք նըրա երեսին։  
Քընած թէ արթուն, թէկուզ երտզում  
Ամենքն էլ նըրա մասին ևն խօսում։  
Պատմում են ահով դաշտին ու սարին,  
Թէ ինչպէս է նա պատժում միշտ չարին,  
Թէ ինչպէս էրէն փախչելիս հովտում  
Հեռուից էլ նըրա ձէնն է ճանաչում։  
Բայց, ապի, ապի, չենք տեսել նըրան,  
Երզիր Աւաղից միքանի բերան։  
Մենք կը տանք առատ քեզ եղ ու պանիր,  
Դու իգիթներին լաւ գովաբանիր»։  
Եւ նա լարելով նորից սիմերը,  
Երդում է՝ որքան քաջ են հըները։—  
«Աւագ որսկանի անունն է մենակ  
Սարերին յայտնի ամեն մի մարդու։  
Աւագ-որսկանի ձէնն է մինակ  
Լալուարին զոռող որսաից ազդու։  
Մանուկ օրերից նա որբ մընալով,  
Ապրել է ինչպէս ուս ամպը սարին։  
Օրօր է երգել քամին սուլելով  
Եւ նա նընջել է մամուստած ժայռին։

<sup>1)</sup> Դեղ։

Մըթին ձորերի ահաւոր կիրճում  
 Սիրել է թանձրը վառօղի ամպեր.  
 Ուր փայլակ-կայծակ մահ են շառչում,  
 Գըրկել է կայտառ սըլաք ու շանթեր.  
 Բնկերն է եղել մի հին հըրացան,  
 Իսկ անուշ երգը՝ զբնդակի բըզզոց,  
 Թըչնամու ջարդը ահից ցիրուցան,  
 Հարան-տարանը և տուր ու դրմից  
 Թէ նա ծեր է ուժուն տարեկան,  
 Բայց նըրա նման չը կայ մի որսկան.  
 Աչքի լուսի պէս զեռ զէնք է սիրում,  
 Երկնքի ծողիցն էլ նա որս է բերում.  
 Դեռ հեծնում է նա ձին արազավազ,  
 Սև ամպերի հետ թոչում սար ու ձոր,  
 Դիտելով լուսնի սահը նաղէնազ,  
 Յիշում իր թափած արիւնը ծոր-ծոր.  
 Անցնում է ձըզուած անտառի խորքում  
 Նեղ օձապըտոյտ ժայսոտ կածանը,  
 Որից հսում է, առուն ալիշըկում  
 Կամ թէ զըզըրդում խուլ հըրացանը,  
 Ուր միշտ ծարաւի թըչնամու արեան՝  
 Նա թափառելով զիշերը անահ,  
 Մըռայլը գէմքին գրժոխիքի նըման  
 Նամարդի<sup>1)</sup> համար պատրսստել է մահ»:  
 Չիրուխի վըրայ կըրակ զընելով,  
 Աշուղը կըրեց իր երգի թելր.  
 Իսկ մէկն էլ այսովէս նըրան հարցնելով,  
 Կըրակին զարսեց նորից փայտերը:

— «Բա, մափի, մապի, զես չես խմացել,  
 Մի նոր իգիթ կայ սարերը ընկած,  
 Աւագ-որսկանից յետ չի մընացել,  
 Դեռ նըրա պէս զող աշխարհ չի եկած.  
 Զահէներիս մէջ նըրա հասակում  
 Ոչ ոք չի եղել էնավէս զընորհուի,  
 Ասածու զիշերը անցնում է, զարկում  
 Ամենահարուստ բէկի օբէքով.

<sup>1)</sup> Տմարդի:

Արիւն է կաթում էն օրը սըրտից,  
Թէ որ չի թոցնում ձի, տաւար, հանգից.  
Ոչ ազգ ունի նա, ոչ տէր ափրական.  
Կարօ է նըրա անունն իսկական.  
Բայց մարդ չի մընում որ չը թալանի,  
Թուրքիրն ասում են «Դալի-էրմանի»<sup>1)</sup>.  
Ել նըրա ահից հարան-տարանից  
Հեռու չեն քըշում ասլրանքը տանից»:

Մինչդեռ խօսում էր Կարօյի մասին  
Վաս յափշտակուած երիտասարդը,  
Աշուղը կանչեց, դարնելով սազին,  
Դէ, տեսէ՞՞ որն է քաջ արդամարդը.—  
«Լըսել եմ, զիտեմ էղ աւազակին  
Բայց ուր գող Կարօ, ուր Աւագ-որսկան.  
Աւագն է՝ ինչպէս Լալուարն ահազին,  
Կարօյի նըման բըլուրներ շատ կան.  
Թէ՛ մարդիկ է Կարօն կողոպտում,  
Զի, տաւար հանգից քըշում ու փախչում,  
Բայց դաք ջահել էք, Աւագ-որսկանին  
Ինչպէս որ հարկն է չէք ել ճանաչում.  
Կարօյի նըման ձիու դողերին  
Նա իսկի մարդու աեղ ել չի դնում:  
Որսկան եմ ասում ոչ թէ արջերի,  
Որ տանձ ուտելով ապրում են մէրում.  
Որսկան եմ ասում նամարդ թիւրքերի,  
Որ հայրենիքին փորձանք են բերում.  
Որսկան եմ ասում, որ գող ու չարին  
Մատազ է անում կարմիր զընդակին.  
Որսկան եմ ասում, որ խեղճ-նաշարին  
Պահում է սիրով իր թեփ տակին.  
Որ ինչպէս ձիւնը ամպամած սարին  
Գըլուին չը թեփած նամարդի սըրին՝  
Մի զաս է ասել լեռներից զաժան—  
Արեան վըրէժը արիւնով առնել,  
Քընած թէ արթուն դէնքից անբաժան՝  
Հայրենի սիրով ասլրել ու մեռնել,  
Որի ձէնիցն էլ զրնզակ է բըզզում,  
Անցած ձորիցն էլ արիւն է հոսում,

<sup>1)</sup> Գիծ հայ:

Եւ միշտ վասոցն է ամպերով բուրռում,  
Ինչպէս սրբազնի խունկը տաճարում  
Բայց և բարի է Աւագ-որսկանը—  
Խօսքը՝ օրէնք է, գործը՝ յաղթութիւն.  
Նա տարածում է դուրսը թէ տանը  
Իր ազգու ձէնով սէր ու հաշտութիւն»:  
Երբ խաչ-համելով սուրբ պատկառամբով  
Ծերը վերջացրեց երգը օրհնանքով,  
Տըղերքը նորից խնդրեցին նըրան.  
—Ապի ջան, ապի, երգիր որսկանից.  
Սիմերդ անուշ, դու քազցրաբերան,  
Մենք չենք հեռանալ քո սազի ձէնից:

«Աւագ-որսկանի արած գործերը  
Շատ են ու երկար», սկսեց ծերը,  
«Բայց ևս կը պատմեմ շատերից մէկը,  
Թէ ինչպէս փախաւ որսկանից բէկը.  
Սըրանից կը լինէր տաս տարուց էլ վազ  
Դըրացի էր մեզ Սալմանի օրէն<sup>1)</sup>  
Թալանում էր նա հային աջ ու ձախ,  
Աղա էր նըրա ամեն մի գեաղէն<sup>2)</sup>:  
Մի օր գուրս եկաւ Սալմանի բուղէն<sup>3)</sup>,  
Գոռալով վազեց ինչպէս հըրեղէն.  
Եկաւ որ քըշի մերին տաւարից,  
Մերն էլ բարկացած նըրա հաւարից  
Միքիչ կովերից գընաց, հեռացաւ,  
Բուղագոռ տալով, նըրան մօտեցաւ.  
Դեռ գոռգոռալով երկումն էլ կըրծքից,  
Հեռուից բարկացած կանչեցին իրար.  
Վազելով եկան թուրք, հայ օրէքից<sup>4)</sup>  
Մեծ բուղակըռուին նայելու համար.  
Խառնուել են միմեանց մէր, մանուկ ու ծեր,  
Հըս-հըսի ձայներ, հայ-հնայ, զըզըրդիւն.  
Ամեն կողմերից լըսւում են հարցեր—  
Ո՞րն է երկուսից տանում յաղթութիւն:  
Երկու բուղէն էլ ահեղ զարկերավ,  
Պողերով, ոաքով գետինն են փորում:

1) Արանների խումբ:

2) Խառնան:

3) Ցուլ:

Երկու բուղէն էլ ուսած կըրծքերով  
 Հըպարտ բըշալով, կըսիւ են գոռում.  
 Մէկ պինդ ոլորած պոչն օձի նըման  
 Լախտ արած ուժգին գետինն են ծեծում  
 Մէկ ինչպէս վերջին ահեղ հըրաման,  
 Նորից հերսոսած կըսիւ են բըշում.  
 Սալմանի բուղի մընզաւը<sup>1)</sup> վըրփրում,  
 Տեսնողի վրբայ սարսափ է բերում:  
 Յանկարծ երկու ան էլ նայելով խեխ-խեխ,  
 Մէկ կոյթ անկելով<sup>2)</sup>, զընացին յետ-յետ,  
 Մէկ նորից եկան պատրաստի զարկով,  
 Մօտեցան միմեանց դէմ տուած կողքով.  
 Մընդաւն ու պողեր տալով պահապան,  
 Երկու ճակատներ դէմ ելան, կըպան.  
 Թըրախը, հա, թըրհւխը պողերով, զանդով  
 Զարդում են իրար անխընայ զարկով.  
 Նորից խառնուում են թուրքեր ու հայեր,  
 Նայում են կոռեխն սըրտի տըրոփով.  
 Նորից թընդում են հըռ-հըռի ձայներ,  
 Եւ բուղաները զարնւում են թափով.  
 Փահլէվանի պէս հէնց են պըտըտում,  
 Որ կուրծք ու ճակատ փըրփուր է պատում.  
 Դեռ չըրբխիում են, զըրբխիում զարկեր,  
 Սալմանի բուղէն յետ-յետ է նայում,  
 Կըրծքին ու կողին բացուել են վէրքեր,  
 Բայց նա ամօթից գեռ չի հեռանում:  
 «Զօռեց հա, զօռեց», յանկարծ գոռացին,  
 Սալմանի բուղէն զըրբխկած գետին.  
 Մէր բուղէն էնպէս գոռաց ու բըշաց  
 Որ նրա ձէնից սար ու ձոր թնդաց.  
 Իսկ բէկի յաղթուած բուղէն հեալով,  
 Վեր կացաւ հաղիւ, զընաց կաղալով:

Երբ մենք թուրքերին ծաղր ու ճանակով  
 «Ե՞՞ւ» էինք տալիս, թըրում ու մըրում,  
 Բէկը կուրբուած մեր յաղթանակով  
 Նոր կըռուի համար ատամ էր սըրում.

<sup>1)</sup> Աւարտ<sup>2)</sup> Պողերով սպառնալով

—Ես բուղակը սուի ամօթի մըրից  
Մենք չենք ազատուիլ ոչ մի ժամանակ,  
Մինչև որ սիր չառնենք հայերից,  
Մինչև որ չուտեն նըրանք դադանակ<sup>1)</sup>:

Այդ առայշասաց, խմբով թուրքերը  
կալմիջ արին մեղ գագանակներով.  
Թըրերը համած՝ հասան բէկերը  
եւ վրայ տուին թունդ ազմուկներով.  
Քար ու գագանակ ամենքի ձեռքին՝  
իշանուեցան թուրք, հայ, ազամարդ ու կիւ.  
Երկու կողմերից կարկուաից վարար  
Քարերով, փայտավ ջարպում են իրար.  
Հենց որ թուրքերը յաղթուած հայերին  
Քըշելով, հասցրին արիսաջի<sup>2)</sup> ծէրին,  
Յանկարծ սարիցը մի ձեւ սրսաց.  
«Ո՞ւր էք փախչում, ուր, գետինը մըտած,  
Միք վախիլ, տուեք, տուեք թուրքերին,  
Գալիս եմ, որ ես սպասմեմ բէկերին»:

—Փախիք, հա, փախիք, վայ կանչեց լէկը,  
Աւաղորսկանն է սարիցը վազում.  
Փախիք, հա, փախիք, մըտէք դադեքը,  
Նըրա հետ կոսուել մեղ էլ չի սազում:

Մի չունչ չը մնաց էլ դուրս թուրքից,  
Աւաղն էր նըրանց գետ կանչում զագից.  
«Ո՞ւր էք փախել, ուր, էյ, զուք նամարդներ,  
Դնորս եկէք, տեսէք ձեր հոգէասին,  
Թէ չէ կը պոկեմ բինտ-դադաներ,  
Զեմ թողնիլ մէկիդ չունչը բերանին»:

Թուրքերից ոչ մի իդիթ դուրս չեկաւ.  
Սալմանի հայրը կորայցած մէջը ով  
Եկաւ որսկանի ոսները լնկաւ,  
Ու նա հեռացաւ ձերի խընդիրքով:

<sup>1)</sup> Վհամկ:

<sup>2)</sup> Անասունների բացօթեալ հանդասեան տեղը:

Են օրից էս օր թուրքերն ամօթով  
 Հանեցին զըլսից կըսուի մըսպերը.  
 Պատմում են թնւրք, հայ՝ ահ ու սարսափով  
 Աւագ-որսկանի արած զործերը.  
 Պատմում են որ նա ինչպէս զօրավար  
 Թիլիսմբ անի չար դե ու սուրբից,  
 Որ նա չի լինիլ զընդակի աւար,  
 Ոչ էլ կը միռնի նա մարդու ձեռքից.  
 Որ երկու բան է Աւագ-որսկանը  
 Ամենից մօտիկ պահում իր սրախն—  
 Մէկը Դքրիմու հին հըրացանը,  
 Մէկն էլ մինուճար սիրուն Ալվարդին.  
 Ու զրանց հետը ժանու օձի նըմնն  
 Եւ մի լուս վիշտ է միշտ նըրան կըրծում,  
 Որ Աստուած տըղայ չը տուեց նըրան,  
 Որ Աւագ անունն պահէր իր ազգում.  
 Որ միշտ անսնելիս սիրուն Ալվարդին  
 Զգում է նա իր զատարկ վախճանը  
 Եւ սև մըտքերը փաթաթուած սրտին՝  
 Տանջում են նըրան զուրաը թէ տանը:  
 «Մի օր աղջիկս ես մարդու կը տամ,  
 Ի՞կս էլ ծերացած աշխանից կ'երթամ.  
 Հրացանս կը մնոյ պատիցը կախուած,  
 Փանգում ու փոշում անբան շազախուած.  
 Երկար խանչալս էլ, արծաթով պատած,  
 Վախսկոտի մէկը կ'առնի իր փողով,  
 Հաղար փորձանքի արնով աշխատած  
 Սնունս էլ հետը կը ծածկի հողով.  
 Սիրուն Գուգարեն էլ առանց պահապան,  
 Քանդելու կը զայ ամեն մի անբան.  
 Էլ չեմ զորս զալ ես խոր գերեզմանից,  
 Էլ չեմ զըցիլ իմ հին հըրացանից»:

\*  
\* \*

Երկնքի զրբկում լողում է լուսին.  
 Դեռ նրասասաւած են ծեր-երիտասարդ,  
 Աւագ-որսկանի, Ալվարդի մտախն  
 Խարոյի շուրջը լըսում են հանգարան  
 Կաղնի գերանը կըրտկին ընկած՝  
 Առատ բոցերով գեռ լոյս է սփռում.

Ճարճատում է նա, բըսինկում յանկարծ,  
Հետն էլ աշուղի երգերը վառում.  
Տեսած ու լրած անժիս դէպքերով  
Եւ մէկը միւսից արժան գործքերով  
Դեռ երգում է նա և այն հաստատում,  
Որ առաջինն է Աւաղն աշխարհքում,  
Նըրանից իգիթ, նըրանից հըսկայ  
Էլ թուրքում, հայում, ոչ մի տեղ չը կայ.  
Եւ ուշի-ուշով նստոտած յամառ՝  
Խնդրում են նորից արզերքն աշուղին.  
«Ապի ջան, ապի, երգիր մեզ համար,  
Էլ չենք քընելու մենք լուսնի շողին»:  
Բոլորի ուշքն էլ որսկանը աարաւ,  
Մարում են կամաց խարոյի կայծեր,  
Զահէլ արզերքը դեռ երգի ծարաւ  
Աւելցնում են կըրակին փայտեր.  
Ո՞րը յոդնելուց գըլուխը թերած՝  
Նիրհելով կամաց, զարթնում է յանկարծ,  
Ո՞րն էլ վաղուց է անուշ խըռոայնում,  
Աւագ-որսկանին երազում տեսնում:  
Երկնքի զրկում լողում է լուսին.  
Նընջում են արդէն ծեր, երիտասարդ.  
Աւագ-որսկանի, Ալվարդի մասին  
Լուսինն է խորհում երկնքում հանգարան

## II

Ա՞րեւ չելած սարուսրն արթնացաւ,  
Նորից ձորերում աղմուկ բարձրացաւ,  
Նորից սայլի տակ ճըռուում է ճամփան,  
Փըռփըռում հարսի քօզն ու զաթիպան.  
Դալար իւրաերը ամպերի տակին  
Աչքերը զըցած քոչուորի ճամփին՝  
Փըպալով յակինթ յոդերով առաւ,  
Կանչում են կարծես բոյրով անարտա  
Կանաչի վըրան հալթաւան<sup>1)</sup> ձեռքին՝  
Կրօնամոլ թուրքը չոքեց նամազի,  
Չեռները զգոյշ տանելով միրքին՝  
Աղօթք է անում Աստծուն մեկուսի:

<sup>1)</sup> Զրամանի տեսակը:

Կէս օր է արգէն, կանաչ Լալուարից  
իջնում է հանգիստ ոչխարը կըթի.  
կըթուելով մաս-մաս, անցնում է բերից<sup>1)</sup>:  
Լուսում է անուշ փըշչոցը կաթի.  
Հովիւ, հովուհի նստոտած շարքով՝  
կըթում են ուրախ և անհոգ խընդում:  
Երբեմն էլ այրուած անուշիկ երգով  
Սէր են զարթեցնում մէկ-մէկի սըրտում:  
Վերջացաւ արգէն ոչխարի կիթը,  
կաթսաներ տարան թարմ կաթնով լիքը.  
Մէկն էլ գըտակը շարժելով օդում,  
Դեռ գառնարածին՝ «Նկ, հէյ» էր կանչում.  
Երկար չանցնելով սարի գագաթին  
Գառների կայտառ հօտը երիաց,  
Խառնուելով նրանք մայրերի հօտին,  
Բերկրանքի յցզով մայում և՛ն ցըրտած.  
Կանչում են, բայում գառն ու մաքին,  
Անուշ ձաներով փընտրում են միմևանց.  
Ո՞ր գըտնելով իրան գառնուկին,  
Կաթըն է տալիս, փայելով սըրտանց.  
Ո՞ր խաղում է մօր հետ կուշտ փորով,  
Ո՞րն էլ մընում է տրխուր մոյելով.  
Եւ ամեն անգամ գառը մէր տալիս<sup>2)</sup>,  
Կարծես թէ անուշ համերգ են տալիս:  
Բայց շուտ ջոկելով մայրերը գառնից,  
Հովիւը քըչեց նըրանց զէպ' արօտ.  
Մըհակն էլ տսին գառները բինից.  
Տարաւ գառնարած սառն ազբիւրի մօտ:

Հովիւ, գառնարած մի տեղ խմբուելով,  
Լախտի են խաղում, առոյց թռչկոտում.  
Հըրճւում են նըրանց կայտառ խաղերով  
Ծերերը ծածկուած դառան մուշտակում.  
Ամեն մի նըրանց ճարպիկ թըռփչով  
Ցիշում են գաղոց կորած մանկութիւն,  
Շոյելով ճերմակ միրուքը ձեռքով,  
Կանչում են ճնամարդ, նամմարդ ճերութիւն»:

<sup>1)</sup> Ոչխար կթելու տեղը:

<sup>2)</sup> Մայրերին տալիս—ձձեցնելիս:

Մէկն իր մուշտակը մի կողմն է զըցում,  
Եւ զիտմամբ խառնում արգերանց խաղին,  
Մի լախա է խըլում, ոլորում ձևոքում  
Եւ ասիթ տալիս անվերջ ծիծաղին,  
Կանչում են՝ «Աթօ, լախոր թրոցըրուն...  
Մեր պապի մէջքը մի լու տաքցըրուն...»

Մի տեղ ձիերը աըբարնդի տալով,  
Փրառացնում են, սարերը փախչում.  
Զահէլ արգերքը քամանդ <sup>1)</sup> ըրունելով,  
Նըրանց յետից սիւրագ <sup>2)</sup> են թըռչում,  
Մի խոմ չընըսառուած վայրի քուակի  
Ամեն կողմերից կալմէջ են անում.  
Ով նըրան մենակ բրոնի ու թամքի,  
Նա մի քալազի նամառ է տանում.  
Բայց տաքացել է, կատաղել խոմ ձին,  
Տըրգերանց վրայ ծարս-ծարս է <sup>3)</sup> լինում.  
Երկար քամանդը քաշելով վրգին,  
Խեղգում են նըրան և թամքը զընում.  
Զուռնան էլ թողած մի կողմը լախախին,  
Փըչում է արդէն տաք-տաք ջերիդին.  
Տըրգերքը միմեանց առաջ են քըչում,  
Ծերերը գարձեալ խոր ախ են քաշում:

Իսկ հարսն ու աղջիկ սափորը ուսին՝  
Գընում են խումբ-խումբ աղբիրը ջըրի,  
Դողում են նըրանց ժըպտուն երեսին  
Բոլոր դոյները Գունգարք լեռների,  
Եւ բիւր ծաղկանից նախչուն շորերով  
Անցնում են նըրանք ուղին հոտաւետ  
Եւ թարմ կուսական հրմայիչ բոյրով  
Մըրցում են սարի ծաղիկների հետ:  
Եռում է խաղը հարսների գիմաց,  
Նայում են միմեանց աչքերի տակով,  
Կարմրում են, ժրապտում կոյսերը կամաց,  
Անցնելով անուշ սիրոյ աըրտփով:

<sup>1)</sup> Զի բռնելու սպարան:

<sup>2)</sup> Զիարշա՛ առաջ կորելու նպատակով:

<sup>3)</sup> Յետին ոտների վրայ կանգնում:

Բայց այ քեզ հըրաշք, մի շըշուկ անցաւ.  
«Ալվարդն է գալիս, Ալվարդն է գալիս».  
Եռուն ջիրիզը խսկոյն գաղրեցաւ,  
Բոլորն էլ սառան նըրան տեսնելիս  
Հուր-հըրին տալով քօղի արանքից,  
Նըրա աչքերը հանեցին խելքից.  
Էլ աչ ջիրիզ կայ և ոչ էլ զուռնայ.  
Արվարդի նետին մի կըզիմանայ.  
Ջիրիզներն ընկան հուժկու ձեռքերից,  
Ա՛խ ու հասաշանք թըռան կըրճքերից.  
Զուռնան էլ մոռցած լախան ու ջիրիզին՝  
Նըրանց տեղ զըլեց այրուած բայեաթին<sup>1)</sup>:

Ալվարդի համար ախ են հառաչում  
Գուգարք լեռների ամեն մի ձորից,  
Ալվարդի համար մեղուն է թըռչում  
Լոռուայ առաջին խամ մեղքի ձորից.  
Ուտում են աչքով ամենքն Ալվարդին,  
Բայց սէրն անյայս է գեռ նըրա սըրախն.  
Նա գեռ տպրում է երազների մէջ,  
Դեռ նըրան այրել չի սէրը անչէջ.  
Բայց էն էլ ասած՝ Աւաղի ահից  
Ո՞վ կարայ անցնել Ալվարդի մօտով,  
Կամ թէ փախցրնել նըրան աղբիւրից  
Ո՞վ կարայ խսկի անցկացնել մըաքով:

Սե ստուերները հըսկայ լեռներից  
Չորերն են ընկել, մէկ-մէկի զըրկել,  
Լուսնի եղջիւրը մըռայլ ամպերից  
Հարածուած գէմքը դեռ չէր ապատել.  
Թանձըր եթերեան սե քօղը դէմքին  
Վազվըզում էր նա յոզնած ու անքուն,  
Նայելով հերթով բոլոր օբէքին,  
Հըսկում էր նըրանց գիշերը արթուն,  
Օրօր էր երգում առուն ձարերում,  
Մարտում էր մէկ-մէկ կըրակն օբէքի,  
Բայց ականակիր սարի խաւարում  
Մենակ մի կայծ էր դողում ճըրագի.

<sup>1)</sup> Սիրու երգի տիտուր եղանակ:

Ղարախաչ<sup>1)</sup> սարի զիժ գագաթներին  
Լուսինն էլ զերի մընաց ամպերին.  
Այստեղ ծովիանն է խաղում, որսում,  
Հըրեղէն զօտին երկնքով պատում.  
Երփշրփաց անձրև ամեն մի տեղով  
Առուներ դառած պըղտոր հեղեղով.  
Զարթնելով քընից սարուորը յանկարծ,  
Ամրացրեց դագի հին ծակ ու ծուկը.  
Տաւար ու ոչխար իրարով ընկած  
Խառնեցին միմևանց գառն ու հորթուկը.  
Հովիւը հասաւ ազգաբար ձայնով  
Հաւաքեց նըրանց դէպի արխաջը,  
Բայց զեռ լըսւում էր տըխուր ոռնալով  
Դոլանից<sup>2)</sup> փախած շըների հաջը;  
Սարեր ու ձորեր ահից դողալով:  
Արձագանք տուին փայլակ-կայծակին,  
Լեռների որդին մրթին գիշերով  
Անցնում էր հեղեղ՝ մի սև ձի տակին.  
Գոռում էր, ճըզում ահաւոր կիրճում  
Փըրփըրած բաշով սեացած ուրկուն<sup>3)</sup>.  
Բայց ձիաւորը մի ազօթք մըտքում  
Դեռ մըրմնջալով, քրշում էր անքուն:  
Զին առանց զարդի, սանձի ու թամքի  
Ցատկում էր արագ ժայռերի վարսեր,  
Ինչպէս մի ստուեր սեակնած ամպի  
Թըռչում էր գետեր և դար ու փոսեր.  
Իսկ դոփիւնները պինդ սմբակներից  
Արձագանք տալով խորին ձորերում,  
Կայծին են տալիս զարնուած կայծքարից,  
Փայլատակում են և յանկարծ մարում.  
Ռինգներից ամպի փրփուր է հոսում,  
Խառնուում է պըղտոր, վըշամն հեղեղին.  
Զին իր հեծուորին այնպէս էր սազում,  
Ինչպէս որ նետը իրան աղեղին:

«Ես ուրկունիցն էլ թէ զուրս թըռաւ ձիս,  
Մուրազ եմ անում գընամ սուրբ Սարգիս.

1) Կոռուայ և Եիրակի սահմանում ձգուած բարձր սարր:

2) Շան նստելու, հօտին հսկելու տեղը:

3) Հեղեղից առաջացած մեծ գետ:

Հասուէնաս եմ հա, ճրբազ եմ տեսնում,  
Գիշերս կը մնամ հայերի բինում.  
Հէնց որ անձրեք մի քիչ դադարի  
Նորից կը բըռնեմ ճամփէն կալուարի»:  
Աչքերը յառած բինի ճըրագին  
Հեծուորն էր այդպէս ձիուն մրմիջում,  
Նըրա սև բաշը ոլորած ձեռքին  
Կարծես ուզում էր հասնել մի չնչում.  
Փըռուացրեց սև ձին, դոփեց սմբակով,  
Նետի պէս ցըցուեց արխաջի ծայրին,  
Մի շուն զօլանից վեր թըռաւ հաջով  
Եւ թարշարժ արաւ քընից սարուորին.  
Շըներն աղմուկով զայրացած հասան,  
Այն ձիաւորին կալմէջ արեցին,  
Իսկ հովիւները՝ «ող ես ու քիմ սան»  
Նըրան խաւարից մէկ-մէկ ձայնեցին:  
—Մըթին գիշեր է, կորցրել եմ ճամփէս,  
Պատասխանեց նա, զօնադ եկայ ձեզ:

Ութսունից մօտիկ վիճ բարձրահասակ,  
Հերքը ալեսոր ձիւնից էլ ճերմակ,  
Արծաթապատեան դաշոյնը զօտկին,  
Հին արկածների կընճիւներ դէմքին.  
Սեմազ եափնջին ուսերին բազմած,  
Երկար չիրուին էլ բերանին սեղմած,  
Կանզնելով ծերը ալաշխի շէմքին՝  
Խրոխտովի ձայնով կանչեց ճամփորդին.

«Ե՛կ, ճամփորդ ախպէր, արխաջիմօտով,  
Դուրսը անձրի է խառը կարկուտով.  
Մինչի չը նստես դու էլ իմ տանը,  
Պատառ չեմ դընիլ ես իմ բերանը.  
Ե՛կ, ախպէր ջան, նկ, զօնազն Աստծունն է,  
Անմեռ աշխարհն էլ իդիթ մարդունն է»:

Հեծուորը եկաւ. ծերի հրաւէրով,  
Սև ձին էլ տակին սև ամպի նրման,  
Ուռած որնզներից թառանչ քաշելով,  
Թըռաւ ու կանզնեց նըրան յանդիման:

— Բարի իրիկուն — ասաց նա — սարուոր,  
Վաս օր չը տեսնի զբլուխոդ ալւոր.  
Թնդ վառ լինի միշտ բինում ճըրագդ,  
Թնդ տափը չասնի վերջին զբնդակդ:

«Բարին արեիդ. համեցէք, որդի,  
Թնդ ձիդ օրիւկի<sup>1)</sup> հանդումը ծառան,  
Դու եկ անձրեից ալաչուխ մրտի.  
Ալվարդ ջան, վեր կաց գու էլ տաքարան,  
Որսի խորոված շամիրի, պատրաստի,  
Կուշտը սովածին մանըը կը բրդի»:

Այդպէս պատուէրներ տալով Ալվարդին,  
Ալաչուխ տարաւ ծերը ճամփորդին,  
Որի եափնչից ծորում էր ջուրը,  
Ինչպէս մամոռտած ժայռից աղբիւրը.  
Բայց նա թափ տալով շորերը շէմքին,  
Մօտեցաւ, նստեց ծերունու կողքին:  
Թուրն ու դաշոյնը կեռ արծաթապատ,  
Գընդակ-վառողի ամանը զօտկին,  
Զախմախի հրացան զուզուած տասնարանդ,  
Շահմար<sup>2)</sup> օձի պէս լուռ փարուած մէջքին,  
Զէնք ու զըրանում, արծաթում մլտած՝  
Ճըրագի լոյսով հիւրը շողոզաց:

Սերն ու կարագը առաջ բերելով,  
Ալվարդն եփում էր զեռ տաքարանը.  
Մի քանի խօսքով սուփրէն օրհնելով,  
Ծերունին դարձաւ աղօթարանը:

«Թնդ նըրան տանի սելաւն ու գետը,  
Ովկ աղուհացի օրէնքն ուրանայ,  
Ովկ զօնազ եկած թըշնամու հետը  
Զի նստիլ ուրախ մարդի-մարդանայ,  
Թըշնամի կընես թէ ինձ բարեկամ,  
Դուռս բաց կրինի քեղ ամեն անդամ.

<sup>1)</sup> Երկար թոկով արածելու համար կազին  
<sup>2)</sup> Օձերի մալր, թագուհի:

Քանի որ կ'ուզես իմ ալաջուխում  
Սիրտդ լաց արա ինձ հետ կեր ու խնմ»:

Երբ շամփուրները մէկ-մէկ շարելով,  
Դարսում էր կոյսը կարմըրած շեղին,  
Կամ խորովածք արագ շըրջելով,  
Բերում էր, զընում հիւրի առաջին,  
Ցոլուն աչերը յօնքերի տակից  
Բնկնում էին միշտ փայլուն զէնքերին  
Եւ ալեծածան մազի արանքից  
Նա գաղանազողի դիառում էր հիւրին.  
Խիտ գանգուրները յանկարծ ցընցուելով,  
Մերթ այտերն էին վարդի պէս փայտում,  
Մերթ շամփուրները նորից շարելով:  
Հիւրերի սիրան էլ էր նա հետը այրում:  
Եւ անքընութիւն, և երկար ճամփիւն  
Վերացան իսպառ ճամփորդի մըտքից.  
Սեասի աչերը շանթելով արդէն,  
Անցան շեշտակի սուր նըրա կըրծքից.  
Մոռացաւ ինքն իրան, երկիր ու երկին,  
Երերաց անսուշ անսովոր դողով,  
Եւ կեանքի զընով գողցած նըժոյզին  
Նա մոռցաւ միայն երկու աչերով:

Տեսնելով հիւրի թեփի արիւնը,  
Ծերունին հարցրեց նըրա անունը,  
«Ինչի չես, որդի, գարդդ ինձ ասում,  
Էդ ինչ արիւն է թեփիցդ հոսում.  
Եկ, ուռ մի ծածկիր, անունդ ինձ բախչի,  
Չեմ թողնիլ որ քեզ էդ ցաւը մաշի,  
Աւազ-որսկանն եմ Գուգալքաց երկիրի  
Կրոխւների մէջ հերքս ճերմակած,  
Քեզ նըման ես էլ հազար վէրքերի  
Խոռոչներ ունեմ մարմընիս ընկած»:

—Տէրն ինքը հաստատ պահի քո առւնը,  
Վաղուց եմ լսել քո մեծ անունը,  
Զախ թեփս միջին զընդակ է մեացել,  
Ինչ անես, ապի, զըժուար է հանել:

«Անհոգ կաց, որդի, ինչ վէրք էլ լինի,  
Ազջիկս նըրան դեղ ու ճար կ'անի:  
Նա սովորել է հանգուցեալ մօրից,  
Որ բըժըշկում էր գընդակ ու սըրից.  
Ալվարդ ջան, աղջի, ճար ունես, դէ տես.  
Ջանէլ է, մնջք է, կըսնատ<sup>1)</sup> չը թողնեաս:  
Եւ Ալվարդն եկաւ դեղի փաթեթով,  
Գընդակը հանեց մի երկար կարթով,  
Վէրքը լուացաւ, դեղը փաթաթեց,  
Վրան էլ մետաքսի թաշկինակ կապեց.  
Իսկ հիւրն Ալվարդով այնքան հիացաւ,  
Որ գընդակ ու ցաւ իսպառ մոռացաւ:

«Դէ, պատմիր, որդի, գըլիսիդ անցու անքը,  
Թէ որտեղ հասաւ քեզ էս փորձանքը»:

—Այ, ապի, լըսիր սըրտիս գաղտնիքը,  
Ոչինչ չեմ ծուծկիլ, կը պատմեմ անվախ.  
Եւ հիւրն արիւնով աչքերը լիքը  
Դեռ փագրի նըման նետեց աջ ու ձախ.  
—Բայց առաջ բախչի ինձ, Աւագ-որսկան,  
Որ ինձանից գող՝ թուրքեր էլ չը կան.  
Իսկ թէ քեզ մօտ էլ զուրս զամ մնդաւոր,  
Ինձ համար եղիր դու խիստ զատաւոր:

«Եզուր ես եկել, մրտել իմ տունը,  
Ինձ մօտ չես զըանիլ քո փրկութիւնը.  
Հոգիս էլ կը տամ ես իմ զօնազին,  
Բայց չեմ խընայիլ, պաշտպանիլ գողին.  
Գիշերս կը տամ ես քեզ ասրաստան,  
Կը զարթնես քընից, կ'երթաս ապահով,  
Յետոյ կը փընտրեմ ես ինչպէս որսկան,  
Եւ կ'աննեմ մի օր քիզ զընդախորով:  
Դէ, պատմիր, տեսնեմ՝ էդ ինչ ահարկու՝  
Սարերը ընկած աւապակ ես դուք»:

—Գարուն էր, ապի, սարը քոչելիս  
Մի քանի հարուստ թուրք աղալարներ

1) Առանց ձեռքի:

Աղքիւրի սովին նաւմազ ամսելիս  
 Օրիւկել էին իրանց ձիաններ.  
 Երբ ևս ամսատից յանկարծ դուրս եկայ,  
 Նըրանց միամիտ բարով առւեցի,  
 Նըրանք ծաղրեցին և հըսէըռալով  
 Հարցըրին ինձ—հայ, ձու գողցար թէ ձի:  
 Էն օրից թէ ապրիներ անցան,  
 Բայց նըրանց ծաղը մընաց իմ սրբառմ.  
 Եւ ևս երգուեցի էն ծաղրի թոյնով  
 Լինել աւազակ, գող ու մարդասպան.  
 Գիշերը անցնել թուրքերի բինով  
 Եւ մահ գոռալով քըշել ամեն բան.  
 Հէնց ին ինձ ծաղրով մեծ աղալարին  
 Գիշեր ու ցերեկ փընարելով արթուն,  
 Վերջը ևս զըտայ Դարախաչ սարին,  
 Ռոր նա յայտնի է ինչպէս մեծատուն.  
 Ասլան-բէկն է նա, քաջ և անուանի,  
 Տաւարոցիսարի հօտերով հարուստ,  
 Բայց ամենից լաւ մի սն ձի ունի,  
 Որ աշխարհ արժի մենակ արտապուստ.  
 Չի հասնիլ նըրան հին հեքնախների  
 Թէկուղ հըրեղէն ձին իր թիերով,  
 Չի հասնիլ նըրան և զընդակների  
 Կարմիր արժժոցը մըռայլ գիշերով.  
 Առաջուց զիտի նո՞ թէ փորձանքը  
 Եւ թէ հեծուորի սըրաթ բաղձանքը:  
 Մըթին զիշեր էր, հէնց գողի զիշեր,  
 Երբ Ասլան-բէկի օրին մօտեցայ.  
 Հէնց որ օրիւկը բէրից կըտրեցի,  
 Վեր կացաւ յանկարծ մի շուն դօլանից,  
 Երկաթի ոտկապն էլ որ կստրեցի,  
 Դրդըրդաց օրէն հարացի ձէնից.  
 Մարդիկ վազում են, շըները հաջում,  
 Բայց ևս փորբառզ զետնին ևմ կըսկում,  
 Եւ հարաճրոցի թունդ արտքարաքացին  
 Թրոչում եմ, ասնձում ոտկապով սի ձին.  
 Եսրից զըզըրդաց, զընդակ որսուայ—  
 «Տարան հան, տարան բէկի սեռւկը».  
 Բայց ևս նեաի պէս ականջը մրտուծ՝  
 Քըշում եմ նըրանց զոված նըժոյզը.  
 Տըրաք հա տըրաք զընդակներ թըսան.

Խառնըւած օրէն գոսում էր—տարան,  
—Հասեք, հա, հասեք, դալիւէրմանին  
կննդանի թաղեց իզիթ Ասլանին;  
Խըրխընջում էր ձին, ոտիւալը կըրծում,  
Փրփուրին ամպի պէս որնդներից զբցում  
Եւ կըրակ կըրարած էնպէս էր վաղում,  
Որ կ'ասես հեռուից զընդակ էր բըզզում:  
Թէ որ ևս նըրան հեծած չընէի,  
Ով գիտէք թէ սղ էստեղ հասնէի:

Յանկարծ զըրոյցը Կարօն կըրելով,  
Դարձաւ սրսկանին այսպէս խընդրելով—  
—Հերիք է, ամի, ես լսյան ևմ բնկում,  
Տաւար ու ոչխար արօտ ևն գրնում.  
Թէ նամարդ եմ ես, զարկիր զընդակով,  
Թէ չէ ճամփայ տուր ինձ քո օրհնանքով:

«Համբերիք, Կարօն, համբերիք մի քիչ,  
Մի օր էլ կըլնես թոյլերի փրկիչ.  
Էս զիշեր պատմած զըլիիդ անցքերը  
Մոռցըրին ծերիս ձերմակ հերքերը.  
Թէ զող լինէիր թուրքի պէս անմիտ,  
Ես չեմ ասիլ քեզ երբէք իզիթ.  
Բայց երբ որ գոզ ես մինակ թասիրից,  
Էն էլ նամմարդին պատժելու համար,  
Օգնութիւն կը զայ քեզ ամեն սուրբից  
Եւ զու կը լինես անյաղի զօրավար.  
Մարզը նամմարդին թէ մէօնտաջ կ'անես,  
Աւագ-որսկանից պատիժդ կ'առնես:  
Դէ, առւր խանչալդ, օրհնեմ իմ սըրով,  
Որ քեզ տեսնելիս զաղայ թըշնամիդ,  
Քեզ պէս թասիրի աւաղակներով  
Լըցուեն մեր երկրի սար-դաշտ ու հոլիս»:

Ծերը պատեանից դաշոյնը հանեց  
Եւ խաչ քաշելով Կարօյի սըրին,  
Պապական ծիսով նա քաջին օրհնեց.  
Ապա օրիւկից նըրա ձին բերին.  
Եւ Կարօն թըսաւ առոյզ ոստիւնով,  
Կըպաւ մերկանդամ սեռուկի մէջքին.

Խըրիսնջաց սև ձին և փրանչիւնով  
Թըռչկոտաց հուժզու հեծուորի տակին.  
Եւ սիրտն ու հողին թողած Ալվարդին՝  
Նա մընաս բարով ասաց Աւագին:

Ծէգում էր արդէն, բայց Կարօն չը կար.  
Ալվարդը զընաց՝ ինչպէս խելագար  
Սլաջուի մրտաւ, սափորը ուսեց,  
Երգի մըրմունջով տղբիւրը վազեց.  
Չիու հետքերը յանկարծ նա գըտաւ,  
Այնտեղից պոկեց մի փունջ կանաչ խոս  
Եւ համբուրելով նըրա մէջ դըրաւ  
Կարօյի թողած զընդակը արնոտ  
Բայց խոր ձորերում կամաց մարելով,  
Դեռ զրընգում էր պայտերի դոփիւն.  
Նըրան երբեմն արձագանք տալով,  
Չուլում էր երգի անուշիկ հընչին.  
Ալվարդն էլ յենուած դես ժայռին դադոնի  
Կարծես ուզում էր երգողին գըտնի:

Լալուարայ բարձր սարից  
Շատ սիրուն է աշխարհը.  
Ամովի տակի աղբիւրից  
Չուր է տանում իմ եարը:

Աղբիւր, ծաղիկն ու լալը<sup>1)</sup>  
Շատ առատ են լալուարին.  
Բայց իմ սիրած մարալը  
Արծի արար աշխարհին:

Ա՛խ էս աղջիկն աչքունքով  
Ինձ զարկել է զնդակով.  
Չուր է թոչում իմ սև ձին,  
Սիրտս կըպաւ Ալվարդին:

—Էլ մի թոչիլ, ձիաւոր,  
Արծուի պէս թեաւոր.  
Ե՛տ արի, ետ լալուարը,  
Մենակ մընաց մարալը:

1) Հանք:

Աւագորսկանը, հայրը Ալվարդի,  
Չիքուիր բերնին զեռ նրատած արթուն՝  
Յիշում է մըաքում կեանքը որսորդի,  
Դիտելով ծուխը զիշերը արթուն.  
Եւ արինաներկ ծեր յիշողաթեան  
Ամեն մի մոռցած, կորած անկիւնում  
Աև ծըխի մըառցյ ամպերի նըման  
Անցած օրերն են մէկ-մէկ բարձրանում.  
Իսկ ալաջուխում պառկած առանձին  
Գըլուխը բարձին թէկել է Ալվարդ,  
Քնի մէջ կարծես թուել է հոգին  
Մի աշխարհ, ուր նա մոռացել է զարդ:

Մարել են ճրագի կայծերը ազօտ.  
Նընջում է ամբողջ օրէն մըրափած.  
Յանկարծ հեռլուում թընդաց մի որսու  
Խոր քնից իսկոյն Ալվարդը զարթած  
Աչքերը յառեց ծերունու զէմբին  
Յուզուած նա պատմեց երազ սնմեկին:  
«Քընած էի ես, տեսայ երազում  
Մի սիրուն պախրայ անտառից վազեց,  
Մեր կովերի հետ կանոնած արխաջում  
Ազաքարերից մի քիչ աղ լիզեց.  
Նա պոզեր ունէր մէկ-մէկի վըրան  
Անտառում բրսած ծասերի նըման.  
Ինչպէս մի ընկեր կարօտոծ սիրով,  
Եկաւ փաթաթուեց, փարուեց իմ շորով.  
Բայց մէկ էլ տեսայ ապիս բարկացած,  
Հրացանը լրցրեց, զարձու զէպի մնդ.  
Ես էլ վեր թրուայ տեղից վախիցած,  
Կանչեցի նրան, խրնդրելով էսպէս—  
Ապի չան, ապի, մի սպանիր սրախրան,  
Թնդ, բըռնել եմ ես որ պահեմ նըրան.  
Ապիս չը լսեց, խեղճ պախրան ընկաւ,  
Կ'ասես թէ զընդակին իմ սրտով անցաւ:

Վերջն այսպէս խօսեց խոր յօրանչելով,  
Հարեան բինի մի պառաւ կընիկ,  
Ար թափանցել էր, զարի զըցելով.  
Մեծ երազների խորհուրդ ու զաղանիք.

—Երազն է անվիրջ մի սիրուն աշխարհ,  
Ուր միշտ ապրելով ինչպէս ողիներ,  
Կարօս սրբակր զրանում են իրար,  
Ծընչում են անուշ, թափում արցունքներ.  
Լքում եմ, Ալվարդ, սրբափի արբոփից՝  
Դու զես զողում ես մահուան սարսափից.  
Ո՞վ է բաժանել կեանքը երկուսի,  
Ո՞վ է խանգարել համզիսաը կոյսի.  
Գլնդակ ու պախրայ, լայլ կուսական  
Խաղեր չեն եղել անհոգ մանկական,  
Այլ մարմնից ազատ երազի ողին  
Գու չակել է քո միռայլ ապազան.  
Ե՛ւ տանջանք է նա պատրաստում կրծքին,  
Ե՛ւ խսսանում, թէ լաւ օրեր կը դան.  
Թէ սրտիրայ չընինի հօրդ զընդակից,  
Կ'աղաւուես, Ալվարդ, զու չար փորձանքից:  
Եւ Ալվարդն այդպէս պառաւից լըսեց,  
Որ այն երազից ցաւ չը կայ նըրան.  
Երազահանն էլ ծերին համողեց,  
Որ այսուհետե որս չանի պախրան:

\* \*

Խոր ձորի միջին, մի ժայռի կրրծքից  
Աղբիւր է լըդիսում ուրախ քըչքրչան.  
Նըրա ձախները անուշ բիւր երդից՝  
Սարեցու համար վաղուց սրբացան.  
Սիրոյ-աղբիւր է նա հընուց ասուել,  
Սիրուն կոյսեր են միշտ նըրան ուխտել.  
Եւ զու չակել է ջրբի ելելջ,  
Թէ ով երջանիկ կընի սիրոյ մէջ:  
Դարերից ի վեր աղբիւրը հոսում,  
Դեռ սիրոյ մասին երգեր է հիւսում.  
Եւ զրլզրալով ձմեռ ու ամառ,  
Դեռ նա երգում է սիրելու համար:  
Գնում էր Ալվարդ գէալ սիրոյ-աղբիւր  
Երանց տան համար տանելու պաղ ջուր.  
Համնելով ձորը մի նեղ կածանով,  
Դեռ ձաղիներ է նա շարում կրծքին  
Եւ զիւլումներից մեղմ անուշ ձայնով  
Երգում է սիրոյ-աղբիւրի սիրին.

Սարերն էլ նըրան ուրախ քըրքիջով  
Արձագանք տուին ժայռերի միջով.

«Աղբիւր, աղբիւր, ջան աղբիւր,  
Զուրդ զըլզըլան աղբիւր,  
Վարդը բացւում է բոյրով,  
Սէրն ապրում է համբոյրով.  
Թէ որ զըտնես իմ եարին,  
Մոմ կը վառեմ քո քարին»:

—ԱՌվարդ, ԱՌվարդ, ջան Արվարդ,  
Բիւրիւլն էրւում է անվարդ.  
Հեռուից տանջուած քո սիրով  
Դեռ կըուում են հուր-սըրով.  
Բայց ամինից աշխարհում  
Գող Կարօն է քեզ սիրում:

«Աղբիւր, աղբիւր, ջան աղբիւր,  
Զուրդ զըլզըլան, աղբիւր,  
Վայ թէ ապիս իմանայ  
Ու մեզ վրբայ բարկանայ.  
Թէ Կարօն էլ ինձ տանի,  
Վայ թէ նըրան ըսպանի»:

—ԱՌվարդ, ԱՌվարդ, ջան Արվարդ,  
Բիւրիւլն էրւում է անվարդ,  
Թէ որ մեսնէք երկուսով  
Աշխարհի մէջ նամուսով,  
Արբոյ չէմքում ձեր ճըրապ  
Վառ կը մընայ անկըրակի:

—  
Մըթին դիշերը կալուարի կոյսին  
Կարօն սիրել է սափորը ուսին.  
Թէկուզ և զարկեն զընդակ մահացու,  
Կարօն ընտրել է նըրան հարսնացու:

ՎԱՀԱՆ ՄԻՒԱՅԵԱՆ

(Կը շարունակուի)

## ԹՐՔԱԿԱՆ ՀԱՄԻՍԼԱՄՈՒԹԻՒՆ<sup>\*)</sup>

Այդ բոլոր միջոցները, թրքական խիկուր-իմաստունների կարծիքով՝ պէտք է զօրացնեն թիւրքիսն, վերակենդանացնեն նրան, դարձնեն մի զօրեղ ու միատարր խլամ պետութիւն:

Երբ այս մօռաւոր նպատակին կը հասնեն, այն ժամանակ միայն կը սկսուի թրքական համիսլամութեան խկական նպատակը—յարձակողական շարժումը։ Կը միանան բոլոր խլամ ցեղները կամ՝ Վիճէլմ կայսրի խօսքով, «երկրագնափ 300 միլիոն մահմեգականները» Պօլսի խալիքի գայթանի տակ և կը տիրապետն արար-աշխարհին…

Մինչդեռ քայլ ոտք քայլ եռանգով աշխատում են հասնել մօռաւոր նպատակին, հեռաւորը ևս բոլորսին աչքից բաց չի թողնուում։ Նրա համար էլ համիսլամականները ունեն պատրաստի միջոցներ, զործելու որոշ եղանակ։

Այդ միջոցները կարելի է վերածել հետեւել անսակներին։

1) Ընդհանուր յայտնի պրօպաղանդ։

2) Դիպլոմատիական ճանապարհ։

3) Գաղանի պրօպաղանդ։

Ընդհանուր յայտնի պրօպաղանդ ասելով, մենք հասկանում ենք այն բոլոր միջոցները, որ պարզուոչ կերպով զործագրուում են, ասանց «գաղանի զործի կերպարանք տալու»։

Այս տապարէզում զլիաւոր տեղը բռնում է ու խոտագնացութիւնը։ Ամբողջ մահմեգական աշխարհը կապուած է Մեքհայի և Մեղինայի կամ Հեղաղի սրբազն վայրերի հետ։ Ամեն տարի տասնեւակ հազարներով ուխտաւորներ են խուժում այնտեղ՝ Եղիպատուից, Թիւրքիայից, Աւգանստանից, Ռուսաստանի զանազն ծայրերից, Բոլղարիայից ևայլն։ Ներկայ 1901 թուին միմիայն Ռուսաստանից զնացած ուխտաւորների կամ հաջիների թիւն էր 5,600 հողի։

\*) «Թուրք», № 9:

Ռուսաստանից, Բոլղարիայից և այլ տեղերից գնացողների ձմնապարհը Պօլսի միջով է. Նրանք պէտք է մանեն Պօլս, տեսնեն Խալիֆի վառահեղ աթոռները, նրա ոյժը, հորստութիւնը:

Ահա այսուղ վրայ են համում համբաւամական քարոզները: Մեծ տակառվ ու ճարպիկութիւնով օգուտում են օթօման աղղասերները միամիտ ուխտաւորների ներկայութիւնից: Իսկան նրանք մանում են ուխտաւորների մէջ, զրգառմ, վառում են սէր գէպի Խալիֆն ու Խալամը և ատելութիւն գէպի իրանց գեափուր պէտերը: Ուրբաթ օրերը, երբ Խըլտըրի մենակեացը յանդզնում է զուրս գալ իր երկաթէ պալատից և մանել իր պարիստների մէջ շինուած մղկիթն աղօթելու—մի սովորական ծէս, որ կոչում է Սէլամլիք—բոլոր ուխտաւորներին հրափրում, առանում են Սէլամլըրի:

Այդ հանդէսը կատարում է ահազին թիւ ծովային ու ցամաքային ամեն տևակի զօրքերի ներկայութեամբ, արևելին ձսի վասահեղութիւնով, որ սարսափելի կերպով աղղում է իրամերի աղղայական վաս երեակայութեան վրայ:

Հանդէսից յետոց Զերքէդ-Ահմէտ վաշշն բերում է սամիկ ուխտաւորներին կայսերական սղջոցնը և նուէրները. բաժանում են փողեր ու ձրի առաներ մինչի Կարմիր Ծով՝ չունիորներին:

Խալիֆի հետ կապելու նոյն միջոյները զործազրում են և Թունիսի, Տրիպոլիսի, Աւլանսատանի, Եղիպատոսի և այլ տեղերի ուխտագնացների վերաբերութեամբ, որոնց ձանապարհ Պօլսի միջով չէ:

Պօլսում պակաս մնացածը լրացնում են Հեջազում, Մահմէզի գերեզմանի և այլ սրբազն տեղերի շարջը: Այսուել օգնութեան է համառում Մերկացի Էմիրը, որ կրում է «altesse» արքայական տիտղոսը: Կրօնն ու բանակալութիւնը միշտ ձեռքձեռքի են առաջ գնում: Սուլթանը ուղարկում է «սարբազն կարտան», բեռնաւորուած ահազին կայսերական նուէրներով «նորին արքայական բարձրութեան» (altesse) Մերկացի Էմիրին, վերջինս էլ ոգեսրուած քարոզում է—Մարզարէի անտնից—հպատակութիւն խալամների ընդհանուր հրամանաւարին, մարզարէի խոհական վիխանորդ խալիֆին:

Պօլսից գնացող սրբազն կարտանի հետ գնում են ձարաւար քարոզիչներ, որ օգնում են Էմիրին իր համբաւամական քարոզութիւններում:

Ասում են որ այդ սրբազն տեղերում հաւաքում է մի ահազին դանձ՝ բոլոր ուխտաւորների նուէրներից, որ ծառայե-

լու է իր միջոց ապագայ սրբազն պատերազմին, երբ կը պարզուի Սանջաղը-Շերիֆը ընդդէմ անհատառների:

Այս ձեփի աշկարայ պրօպագանդի մէջն ենք տեղաւորում՝ և ֆէսի գործածութեան քարոզները թիւրքիայից դուրս, ե՛ ամեն ապրի ձրի ուղարկուող բազմաթիւ Դարաններն աշխարհի ամեն ծայրերը, և՝ «համիդիկ» անանով բացուող դպրոցներն ու մզկիթները և այն: Միմիայն 1899-ի Օգոստոս 9/21-ին լրացող սուլթանի 25-ամեայ յօրեւնի առիթով առնուազը 2—300 մզկիթներ, զօրանոցներ, աղբաւրներ և մեդրեսեներ (դպրոց) բացուեցան «համիդ» անունով ոկոած կապի զաղթականութիւնից՝ մինչև Հնդկաստան, Կայիրէ և այն:

Այն, Պօլսի համիսլամները գիտեն ճարպիկ կերպով օգտուել ամեն մի չաչին առիթից:

Պօլսի ու Հեծազի քարոզներով վասուած ուխտաւորները վերադառնում են իրանց երկրները և իրանք էլ վասում են իրանց տղէտ հայրենակիցների երևակայութիւնը խալիքի հարսաւթիւնովը, ուժով ու փառքովը: Ամեն մի հաջի զանում է մի տեսակ ուսմիկ պրօպագանդիստ համիսլամութեան զաղափարի: Եւ այսպէս՝ տարեց-տարի աւելի ու աւելի լայնացող շրջաններով առաջ է գնում համիսլամութեան պրօպագանդը:

Բէյրութից մինչև Հեծազ շինուելիք երկաթուղու շառլատանական ձեռնարկութիւնը, որ երեխ երբէք չը պէտք է իրականանայ՝ ծառայեց ու ծառայում է թիւրք քաղաքագէտների ձեռքում համիսլամական պրօպագանդի մի նոր ու զօրեզ միջոց—գլոթ ժամանակա որապէս: Աշխարհի ամեն ծայրերում բացուած են ստորապրութիւններ այդ «սրբազն ձեռնարկութեան» համար: Հանգանակուում են բաւական պատկառելի գումարներ, որ գալիս, թափւում են Պօլսի, սուլթանի անձնական նախագահութեան տակ գտնուող յոնձնամուղովի ձեռքբարձր իսկ երկաթուղին... կը շինուին մի քանի տասնեւեկ վերստեր և... կը թողնուի ամեն ինչ երեսի վրայ, մինչի որ շինուածն էլ քայլայուի: Հաւաքած զրամի մեծ մասը կը կանեն «օթօման ազգասէրները», իսկ մնացածը կը ծախսուի՝ սուլթանի միակ հոգսը կազմող՝ բանակի վրայ: Այս պէտք է լինի այդ գծի ամենահաւանական վախճանը:

\*  
\*\*

Ամրող աշխարհն արգէն ընդունում է որ թիւրք վարիչները շատ նուրբ դիպլօմատներ են: Եւ շատ էլ բնական է այդ: Նրանց երկրն այնպիսի զրութիւն ունի, շրջապատուած է այնպիսի պայմաններով, որ նրա վարիչները պէտք է անպատճառ

«մէկ ձեռքում երկու ձմերուկ բանով» ճարպիկ ու առա և վեց երեսանի դիպլօմատներ լինեն: Զբազմանքը, գիճակը, կեանքի անհրաժեշտութիւնն է գարծրել թիւ բակերին այդպիսի նուրբ դիպլոմատներ:

Բայց «նուրբ դիպլօմատ» լինել՝ չի նշանակում միշտ յաղթական գործող լինել, ուղիղ ու անսխալ գործել, իրականացնել իր գրած նպատակը: Այդպէս էլ լինում է թրքական դիպլոմատների հետ: Նրանք նրբօրէն ու խորամանկ ձեռքով գործում են, նրանք միշտ լողում են Սցիլայի և Քարիբդայի տրանքով... Բայց արդիւնքն ինչ պէտք է լինի. այդ արդէն պարզ է. մասնկանթիւն և քայլայում: Մեռածը չի կենդանանայ երբէք:

Թրքական ճարպիկ դիպլօմատութիւնը գործ է դրւում և համիմալամութեան հեռաւոր նպատակները նախապատրաստելու համար: Յատուկ պատուիրակներն ու մշտական զեսպաններն անդադար աշխատում են ստեղծել կատարեալ համերաշխատ թիւն իսլամական բոլոր կառավարութիւնների մէջ, նրանց կապել Պօլսի հետ, ընդունել տալ խալիֆի գերիշխանութիւնը: Թէ որքան այդ կը յաջողուի նրանց այդ, ապագայի խնդիր է. միայն մի բան ակներեն է որ Պարսկաստանի, Աւգանստանի, Թունիսի, Եգիպտոսի և Պօլսի վարչութիւնների մէջ տեղի են ունենում այդ մտքով անդադար սերտ յարարերութիւններ ու զրութիւններ: Այդ բանը չեն ծածկում Պօլսում և կարիք էլ չունեն ծածկելու. գաշնակցութիւններ կնքելու ազատ են բոլոր պետութիւնները:

Շահի այցելութիւնը Պօլս՝ դիտում էր թուրք լրացրութեան կողմից իր այդ իսլամ-համերաշխանութեան ամենախոշոր քայլերից մէկը: «Շահը եկաւ մեր էփէնտիք սովոր», բացատրում էին ամբոխին Պօլսի սորկական թերթերը, դիտելով այդ այցելութիւնը իր սուլթանի գերիշխանութեան ճանաչում:

Եգիպտական Խըզիֆի մշտական այցելութիւններն անպայման լինում են երկու խալամ երկրների համերաշխ զործունէութեան նպատակով:

Թրքական դիպլօմատին իսկապէս այնքան ճարպիկ գլունուեց որ՝ երբ 1900-ի սկզբներում՝ Թրանսիսի և Սնովիսի մէջ վէճ ծագեց Թունիսի Հինտերլանդի տիրապետութեան մասին, Բ. Դուռը կատարեալ բողոք բարձրացրեց, աշխատելով տպացուցանել որ այդ խալամ երկիրը և նրա բէյերն ընդունում են խալիֆի գերիշխանութիւնը, ուրեմն և Թիւքրիաֆ սեփականութիւն են: Բաւական ճարպիկ խաղերով Հինտերլան-

զի բէյերին ոտքի համեցին եւրոպացիների գէմ. Պօլիս ևկան փառաւոր ստորագրութիւններ բէյերի կողմից, որոնցով ինըդշում էին իրանց ալաշտավանել և յայտնում էին իրանց խորին հապատակութիւնը խալիքին:

Բայց այդ բոլորը մնաց «ձայն բարբառոյ յանապատի»: Եւրոպացիք իրոնոց «էշը քշեցին» և Բ. Դրան բողոքը մնաց արհամարհուած: Այդ է թոյլի վիճակը:

Հաղար անդամ տեսի ծաղրելի էր Պօլսի վարիչների բնած դիրքը գէպի բօքսէրները և չինական այլանդակութիւնները: Ակզենտում թրքական լրագրերը, յատկապէս Երևարզի օրգան Մալումարլ, ուրախութեան ճիչեր արձակեցին, գովեցին ու փառաբաննեցին Մանջուրիայի մահմեկական և չինացի բօքսէրների ազգայինական վարմունքը: «Կյուղէս պէտք է վարուել ծակամուտ ու կեղեքող եւրոպացիների հետ»...

Այս մի տեսակ կոչ նկատուեց զեսպանների կողմից: Կոչ, որ ուղղուած էր թրքական ոչպակաս զգուելի բօքսէրներին՝ քրդերին ու առնաւուաններին, բաշիրօզուքներին ու թուլումբայններին—յարձակուել եւրոպացիների և տեղական քրիստոնեանների վրայ: Զարիքն արժատում խեղզելու համար՝ գեսպանները միաձայն բողոքեցին թրքական մամուլի այդ այնդակառութեան գէմ:

Իսկոյն «Փրօնտը» փոխուեց: Երլարզի օրդաններն ակըստին առաջուան հակառակ երգեր երգել: Արոնք յարձակուեցան բօքսէրների այլանդակութիւնների վրայ, առաջ բերին զիվօմատի անձնաւորութեան սրբազան անձեռնմխելիութիւնը, համարեցին եւրոպացիներին իրր անհրաժեշտ բաղաբարող տարրեր յետամեաց երկրների համար և այլն: Նոյն տեսակ «Փրօնտի» փոփոխութիւն եղաւ և մզկիթների մէջ, առաջ խիստ համակրանք, յետոյ՝ ատելութիւն գէպի բօքսէրները—գէթ երեսանց:

Եըլտըզի պալատան էլ, մի հարուածով երկու նապաստակ վայր գլորել ուզելով խոկոյն կազմակերպեց մի պատուիրակութիւն ամենախորագէտ իմամմներից, տուեց նրանց չինարէնի մի թարգման և պատրաստուեց ուզարկել Մանջուրիա, խալիքի կողմից՝ իր հաւատացեաններին: Մի կողմից՝ սուլթանը սրանով ուզեց փարատել եւրոպացիների մէջ զէպի իր անձը մնացած կասկածները, միւս կողմից՝ ուզեց իր հետ կապել նոյն խոկ Մայրագոյն Արևելքի մահմեկաններին... Այդ յանձնախումբը պէտք է զնար և խրախուսէր՝ խալիքի կողմից՝ մանջուրական խլամմներին—յետ կանդնել ասլօրինութեան ձանապարհից»:

Բայց կտղմ ու պատրաստ կօմիսսիան և ամիս շարունակ մնում էր Պօլսում, որովհեաւ... փող չը կար ճանապարհուելու համար

Այս յայտնի սրբութագումի և դիպլոմատիական ակների միջոցների կողքին ընթանում է և մի այլ ձանապարհ—զայտնի պրօլագանդ, գտապրական գործունելութիւն այն զրացի բրիտանիայ պետութիւնների դէմ, որոնց մէջ բնակւում են իւլիսներ:

Ամեն տարի ցրւում են Պօլսից գէպի կողկաս, Խրիմ, Անդրկասպեան երկիր, Բոլգարիա, Ռումանիա, Հերցեգ-Յոսիա, Յունաստան բազմաթիւ մօլաներ, սօֆիաներ, իմամներ, իւլիսներ ու գերվիշներ: Նրանք տարածւում, մանում են այդ բոլոր երկրների խալամական յետադէմ տարրերի մէջ, վառութորութում են նրանց իսլամ ֆանաֆիկասութիւնը. իսուստանում են նրանց Մահմէզի զրախար բազմաթիւ հիսրիներով, եթէ միշտ վառ պահեն տաելութիւն իրանց սրտերում գէպի գեղագումները և կապուած մնան Պօլսի խալամ խալիֆի հետ, պատրաստ նրա կոչին լսելու, նրա մի մատի շարժումավ գաւելու իրանց օրինական պետութիւնը և միանալու «հաւատացեալինը» հրամանատարից հետ, ջարդելու անհաւատների լուծը, վիրականդնելու Մահմիկի լայնարձակ տիրապետութիւնը...

Համբարամական այս բարողներին յաջորդում է կանոնաւոր դաւադիր մարմինների կազմակերպութիւնը այդ բրիտանիայ պետութիւնների մէջ: Այդ մարմինները մի-մի համիսլամական կօմիտենեն են, որ յաճախ ունենում են իրանց տրամադրութեան տակ բաւական խոշոր նիւթական միջոցներ, զէնքեր ու կամաւոր զինուորների որոշ թիւ:

Ասում են որ կը զբարարութեամ կամ Ալաշկերտում, Սկօպում (Խւսկուք) կամ Պրիվենում այս օր կան մի քանի վայաներ, որ կրում են «հրամանատար այս-ինչ զնդիւ»: Իսկ այդպիսի գրնդեր Թիւրքիայում չը կրն. Նրանց բոլոր անդամները հպատակներ են ուռաւական, կամ բոլղարական պետութեան—նրանք այստեղ են ապրում, բայց արգէն զաղոնի զինուորադրուել են համիսլամական զաղափարին: Եթէ խալիֆը բարձրացնել այ «Անգազը-Շերիֆը», նրանք խալոցն պէտք է զարձնեն իրանց զէնքերը իրանց օրինական պետութեան դէմ, պէտք է դաւաճաննեն նրան և անշնեն Թիւրքիայի կողմը:

Ահա, ընթերցող, համիսլամականների դործադրած ամենազիստոր միջոցները, նրանց տակափան ու մեթօդները, գոնէ այնքան, որքան մեզ ծանօթ են:

Ինչպէս արդէն ասացինք, այդ բոլոր միջոցներով պէտք է զօրանայ թիւրքիան, դառնայ մի միաձոյլ իսլամական անյաղթելի պետութիւն, որի շուրջը պէտք է ժողովուեն բոլոր հաւատացեալները:

Եւ պէտք է այն ժամանակ դուրս խուժեն իսլամները թիւրքիայից, ջարգեն, փշրեն Ռուսիային, Բոլղարիային, Սերբիային, Աւստրիային, Յունաստանին և այլն։ Այս յարձակողական շարժման ժամանակ համիսլամական բոլոր գաղտնի մարմիններն ու կօմիտէտները պէտք է զէնք առնեն իրանց բոլոր կամաւորների, անցնեն Օթօմանների կողմը և արագացնեն Մահիկի թագաւորութիւնը—մի խալիֆութիւն, որի մի ծայրը պէտք է հանգչի Խավանիայում, միւսը՝ Զինաստանում, մէկը՝ Հարաւային-Աֆրիկայում, չորրորդը՝ Կազմն-Շահարում...»

Ահա համիսլամականների իդէալը, նրանց գիրագոյն տեսչները...

### III. ԳՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ

Տեսնենք այժմ, թէ նրբան կենսունակ, նրբան ապագայ խոստացող վարդապետութիւն է համիսլամութիւնը։ Քննութեան ենթարկենք նրան մի քանի խօսքով միայն։

Մարդկային հասարակութիւնների շարժման մէջ նկատում է երկու պարզորոշ գործողութիւն. կենտրոնացում և ապակենտրոնացում։ Միանման տարրերը ձգտում են կենտրոնանակ, համախմբուել, իսկ տարրեր տարրերը՝ բաժանուել, ապակենտրոնանալ։ Եթէ նմանութեան հիմքը շահերի, զոյութեան պայմանների մէջն է, միատեղութիւնը յարատեում է։ Նա աւելի ևս ամուր ու անքայլայի է լինում, երբ շահերի նմանութեան հետ լինում է և լեզուի, սովորութիւնների ու նոյն իսկ կրօնի նմանութիւն։ Իսկ եթէ նմանութեան հիմքը չեղաւ շահերի ընդհանրութիւնը, եթէ նա հիմնուած եղաւ լոկ ցեղային, լեզուական կամ կրօնա-մետափիզիկական կապերի վրայ—առանց գոյութեան դրական պայմանների նոյնութեան—այդ դեսակ միութիւնը կամ համախմբումը կը մնայ միշտ թոյլ թքով կպցրած և անպատճառ կը քայլայուի ուշ թէ շուտ։

Համիսլամութիւնը միակ վարդապետութիւնը կամ միակ քաղաքական ձգտումը չէ իր տեսակի մէջ։ Միատեղել, մի մարմին կազմիլ են ձգտում բոլոր գերմանական, սլաւոնական, լատին, անգլո-սպան ցեղերը։ Գերմանիան ձգտում է միացնել ձուլել իր հետ Հոլլանդիային, Գանցմարքին, Աւստրիային...

Հոկտեմբեր, 1901.

Այդ նպատակով անւում է մի շատ գօրեղ պրօպագանդ։ Օրինակ՝ Վիեննայի՝ պարլամենտական օրսորուկցիան, ժողովրդական անհամար ու յաճախ այլանդակութեան համառ ցոյցերի մէջ Վոլֆի և իր կուսակցութեան բոլոր քայլերը, նրանց նոյն խկ «los von Rom» («Հեռու Հռոմից»)՝ բաժանուել կաթոլիկութիւնից), «զծ և հիեր» («այստեղ» գերմաներէն և չեխերէն) հարցերը և այլն՝ պանդերմանական ձգտումների նշաններն են։

Զգտում են գէթ բարոյապէս, իբր դաշնակիցներ, միանալ Ռուսիան, Սերբիան, բողզարները, չեխերը, Ղարադաղը և այլն Այստեղ էլ լինում է մի խոշոր պրօպագանդ։

Բայց թէ պանդերմանիզմի, թէ պանսլավիզմի և թէ այլ համանման երեսյթների մէջ շարժումը ծնունդ է առնում փորից, նիւթական անհրաժեշտութեան, ժողովրդական խաւերի գրկից և յետոյ միայն անցնում է մտաւոր ոյժերի շարքերը՝ դառնում զուտ գաղափար։ Վարում նա լինում է մոնթ ու անորոշ, իսկ վեր ու վեր բարձրանալով՝ իբր կևանքի անհրաժեշտութեան արդիւնք, նա հետզհետէ աւելի ու աւելի պարզ ում, զօրանում, մշակում ու ամբողջացած թէօրիայի բնաւորութիւն է ստանում և քարոզում գօրեղ անհատների կողմից կամ գործադրութեան մտնում աստիճանաբար։

Իսկ այստեղ կենսական անհրաժեշտութիւնը կամ ժողովրդի վարի խաւերը դոյցութիւն չունեն։ Համիսլամութիւնը ծնուել ու արմատացել է լոկ մի քանի շահամոլ վարիչ լրջան ներում, օտարների ազգեցութեան տակ—և այնտեղից ուզում է տարրանալ ամբոխի մէջ, գուրս դալ թիւրքիայի նեղ սահմաններից և վարակել ամբողջ իսլամ աշխարհը։ Սա մի լոկ ձգտում է, չը հիմնուած ոչ մի գրական հիմքի վրայ—մի ուսուպիա, մի ցնորք, որին վիճակուած է, որքան ել նա ժամանականոր ազողութիւն գտնի, վիժուել, անհետ կորչել մարդկային պատմութեան էջերից։

Համանման միւս շարժումների մէջ—եթէ չը լինի նոյնիսկ նիւթականը՝ կայ գէթ մի լեզուական, ազգային, ցեղային հիմք, նմանութիւն։ իսկ համիսլամութեան մէջ գէթ այլ էլ չը կայ։ Այստեղ կապող տարրը միայն կրօնն է։ իսկ շահերը լեզուները, ազգութիւնները, սովորութիւններն ու ցեղերը յանձախ հակադիր ու իրար ջնջող են իսլամ ժողովուրդների մէջ ձիշտ է, նա գեռ բաւական զօրեղ ազդեցութիւն ունի ստոր զարգացման վրայ գտնուող իսլամ ցեղերի վրայ, բայց կրօնի փընրուն հողի վրայ չի կարելի ոչ մի հաստատուն շնչար հիմել մի ներկայ նիւթապաշտ դարսում։ Վաղուց արդէն հնացել է կրօնի կապող, հիմնական սկրունք լինելու գաղափարը։

Բայց, ընթերցող, մի վարկեան ևնթադրենք որ սխալ են նորագոյն ընկերագիտութեան վերջին նիւթապաշտ թէօրիաւները, ընդունենք որ կրօնը կարող է լինել մի սկզբունք, մի հասարակութեան համար կապող, միացնող մի յենակէտ, ևնթադրենք որ Ֆիւստէլ-Դը-Կուլանժը, Բախովինը և թէօրզներն իրաւունք ունեն—իշխամական կրօնը բաւական է մի հասարակութիւն կազմելու համար; Ընդունենք:

Այն ժամանակ առաջանում է մի հարց. կարող են անօթիները, նիւթականից զուրկ, անտեսապէս ստրուկ խալամները կազմել ոչ միայն մի համար խալիքատ, այլ գէթ մի փոքրիկ և ուժեղ պետութիւն... Այդ է էական հարցը:

Տաճկաստանի ողբալի սնանկութիւնն ամենքին յայտնի է: Նրա ներքին ուղղակի հարկերը չափաղանց ծանր ու քայլայիչ են հպատակների համար: Գաւառների մեծամասնութիւնն արդէն գալարւում է պարբերական սովոր ու համաճարակ աղքատութեան ճանկերի մէջ: Իսկ անուղղակի հարկերը, մամնաւանդ նրանց ամենաէական մասը—մաքսերը—ողորմելի ու չնշին: Ամեն տեսակ դրախ ներս եկող ապրանքից պետութեան վճարւում է արդէքի լոկ 80/օ-ը: Այս տեսակ չնշին մաքսը չի թողնում երբէք ներքին արդիւնագործութեան ծնել ու զարգանալ: Թուրքիան դառել է Եւրոպայի համար միայն մի հրապարակ, ուր կարելի է էժան հում նիւթ գնել և սուզ գնուի ծախել ֆարբիկատներ:

Կողմնակի հարկերից մի քանիսն էլ չափաղանց ճնշող ու քայլայող են, բայց նրանցից պետութեան գանձարանը ոչ մի օգուտ չունի: Նրանք վաղուց արդէն ընկած են օտարների ճանկը:

Մաքսային ինդիրներում պետութիւնն արդէն ստրուկ է Եւրոպայի երկաթէ ձեռքերի մէջ: 1899-ին և 1900-ին փորձ արին բարձրացնել ներմուծուող ապրանքների մաքսը 80/օ-ից 14-ի կամ գոնէ 110/օ-ի. բայց բոլոր գեսպանները մի մարդու պէս ոտքի ելան, ուետ դրին: 2<sup>1/2</sup> միլիարդ հրէշաւոր պարտքը ժայռի պէս նստած է թիւքը պետութեան ամեն մի քարի վրայ: Աղը, խմիչքները, մետաքսը, ծխախոտը, ոչխարի հարկը, մաքսաները, փարուսները, ձկնորսութեան իրաւունքը, ծովափերը —ամեն եկամտի աղբիւր խլուած է տանտիրոջ ձեռքից. նրանք բոլորն էլ ընկած են Եւրոպական դրամատէրերի ձեռքը: Իսկ դրամատէրերի ետևում կանգնած են զօրեղ բանակներ, նաւատորմիղներ, թնդանօթ... դրամատէրերի մի կողէկն անդամ չի կարող կորչի: Եւ ծծում, անվերջ ծծում են օտարները Թիւրքիայի բոլոր եկամուտները: Դիտակցօրէն պահում են զօրեղ պետութիւնները մեռնելու դատապարտուած Թիւրքիան տնտե-

սական քայլայման վիճակի մէջ, որպէսզի նա երբէք չը կարողանայ իր գլուխը բարձրացնել, ազատ շունչ քաշել, և միշտ մնայ խաղալիկ իրանց ձեռքում:

Թիւրք պետութիւնը մնում է աղքատ, մնանկութեան ճահճի մէջ, բաժան-բաժան լինելու, պարագերի փոխարէն բղբառուելու վտանգի անդունգի ափին կանգնած: Նրա ժողովուրդը գալարւում է տնտեսական քայլայման ու սովոր ճանկերին ծառայողներին գէթ տարեկան երկու անգամ ոռօճիկ տալու համար 9—12 վաշխառուական տոկոսներ է ստիպուած խոստանալ Եթլտըզը, որ 200,000 սոկի փոխ տուող գտնի, էլլ չի գտնում...

Եւ գեռ այս տեսակ ողորմելի ու մուրացիկ պետութիւնը համարձակում է համբաւական ոսկի երազներ տեսնել:

Ո՞չ, քօշաների, մուրացիկների և սնանկների տգէտ ամբոխը երբէք չի կարող ոյժ կազմել, զօրեղ պետութիւն հիմնել գրացիներին սպանսալ... Այդ ամբոխը դատապարտուած է տեղի տալու, կամաց-կամաց քայլայուելու և մեռնելու:

Համիսլամական վարդապետութիւնը զուցէ կարող լինէր գոյութիւն ունենալ Հարուն-ալ-Ռաշիդների, Օմարների և Ալիների ժամանակ. նա մեր ետևումն է—անցեալում, և ոչ մեր առջեռում—ապագայում:

Բայց—«խեղդուոզը ձեռքը նետում է փրփուրներին»: Քայլայւում, մեռնում է Թիւրքիան, հիւծւում է խալամակն աշխարհը եւրոպական քաղաքակրթութեան առաջ, և մահամերձ իսլամը «ձեռքը նետում է փրփուրներին», յուսահատական ճիգեր է անում, նոյն իսկ անմիտ ու տղայական ցնորքներով է իրան օրորում...

## ԱՊՈՐԱՆԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ

Եթէ կայ մեր գաւառներում մոռացուած մի անկիւն, ուր դարաւոր լուսաւորութեան ճաճանչները գեռ ամենեին չեն թափանցել, ուր ժամանակի սօցիալական էվոլյուցիայի անծայր տառանումների ալիքները գեռ չեն հասել՝ դա Ապարանն է։ Այսպէս է կոչուած իջմիածնի գաւառի այն փոքր մասը, որ երկարութեամբ փոռուած է ցանցի նման պատմական Արագածի արևելեան փէշերի վրայ և Քասախ զետի վերին հովտում։ Նրան զօտեռում են. արևելքից՝ Ղազախ, էշակ-Մէջդան և Դարաչիշագ անտառապատ լեռների արևեմտեան ճիւղաւորութիւնները, արևմուտքից՝ քառակագալթ Արագածը իր լայնանիստ փէշերով, իսկ հարաւից՝ մասամբ Արայի լեռառը (Ղառնի-Արադ)։

Ապարանը՝ բնութիւնից ծրարուած լինելով այդպիսի պատուարներով—լեռնաշարքերով, գլխաւորապէս ենթակայ է հիւսիսային և հարաւային քամիների արշաւանկներին։ Ծնորհիւքամիների արձակ ելմուտաքին, Ապարանի երկնակամարի տակ խոնաւութիւն բացարձակապէս գոյութիւն չունի. դա պայմանաւորուած է և նրանով, որ երկիրը՝ բնութիւնից օժտուած լինելով բարձրութիւններով, շարունակ տատանւում է օդերևոյթաբանական պամանների այն յաջորդականութեան մէջ, որ յատուկ է բացառապէս նման բարձրութիւնների վրայ ընկած բոլոր աշխարհագրական կէտերին։

Կլիման դաժան է։ Այն ժամանակ, երբ հարեւան երկրներում տիրող շոքը մրկում, տոշորում է ամեն ինչ, Ապարանում մրսելու չափ ցուրտ է. իսկ ձմեռը սոսկալի դժնդակ է. ձեան հիւսերը երբեմն այնքան բարձրանում են, որ ծածկում են դուռ ու երդիկ և կտրում հազորդակցութեան ճանապարհները։ Սովորական է այստեղ և բուքը, որից շատերը ճանապարհին բքարգել են լինում, և որ իր գոհերով յիշեցնում է երբեմն Սէն-Բերնհարդի վանքը իր լրջակագրով։

Զմնաը տեսում է այստեղ միջին թուով 7--8 ամիս, երբեմն

և աւելի. այս հանդամանքը շատ ծանր կնրպով է ազգում տեղական աղջաբնակութեան անտեսական վիճակի վրայ. որովհետեւ վերջինս սախուած է, չը նայած իր միւլչուր անտեսութեանը և ամբարած ձմբան աղբատիկ պաշարին, ամբողջ երկար ու ձիգ ամիսներ թէ իրան կերակրել և թէ անասունների համար ճարակ հայժայթել, որ շատ անտգամ ձգում է նրան վաշխառութեան ճանդը և անվճարելի պարտքերի տակ:

Երկրի գիրքը բարձր է և քար ու քոռու: Ապարանի բարձրաւանդակը՝ բարձր կանցնած լինելով իր սահմանակից դաշտավայրերից (Արարատեան և Շիրակի), ներկայացնում է վերջիններիս տեղագրական մի սուր հակապատկեր. նա ունի սեարգաւանդ և կոյս հող, որ իր յատկութեամբ և արդիւնաբերող ոյժով երկրի մնտեսական սկահանջներին բաւարարութիւն կարող էր տալ, եթէ մի քանի պայմաններ օգնութեան գալին Ապարանին: Բայց չը նայած այդ բնատուր յատկութիւններին, Ապարանի հայրերութեան քանակը այսօր շատ չնչին է: Համեմատած նրան ուրիշ գաւառամատերի հետ: Սրա զլսաւր պատճառներից (չը հաշուած երկրորդականները) առաջինը այն է՝ որ նա զրականապէս զուրկ է այն աշխարհազրական և կիրմայական յարմարութիւններից, որ բնութիւնը անինայ կերպով ընձեռել է ուրիշ տեղերի, երկրորդը՝ որ գա՞ չնորհիւ իր լեռնային գիրքի, չունի արհեստական կամ բնական ուղղման այն հնարաւորութիւնը, որ պատռում է ուրիշ ամուլ տեղերի գօրեղ կաշկանդանքը և օրգանիկ փունկցիա ներմուծում նրանց կարծրացած հողային խաւերի մէջ, իսկ երրորդը՝ երկրագործական տեխնիկայի նահապետական պրիմիտիւ սիստէմն է:

Ապարանում ցանքուր սկսում է մայիսին, երբեմն էլ վաղ կտմ ուշ, նայելով՝ թէ ձիւնը երբ է վերանում երկրից. խոտհարը լինում է յունիսին, իսկ հունձը—օգոստոսի վերջերին և զրիխաւորապէս սեպտեմբերին: Այն ժամանակ, երբ ուրիշ տեղերում հայահատիկները բալորովին լցում են կարմրում են, Ապարանում գիւղացին՝ գեռ նոր սթափուած ձմբան քնից, սկսում է իր վար ու ցանքը:

Ցանում են այստեղ ցորեն (կարմրահատ), զլսաւրապէս զարի, որ տեղական սարալանջերի և բարձրութիւնների վրայ յաջող աճում է, հաճար, որ սակաւ է պատահում, սօրօրով կտաւատ, որ գործ է ածւում առհասարակ գոմէչներ պարաւացնելու համար:

Սովիտակահատ այստեղ չը կայ, իսկ կարմրահատից պարաստած հայը լինում է մեծ մասամբ սե և ածիկ:

Հատիկներից յայտնի է ձաւարը (բլղուր), որ ծեծում են

բարից փորուած սանդերում կամ տեղական մի քանի ջրազաց-  
ներում զտնուող գինզերով։ Խոսի տեսակները կազմում են.  
խրփուկը (վարսակ), տուոյալը, որ քիչ է պատահում և այն էլ  
միայն ձիաների համար, մարգագետինների խոտը կամ սովորա-  
կան սէզը և փալախը. վերջինից զործում են կեմեր (ջովեր)՝  
խրձեր կապելու և երբեմն էլ զմբիլներ, խսիրներ պատրաստե-  
լու համար։ Կեմը զործում են մի փայտեայ տեսակ կեռ զոր-  
ծիքով, որ կոչում է «արջկան»։

Հայց հնձում են գերանդիով, որ այնքան էլ նպատակա-  
յարմար չէ այսպիսի քարոտ տեղերում, իսկ մանգաղով շատ  
սակաւ տեղերում։ Երաշտ տարիներում փետում են. փետանքի  
համար երբեմն հաւաքւում են գիւղի աղջիկները և փոխադարձա-  
բար միմեանց օգնում։

Երկրագործական գործիքները շատ հասարակ և նահապե-  
տական են. գերանդին, մանգաղը և խորի կուլ են գնացել ժամ-  
դի և հնութեան ժանիքներին։ Փոցխերի, բանոքիների (կեռ  
փայտեայ զործիք է՝ խուրձ կապելու համար), արօրների և ցաքե-  
րի մասին աւելորդ է խօսելը. բոլորն էլ հնութեան մի-մի  
փտած և մաշուած նմուշներ են. կամերը բաղկացած են հասա-  
րակ գայլախաղի անտաշ և բութ կտորներից, որոնք թէ անա-  
սունների աշխատանքն են դժուարացնում և թէ գործի ընթաց-  
քը դանդաղացնում։

Մի օրավար տեղը Ապարանում տալիս է մօտ մի գէզ, իսկ  
բարեյցաղող տարիներին 1—2 և աւելի. գէզը բաղկացած է 30  
լիրից և տալիս է մօտաւորապէս  $\frac{1}{2}$ —1 խալուար, իսկ բա-  
րեյցող տարիների՝ աւելի։ Այս հանգամանքում նշանակութիւն  
անի խրձերի մեծ և փոքր լինելը։ Խալուարը 30 կոտ է կամ  
25 փութ։

Գէտք է ասել, որ Արագածի փէշերի վրայ ընկած տեղերը  
(Քասախի աջ ամբ) աւելի բերրի են, քան Քասախի ձախ կող-  
մում, որտեղ մի մասը նոյն իսկ ջրաբրի է։ Հայերի կանոնաւոր  
և հետևողական զարգացման շատ խանգարում է տեղական  
ցուրտ կլիման։

Հայի գինը այստեղ շատ երերուն է. թանգ տարիներին  
հայի խալուարը բարձրանում է մինչև 40, նոյն իսկ 50 ո., իսկ  
գարիինը՝ 30—35 և աւելի։

Զմեռ ժամանակ խոտը այստեղ սաստիկ թանգանում է,  
մանաւանդ երաշտ տարիներին. լինում է որ խոտի խուրձը  
կամ յարդի մի կողովը մինչև 3 ո. է հասնում։ Ահա այս պատ-  
ճառով է որ ապարանցին յաճախ ստիպուած է իր ոչխարները,  
անասունները ի վաճառ հանելու կամ միշտ տանելու (Երարա-

տեան դաշտ) արանի տափարակները՝ մինչև գարնան սկիզբը

Ապարանի պարապմունքը բացառապէս երկրագործութիւնն է. բայց առ էլ, ինչպէս տեսանք, կատարւում է աննպաստ պայմանների մէջ և հին, նահապետական ձեռվ:

Ահա այսպիսի տխուր հանգամանքների չնորհիւ է, որ պարանցուն շատ քիչ է աջողութիւն հողաբաժնից ստացած արդիւնքով մի-կերպ գարուն ելնել, և նա ընդմիշտ դատապարտուած է խեղդուելու մինչև կոկորդը փոխառութեան խղճակի յարաբերութիւնների մէջ, որոնք խլում են նրանից աղակամք, անհատական ինքնուրոյնութիւնն և խոնարհնեցնում այն դարաւոր չարիքի առաջ, որ վաշխոառութիւն է կոչւում:

Չը կարողանալով մշակել երկիրը գիտութեան գրկարար ցուցմունքներով և մանաւանդ գտնուելով այնպիսի մի թիւպոտ երկնակամարի տակ, որտեղ ընութեան դժնութիւնը աքնում է, կարծես, ցոյց տալ իր բոլոր զօրութիւնը մի բուռն խեղճութեան վրայ, ապարանցին կորցրել է իր լաւատնս զգացմոնք. ները գէպի կեանքը, նրա օրինականութիւնը և ընկնել ապրելու անկամութեան և յունտեսութեան գիրկը:

Եթէ այս բոլորին աւելացնենք և այն, որ ապարանցին շատ անգամ չէ կարող ծեծել ամբողջովին իր հայագէղերը, որովհետև վաղահաս ձիւնը յաճախ դադարեցնում է ամեն մի տնտեսական շարժում և որ նա դատապարտուած է տարին ի բուն չորաբեկ գարեհացին, այն ժամանակ նրա անտեսական անձկութիւնը աւելի քան կը պարզուի: Մոռացայ ասել որ ամբողջ բնակչութիւնը զուրկ է գութաններից, բացի մի քանի բախտաւոր բացառութիւններից, և վարում է արտերը հասարակ արօրներով:

Ապարանի գլխաւոր գժբախտութիւններից մէկն էլ հողի սակաւութիւնն է, որի պատճառով անվերջ կոիւներ, վէճեր հարեան գիւղերի մէջ անպակաս են. և եթէ կայ մի բան, որ լցնում է Ապարանի առօրինակ կեանքի դատարկութիւնը և նրա գոյութեան միօրինակութիւնը,—դա հողի սակաւութեան վերաբերեալ հարցերի ժխորն է, որ երբեմն նշանաւորում է Ապարանի յետ ընկած գոյութիւնը, ստեղծելով իր յետեից ահագին, անհաւատալի ծախսեր և քաշըշուկներ այլնոյլ դատապարական ատեաններում:

Բացի երկրագործութիւնից, ինչպէս ասացի, ապարանցին աշխատանքի ուրիշ աղբիւր չունի: Նա պարապում է և անաւանապահութեամբ, բայց այնքան՝ որ նա կարողանայ իր առօրին ալէտքերին բաւարարութիւն տալ, և ոչ թէ վաճառանոց արտահանելու համար, ինչպէս ուրիշ տեղերում առհասարակ լի.

նում է: Անասուններից պահւում են, գլխաւորապէս, կթաններ և լծկաններ. բացի գրանցից, կան նաև էշ, ձի, իբրև բեռնակիր անասուններ, կթաններից յայսնի են. ոչխար, այծ, կով և մատակ. իսկ լծկաններից՝ նզ, արջառ, գոմէշ. այս բոլորն էլ, ի հարկէ, այսպիսի թուով են պատահում, որ շատերը նոյնիսկ զրկուած են իրանց սեփական վարելահողերը մշակելու կարողութիւնից և տալիս են նրանց ուրիշների ձեռքը այլեայլ, շատ անզամ աննպանա պայմաններով («կիմրար» հային):

Թէ ձիաները և թէ միւս անասունները այսուեղ շատ նիշնար, թուլակազմ և վտիտ են, համեմատած տեղական նստակեաց քրդերի և քոչկան լեռնականների անասունների հետ. սրա պատճառը այն է, որ Ապարանը զրկուած է այն ընտիր և ճոխ արօտատեղերից, որոնք գրաւել են տեղական քրդերն ու լեռնականները:

Լեռներից ամենաօդակարը Արագածն է, թէ իբրև սիզաւէտ և բուսականութեամբ պիրճ արօտատեղի և թէ իբրև լաւ ամարանոց. բայց, զժբախտաբար, սրա մի մասն էլ պարսիկներն են գրաւել, որոնք գարնան սկզբից փոխադրւում են իրանց ուղտերով, հօտերով այսուեղ և գրաւում սարալանջերի ամենալաւ մասը. զրանք դալիս են մեծ մասամբ Արարատեան դաշտից:

Քասախ գետը, որ կազմւում է Բաշ-Ապարան գիւղի աղբիրից, բոլորովին աւելորդ տեղ է բռնում Ապարանում, որովհետեւ նա, երկրի բարձր գիրքի չնորհիւ, ոչ մի իրական օգուտ չէ տալիս վերջինին, ոռոգման տեսակէտից. նա անցնում է բարձրութիւնների ստորոտներով, և նրա դաշտը, քանի դնում, այնքան աւելի է սեղմւում միակտուր ժայռերի միջին:

Ապարանի բնական հարատութիւնների մասին դժուար է մի բան ասելլ, որովհետև այդ կողմից մինչև այժմ ոչ մի գիտական հետազոտութիւն տեղի չէ ունեցել այսուեղ. սակայն հաւանական է, որ գէպի արհեկը ընկած լեռնագօտին երկաթպարունակէ: Բայցի զրանից, Արագածի հեռաւոր գագաթի ծերպերում առատ է ծծումբը, որտեղից քրդերը հրացաններով վայր են գլորում երբեմն խոշոր կտորներ:

Արագածի վրայ կան լճակներ, որոնցից մեծը դանւում է Ղազանֆար գիւղի վերեսում. կան նաև քանդուած պարիսպներ, խրամատներ: Լեռները ծածկուած են անտառներով. ծառեր այսուեղ չը կան, բացի թփերից և մացառներից. անտառները առատ են այլեայլ պտուղներով և բանջարներով. յայտնի են՝ մասուրը, որ ապարանցու սիրելի պտուղն է, արջի-թաթը,

կումբօղին, վայրի թթու խնձորը, շորը, տանձը հայն։ Առաջ  
է այստեղ և բլութը, որ շադանակի նման է և որ գործ է  
ածւում բորուած ձեռվ։ Գալով զիւղատնտեսական միւս ճիւղերին,  
պէտք է ասել, որ նրանք այստեղ զրեթէ զոյութիւն չունեն.  
օր. կաթնատնտեսութիւնը, մեղուաբուծութիւնը, բանջարաբու-  
ծութիւնը և այլն, չը նայած որ նրանց այստեղ պատուատելու  
համար լայն հող կայ։

Կաթից պատրաստում են զլիսաւրապէս իւղ և պանիր.  
պանիրը այստեղ երկու տեսակ է լինում. ճիւ կամ չչիլ պա-  
նիր և անքաշ կամ գլուխ-պանիր, որ սոխուկով է լինում.  
Գլուխ-պանիրի լաւ տեսակները քրդերի և քօչկանների մօտ են,  
որոնք զրաւել են լաւ արօտատեղիները և պահում են մեծ  
քանակութեամբ կթաներ։ Բացի զրանից կայ և մի տեսակ  
պանիր, որ կոչում է «ժամփիկ»։ Ժամփիկը պատրաստում են  
թանից, որ սկզբից լաւ եռացնում են, մինչև որ թանը կտր-  
ում է. յետոյ քամում են, աղում, սեղմում կարասները և թա-  
ղում փոշու մէջ։

Զմրան համար պատրաստում են և մի տեսակ թթու-կծու  
մածուն, որ կոչում է «անչնոց»։ Հաւ անսական է, որ այդպէս  
կոչում է նրա համար, որ նա ուտուում է առհասարակ մաթով.  
որ տեղացիք «ըրուր» են կոչում Մեղուաբուծութիւնը կարելի  
էր այստեղ զարգացնել, եթէ այդ մասին սրտացաւ հոգացողու-  
թիւն լինէր, մանաւանդ որ Ապարանը այդ կողմից մեծ յարմա-  
րութիւններ ունի. զրան իրքի երաշխիք կարող են ծառայել  
թէ երկրի երիներանգ ծաղիկները և թէ այն մի շարք փորձե-  
րը, որոնք կատարել են յաջաղութեամբ մասնաւոր նախաձեռ-  
նութիւնները։ Բանջարաբուծութիւնը նոյնպէս կարող էր ար-  
գինքներ տալ, եթէ նրա մասին ժողովուրդը գէթ տարրական  
զիսւլիքներ ունենար. սեղանի սովորական բանջարները, ինչ-  
պէս և լորի, վարունդ և այլն, որոնց համար գեռ գրեթէ ոչ մի  
փորձ չէ արուած, կարող էին այստեղ աճել. բայց չը նայած  
դրան՝ բնակչութիւնը տեղանում է, միան շատ քիչ քա-  
նակութեամբ, կարտոֆիլ, գազար, սոխ, բողի, շաղցամ, կա-  
ղամբ, ճակընդեղ, գետնախնձոր և արեածաղիկ. իսկ սովորա-  
կան դդումը, լորին, կարմիր և կանաչ պղպեղը, սխտորը և այն,  
ինչպէս և վիրկ յիշած արմախների մեծ մասը ներմուծում է  
դրախ։

Կաղամբը բերւում է Որդնաւ զիւղի կողմերից։

Արհեստական բանջարների պակասը ապարանցին լրա-  
ցնում է բնական բանջարներով։ Նա ձմրան համար մեծ քանա-

կութեամբ աղում է՝ խուլ և ծակ քեղ, որ տեղական լեռներում շատ է լինում, դանդոնիկ, երնջակ, դաղձ. թթու է գնում սոխուկ և չորացնում մեծ քանակութեամբ աւելուկ:

Բանջարներից յայտնի են նոյնպէս՝ սինձը, դաւիչոքը, որ թթուաշ-մարիոց համ ունի, թթուարաշը, պաճուկը և խաչսաշը:

Սրմաններից ուտում են՝ կոկչէս, մատուկ, որ սպիտակ և համեղ է լինում:

Տնայնագործութեան մասին խօսելիս պէտք է յիշել առանձնապէս Ապարանի գոյնզգոյն և ճամփաւոր ջէջիմները, կապերտները, խայտարղէտ խուրջիները, թեռերը, որոնք ապարանցի կնոջ՝ առօրեայ տնտեսութիւնից դուրս՝ ազատ ժամանակի արտագրութիւններն են: Բացի գրանից, այստեղ գործում են կտաւ չուխայի համար, ներկում են չիլա, ինչպէս և կտաւ (շապիկ պատրաստելու համար են զործ գրում): Ներկելու համար գործ են ածում զիխաւորապէս տորսոն կամ տեղ-տեղ նաև ներկարարներ (բոյալիսանա): Յայտնի են իրանց բանուածքով Ապարանի արախչիները և արսնները:

Տայնագործական փայտեղին իրեր քիչ կան, որովհետեւ տեղական ամանեղէնը և առհասարակ տնտեսական սարքը բազկացած է կաւից: Իւրաքանչիւր զիւզում կայ բրուտ, որ պատրաստում է կարասներ, բղուզներ, «ճէտիկներ», դրյու, քասաններ, թոնիրներ և այլն:

Ամանեղէնի պակասորդը լրացնում են հիւսուածքները. նլից հիւսում են սկաւառակներ, զամբիւզներ, իսկ ուռից, որ տեղական լեռներում լինում է (ծկուն), կողովներ, քթոցներ, ցախաւելներ և այլն: Ճիլը գտնուում է Բաշ-Ապարանի հիւսային կողմում, Տանադիրմազ զիւզի մօս տարածուող լճակում, որ «Ճի-Գեօլ» է կոչւում:

Երկրի տնտեսական յնատանացութեանը պակաս չեն խանդարում, մամսուանդ այսուհետեւ, հազորդակցութեան ճանապարհները, որ իւրաքանչիւր երկրի տնտեսական բարզաւաճման ուժեղ գործօններն են կազմում:

Մինչև այժմ ապարանցին կարող էր ազատ ժամանակը «Քրէնտարութեամբ» պարապել, որ նրա համար մի կողմնակի արդիւնք էր. նա իր սայլերով ապրանքներ էր փոխադրում Երևանից գէպի Ալեքսանդրապոլ, Համամլու, Ղարաքիլիսա և ընդհակառակը, բայց այժմ դա էլ գաղարելու է առ միշտ, Երևան, Ալեքսանդրապոլի երկաթուղային գծի երեան գալով:

Ապարանը մի զլիխաւոր ճանապարհ ունի (Երևանից դէպի Ալեքսանդրապոլ և Ղարաքիլիսա), որ միակ գիծն էր (իբրև

կտրուկ) Երևանի, Ալեքսանդրապօլի և Թիֆլիսի հաղորդակցութեան համար. այսաեղով էին անցնում շատ ճանապարհորդներ, մրգեր արտահանողներ և քրէնտարներ, որոնք ճնարաւորութիւն էին տալիս ճանապարհի վրայ ընկած զիւղերին վաճառելու իրանց համեստ տնտեսութեան մթերքներից, ինչպէս օր հայ, մածուն, կաթ, ձու, հաւ, գարի, խոտ, գարման ևալին, բայց այժմ նոր երկաթուղային զիծը այս էլ է կրծատելու Ուղեմն այն ժամանակ, երբ ուրիշ երկրների առաջ նորանոր ճանապարհներ են հարթում, Ապարանի առաջ փակւում է ամեն մի ելք, որ այսպէս թէ այնպէս նրան դէպի տնտեսական բարեկարգութիւն առաջնորդել կարող էր:

Ահա սրանք են այն բացասական տարրերից քչերը, որոնք պարզում են Ապարանի ընդհանուր ալղատութեան և տնտեսական յետամինացութեան պատճառական կամլու: Եւ եթէ այդ բացասական կողմնը մէջ կայ մի գրական բան, մի միջանկեալ օղակ, որ պահում է Ապարանի խախտուած տնտեսական ամբողջութիւնը, — դա ապարանցու, բնութեան այդ չարքաջաւակի, մրջիւնի աշխատասիրութիւնը, համբերատարութիւնն ու երկաթեաց լազուկն է, որով նա անխոնչ կուռում է անողիք բնութեան հետ:

Կեանքի անբարեյաջող պայմանները դարձել են ապարանցու պանդիտագրական մի զոհ: Վարուցանքից կամ հունձից յետոյ, Ապարանի զիւղերում մահալուու խոզաղութիւն է տիրում. բոլոր երիտասարդ ոյժերը զիմում են Արարատեան դաշտը, Շիրակ, Լոռի, Բօրչալու և Յաթում աշխատանքի համար՝ որ իրանց պարագերը և հարկը կարողանան վճարել Ընկնելով բոլոր ուրիշ կլիմացական և տարագիր պայմանների մէջ, նրանք շատ անգամ ջերմում, հիւանդանում են, երբեմն և մահանում՝ առանց որևէ բժշկական ինաւմքի:

Տնտեսականից աւելի անմիթար է Ապարանի մտաւոր կեանքը:

Տարիներից ի վեր Ապարանը խարիսխում է անօրինակ խաւարի ճիրաններում:

Ամենասարրական զրագիտութիւնը այսեկը չը կայ: Ա հաշուած մի քանի անհատներ (քահանաներ և զիւղական գրագիրներ):

Ամբողջ Ապարանում մի հատիկ ուսումնարան չը կայ: Քահանաների բարոյական և մտաւոր մակերևույթը գրեթէ չէ տարբերում ընդհանուրից. նրանց առաւելութիւնն այն է որ նրանք կարողանում են աւետարանը մի-կերպ հեգելով կարդա-

առանց մի բան հասկանալու կամ հասկացնելու ժողովրդին. չէ տարբերւում և նրանց նիւթական դրութիւնը:

Չմեռ ժամանակ մի քանի երեխաներ այս քահանայի կամ այս տիրացուի մօտ սովորում են այբուբենը, քերականը, Նարեկը, բայց գարնան գլխին գիրքը թողած՝ վազում են տաւարի յետերց և մոռանում սովորած:

Ապարանցիք գաղթել են Ալաշկերտից և Բուլանդից, մասմբ էլ վանի վիլայէթի հարաւային կողմերից (արևելեան Եփրատի ակունքներից). այս պատճառով Ապարանում երկու բարբառ կայ՝ վանի և Մշու, որոնք տարբերւում են միմեանցից թէ բառերի և թէ հնչիւնների առանձնայատկութեամբ: Բացի դրանից, կայ և մի գիւղ, Տանագիրմազ, (որ այժմ անցել է Ալքսանդրապոլի գաւառը), որ գաղթել է Դերջանից (Մամախաթուն) և խօսում է բոլորովին տարբեր լեզուով, որ իր մակարերութեամբ աւելի նման է Շիրակի գաւառաբարբառին:

Ողորմելի գրութեան մէջ են Ապարանի եկեղեցիները, որոնք բոլորովին բարձի թողի են արուած և իրանց արտաքին տեսքով այնքան գծուծ են, որ շատ անգամ գիւղացիների խըրճիթներից չեն տարբերւում. նրանք շատ մութ և խոնաւ են, իսկ յորդառաս անձրեների ժամանակ այնքան կաթում են, որ այստեղ մտնել և ազօթել միանգամայն անկարելի է: Սեղանը աւագանը և եկեղեցական սպասքը հին են գգգուած ու թողուած:

Նշանաւոր է Աստուածընկալ գիւղի Լուսաւորչի վանքը, որ շինուած է մեր պատմական եկեղեցիների ոճով. զարմանալին այն է, որ այս վանքի պատերը, որոնց վրայ արձանագրութիւններ կան, ամբողջ ժայռերից են կաղմուած, ինչպէս գիւղի խրճիթներից շատերը:

Ժողովրդի աւանդութեամբ այդ վանքը կառուցուել է Ս. Գրիգոր Լուսաւորչի օրով, Տրդատի աջակցութեամբ, որ, ինչպէս պատմում են, շալակել է այդ ահագին ժայռերը: Վարդավառին այստեղ հաւաքւում են բազմաթիւ ուխաւորներ թէ Ապարանի և թէ «արանի» գիւղերից (զլխաւորապէս Աշտարակի շրջանից): Ապարանի եկեղեցիները զանգակատուն կամ գմբէթ չունեն, զանգակները, սովորաբար, կախուած են լինում կտուրի վրայ Զ փայտերից:

Հետաքրքիր է Ապարանի դագաղը, որ իր ձևով ցոյց է տալիս՝ թէ որքան յամառութեամբ մնացել են այստեղ խորին անյիշատակելի հնութեան և նահապետականութեան նմուշները: Դադաղը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի սանդուխ (շարժական), որի վրայ շատ անգամ կապուում են գիակը, որ վայր չընկնի:

Յաւալի է և ժողովրդի առողջապահական դրութիւնը. չ  
նայած դաշտերի աքանչելի օդին, զիւղերում տիրում է վաս-  
ուող օդ. վերջին համբամանքին նպաստում են լուացքի ջրերը  
աղբերը, որ թափում են փողոցում, արտաքնոցները (բացօթեայ),  
որ, սովորաբար, կտուրի յետեւումն են լինում, և պասմաները  
որ փոխանակ գիւղից գուրս թափելու՝ շատ անգամ զիւղի մէջ  
են թափում:

Սենեակները անտանելի հակասառողջապահական պայման-  
ների մէջ են գտնւում, որոնք բացի խոնաւութիւնից և մթու-  
թիւնից, լցուած են գարշտհոտութեամբ, որ մեծ մասամբ առաջ  
է գալիս այն ախոռներից և գոմերից, որոնք սենեակներին կըց  
են գտնւում:

Բժիշկ ասած բանը Ապարանում չը կայ. շատերը հիւան-  
գանում են և մեռնում առանց որեէ բժշկական օգնութեան:

Բժիշկը գտնւում է Աշտարակում, որ ½ օրուայ ճանա-  
պարհով հեռու է Ապարանից, բացի զրանից, ապարանցին չ  
կարող բժիշկ բերել տալ, որովհետև առաջին՝ որ շատ թանգ  
կը նստի նրա վրայ (ճանապարհածախս և այցելավարձ) և երկրորդ՝  
որ նա քիչ է հաւատում բժշկական փրկարար ձեռնհասութեան,  
այս պատճառով նա շատ անգամ ընկնում է քիւրդ հեքիմների  
ձեռքը, մանաւանդ երբ ոսկորների խախտում է պատահում:

Ապարանը ենթարկում է Մողնու գործակալութեան:  
Իսկ ինչ վերաբերում է Ապարանի վարչական կազմակերպու-  
թեան՝ պէտք է ասել, որ նա աչքի զարկող տարբերութիւն  
չունի ուրիշ տեղերի հետ համեմատած:

Ապարանը գտնւում է իջմրածնի գաւառում. նա իր վար-  
չական կազմակերպութեամբ բաժանվում է երկու տանուտէրու-  
թեան՝ Բաշ-Ապարանի և Դարաքիլիսայի. առաջինի իրաւասու-  
թեանն են ենթարկում 12, իսկ երկրորդի՝ մօտ 14 զիւղ։  
Ամենամեծ զիւղերը, որոնց ծխերը 100—150-ից չեն անցնում:  
Արանք են. Բաշ-Ապարան, Ալիքուչախ, Ղարաքիլիսա, Զամբլու-  
և այլն. զրանք բոլորն էլ զուտ հայաբնակ են. Կան և մի քանի  
քրդական զիւղեր (հիւսիսային մասում) և թուրք զիւղեր (առ-  
ռաւ):

Տանուտէրութիւնը, ինչպէս ուրիշ տեղերում, այստեղ էլ  
ունի իր որոշ ստորաբաժանմունքները բոլոր ստորադրեալ գիւ-  
ղերում:

Ապարանում տանուտէրը մի սանձարձակ միապես է և իր  
բռնած հասարակական դիրքով յիշեցնում է Միջն-Ասիայի փոքր  
բռնակալներին:

Նրանից վախենում է զիւղացին, ինչպէս մահուանից, որոն-

հետև տանուտէրն է Ապարանի հասարակական կեանքի, ընթացիկ գործերի միակ ներկայացուցիչը և միջնորդը. նրա ցուցամունքներից է կախուած մի որևէ քաղաքացիական գործի աջող կամ անաջող ելք ունենալը, որովհետև ապարանցու առաջ փակուած է ամեն մի դատաստանական ճանապարհ՝ շնորհիւ. նրա տղիտութեան:

Տանուտէրերը գործում են անկօնտրօլ, կապում և արձակում են անհատական քմուհաճոքի թելադրութեամբ. կաշոքը, հարստահարութիւնը, անարդարութիւնը—ահա զիւզացու բողոքի ձայնը բռնադատող հոդէառը, որից նա սուկում է օրհասապէս և դժուար բռակէին բերում է նրա ոտքերի տակ իրրե զոհ իր տղբատիկ, իր դառնափիրտն աշխատանքի պտուղը՝ նրա քարացած սիրտը ամոքելու համար։ Տանուտէրին օգնականներ են համարում (թէև նա ունի իր թեկնածուն) բոլոր ստորազրեալ զիւզերի զիւզապետը, որոնք տեղական լիզուով կոչում են «ուէսներ»։ Դրանք իրանց իրաւական յարաբերութիւններով և պատասխանատութեամբ անմիջական կախումն ունեն տանուտէրից։

Տանուտէրին ընտրում են, սովորաբար, երեք տարով. ընտրութեան համար համախմբւում են նոյն տանուտէրութեան իրաւասութեան ենթարկուող զիւզերի բնակիչները զիւզական դատարանում կամ որտեղ տանուտէրն է մնում և սկսում են քուէարկել. քուէարկութեան երեքմն ներկայ է լինում պրիստաւը, իսկ շատ քիչ դէպքերում նաև դաւառապետը։

Այս ժամանակ բարձրանում է մի սողոմ-գոմոր և շատ բան կռուով է վերջանում։

Ով որ որոշ կախում ունի տանուտէրութեան թեկնածուներից մէկից, նա ստիպում է իր ազգականներին, ծանօթներին՝ որ նրան քուէարկեն, բացի գրանից, թեկնածուները իրանց գործը առաջուց տեսնում են. նրանք օղիով, որ Ապարանի նախամիրուած խմիչքն է, կաշառում են այն բոլոր ոչխարամիտ զիւզացիներին, որոնք քուէի ձայն ունեն։

Երկար վէջերից, ազմուկներից յետոյ, կայանում է ընտրութիւնը։

Ծնտրուած տանուտէրի առաջին գործն է՝ վրէժինդիր լինել այն բոլոր զիւզացիներից, որոնք այս կամ այն պատճառով նրան քուէարկելու պատիւը չեն ունեցել. պէտք է ասել որ այդ վրէժինդիրութիւնը շարունակւում է տանուտէրի դատավարական ամբողջ ժամանակամիջոցում։

Ծնտրութիւնից յետոյ շատ անգամ զիւզերում ծագում են

վէճեր և կոփւներ. գիւղացիները բաժանում են «նոր-տանուտէրական» կուսակցութիւնների, և «հակառնոր-տանուտէրական», որոնց վէճերն ու բանակուները այնքան սուր կերպարանք են ստանում, որ համում են մինչև արխւնեղութեան:

Բացի գրանից, տանուտէրի ներկայութեամբ ընտրում են օգնականներ (ոչ մներ), ինչպէս ասացի, և դատաւորներ, որոնք բոլորն էլ պաշտօնապէս կախումն ունեն առաջինից:

Տանուտէրից պակաս չեն գործում այստեղ գիւղական գրագիրները և երբեմն հարկահաւաքըները. առաջինները, օդտուելով գիւղացու տգիտութիւնից, իրանց ցոյց են տալիս իրաւաբանական միշ-միշ փորձառու և խոհուն գլուխներ և մանուածապատ ճանապարհներով կեղեքում են խեղճ գիւղացուն, ամեն անգամ նրան միշ-երկու տող խնդիր հայն գրելու համար:

Հարկահաւաքութիւնը նոյնպէս զերծ չէ խճճանկներից. հարկահան են ընտրում գրագէտի մէկին, որ ի չար գործ դնելով իր այդ իրաւունքը, առանց արզահատութեան գգացը մունքի, քամում է գիւղացու կենսականութեան վերջին հիւթերը՝ մէկի տեղ շատ անգամ եռապատիկ պահանջելով:

Իւրաքանչիւր գիւղ ունի իր գիւղական ժողովը (ԾԽՈՃ), որտեղ ձայների բազմութեամբ կազւում են գիւղական վճիռներ, ընտրում են հաւատարմատարներ, հանգապահներ, գիշերապահներ, հովիւներ, նախրորդներ, հորթարածներ և այլն: Բացի գրանից, ամեն կիւրակէ դատաւորները հաւաքւում են կենտրոնական գիւղերը (Ղարաբիլիսա և Բաշ-Ապարան), որտեղ գտնում են գիւղական հասարակութեան դատարանները, և տանուտէրերի ներկայութեամբ վճռում են գիւղական ընթացիկ հարցերը:

Հետաքրքիր են իրանց ինքնայտուկ ձեռվ Ապարանի տները. Նրանք բաղկացած են միշ-միշ երկար սրահնից, երբեմն լարիւրինթոսի նման ծուռումուու: Սրահում գտնուում է առհասարակ մառանը, որտեղ պահուում են տան մթերքները. բայց գրանից, սրահում լինում են և գռներ, որոնք տանում են գէպի գիւղական օգան կամ ախոռը: Սրահում շարուած են լինում 1 կամ 2 կողմից էլ ամաններ, կարասներ, տաշտեր, որոնց մէջ լինում է կաթ, մածուն, թան, կարագ, արածան, բանջարներ և փոշու մէջ թաղուած կարասներ: Սրահը տանում է գէպի ներքին նահապետական տունը, որտեղ համախմբուած ապրում են տան բոլոր անդամները, դրանք, բացի իրանց ներքին անպաճոյն սարք ու կարգից, լինում են սաստիկ խոնաւ. և մութ. պատերը ներսից սուազած են լինում, սովորաբար, կաւախան հողով, որ շատ անգամ փլւում է, իսկ թոնիրը վառելիս նրանք

քրտնում են և խոնաւանում: Պէտք է ասել, որ այստեղ մնացել է նահապետական բազմանդամ ընտանիքի ախալը, թէ ի բաժանուելու սովորութիւնը կայ: Տների կտուրները մի տեսակ կոնչածի են, այսինքն ներքետում լայն և կլոր, իսկ վերեւում քանի վնում նեղանում են, այնպէս որ մի փոքր բացուածք է մնում, որ կոչում է երդիկ. վերջինը ծածկելու համար գործ են ածում «չիմ», այսինքն կանաչապատ մի հողաշերտ (ճօրի):

Տների առաստաղները ծածկուած են լինում թանձր ձանձախարիթով, որ թոնրից է գոյանում:

Տարուայ բոլոր եղանակներում թոնիրները ամեն օր վառւում են. վաստում են նրանք սովորաբար 8—9-ին և հանգչում 10—11-ին, նայելով թէ խմորը երբ է համուռմ: Զմեռ ժամանակ թոնիրը ապարանցու վառարանն է:

Արտասովոր ձև ունեն Ապարանի «ամրոցները». այդպէս են կոչուում տարիթերից կազմուած բարձր կոյտերը, որոնք իրանց ձևով յեցնուում են Բագուի նաւթային բուրգերը. ամրոցներ ծեփելու համար հաւաքւում են գիւղի աղջիկները և օգնում միմեանց փոխադարձաբար: Ամրոցի զլսին խփում են սովորաբար մի աւել, իսկ ներսը լցնում են առօրեայ վառելքք՝ աթար և «փային»՝ տաւարի տակ ցանելու համար:

---

Հետաքրքիր են նաև Ապարանի կենցաղավարական նիստ ու կացը, սովորութիւնները, աւանդական կարգերը, ապարանցու ընդհանուր հսկերանութիւնը, ձմեռ ժամանակ օգաներում տեղի ունեցող զրոյցները, Տեառնընդառաջը (տէրնտէզ), բարեկնդանը, հարսանիքի նկարագրութիւնը և այլն և այլն: Ապարանցին շատ աստուածավախ մարդ է. նա ամբողջովին մարմնացած հաւատք է. տարուայ բոլոր մէջ ընդ մէջ պատահող պասերը նա ճշտութեամբ պահում է, իսկ մեծ պասին մինչև ճաշ ծոմ է պահում: Ապարանցին գաղթած լինելով Ալաշկերտի հողից՝ իր հետ փոխազրել է այն բոլորը, ինչ որ նրա անցեալ կեանքի կազմող տարերն էին կազմում: Մատաղ օրիորդներ և երիտասարդներ, որոնք «առուրազի» վրայ են, բայց սովորական պասերից, պահում են ո. Սարգսի, ո. Կարապետի, Վարդավառի, Աստուածածնի և այլ շաբաթապատճեր ամրողապէս:

Ուսիքին ապարանցու սովորական կերակուրը թանապուրըն է, իսկ պատին վոփիկը: Յայտնի է Ապարանի ածիկը. լուացած ցորենը դնում են տաք տեղ, մինչեւ որ նա ծլում է և ածկանում:

Ապարանցին շատ հիւրասէր է. առաջին անգամ եկող հիւ Հոկտեմբեր, 1901.

րի ոտները լուանում են, որ յիշեցնում է Հայր Աբրահամի և Ղովտի հովուական կեանքը։ Այստեղ կայ և մատաղահացի սովորութիւնը։ Այս բոլորի հետ ապարանցին իր կեանքի բոլոր միջնադէպերը, արկածները ճակատագրական նախորոշման վերագրում։

Ամուսնութիւնը այստեղ նոյն պայմանների մէջ է կատարում, ինչ որ այլ գուառներում աղջիկների համար տրում է գլխագին (բաշլղ), նայած նրանց գեղեցկութեան կամ տնարարութեան։ Այստեղ լինում է և առևանգում։

Աղջիկները մարդու են զնում 12—15 տարեկան հասակում, այս բանը լաւ բնորոշում է Ապարանի «Իմալ Էնեմ» յայսի երգը, որ պ. Զիլինկարեանը «Մուրճի» անցեալ համարներից մէկում մէջ էր բերել՝ ընդհանրապէս հայ (գաւառների) և մասնաւորապէս Ապարանի կանանց մասին խօսելիս։ Ի դէպ է տաելոր պ. յօդուածագիրը՝ Ապարանի կանանց բարոյականութեան մասին խօսելիս՝ խոտացրել էր, առհասարակ, իր նկարագրական ոճը, որով ընթերցողը կարծում է ակամացից, թէ այդ կամաք շատ քիչ են յետ մնում սովորական վկուրտիզանկաներից։ Ամեն երեսութիւնը մէջ բացասական կողմը, ճիշտ է, աւելի է աչքի զարկում, քան զրականը, որքան էլ որ առաջինը թոյլ լինի, հետեարար չէ կարելի, բացառութիւնների վրայ յենուած, նսեմացնել ապարանցի կնոջ բարոյական հեղինակութիւնը հասարակական ճանաչողութեան առաջ, նոյնպէս էլ չէ կարելի ասել թէ Ապարանում կրքերի ազատութիւնը մթնացրել է ընտանեկան սկզբունքի սրբութիւնը Ընդհակառակը, ապարանցի կինը բուն ազգային բնոյթ ունի. Նրա մէջ է արտացոլում ամուսնական անօրինակ հաւատարմութիւնը և ոչ այն կանանց, որոնք եւրոպականութեան քօղի տակ խախտում են ամեն ինչ։ Պէտք է այն էլ ասել որ նախապաշարմունքները և նախապետական աստուածավախութիւնը դարձել են ապարանցի զոյգին այդ կողմից մոլեռանդ և մի տեսակ առասպելական միլեմօն և Բաւկիդա։ Բացառութիւնների նկատմամբ, որ սովորական է, կարելի է միանալ հեղինակի տեսակէտին։

Այս բոլորից յետոյ աւելորդ չէր լինի խօսել Ապարանի բնական գեղեցկութեան, որ նրա միակ օբեկտիւ արժանաւոթիւնն է կազմում, և տեղական երգերի մասին։

Ապարանը իր գեղանկար գիրքով և սքանչելի տեսարաններով շատ անցորդների ուշադրութիւնն է գրաւել. Նրա ինկար ծաղիկները, որոնք ծածկում են լեռներն ու հովիտները, առողջարար և զով կլիման, ականակիտ և սառնորակ աղբիւները, որոնք կիսախեղդ գուրս են ժայթքում այս կամ այն ժայ-

աի տակից, տալիս են Ապարանին մի տեսակ բնական զարդ, մի ուրոյն հմայանք: Եւ եթէ կայ մի բան, որ ծածկում, պօշում է Ապարանի մերկ ու «տկլող» իրականութիւնը, դա բնութեան արտաքին գեղեցկութիւնն է:

Աղբիւրների կարկաչը, երփներանգ ծաղիկների բոյրը, բլուրների և լեռների տեսարանները միախառնուած մարդկային երգի, ձայների հետ լրացնում են Ապարանի բնութեան իդիլլիական ամբողջութիւնը... Եւ, յիրաւի, զուր չէ ասել նշանաւոր փիլիսոփիայ ժան-ժակ՝ Ռուսսօն. «Բոլորը՝ ինչ որ բնութեան ձեռակերտն է, գեղեցիկ է, իսկ ինչ որ մարդու՝ տգեղ». այդ համեմատութիւնը աւելի ուժեղանում է Ապարանում, ուր մարդկային հոգեվարք ձեռակերտերը, որոնց մէջ կուչ է եկել մարդկային գոյութեւնը, աւելի զգալ են տալիս բնութեան նկարչութիւնը, բնութեան անմիջական տպաւորութիւնը...

Զարմանալի է ապարանցու մեղեղիագիտական ընդունակութիւնը. շատ ժողովրդական ընտիր երգեր և լէլէներ, որոնք այժմ այլ և այլ վարիանտներով երգւում են ժողովրդի մէջ, Ապարանից են դուրսիեկել. օր. «Յերգից զուրս ելայ», «Ծամերդ», «Ա'րի, սիրուն», «Ես սարէն կու գայի» և այն. Այդ լէլէներից մի մասը հաւաքել է, ինչպէս յայտնի է, Գարեգին վ. Ցովսէփեանը, իսկ մի քանիսը ձայնագրել է Կոմիտաս վարդապետը:

Ապարանցու երգերի թեման զլիաւորապէս վիշտ է և բողք կեանքի հասցէին և նրա անսարդար վճռի դէմ. երգերի բառնաստեղծական մասը շատ պարզ և երբեմն անսերդաշնակ է, բայց մեղեղիագիտականը խոր է և աւելի տրամադրող, քան այն, որի մէջ թէ երաժշտական տեխնիկա, թէ ներդաշնակութիւն և թէ ակկորդներ կան. Պոկուած լինելով Ալաշկերտի հողից՝ ապարանցին գաղար չունի իր հողի վրայ. նա գարդու է կեանքի պայմաններից և անցեալի երանութիւնից... Այն կեանքի, որ այժմ վառում է նրա մէջ կրքի լեզուն՝ իր հող-գլուխը ողբալու, և զուրս պոկում նրա մրրկուող կրծքից՝ մղկտուն գալարումներ և կլլոցներ՝ «վայ զունեա, քեաֆուր զունեա»...

ՍԱՐԳԻՍ ՄԱՀՏԵՍԻ-ԻՍԱՀԱԿԵԱՆ,

# ՖՐՈՄՈՆ ԿՐՏՍԵՐ

ԵՒ

## ՌԻՍԼԵՐ Ա.Ի.Ա.Գ

II

ՄԵՐԼԱՋՈւՄՅՆԵՐ:

—Օ՞չ, պարոն Սիգիզմունդը... Հրօ, ինչպէս էք, քեզ  
Սիգիզմունդ: Ի՞նչպէս են ձեր գործերը... Լաւ են:

Ծերունի գանձապահը բարեհոգի կերպարանքով ժպում  
էր, սղմելով գործարանատիրոջ և նրա կնոջ ու եղրօր ձեռ-  
քը և, խօսելով հանդերձ, հետաքրքրութեամբ դիտում էր իր  
շուրջը: Սէնտ-Անտուանում էր այդ, Պրօշասնների որմաթղթի  
գործարանում, որի մրցութիւնը արդէն վտանգաւոր էր գա-  
նում: Ֆրօմօնների առետրատան այդ նախկին գործակատարնե-  
ոը շատ փոքր չափսերով էին սկսել գործը և հետզհետէ կարո-  
ղացել էին իրանց համար զիրք ստեղծել վաճառանոցում  
ժօրժի հօրեղբայրը երկար ժամանակ օղնել էր նրանց իր  
վարկով, իր փողով՝ զրա չորհիւ բարեկամական յարաբերու-  
թիւններ էին հաստատուել այդ երկու առետրատների մէջ և  
մի հաշիւ էր մնացել, —տասը, տասնհինգ հազար ֆրանկի, —որ  
վերջնականապէս չէին մաքրել ֆրօմօնները, իմանալով, որ փո-  
ղը ապահով տեղ է:

Գործարանը արդարե հիմնաւոր տեսք ունէր: Ծիմնելով  
ները հպարտ-հպարտ թափ էին տալիս իրանց շոգիէ բաշերը:  
Աշխատութեան խուլ աղմուկից երեսում էր, որ արհետանոց-  
ները լիքն են ու եռուն: Ծինութիւնները լաւ էին սարքուած,  
ապակինները ջինջ էին, առհասարակ ամեն ինչ աշխայի-  
զուարթ ու կարգապահ տեսք ունէր, և գանձարանի ցանցապա-

տի յետեռում ևղբայրներից մէկի կինը, պարզ հագնուած, հարթ անրած մազերով, երխասասրդ դէմքի հեղինակաւոր արտայայտութեամբ, նստած ուշի ուշով հաւում էր թուանշանների մի երկար շարք:

Սրտի խորքումը գառնութեամբ էր մտածում ծերունի Սի- գիզմունդը այն տարբերութեան մասին, որ կար, մի կողմից, ֆրօմօնների՝ երեխն այնքան փարթամ, իսկ այժմ միմիայն իր նախկին հոչակով դոյութիւն շարունակող առետրատան և, միւս կողմից, իր առջեր եղած հիմնարկութեան յարաճուն բարզաւածման մէջ։ Նրա խուզարկու հայեացքը տնտղում էր այդ հիմնարկութեան ամենամանր խորչերը, վնտոելով մի պակասութիւն, քննազատելու մի կէտ, և որովհետև ոչինչ չէր կարողանում գտնել, սիրալ ճմլւում էր և ժպիտը կեղծութեան ու շփոթմունքի արտայայտութիւն էր ստանում։

Նրան ամենից շատ դժուարացնողը այն էր, թէ ինչ ձեռվ ուղէր իր պատրօններին համնելիք փողը, որ Պրօշասօնները չը նկատէին նրանց դրամարկղի նեղ դրութրւնը։ Խեղճ ալեորը աշխատում էր աղաս ու անհող կերպարանք ընդունել, բայց մարդու մեղքը գալիս էր վրան նայելիս... Իրանց գործերը լաւ էին դնում... շատ լաւ... Պատահմամբ անցնելիս էր եղել այդ կողմերով և մտել էր նրանց մօտ... Դրանից էլ բնական ինչ կարող է լինել։ Մարդ կարօտում է հինաւուրց բարեկամներին։

Բայց այդ յառաջաբանները, այդ հետզհետէ աւելի ու աւելի մանուածապատ խօսքերը չէին մօտեցնում նրան ուզած հարցին, այլ, ընդհակառակը, հեռացնում էին հարցից, իսկ յետոյ, երբ նրան թուաց, թէ զարմանքի արտայայտութիւն է երեսում իր ունկնդիրների աշըռում, նա բոլորովին շշկուեց, սկսեց կմկմալ, գլուխը կորցրեց և, իբրև փրկութեան վերջին միջոց, զվիսարկը վերցրեց ու այնպէս ցոյց տուեց, թէ գնում է։ Երբ հասաւ դրանը, յանկարծ մտաբերեց։

—Հա, լաւ միտքս ընկաւ, բանի որ եկել եմ...

Եւ նա աշքով արեց, կարծելով, թէ շատ խորամանկ արտայայտութիւն է տալիս դէմքին, մինչդեռ իսկապէս խղճալի կերպարանք ստացաւ։

—Քանի որ եկել եմ, լաւ չը լինի, որ մի քիչ մաքրէինք մեր հին հաշիւները։

Երկու ևղբայրները և հաշուեսեղանի յետեր նստած ջահէլ կինը մի վայրկեան իրար երեսի նայեցին, չը հասկանալով նրա ասածը։

—Հաշիւները։ Ի՞նչ հաշիւներ։

Յետոյ երեքն էլ միաժամանակ սկսեցին ծիծաղել ի բոլոր

սրտէ, կարծես թէ ծերունի գանձապետը սասափիկ թունդ կատակ արած լինէր: Ինչեր ասես չի ասի այդ քեռի Պլանիւսը... Եւ խեղճ Պլանիւսը ինքն էլ ծիծաղում էր հետները: Ծիծաղում էր, առանց ծիծաղը գալու, այլ միայն նրանց պէս արած լինելու համար:

Վերջապէս բացատրուեց հարցը: Ինքը Ֆրօմօն կրտսերը, վեց ամիս առաջ, եկել էր վերցրել նրանց մօտ մասցած փողը:

Սիզիզմունդը զգաց, որ ծնկները ծալւում են: Սակայն նա քաջութիւն ունեցաւ ասելու.

—Ախ, ճիշտ որ, բոլորովին մտահան էի արել... Զէ, մոռացկոտ եմ դարձել... Երեսում է, որ շատ եմ ծերացել, որդիքս...

Եւ ալեորը դուրս գնայ սրբելով աչքերը, ուր զեռ փայլում էին արցունքներ մի փոքր առաջ արձակած քրքիջից: Իսկ նրա յետնից Պրօշասօնները թափ էին տալիս գլուխները, նայելով իրար երեսի: Նրանք հասկացել էին:

Ստացած հարուսածը այնպէս էր շշմացրել գանձապետն, որ գուրս գալուն պէս ստիպուած եղաւ նստարանի վրայ: Ահա թէ ինչու ՓօրՓ այլ ևս փող չէր վերցնում դրամարկոցից: Նա ինքն էր հաւաքում իրանց համնելիք փողերը: Ուրիշ տեղերում էլ նայնը պէտք է լինէր, ինչ որ Պրօշասօնների մօտ Ուրեմն բոլորովին անօգուտ էր ենթարկուել նոր ստրացումների: Այս, ճիշտ է, բայց պայմանաժամը, պայմանաժամը... մը... Այդ միտքը ոյժ տուեց նրան: Նա սրբեց իր քրտնաթոր ճակատը և շարունակեց ճանապարհը վճռելով մի անգամ էլ բախտը փորձել, մտնելով նոյն արուարձանում: Պանուող իրանց պարտապաններից մէկի մօտ: Սակայն այս անգամ որոշ նախադգուշութիւններ ձեռք առաւ և ներս չը մտած, չէմքիցը գոռաց գանձապետին.

—Բարե, քեռի այս ինչ... Մի բան ունեմ ձեզնից հարցնելու...

Եւ, ջղաձգաբար սղմած ձեռքով դուռը կիստքաց պահելով, շարունակեց.

—Ե՞րբ ենք մաքրել մեր վերջին հաշիւը: Մոռացել եմ մտահանը գցել:

Օ՛, վաղուց, շատ վաղուց էին մաքրել հաշիւը: Ֆրօմօն կրտսերի ստացականը սեպտեմբերին էր գրուած: Հինգ ամիս էր անցել:

Դուռը ձեռաց փակուեց:

Այդ էլ երկու: Անչուշտ միևնույն բանն էր լինելու առնելու:

«Ա՛խ, պարոն Շօրշ, պարոն Շօրշ...» շշնջում էր խեղճ Սիզբղմունդը, և մինչ նա այդպէս շարունակում էր իր շրջագայութիւնը, տիկին ֆրօմօն կրտսերի կառքը անցաւ ուզդակի նրա կողքով, դիմելով դէպի Օռէանեան կայարանը. բայց Կէրը չը տեսաւ ծերունի Պլանիւսին, ինչպէս մի քիչ առաջ տանից դուրս գալիս չէր տեսել այ. Շէրին իր հրկար սիւրտուկով, ոչ էլ հոչակաւոր Դըլօրէլին իր ծալովի ցիլնդրով, պայմանաժամկետ մի այդ երկու այլ զոհերին, որոնք, զանազան կողմերից գալով, միաժամանակ ծոեցին Վիշելլզօդոփէտ փողոցը, նպատակակէտ ունենալով գործարանը և Խիսլէրի քսակը: Խեղճ կինը այնպահ մտահոգ էր իր անելիք քայլի պատճառով, որ սիրտ չունէր փողոցին նայելու:

Մտածեցէք: Ի՞նչ սարսափելի դրութիւն էր: Գնալ հարիւր հազար ֆրանկ խնդրելու Գարդինուայից, մի մարդուց, որ պարծենում էր, թէ երբէք իր կեանքումը ոչ պարտք է վերցրել, ոչ պարտք տուել, որ տեղի անտեղի պատմում էր, թէ մի անգամ միայն ստիպուած լինելով հօրից քառասուն ֆրանկ խնդրել մի կրկնավարտիք առնելու համար, նա վերադարձրել էր նրան այդ քառասուն ֆրանկը փոքրիկ գումարներով: Ամենքի, նոյն իսկ իր գերդաստանի վերաբերմամբ ծերունի Գարդինուան հետեւում էր այն կծծիութեան աւանդութիւններին, որ հողը, գաժան և յաճախ իր մշակողների նկատմամբ ապերախտ հողը կարծես պատուաստում է բոլոր գիւղացիներին: Ծերունու համար վճռած բան էր, որ քանի ինքը կենդանի է, իր վիթխարի կարողութիւնից մի շիւղ անգամ չի անցնելու իր գերդաստանի ձեռքը:

—Երբ որ մեռնեմ, այն ժամանակը կարող են տիրանալ իմ գոյքին,—ասում էր նա յաճախ:

Այդ սկզբունքի հիմն վրայ, նա մարդու էր տուել իր աղջկան, Կէրի մօրը, բոլորովին անօժիտ, թէև յետոյ չէր կարողանում ներեւ իր վիւսային, որ նա հարստացել էր առանց իր օգնութեան: Որովհետեւ այդ՝ որքան շահասէր, նոյնքան և սնափառ բնաւորութեան առանձնայատկութիւններից մէկն էլ այն փափազն էր, որ ամենքը կարօտութիւն ունենան իրանից, խունարհուեն իր փողի առաջ: Երբ ֆրօմօնները հրճում էին նրա առաջ այն բանից, որ իրանց գործերը սկսում են լաւ գնալ, նրա՝ բզով ծակած սատանայ աչքերը ծիծաղում էին հեգնօրէն և նա այնպիսի եղանակով էր ասում՝ «ամեն բանի վերջն է գովելի», որ մարդ սարսում էր զգում: Երբեմն էլ, երեկոները, Սավինյում, այն ժամանակ, երբ պուրակը, ծառուղիները, գղեալի տանիքի կապտագոյն հերձագարերը, գոմանոցների

կարմրագոյն աղիւսները, լճակները և աւագանները շողզողում էին հրաշալի վերջալոյսի ճաճանչներից, այդ օտարութի նորելուկը, աշքը չորս կողմը ման ածելուց յետոյ, բարձրաձայն առում էր իր որդիների ներկայութեամբ.

—Երբ մահս միտս է գալիս, միայն այն է ինձ մխիթարում, որ ոչ ոք մեր ընտանիքից այնքան հարուստ չի լինի, որպէս զի կարողանայ պահել այս դղեակը, որ տարեկան յիսուն հազար ֆրանկ ծախք է պահանջում:

Եւ սակայն այն ծերունական գորովի չնորհիւ, որ նոյն իսկ ամենաչոր ու ցամաք պապերն էլ գոնում են իրանց սրակ խորքում, Գարդինուան ուրախութեամբ կը Փայփայէր իր թուախն: Բայց Կէրը, դեռ երեխայ ժամանակից, մի անյաղթելի հակակրութիւն էր զգում դէպի այդ նախկին գեղջուկի մասըրտութիւնը և պարծենկուտ եսամոլութիւնը: Իսկ երբ տարբեր գաստիարակութեամբ անջատուած մարդկանց չի կապում սէրը, հակակրութիւնը սաստիանում է հազար ու մի ձևով: Երբ Կէրը ամուսնանալու էր Ժօրժի հետ, ծերուկը ասել էր արիկին Ֆրանսին:

—Եթէ աղջիկդ ուզի, արքայավայել ընծայ կը ստանայ ինձանից. բայց ոչինչ չեմ տայ առանց իր խնդրելու:

Եւ Կէրը ոչինչ չէր ստացել, որովհետեւ չէր կամեցել խնդրել:

Ո՞րքան ծանր էր այժմ գնալ՝ աղաչելով հարիւր հազար ֆրանկ ուզել այն մարդաց, որի առատածեռնութիւնը այզպէս արհամարհել էր նա երեք տարի առաջ, զնալ ստորանալ, լսել անվերջ քարոզներ, տխմար ծաղրանքներ, համեմուած դռնիկ կատակներով և գեղջկացին գարձուածքներով, կարծ, բայց տրամաբանական մագլիք հնարած այդ ընդհանրապէս ծիշտ ասացուածքներով, որոնք իրանց ուսմիկ ունակ վիրաւորում են իր ստորադաս մարգու նախատինք:

Խեղճ Կէր: Յանձին նրա ստորանալու էին իր ամուսնը և իր հայրը: Պէտք էր խոստովանել ամուսնու անյաջողութիւնը և այն առևտուատան կործանումը, որ հիմնել էր հայրը և որով այնքան հպարտ էր նա իր կենդանութեան ժամանակ: Այն միաքը, որ նա կարիք էր ունենալու պաշտպանելու այն, ինչ ամենից շատ էր սիրում աշխարհում, կազմում էր նրա ոյժը և միենոյն ժամանակ նրա թուլութիւնը...

Ժամի տասն և մէկն էր, երբ նա հասաւ Սավինի: Նա ոչ ոքի իմաց չէր տուել իր գալու մասին, ուստի և դղեակի կոտոքը չէին ուղարկել կայարանը, այնպէս որ նա ստիպուած էր ու տով զնալ դղեակը:

Սաստիկ ցուրտ էր և ճանապարհը կոշտացած էր ու չոր: Քամին աղատ-արձակ վիշտում էր խոպան գաշտերում և տերեաթափ ծառերի ու մաւցանների միջով անարգել անցնում դէպի գետը: Ցածր երկնքի տակ ձգուած էր զղեսակի պարիսպների և ցանկապատների երկար գիծը, որով նա գատուամ էր շրջակայ գաշտերից: Տանիքի հերձաբարերը մթնողել էին իրանց արտացոլացրած երկնքի նման, և այդ տմբողջ հոյակապ ամարանոցը, ուր ձմեռուայ գաժան նշից ամեն ինչ համրացել էր և ոչ մի տերեն չը երեսում ծառերի վրայ ու ոչ մի աղաւնի՝ կտուրների վրայ, այնպիսի տեսքը ուներ, կարծես ոչ մի կենդանի բան չը կար մէջը բացի աւազանների խոնաւ ծփանքից և բարձրաբուն կազմակերի մրմաննջից, որոնք ձկուում էին դէպի իրար, ճօճելով իրանց կատարներում խուճուծ ընկած կաչաղակաբոյները:

Հետուից տիսուր ու մոայլ կերպարանքով էր երեսում կլէրին իր ջահէլութեան տունը: Կլէրին թւում էր, թէ նա նայում է իր վրայ այն սասր, արիստօկրատ կերպարանքով, որով նա սովորաբար նայում էր մեծ ճանապարհի անցորդներին, որոնք կանալ էին առնում նրա վանդակապատի սրածայր ճաղերի առաջ:

Անշունչ իրերի դաժմն կերպարանքի:

Բայց չէ, ոչ այնքան գաժան, որովհետեւ Սալինին իր՝ վակուած առաջով կարծես ասելիս լինէր նրան՝ «Յետ զնա... ներս մի մտիր»... Եւ եթէ կլէրը լսած լինէր նրան, իր հրաժարուէր իր ծրագրից և իսկոյն և եթ կը վերպառնար Պարիզ ու կը պահպանէր իր սրտի անդորրութիւնը: Բայց խեղճիկը չը հասկացաւ տան ասածը և արդէն նիւֆունդլէնդեան ահազին շոնը, որ ճանաչմլ էր նրան ու չոր տերենների միջով դատքտելով վազել դէպի նա, նշում էր հերին վակ զարպասի միջով:

—Բարե, Ֆրանսուազ... որտեղ է պապիկը, —հարցրեց կլէրը պարտիզամուհուց, որ եկաւ բանակու զարպասը՝ խոնարհ, չողոքորթ ու դողոջուն, ի՞չպէս զղեսակի բոլոր ծառաները, երբ իրանց վրայ էին զգում տիրոջ աշքը:

Պապիկը իր գրասենեակումն էր, զիստոր շէնքից անկախ մի տաղաւարում, ուր նա ամբողջ օրեր էր անց կացնում քրքրելով իր թղթերի կապոցները, մատեանները և ահազին կանաչարմատ հաշուեղբքերը մի տեսակ զիւանամոլութեամբ, որ յառաջ էր եկել նրա սկզբանական տղիտութիւնից և այն ֆանտաստիկական տպաւորութիւնից, որ նրա վրայ մի ժամանակ գործել էր իրանց զիւղի նօտարի զրասենեակը:

Այդ բոպէին նա վակուել էր այնանց իր պահապանի հետ, որ մի տեսակ զիւզական լրաւ էր, վարձկան մասնիչ, որ հա-

ղորդում էր նրան կալուածում ու շրջակայքում տեղի ու նեցած բոլոր դէպքերը, բոլոր խօսք ու զրոյցները:

Կալուածատէրի սիրելին էր դա: Նրա անունը Ֆույինա էր և նրա ճապաղ, խորամանկ ու արիւնոռոչտ գլուխը բոլորովին համապատասխանում էր այդ անուան \*

Երբ թոռը ներս մտաւ՝ գունատ ու գողդոջուն իր մուշտակի մէջ, ծերուկը խսկոյն հասկացաւ, որ ինչ որ լուրջ ու արտասովոր բան է տեղի ունեցել, և նշան արեց ֆույինային, որ անհետացաւ, ալկուեց կիսաբաց գռնով, կարծես թէ պաստկուելով պատի մէջ:

—Հը՞ ինչ է պատահել... ինչու ես այդպէս այլակերպուել —հարցրեց պապը՝ նստած իր ահապին գրասեղանի յետեին:

Կլէրը յիրաւի սաստիկ շփոթուած, այլայլուած, այլակերպուած էր: Սրադ քայլուածքը, ցուրտը, այն ճիգը, որ նա դործ էր դրել այդտեղ զալու համար, մի արտասովոր արտայայտութին էին տուել նրա դէմքին, որ այնքան ծանր ու անդրբր էր վնաս սովորաբար: Զը նայելով որ պապը ամենեին ցանկութին ցոյց չը տուեց հետք համբուրուելու, նա գնաց համբուրուեց ու նըստեց կրակի առաջ, ուր չոր մամուռով պատած ցախը և պուրակի ծառուղիներում հաւաքած խողակները՝ վառւում էին կենսալից փայլով և հիւթալից ճարճատիւնով: Կլէրը, առանց ժամանակ կորցնելու նոյն իսկ քողքի վրայի եղեամը թափտալու, անմիջապէս սկսեց խօսել, հաւատարիմ իր վճռին մտնելուն պէս յայտնելիր այցելութեան շարժառիթը, նախ քան ազգուելը այն երկիւղի և պատկառանքի մթնոլորտից, որ շը ջապատում էր պապին, դարձնելով նրան մի տեսակ ահեղ աստուածութիւն:

Լաւ սիրտ էր հարկաւոր չը շփոթուելու, խօսքը չընդհատելու համար այդ սրաթափանց հայեաչքի առաջ, որ հինգ առաջին խօսքիցը չարախինդ փայլ ստանալով՝ սեեռուել էր նրա վրայ, և այդ վայրագ բերանի առաջ, որի անշարժ անկիւները կարծես հուզ էին եկել զիտաւորեալ լուսւթիւնից, յամառութիւնից և ամենաթեթե զգայնութեան բացասութիւնից: Կլէրը մի չնչով ասաց բոլորը, լի պատկառանքով, բայց առանց ստորացման և ծածկելով յուզումը ու հաստատութիւն տալով ձայնին իր խօսքերի մէջ պարունակուող ճշմարտութեամբը: Մարդ որ նրանց տեսնէր այդպէս դէմ առ դէմ, մէկին սառը, հանդիսաբաղկաթուում երկար մեկնուած ու ձեռները մոխրագոյն բաճկոնի գրպանները խրած, իսկ միւսին՝ ուշադիր իր արտասանած

\*) Fouine=թռիոր (մի տեսակ կուզ):

ամենաշնչին խօսքի վերաբերմամբ, կարծես թէ այդ խօսքերից ամեն մէկը կարող էր դատապարտել իրան կամ արգարացնել, —երբէք չէր ասիլ թէ պապ ու թոռ են դրանք, այլ կը կարծէր անպատճառ, թէ մեղադրեալ է այդ՝ դատական քննիչի առաջ:

Ծերունին հոգով սրտով հճնուում ու հպարտանում էր իր յաղթանակով: Վերջապէս յաղթուեցին այդ գոռոզ մարունները, Ուրեմն դեռ կարօտութիւն ունէին ծեր Գարդինուայից: Մնա փառութիւնը, նրա այդ գերիշխող յատկութիւնը, ակամայ արտայայտում էր նրա ամբողջ արտաքինի մէջ: Երբ Կլէրը խօսքը վերջացրեց, պապը բերանը բաց արեց ու, բնականորէն, սկսեց «Ես հաւատացած էի, որ այդպէս կը լինի... ես ասում էի... ես դիտէի, որ վերջը յայսնի կը լինի...» խօսքերով, եւ շարունակեալով նոյն գոեհիկ ու վիրաւորական եղանակով, վերջացրեց ասեւ լովոր: «Փակատի ունենալով իր սկզբունքները, որոնք շատ լաւ յայտնի են իր ընտանիքին», նա չի կարող պարտք տալ ոչ մի սույ:

Այն ժամանակ Կլէրը խօսեց իր մանուկի մասին, իր ամուսնու անուան մասին, որ միևնույն ժամանակ և իր հօր անունն էր և որ խայտառակուելու էր չնորհիւ մնանկութեան: Ծերունին մնաց նոյնքան սառն, նոյնքան անողոք, որքան և առաջ, և օգտուեց նրա ստորացումից նրան աւելի, ևս ստորացնելու համար, որովհետեւ նա պատկանում էր իսկական գեղջուկների տիպին, որոնք գետին տապալուած թշնամուց չեն հեռանում առանց իրանց ունամանների մեխերի հետքը թողնելու նրա երեսին \*):

—Ես գեղ միայն այնքանը կարող եմ ասել, թոռնիկս, որ Սավինին բաց է ձեր առաջ... Թողմարդդ գայ այստեղ՝ ինձ էլ հէնց մի քարտուղար է հարկաւոր: Ժօրժը քարտուղարութիւն կ'անի և կը ստանայ հազար երկու հարիւր ֆրանկ տարեկան ոռնիկ ու բոլորիդ ապրուսար... Առաջարկիր նրան այս պայմանները իմ կողմից ու վեր կացէք եկէք...

Կլէրը ոտքի կանգնեց զայրացած: Նա եկել էր իրքեւթոո, իսկ այստեղ նրան ընդունում էին իրեն մուրացկանի: Փառք Աստուծու, գեռ այդտեղ չէին հասել:

—Կարծում ես, —ասաց պ. Գարդինուան աշքը վայրագ կերպով թարթելով:

Կլէրը, զողդոջուն, գնաց դէպի դուռը առանց պատասխանելու նրան: Ծերունին նշան արեց, որ կանգնի:

—Զգոյշ կաց, դու չը գիտես, թէ ինչից ես հրաժարւում...

\* ) Արևմտեան Եւրոպայում զիւղացիների ունամանների կրունկներին մեծ մեխեր են խփուած լինում:

Լսում ես, քո օգտի համար էի առաջարկում, որ համոզես մարդուդ գալ այստեղ... Դու չը զիտես, թէ ինչ կեանք է վարում նա այնտեղ... Զը զիտես, ի հարկէ, ապա թէ ոչ չէիր գալ ինձնից փող ինսդրելու, որպէս զի իմ փողն էլ գնայ այնտեղ, ուր քոնն է գնացել... Օ՛հ, ինձ շատ լաւ յայտնի են քո հոգեւորի գործերը ես իմ ոստիկանութիւնն ունեմ Պարիզում և նոյն իսկ Անֆէրում, ինչպէս Սավինիում... Ես զիտեմ, թէ այդ սուտ ճգնաւորը որտեղ է անց կացնում գիշեր-ցերեկ, և չեմ ուզում, որ իմ փողերը գնան անտեղարենք, ուր նա է գնում Այդ տեղերը բաւականաչափ մաքուր չեն ազնիւ միջոցներով ձեռք բերած փողերի համար:

Կլէրը զարմացած ու դառնացած չոեց աչքերը, զգալով որ այդ բոպէին ինչոր սարսափելի զրամա էր մանում իր կեանքի մէջ մատնութեան ցած դոնով: Ծերունին շարունակող քմծիծաղ տալով.

—Օ՛օ, շատ վչարարն է այդ Սիդոնին:

—Սիդոնին:

—Ինչ արած, բերնիցս արդէն դուրս թուաւ անունը... Ասենք, միենոյնն է, մի օրից մի օր դու անպատճառ իմանալու էիր: Նոյն իսկ զարմանալի է, որ այսքան ժամանակ... Բայց դուք, կինարմատներդ, սարսափելի մեծամիտ էք... Մաքներով շատ դժուար է անց կենում, թէ կարող են ձեզ դաւաճանէլ... Էհ, այո, Սիդոնին է խժուել մարդուդ փողերը և անշուշտ իր ամուսնու համաձայնութեամբ:

Ու անխնայ կերպով պատմեց Կլէրին, թէ որտեղից էր Սիդոնին փող ձեռք բերել Անֆէրի ամարանոցի, ձիերի, կառքերի համար և թէ ինչպէս էր կահաւորուած նրանց փոքրիկ ու սիրուն բնիկը Գարբիէլ փողոցում: Նա ամեն ինչ բացատրում էր տեղն ու տեղին, մանրամանօրէն: Պարզ երևում էր, որ մի նոր առիթ գտնելով իր լրտեսամոլութիւնը գործ գնելու, նա մնձ եռանդով օգտուել էր այդ առիթից. թերեւ, բացի զրանից, այդ գէպքում անորոշ կերպով գեր էր խաղացել նաև մի խուլ զարոյթ Սիդոնիի դէմ, մի քէն, որ բղիսում էր երբէք չը խոստաված ծերունական սէրից:

Կլէրը լսում էր առանց բան ասելու, թերահաւատութեան սիրուն ժպիտը երեսին: Այդ ժպիտը գրգռում էր ծերունուն, իսթանում էր նրա չարակամութիւնը... Ա՛խ, դու ինձ չես հաւատում... Ա՛խ, դու ապացոյցներ ես ուզում... Եւ նա տալիս էր ապացոյցներ, կուտակում էր նրանց իրար վրայ, կարտում էր նրա սիրտը գանակով: Եթէ չի հաւատում, թող գնայ Լա-Պէ փողոցի գոհարավաճառ Դարշի մօտ: Երկու շաբաթ առաջ Ժօրժը

այնտեղ մի աղամանդէ զգնոց էր առել երեսուն հազար ֆրանկով: Սիդօնիի կաղանդչէքն էր այդ: Երեսուն հազար ֆրանկի աղամանդ՝ սնանկանալու բոպէին:

Եթէ ամբողջ օրը խօսէր ծերունին, կլէրը չէր ընդհատի նրա խօսքը: Խեղճը զգում էր, որ եթէ ամենաշնչին ճիգ անգամ գործ դնէր, արտասուքը դուրս կը զեղար լցուած աշքերից, իսկ նա, այդ քաղցրիկ, այդ արիասիրտ էակը, ուզում էր ժըպտալ ընդհակառակը, ժպտալ մինչև վերջը: Միմիայն ժամանակ առ ժամանակ նա նայում էր դէպի ճանապարհի կողմը: Նա շտապում էր դուրս գալ, փախչել այդ չարասիրտ ճայնի հնչիւնից, որ հալածում էր նրան անգթաբար:

Վերջապէս ծերունին լոեց, ինչ որ ունէր ասելու ասաց: Կլէրը զլուխ տուեց ու զնաց դէպի դուռը:

—Գնում ես... ինչու ես այդպէս շտապում... ասաց պապը դուրս գալով նրա յետնից:

Իսկապէս նա մի քիչ ամաչում էր իր վայրագութիւնից:

—Չես ուզում նախաճաշել ինձ հետ:

Կլէրը զլսով չէ ասաց. Խեղճը ոյժ չունէր խօսելու:

—Գոնէ սպասիր, որ լծեն... տանեն, կայարան հասցնեն:

Չէ, չէ ու չէ:

Եւ կլէրը շարունակում էր քայլել, ծերունին էլ նրա յետից:

Ճակատը բարձր ու հպարտ՝ կլէրը անցաւ այդպէս բակով, որ լի էր նրա մանկութեան յիշատակներով, առանց գէթ մի անգամ յետ նայելու: Եւ սակայն որքան քաղցր ծիծազների արձագանքներ, որքան արևի շողքեր էին մնացել իր ջահէլութեան օրերից այդ բակի ամենամանը աւազահատիկների մէջ:

Նրա սիրած ծառը, նստարանը իրանց մշտական տեղումն էին: Նա ոչ մի հայեցք չը գցեց նրանց վրայ, ոչ էլ թոշնանոցի փասիանների, ոչ նոյն իսկ գոմիփոռ կիսսի վրայ, որ զլուխը քաշ հետեւում էր նրան, սպասելով փաղաքշանքի, որին չարժանացաւ սակայն: Կլէրը ներս էր մտել այդտեղ իբր այդ տան դաւակ, իսկ դուրս էր գալիս իբր մի խորթ մարդ՝ սարսափելի մտատանջութեամբ, որ միմիայն սաստկանալ կարող էր երջանիկ ու անդորր անցեալի ամենաշնչին յիշողութիւնից անդամ:

—Մնաք բարե, պապի:

—Գնաս բարե:

Եւ գարպատը շրխկաց նրա յետնից: Մենակ մնալով կլէրը սկսեց արագ-արագ քայլել, գրեթէ վազել: Նա չէր քայլում, այլ զլուխ էր փախցնում: Յանկարծ, կալուածի պարսպի ծայրին

հասնելով, նա նկատեց այն չ փոքրիկ քաղցրանիկներով ու այժմերիներով շրջապատուած կանաչ դուռը, ուր գտնուում էր դղեակի պօստարկզը: Բնազգօքէն նաև կանգ առաւ, ցիշողութեան այն յանկարծական սթափումներից մէկի ազդեցութեան տակ, որոնք տեղի են ունենում մեր մէջ վճռական բուգիներին և վերին աստիճանի պարզ կերպով վերարտագրում են մերաշքի առջև մեր կեանքի ամենաաննշան անցքերը, որոնք որ է առնչութիւն ունեն ներկայ աղէտի կամ ուրախութեան հատիւնչորան զարթեցեց այդ ցիշողութիւնը նրա մաքում թերեւ արելը, որ յանկարծ ամպերի միջից դաւրս գալով, իր շնչու վարդագոյն շողքերով լուսաւորեց զայնապարած զաշտը այդ ձմերային կէսօրապերջին այնպէս, ինչպէս օգոստոսին՝ վերջալոյսի ժամին: Թերեւ նրան շրջապատող լուսութիւնը, որ փանկարում էին միայն բնութեան ներդաշնակ շնուկները, որոնք գրեթէ միակերպ են լինում տարուայ բոլոր նզանակներին:

Այսպէս թէ այնպէս նա տեսաւ, ինքն իրան այնպէս որ էր այդ նոյն տեղում երեք տարի առաջ այն օրը, եր նա պօստարկզը մի, նամակ գցեց, որով Սիդօնիին հրաւորու էր գալ մի ամիս անց կացնել իր հետ ամարանոցում: Սիրով վկայում էր, որ իր դժբախտութիւնը այդ բուգինը էր ակուեր «Ախ, եթէ իմանայի... եթէ իմանայի...»: Եւ նրան այնպէս էր թւում, թէ դեռ ևս զգում է մատների ծայրին՝ արկդը ընկնդու պատրաստ ողորկ ծրարը:

Ու մտածելով, թէ ինչ միամիտ, յուսալից ու երջանիկ ամսուկ էր ինքը այդ միջնոցին, նա, չը նայելով իր սովորական հեզութեանը, զայրոյթով փառուեց կեանքի անարդարութեան դէմ: «Ինչու, ինչու իմանայի... եթէ իմանայի...»: Եւ նրան այնպէս էր թւում, թէ դեռ ևս զգում է մատների ծայրին՝ արկդը ընկնդու պատրաստ ողորկ ծրարը:

«Եետոյ, յանկարծակի վճռեց, «Ոչ, ճիշտ չէ այդ: Անկարելի է այդ... Առւտ են ասում...» Եւ շարունակելով ճանապահը որէպի կայարանը թշուառ կինը աշխատում էր համոզել ինքն իրան, հաւատացնել, որ լսածը սուտ է: Բայց այդ չէր յախզում նրան:

«Ընդնշմարուած ճշմարտութիւնը սքօղուած արել նման է, որ աւելի է յոգնեցնում մարդուս աչքերը, քան ամենավառ շողքը: Խեղճ կինը իր ուղեցածից աւելի պարզ էր տեսնում այն կիսախաւարի մէջ, որով դեռ շրջապատուած էր նրա դժբախտութիւնը: Այժմ նա հասկանում էր, կարողանում էր բացատրել իր ամուսնու կենցաղավարութեան տարօրինակութիւնն: Որը, նրա բացակայութիւնները, մտատանջութիւնները, որոնք ունեցած զինուած կերպարանքը և այն հանգամանքը

որ երբեմն տուն գալիս նա ամենայն մանրամասնութեամբ պատմում էր, թէ որտեղարևնք է եղել այդ օրը, շարելով իրար յետեից զանազան անուններ, իբր ապացոյցներ, որ նրանից պահանջող չը կար: Այդ բոլոր նկատումներից ակնյայտնի երեսում էր ամուսնու մեղքը: Սակայն Կլէրը զեռ չէր ուզում հաւատալ այդ բանին և սպասում էր Պարիզ հասնի՝ բոլոր կասկածանքներին վերջ տալու համար:

Ոչ ոք չը կար կայարանում, որ մի փոքրիկ մեկուսի և տխուր կայարան էր, ուր ոչ մի ճանապարհորդի չի կարելի հանդիպել ձմնոր: Կլէրը նստած այնտեղ սպասում էր գնացքին, մաքամուր նայելով կայարանապետի մնամաղձիկ պարտէզին և երկաթուղու գծի պատնէշին փաթաթուած պատուտակների մնացորդներին: Յանկարծ մի թաց ու տաք շունչ գցաց իր ձևնոցի վրայ: Նրա բարեկամ Կիսան էր այդ, որ յետեիցն եկել էր և այժմ յիշեցնում էր իրանց կատարած երթեմնեան ախորժ զրուանքները, երբ ինքը թրվում էր, զուսպ կերպով ցատքը տում, արտայատելով իր խոնարհ հրճուանքը, և ի վերջոյ իր փառահեղ սպիտակ մորթիով երկարուձիդ փոկւում: Իր տիրու հու ու ուգերի մօտ, սպասողական դահլիճի սառը յատակի վրայ: Տեսնելով այդ խոնարհ վազաքշանքները, երկշոտ ու անձնուէր համակրութեան այդ արտայայտութիւնները, Կլէրը այլևս չը կարողացաւ պահել լացն ու սկսեց հենկեկալ: Բայց յանկարծ նա ամօթ զգաց իր թուրութիւնից: Վեր կացաւ, տուն ուղարկեց շանը, տուն ուղարկեց նրան անողոք կերպով, ձայն տալով, ձեռքով նշան անելով, հեռուից ցոյց տալով զղեակը այնպիսի կերպարանքով, որ Կիսաը երբէք չէր տեսել նրա երեսին: Յետոյ նա շտապով սրբեց աչքերն ու թաց ձեռքը, որովհետև Պարիզի գնացքը գալիս էր և նա գիտէր, որ մի բոպէից յետոյ իրան պէտք է լինելու իր ամբողջ քաջութիւնը:

Վագօնից գուրս գալուն պէս Կլէրի առաջին գործն այն եղաւ, որ գնաց Լա-Պէ փողոցի այն գոհարավաճառի մօտ, որ—պապի ասելով—ժօրժին աղամանդէ զգնոց էր ծախել: Եթէ այդ ճիշա էր, մնացած բոլորն էլ ճիշտ կը լինէր: Խեղճը այնքան վախենում էր ճշմարտութիւնը իմանալուց, որ այդ չքեզ խանութիւն համելով նա կանգ առաւ նրա առաջը, չը համարձակելով ներս մօնել: Մի բան արած լինելու համար՝ նա այնպէս կերպարանք ընդունեց, իբր թէ ուշի ուշով գիտում է տուփերի թաւիչների վրայ գրուած գոհարները, և յիրաւի ով որ տեսնէր նրան, այդպէս գողորիկ իր համեստ զգեստում, խոնարհուած մանրաշող ու գրաւիչ ակունքների վրայ, աւելի շուտ կը կարծէր, թէ մի երջանիկ կին է այդ, որ եկել է որ և է պանու-

ճանք ընտրելու, քան կ'ենթագրէր, թէ մի ցաւատանջ ու խոռվածած հոգի է այդ, որ եկել է այդտեղ վնասուելու իր կեանփի գաղտնիքը:

Ժամի երեքն էր կէսօրից յետոյ Զմեոը, յերեկուայ այդ պահին, Լա-Պէ փողոցը միանգամայն շացուցիչ տեսք է ունենում: Կարճ առաւօտուայ և վաղահաս երեկոյեան անջրաբեռում կեանփը շատապ-շտապ ընթաքը է ստանում այդ փարթամ թաղերում: Կառքերը երթինելում են արագ-արագ, անիւները դպրում են անընդհատ և մայթերի վրայ տեղի է ունենում կօքէտ ու վրազ անց ու գարձ, մետաքսէ զգեստների, մուշտակների խըշխըց: Զմեոը Պարիզի համար տարուայ ամենալաւ եղանակն է: Գեղեցիկ, երջանիկ, փարթամ տեսնելու համար այդ սատանայական Պարիզը, պէտք է զննել նրա կեանքը ձիւնով բեղուացածիկ երկնքի տակ, հնութիւնը, այսպէս ասած, բայցակայ և նկարից: Ոչ քամի կայ, ոչ արեւ: Լոյս միմիտայն այնքան կայ, որ ամենասուզու գոյները, ամենաչնչն դորերը հիանալի տեսք կարողանան ստանալ, սկսած յուշարձանների գորչ երանդներից և վերջայրած կանացի զգեստները զարդարող սեւ յուրունքներով: Թատրոնների, նուազահանդէմների, յայտարարութիւնները շողջողում են՝ կարծես լուսաւորուած բամպայի ճաճանչներից: Խանութիւնները չեն դատարկւում ոչ մի րոպէ: Թւում է, թէ այդ բոլոր մարդիկ պատրաստութիւններ են տեսնում ինչ-որ յարատե տօնի համար: Եթէ մի վիշտ խառնում է յանկարծ այդ ժխորին, այդ իրաբանյան այդ իրաբանյան, այդ հակապատկերի չնորհիւ աւելի հս սոսկալի է թւում նա: Հինգ րոպէ Կլէրը մահից վատթար տանջանքներ իրեց: Այստեղ, Սալինիի ճանապարհին, ամայի գաշտերի անհուն տարածութեան մէջ, նրա յուսահատութիւնը շաղ էր անցնում զով օդում և կարծես տեելի քիչ տեղ էր բռնում: Այստեղ նա խեղպում էր նրան: Նրա կողքին հնչող ձայները, երթեեկողների քայլերն ու անգիտակալիկան շիւմը, այդ ամենը սաստկացնում էր նրա տանջանքը:

Վերջապէս նա ներս մտաւ...

—Այս, այս, տիկին... Պարոն Ֆրօմօնը... Աղամանդներից ու ալմաստներից շինուած մի զգնոց: Զեկ համար կարող ենք բոլորովին նմանը շինել քսան հինգ հազար ֆրանկով:

Մարդու տուածից հինգ հազար ֆրանկ ուսկաս էր ալդ:

—Շնորհակալութիւն, պարոն, —ասաց Կլէրը: —Կը մտածեմ:

Աչքը յանկարծ ընկաւ դիմացի հայելուն և նա սարսափ զզաց, տեսնելով իր կապտածիր աչքերը և մեռելակերպ դու նատութիւնը: Շտապով դուրս եկաւ, ձգուելով, որպէս զի վայր չընկնէր:

Այժմ մի հոգս միայն ունէր նա—փախչել փողոցից, ժխուրից, մենակ մնալ, մէն-մենակ, որպէս զի կարողանար ընկղմուել, խորասուզուել այն կսկծալից, սև մտքերի անդունդը, որոնք յորձանք էին տալիս նրա հոգու խորքում: Օ՛հ, տմարդ, վիրա ամուսին... իսկ ինքը դեռ անցած գիշեր միսիթարում էր նրան, գրկում էր նրան:

Յանկարծ, ինքն էլ չը զիտէր թէ ինչպէս, նա հասաւ զործարանի բակը: Ի՞նչ ճանապարհով էր եկել: Ոտքով էր եկել, թէ կառողով: Ոչինչ չէր յիշում: Նա անդիտակից վիճակի, կարծես երազի մէջ էր եղել մինչ այդ րոպէս: Իսկ երբ մօտեցաւ իրանց ընակարանի պատշգամբին, ուշքը գլուխն եկաւ և նա նորից զգաց կսկծալից և բիրտ իրականութիւնը: Ռիսլէրը այնտեղ կանգնած վերս էր ուղարկում արկղներով ծաղիկներ այն շքեղ ինչոքի համար, որ կինը տալու էր այդ երեկոյ: Իր սովորական հանդիսատ որամազրութեամբ նա զեկավարում էր բանուորների աշխատանքը, բանում էր բարձր ճիւղերը, որ նրանք կարող էին կոտրել. «Այդպէս մի տարէք... կողքահան անց կացրէք... Զգոյշ, գորգին չը դիպցնէք»...

Չուարճութեան և իրախճանքի մթնոլորտը, որ այնքան զգուանք էր ազգում նրան մի քիչ առաջ փողոցում, հալածում էր նրան նոյն իսկ իր տանը: Ճակատազրի հեզնութիւնը չափազանց էր արդէն: Նա վրդովունց վերջապէս, և մինչդեռ Ռիսլէրը բարեւմ էր նրան՝ միրալիր ու պատկառալից կերպով ինչպէս միշտ, նա, վերին աստիճանի զգուանք արտայայտելով դէմքի վրայ, ուղղակի անցաւ առանց նրան բան ասելու, առանց տեսնելու այն զարմանքը, որից նրա աչքերը մնացել էին չըռուած:

Կէքը արդէն վճռել էր իր անելիքը:

Զայրոյթը, ազնիւ ու արդար զայրոյթն էր այսուհետե առաջնորդ լինելու նրա գործողութիւններին:

Ներս մտնելուն պէս, վռազ-վռազ համբուրելով երեխայի թարմ այտիկները, նա վազեց մօր սենեակը:

—Շուտ արէք, մայրիկ, հագնուեցէք... Գնում ենք... Գնում...

Պառաւը գանդաղ կերպով վեր կացաւ բազկաթոռից, ուր նստած ուշի ուշում էր իր ժամացոյցի շղթան, անվերջ նախազգուշութիւններով մոյնելով քորոշը ամեն մի օգակի մէջ: Կէքը հազիւ զսպեց անհամբերութիւնը.

—Դէ, չուտ արէք, չուտ... Հաւաքեցէք ձեր իրեղէնները:

Զայնը դողում էր, և մաքրասիրութիւնը հետզհետէ խելաց Հոկտեմբեր, 1901.

գարութեան հասցրած պառաւի սենեակը, որ պլազում էր իստակութիւնից, սոսկալի թուաց նրան, կեանքի այն սև բոպէ ներից մէկն էր նրա համար, որնց միջոցին մի չքացած իլլուզիա չքացնում է բոլոր միւս իլլուզիաները և հիասթափուած աչքի առջև բանում է մարդկացին գժբախտութիւնը մինչև ամենահեռաւոր խորքերը։ Այդ առաջին անգամն էր, որ նա պարզ զգում էր իր միայնութիւնը՝ կիսախելագար մօր, անհաւատարիմ ամուսնու և բոլորովին փոքրիկ երեխայի շրջանում, բայց այդ գիտակցութիւնը աւելի ևս հաստատուն էր զարձնում նրա վճիռը։

Մի բոպէում ամբողջ տունը սկսեց զբաղուել այդ յանկարծական ու անակնկալ ճանապարհորդութեան պատրաստութիւններով։ Կլէրը շտապեցնում էր ապշած ծառաներին, հաղցնում էր մօրը և երեխային, որ ժպտում էր այդ իրարանցման մէջ։ Կլէրը ուզում էր ճանապարհ ընկնել նախ քան ժօրի գալը, որպէս զի նա գար ու օրօրոցը դատարկ գտնէր և տունը ամայի։ Ուր էր գնալու Խնքն էլ չը գիտէր։ Թերևս Օռէանում ապրող մօրաքրոջ մօտ, թերևս Սավինի, ուր որ էլ լինի։ Ամենազլիաւորը այն էր, որ գնար, փախչէր այդ դաւաճանութեան ու ստութեան միջավայրից։

Ահա նա իր սենեակումն է և բաները գլխին կիտած՝ դարսում է պայուսակները։ Տխնուր զբաղմունք։ Ամեն մի իր, որին ձեռք էր տալիս, զարթեցնում էր նրա մէջ մաքերի, յիշողութիւնների մի ամբողջ աշխարհ։ Զէ որ շատ բան է մնում մնջնից մեր զործածած իրերի մէջ։ Խեղջ կնոջ լացը գալիս էր երբեմն մի անուշահուսութեան բուրմունքից, մի կտոր ժանեակից։ Յանկարծ, ծանր ոտնածայն լսուեց հիւրասենեակից, որի դուռը կիսաբաց էր մնացել, ու յետոյ մէկը կամաց հազար կարծես իմաց տալու համար, որ մարդ կայ այնտեղ։ Կլէրը կարծեց, թէ Խիսլէրն է այդ, որովհետև միայն նա իրաւունք ունէր մտնել նրա մօտ այդպէս արձակ-համարձակ։ Կլէրի համար այնքան զզուելի էր տեսնել այդ կեղծաւոր կերպարանքը, այդ վիճու ժպիտը, որ վազ տուեց դուռը փակելու։

— Ոչ ոքի չեմ ընդունում։

Բայց զուռը պինդ պահել էին, և բացուածքի միջով երեսաց Սիգիզմունդի քառակուսի գլուխը։

— Ես եմ, տիկին, — ասաց նա կամացուկուրիւնը եկել եմ փող ստանալու։

— Ի՞նչ փող, — հարցրեց Կլէրը, որ չէր յիշում ալ հաւ թէ ինչու էր ինքը գնացել Սավինի։

— Հաս... Վաղուայ վճարելիքներիս համար։ Պ. Ժօրժը

դուրս գալիս ասաց, որ գուք շուտով կը յանձնէք ինձ պէտք եղած գումարը:

—Ա՛ս, այո... այո... Հարիւր հազար ֆրանկ... Այդքան փող չը կայ մօսս, պարոն Պլանիւս, ոչինչ չը կայ մօսս:

—Ուրեմն,—ասաց գամճապահը տարօրինակ ձայնով, կարծես թէ ինքն իր հետ խօսելով,—ուրեմն կոտր ենք ընկեր:

Ու կամաց-կամաց շուռ եկաւ ու գնաց:

Կոտր ընկնել...

Կլէրը նստեց, զարհուրած, ապշած:

Մի քանի ժամից ի վեր սեփական երջանկութեան կործանումը նրան մոռանալ էր տուել առետրական տան կործանումը. բայց այժմ նրա ուշքը գլուխն եկաւ:

Այդպէս ուրեմն՝ նրա ամուսինը մնանկ էր:

Մի քիչ անցած, տուն վերադառնալով, նա իմանալու էր իր գլխին եկած աղէտը և միևնոյն ժամանակ իմանալու էր, որ կինն ու երեխան հեռացել են տանից, թողնելով նրան միայնակ այդ սե օրին:

Մէս-մէննակ, նրան, այդ մեղկ, այդ տկար էակին, որ միմիայն լալ, գանգատուել ու ճակատագրին բռունքը ցոյց տալ գիտէր, ինչպէս մի մանուկ. Ի՞նչ էր լինելու թշուառի վիճակը:

Կլէրը խղճում էր նրան, չը նայելով նրա յանդաւորութեանը:

Բացի այդ, նա մտածեց, թէ մի գուցէ իր հեռանալը այն տպաւորութիւնը գործի, թէ ինքը փախել է մնանկութիւնից, աղքատութիւնից:

Ժօրժը կարող էր ասել.

«Եթէ հարուստ լինէի, նա ինձ կը ներէր»:

Կարող էր կլէրը թոյլ տալ, որ այդպիսի կասկած մնար նրա սրտում:

Կլէրի հոգու նման մի վեհանձն ու հապարտ հոգու համար այլքանը բաւական էր վճիռը փոխելու համար: Մի ակնթարթում նրա ամբողջ զգուանքը, ամբողջ վրդովմունքը անցաւ և կարծես մի պայծառ լոյս յանկարծ լուսաւորեց նրա առաջ նրա պարտականութիւնը: Երբ որ եկան, ասացին, որ երեխան հազրած է ու պայուսակներն էլ պատրաստ, նա արդէն կայացրել էր իր նոր վճիռը:

—Աւելորդ է, —պատասխանեց նա մեղմօրէն, —չենք գնում:

## III

## Պայմանաժամկեր

Կէս գիշերից անցել էր. ժամի մէկն էր խփում Սէն-Ժէռ-վէյի մեծ ժամացոյցը: Այնքան ցուրտ էր, որ օդի մէջ ցիր ու ցան մանրամաղ ձիւնը սառում էր ճանապարհին և թափուելով գետին՝ կիտում էր սալայատակի վրայ սպիտակ ու խշտան խաւով:

Ռիսլէրը, վերարկուի մէջ փաթաթուած, արագ-արագ վերադառնում էր գարեջրատնից ամայի Մառէյով: Շատ գոհ տրամազրութեան մէջ էր նա: Իր երկու մշտական փոխառուների ծէքի և Դըլօբէլի հետ նա այդ երեկոյ գարեջրատնը տօնել էր իր առաջին դուրսելը, այն երկարատես ճգնութեան վերջաւորութիւնը, որի ընթացքում նա հսկում էր իր տապագրիչ մեքենայի պատրաստումը՝ գիւտ անողի սովորական խարիսխումներով, հրճուանքներով և անյաջողութիւններով: Երկար, շատ երկար էր տեղել այդ: Վերջին վայրկեանին մի պակասութիւն էր աչքի ընկել: Արգելվը լաւ չէր բանում, այնպէս որ նա ստիպուած եղաւ վերսկսել ծրագիրները, նախահաշխները: Վերջապէս, այդ օրը փորձել էին նոր մեքենան: Ամեն ինչ հիանալի յաջողնել էր: Ռիսլէրը ցնծում էր: Նրան թւում էր, թէ ինքը վերջապէս կարողացաւ վճարել իր պարտը, յատկայնելով ֆրոմնների առետրատանը այն օգուտը, որ ստացուելու էր իր նոր գիւտից, որ պակասեցնելու էր բանուորների աշխատանքի օրերը և կրկնակի շահաբեր ու հոչակաւոր գարճնելու գործարանը: Ուստի և գեղեցիկ երազների էր անձնատուր եղել գարեջրատնից տուն վերադառնալիս, և նրա քայլերը հնչում էին խրոխտաբար, արձագանք տուլով նրա մոքերի գոհ ու հաստատուն ընթացքին:

Ի՞նչ ծրագիրներ, ինչ յոյսեր:

Այժմ նա կարող էր Անիէրի շալէյի տեղ, որ արդէն խըլճնուկ էր թւում Սիդոնին, առնել մի գեղեցիկ կալուած Պարիզից տասը, տասնուշինգ մղոն հեռաւորութեան վրայ, աւել մեծ թոշակ տալ պ. Շէքին, աւելի յաճախ փող տալ Դըլօբէլին, որի խեղճ կինը ուժասպառ էր լինում աշխատանքից. վերջապէս կարող էր Պարիզ բերել տալ ֆրանցին: Այդ նրա ամենասրտագին փափագն էր: Նա շարունակ մտածում էր այդ թշուապատանու մասին, որ ստիպուած էր եղել պանդխտել մի անառողջ երկիր և ենթարկուել այնտեղ մի բռնակալ վարչութեան,

որ, արձակուրդ տալով իր ծառայողներին, գրեթէ անմիջապէս յետ էր կանչում նրանց առանց որ և է բացատրութեան։ Խեղճ մարդը չէր կարողանում ամենեին մոռանալ ֆրանցի յանկար- ծական ու անհասկանալի վերադարձ գէպի իր պաշտօնատե- ղին՝ Պարիզում այնքան կարճ միջոց մնալուց յետոյ, որ ինքը չէր կարողացել մի կարդին առնել կարօտը, որ աւելի ևս սաստկացել էր այդ տեսակցութեան չորհիւ վերակենդանացած եղբայրական մտերմութեան և կենակցութեան յիշողութիւննե- րի ազդեցութեան տակ։ Աւստի և մտազիր էր, տպազրիչը գոր- ծի գցելուց յետոյ, մի անկիւն գտնել գործարանում, ուր ֆրան- ցը կարողանար օգտակար լինել և կարգին ապագայ ստեղծել իր համար։ Ինչպէս միշտ, այժմ էլ Ռիսլէրը միմիայն ուրիշների երջանկութեան մասին էր մտածում։ Նրա միակ հստակն հա- նուքը այն էր, որ ժամանելու ամենքին իր շուրջը։

Այդպէս շտապշտապ նա հասաւ Վիյէլլօդրիէտ փողոցի անկիւնին։ Իրանց տան առջեր երեսում էր կառքերի մի երկար շարք և նրանց լապտերների ցոլքը փողոցում ու ձիւնից պատըս- պարուղ կառապանների ստուերները այն խորշնորում ու անկիւն- ներում, որոնք այդ հին ապարանքների պատերում մնացել են չը նայելով ուղղագիծ մայթերի կառուցման, կենդանութիւն էին տալիս այդ ամայի ու լոիկ թաղին։

«Եթի, ճիշտ որ,—մտածեց Ռիսլէրը.—այսօր մենք երեկոյթ ունենք»։ Նա յիշեց, որ Միդօնին այդ օրը երաժշտական ու պա- րի երեկոյթ էր կազմել, որին ներկայ լինելուց, սակայն, ազա- տել էր նրան, «Հաւ իմանալով, որ նա սասսի՞ի զբաղուած է»։ Այդ պարահանդէսի արձագանքները աւելի ևս սաստկացրին նրա հրճուանքն ու հոգարտութիւնը, խառնուելով նրա վարդա- գոյն ծրագիրներին և հարսանալու վեհանձն երազանքներին։ Մի տեսակ հանդիսաւորութեամբ հրեց նա ծանր դարպասը, որ կիսարաց էր թողնուած եկող-գնացող հիւրերի համար, և պար- տէզի խորքում տեսաւ ապարանքի ամբողջ երկրորդ յարկը, որ լուսաւորուած էր փառահեղ կերպով։

Վարագոյնների սաւասուն շղարշի յետեին գնում-գալիս էին մարդկանց ստուերներ։ Նուագախումբը, որի գոյութիւնը գուշակւում էր խուլ հնչիւնների յաջորդաբար գրոհ տուող ու յետ ընկրկող ձայնից, կարծես հետևում էր այդ ստուերների շարժումներին։ Պարում էին։ Մի բոպէ Ռիսլէրը յառեց իր հայեացքը այդ պարերեկոյթի ֆանտաստիկական տեսարանի վրայ և դահլիճին կից սեննակում ճանաչեց Միդօնիի դիմա- ստուերը։

Պերճազգեստ և ուղղաձիգ կանգնած էր նա այնտեղ՝ հայ-

երու մէջ իրան նայող սիրուն կնոջ դիրքով։ Նրա յետեին մի աւելի փոքրիկ ստուեր, անշուշտ տիկին Դօրսօնը, ուղղում էր հագուստը, վզին կապած ժապաւէնահանգոյցը, որի երկար ու սաւառուն ծայրերը հասնում էին մինչև շրջազգեստի տուտը։ Այդ բոլորը շատ անորոշ կերպով էր երևում, բայց Սիդնիի կանացի գողտրիկութիւնը աչքի էր ընկնում նոյն իսկ այդ հազիւ նշմարուող գծերում, և Ծիսլէրը երկար ժամանակ կանգնած հիացմունքով գիտում էր նրան։

Առաջին յարկը զարմանալի հակապատկեր էր կաղմում երկրորդին։ Ոչ մի տեղ լոյս չը կար, բայցի կարմրամանիշակագոյն պաստառներով պատած ննջարանից, ուր վառում էր մի փոքրիկ լամպ, Ծիսլէրը նկատեց այդ բանը, և որովհետև միօնների երեխան մի քանի օր առաջ հիւանդացել էր, նա անհանգստացաւ, յիշեց այն յուզմունքը, որի մէջ գտնուում էր տիկին Փօրժը, երբ կէսօրից յետոյ անցաւ իր կողքով, ուստի յատարձաւ գէպի զարպար Աշիլլ քեռուց տեղեկութիւններ հարցնելու համար։

Աշիլլ քեռու սենեակը լիքն էր մարդկանցով։ Կառապանները վառարանի մօտ հաւաքուած տաքանում էին, զրոյց էին անում ու ծիծաղում իրանց չիբուխների ծխի մէջու Ծիսլէրի ներս մտնելուն պէս՝ յանկարծ տիրեց խորին լուսութիւն և զէթքերը ստացան հետաքրքիր, ծաղրական ու խուզարկու արտայայտութիւն։ Երեկի նրա մասին էին խօսում։

— Ֆրօնմօնների երեխան զեռ ևս հիւանդ է... հարցրեց նա։  
— Ոչ։ Երեխան չէ հիւանդ, այլ պարոնը։

— Պարոն Փօրժը հիւանդ է։

— Այո, երեկոյեան տուն գալուց յետոյ վատ զգաց իրան իսկոյն գնացի բժշկի յետեից... Բժշկն ասաց, որ ոչինչ չը կայ, միայն թէ հանգստութիւն է հարկաւոր պարոնին։

Եւ մինչ Ծիսլէրը վակում էր գուռը, քեռի Աշիլլը կիսաձայն աւելացրեց ստորադաս մարդկանց յատուկ կէս երկչոս, կէս յանդուզն աներեսութեամբ, որ կամենում է, որ մարդու ականջին համեն ասածները, բայց այնպէս, որ հազիւ հազլի լինեն։

— Ի հարկէ, առաջին յարկումը այնպէս քէփ չեն քաշում ինչպէս վերնումը։

Ահա թէ ինչ էր պատահել.

Ֆրօնմօն կրտսերը, երեկոյեան տուն գալու և տեսնելով թէ ինչպէս ալսուր ու այլայլուած է կնոջ դէմքը, իսկոյն հասկացաւ, որ գժբախտութիւն է պատահել։ Միայն թէ երկու տարուց ի վեր նա այնքան ընտելացել էր իր դաւաճանութեան

անպատիթ մնալուն, որ ոչ մի բոպէ մաքովը չանցաւ, թէ կինը կարող է իմացած լինել իր արածները: Կլէրն էլ, չը կամենալով աւելի ևս ծանրացնել նրա զրութիւնը, մեծահոգաբար խօսեց նրա հետ միմիայն Սավինի գնալու մասին:

—Պապը ոչինչ չը տուեց, —ասաց նա Փօրժին:

Թշուառականը սարսափելի գունաթափուեց:

«Ես կորայ... կորայ... զառանցողի նման կրկնեց նա երկու երեք անգամ, և անքուն անցրած գիշերները, այն սարսափելի վերջին տեսակցութիւնը, որ ունեցել էր Սիդոնի հետ, թոյլ չը տալու համար նրան կազմել այդ պարահանդէսը մնանկութեան նախընթաց երեկոն, և վերջապէս Գարդինուայի մերժումը, այդ բոլոր յուզմունքները, որոնք, իրար հետ կապուած ու իրար յաջորդելով, տակնուվրայ էին արել նրան, արտայայտուեցին ջղային հիւանդութեամբ: Կլէրը խոճահարուեց նրա վրայ, պառկացրեց նրան ու նստեց անկողնի կողքին: Նա փորձում էր խօսել հիւանդի հետ, սիրտ տալ նրան, բայց նրա ձայնի մէջ չը կար այլ ևս այն գորովի շեշտը, որ հանգստացնում է և համոզում: Ինչ որ անտարբերութիւն, լինչ որ տարօրինակ անուշագրութիւն էր նկատում նրա շարժումների մէջ, այն ձեի մէջ, որով նա բարձրացնում էր բարձը հիւանդի գլխատակին, որով նա համար:

—Ա՛յս, աղքատութեան դուռը հասցրեցի քեզ, —Ժամանակ առ ժամանակ ասում էր նրան Փօրժը, կարծես ուզելով թօթափել նրա վրայից այդ սառնութիւնը, որ նեղում էր իրան: Կլէրը նրա խօսքերին պատասխանում էր մի գեղեցիկ արհամարդու շարժումով... Երանի թէ միայն այդ արած լինէր նա իրան:

Սակայն, ի վերջոյ, հիւանդի ջղերը հանգստացան, տաքութիւնը իջաւ ու քունը տարաւ:

Կլէրը մնաց մօտը՝ խնամելու համար:

«Իմ պարտականութիւնս է այդ», ասում էր նա ինքն իրան:

Իր պարտականութիւնը:

Ահա թէ ուր էր հասել նա այժմ այն մարդու վերաբերմամբ, որին մի ժամանակ այնքան կուրօրէն սիրում էր և որի հետ միասին յոյս ունէր վարել երկարատև ու երջանիկ կեանք:

Այդ միջոցին պարահանդէսը սկսում էր տաքանալ վերեւում: Առաստաղը գողում էր չափածոյ չարժումով, որովհետեւ պարողների յարմարութեան համար տիկին Ռիսլէրը բոլոր գորգերը վերցնել էր տուել իր դահլիճներից: Երբեմն երեխն էլ լսում էր ձայնների կցկտուր աղմուկ, յետոյ բազմապատիկ ու

կրկնուաղ ծափահարութիւն, որից երևում էր, որ սենեակները լիքն են հիւրերի բազմութեամբ:

Կէրը մտածում էր: Նա իրան չէր տանջում ապարդին ափսոսանքներով և լաց ու կոծով: Նա գիտէր, որ կեանքը անողք է և որ ոչ մի դատողութեամբ չի կարելի կանգնեցնել նրա անխուսափելի ընթացքի ախուր տրամաբանութիւնը: Նա չէր աշխատում բայցարել, թէ ինչպէս էր կարողացել այդ մարդը այնքան երկար ժամանակ խարել իրան, ինչպէս էր կարողացել նա մի քմահանոցքի համար ոտի տակ տալ իր ընտանիքի պատիւը և երջանկութիւնը: Այդ արդէն եղած պրծած բան էր, և իր մտածմունքները չէին կարող չեղած դարձնել այդ փաստը, ուղղել անողղելին: Նրան զբաղեցնողը ապագան էր: Մի նոր կեանք էր պատկերանում նրա առջև, մոռալ, գաֆան և լի զրկանքներով ու չարքաշ աշխատանքով, և, տարօրինակ բան, տնանկութիւնը, փոխանակ սարսափեցնելու նրան, ընդհակառակը վերադարձեց նրան նրա ամբողջ կորովը: Այն մտածունքը, թէ պէտք էր այսուհետեւ ինայողաբար ապրել և դրա համար՝ փոխել իրանց բնակութեան տեղը, թէ Փօրժը, թերես և ինքը՝ ստիպուած էին լինելու սաստիկ աշխատել, մի տեսակ եռանդ էր ներշնչում նրա յուսահատ անդորրութեանը: Երեւք երեխաների—իր մօր, իր ամուսնու—հոյիների ծանր բեռն էր ունենալու նա իր վեհն: Այդ պատախանաւութեան գիտակցութիւնը թոյլ չէր տալիս նրան շատ խանդաղատուել իր գժրախտութեան վրայ, իր սիրոյ խորտակման վրայ, և որքան նա աւելի էր մոռանում ինքն իրան, մտածելով այն թոյլ էակների մասին, որոնց ինքը հովանաւորելու էր, այնքան լաւ էր հասկանում «զոհողութիւն» խօսքի արժէքը, այդ խօսքի որ այնքան անորոշ է անտարբեր բերաններում և այնքան լորչ երբ կեանքի զեկափար կանոն է դառնում:

Ահա թէ ինչի մասին էր մտածում խեղճ կինը այդ տխուր աքնութեան գիշերը, այդ սպառազէն և արտասուակոծ հսկման ժամանակ, երբ նա պատրաստում էր ահեղ կոռու համար: Ահա թէ ինչ բանի վրայ էր լոյս սփոռում ներքեի յարկում Ռիւլէրի նկատած ազօտ լամպը, իբրև մի աստղ, որ վայր էր ընկի պարահանդէսի շողողուն ջահերից:

Քեռի Աշխլլի պատասխանիցը հանգստացած, Ռիսլէրն ուղում էր բարձրանալ իր սենեակը, խուսափելով պարահանդէսից և հիւրերից, որոնցով նա շատ քիչ էր հետաքրքրուում:

Այդպիսի դէպքերում նա բարձրանում էր վերև յետի սանդուխով, որ հաղորդակցութիւն ունէր գանձապահի գրասենեակի հետ: Այդպիսով նա մտաւ ապակնապատ արհեստանոց:

ները, որոնք՝ ձիւնի անդրադարձրած լուսաշողքից՝ լուսաւորուած էին ինչպէս օրը ցերեկով։ Այդտեղ զգացւում էր զեռ ևս ցերեկուայ աշխատանքի մթնոլորտ, խեղղող տաքութիւն, լի տալի կը ու ջնարակի եփուն հոտերով։ Ցամքացուցիչների վրայ փըռուած թղթերը երկար խշխացնող շերտեր էին կազմում։ Ամեն կողմ թափթփուած էին զանազան գործիքներ և պատերիցը կախ էին տուած վերնաշապիկներ, պատրաստ վաղուան համար։ Միշտ ահագին հաճոյք էր զգում Ռիսլէրը այդ տեղով անցնելիս։

Յանկարծ, այդ դատարկ սենեակների երկար չարքի ծայրում նա լոյս նկատեց Պլանիւսի գրասենեակում։ Ծերունի գանձապահը աշխատում էր զեռ ևս զիշերուայ ժամի մէկին. այդ շատ տարօրինակ բան էր։

Առաջին բոպէին Ռիսլէրը ուզեց յետ գառնալու Յիրաւի, Սիդիզմունդի ու իր մէջ պատահած սնհասկանալի խոռվութիւնից յետոյ, այն օրից ի վեր, երբ Սիդիզմունդը իր ներկայութեամբ միշտ լուս ու մունջ և սառն էր լինում, նա խոռսափում էր ծերունի գանձապահի հետ հանդիպելուց։ Բարեկամութեան վիրաւորուած զգացմունքը թոյլ չէր տալիս նրան բացատրութիւն պահանջել. ինքնասիրութիւնը արգելք էր լինում հարցնելու Պլանիւսից, թէ ինչու է նա նեղացել իրանից։ Սակայն այդ երեկոյ այնպիսի սրտաբաց տրամադրութեան մէջ էր Ռիսլէրը, և, բացի զրանից, այդ այնպիսի յարմար առիթ էր միայնակ ու երես առ երես խօսելու իր հին բարեկամի հետ, որ նա չուզեց այս անզամ խուսափել հանդիպումից ու արձակ համարձակ ներս մտաւ գրասենեակը։

Գանձապահը այնունզ անշարժ նստած էր, շրջապատուած թղթերի կոյտերով և հաստ ու յաճախ թերթուած հաշունդրքերով, որոնցից մի քանիսը թափուել էին գետին։ Նա լսեց իր պատրօնի ներս մտնելու ազմուկը, բայց նոյն իսկ աչքերը վեր չը բարձրացրեց։ Նա ճանաչել էր Ռիսլէրի ոտնաձայնը։ Ռիսլէրը սկզբում մի բոպէ տատանման մէջ մնաց, մի քիչ շփոթուած, բայց յետոյ գնաց ուղղակի դէպի գրամարկղի ցանցապատը, շարժուելով այն գաղտնի զսպանակներից մէկի մղումով, որոնք դոյլութիւն ունեն մեր մէջ և, ինչ էլ լինի, դուրս են բերում մեզ մեր ճակատագրական ճանապարհի վրայ։

— Սիդիզմունդ... ասաց նա լուրջ ձախով։

Ծերունին բարձրացրեց գլուխը և Ռիսլէրը տեսաւ նրա ծամածուած երեսը, որի վրայով հոսում էին երկու խոչոր կաթիլներ, թերես առաջին արցունքները, որ այդ թուանշանմարդը թափում էր իր կեանքում։

— Հայ ես լինում, ծերուկս... ի՞նչ է պատահել քեզ:

Եւ բարեսիրտ Ռիսլէրը, խանդաղատուած, մնկնեց ձեռքը իր բարեկամին, որ, ասկայն, թափով յետ քաշեց իր ձեռքը: Այնքան բնազդական, այնքան ուժգին էր այդ յետ քաշելու շարժումը, որ Ռիսլէրի խանդաղատանքը փոխարկուեց զայրոյթի:

Նա շիտկուեց խիստ կերպարանքով:

— Ես ձեռք եմ մեկնում քեզ, Սիգիզմոնդ Պլանիւս, — ասաց նա:

— Իսկ ես չեմ ուզում քեզ ձեռք տալ... պատասխանեց Պլանիւսը, աեղիցը վեր կենալով:

Այնուհետև սարսափելի լուռթիւն տիրեց, որի միջոցին լսում էր վերեից երաժշտութեան խուլ ձայնը և պարահանդէսի աղմուկը, այդ ծանր ու յիմար աղմուկը, որ յառաջացնում է պարերի բաղխումից ցնցուող տախտակամածը:

— Ինչու չես ուզում ինձ ձեռք տալ, — հասարակ կերպով հարցրեց Ռիսլէրը, մինչդեռ ցանցապատը, որին կոթնել էր նա, գողում էր մետալային սարսուռով:

Սիգիզմունը կամնած էր նրա դիմացը, երկու ձեռքով կոթնած հաշուեսեղանին, կարծես թէ նրա համար, որ աւելի տեղին ու ազգու գուրս գար այն, ինչ որ պատասխանելու էր:

— Ինչու... Որովհետև դուք մնանկութեան էք հասցրել առևտրատունը, որովհետև այս բոպէին այնտեղ, ուր գուք կանգնած էք, կը գան բանկից հարիւր հազար ֆրանկ ստանալու, մինչդեռ ես, ձեր չնորհիւ, ոչ մի սու չունեմ զրամարկղի մէջ... Ահա ձեր պատասխանը:

Ռիսլէրը մնացել էր ապշած:

— Ես մնանկութեան եմ հասցրել առևտրատունը, Բա... Բա...

— Աւելի վատ քան այդ, պարոն... Դուք մնանկութեան էք հասցրել այս առևտրատունը ձեր կնոջ միջոցով, իսկ ձեր բանը այնպէս էք սարքել, որ օգտուէք մեր մնանկութիւնից և ձեր խայտառակութիւնից... Օ՛, ես չատ լաւ եմ հասկանում ձեր խաղերը: Այն փողերը, որ ձեր կինը գուրս է քաշել խեղճ Ֆրոմոնից, Անիէրի տունը, աղամանդները և մնացած բոլոր բաները, ի հարկէ, նրա անունով կը լինեն և աղատ կը մնան որ և է գտանգից, այնպէս որ դուք այժմ անշուշտ կարող էք դուրս գալ գործի մէջից:

— Օ՛խ... Օ՛խ... Կմկմում էր Ռիսլէրը հանգած կամ, աւելի ձիշտ, խեղջուած ձայնով, որ անզօր էր արտայայտելու այն բոլոր մտքերը, որ նա կ'ուզէր արտայայտել, և այդպէս կմկմալով նա ձգում էր ցանցապատը դէպի ինքը այնքան ուժ-

գին կերպով, որ մի կտոր պոկեց նրանից: Ի վերջոյ, նա օրօր ուեց, տապալուեց գետին և մնաց անշարժ ու պապանձուած, պահպանելով սակայն՝ մէջը մնացած կենդանութեան նշոյի մէջ հաստատ կամք չը մեռնելու նախ քան ինքն իրան արզարացնելը: Երեի շատ զօրեղ էր այդ կամքը, որովհետեւ մինչդեռ քունքերը տրըփարբիում էին արիւնից, որ խփել էր զլուխը ու կապտացրել երեսը, մինչդեռ ականջները զբնդզբնդում էին և աչքերը կարծես ուղղուել էին արդէն դէպի ահուելի անյայտութիւնը, խեղճը անըմբոնելի ձայնով, փոթորկալից ծովում բերանները ջրով լիքը խօսող նաւարեկուածների ձայնով՝ ասում էր ինքն իրան. «պէտք է ապրել... պէտք է ապրել...»

Երբ ուշքը գլուխն եկաւ, նա արդէն նստած էր այն բազմոցի վրայ, ուր վճարման օրերը նստուած էին լինում բանուորները, վերարկուն գետին ընկած, փողպատը արձակուած, շապկի կուրծքը բացուած, ճեղքուած Սիգիզմունդի գրչահատով: Իր բախտից՝ ցանցապատը կոտրելիս նա կտրել էր ձեռները. արիւնը շոշոալէն թափուել էր և այդ բանն էր միայն աղատել նրան կաթուածահարութիւնից: Աչքերը բանալով, նա տեսաւ իր կողքին ծերունի Սիգիզմունդին և տիկին ժօրժին, որին գնացել կանչել էր վախուորած գանձապահը: Հէնց որ Ռիսլէրը կարողացաւ լեզուն պտոյտ տալ բերանումը, իսկոյն և եթ դիմեց կլէրին չնչասպառ.

—Ճիշտ է այդ, տիկին Շօրշ, ճիշտ է՝ ինչ որ նոր ասացին ինձ:

Կլէրը չը համարձակեց խարել նրան և երեսը շուռ տուեց: —Ռւրեմն, —շարունակեց թշուառ մարդը, —ուրեմն առետրատունը կոտր է ընկել, և ես եմ...

—Զէ, Ռիսլէր, չէ, բարեկամս... Ոչ, գուք չէք...

—Կի՞նս է, այնպէս չէ... Օ՛խ, սոսկալի բան... Ահա թէ ինչպէս եմ վերադարձել ձեզ ձեր երախտիքը... Բայց դուք, տիկին Շօրշ, գուք հօ չէիք կարող ինձ մեղսակից համարել այդ ստորութեան մէջ...

—Զէ, բարեկամս, չէ, հանգստացէք, ինգրեմ... Ես գիտեմ, որ դուք ամենաազնիւ մարդն էք աշխարհում:

Նա մի բոպէ նայեց կլէրին դողդոջուն շրթունքներով և կցուած ձեռքերով, որովհետեւ ինչ որ մանկական բան կար այդ միամիտ բնաւորութեան բոլոր արտայայտութիւնների մէջ:

—Օ՛հ, տիկին Շօրշ... մրմնջաց նա... Երբ որ մտածում եմ, որ ես եմ եղել ձեր մնանկութեան պատճառը...

Իր զլիսին եկած սարսափելի դժբախտութեան մէջ, որից զլիսաւոր հարուած ստացողը նրա սիրան էր՝ լի սիրով դէպի

Սիդօնին, նա ուզում էր տեսնել միմիայն Ֆրօմօնների առևտրատան հասած գրամական աղէտը, որի պատճառը իր կոր վերաբերմունքն էր եղել դէպի իր կինը: Յանկարծ նա շիտկուեց թափով.

—Գնանք, —ասաց նա, —գգածուելու ժամանակ չ...  
Պէտք է մաքրել մեր հաշխները...

Տիկին Ֆրօմօնը վախսեցաւ:

—Ռիսլէր, Ռիսլէր... ուր էք գնումն

ինեղն կինը կարծում էր, թէ նա գնում է Փօրժի մօտ:

Ռիսլէրը հասկացաւ նրա կասկածը և պատասխանեց արհամարհուս ու գոռող ժպիտով.

—Ապահով եղէք, տիկին. պ. Փօրժը կարող է իր համար հանգիստ քննել... Այժմ ես աւելի անյետաձգելի բան ունելու, քան ամուսնական պատուիս վրիժառութիւնը: Սպասեցէք ինձ այստեղ... իսկոյն կը վերադառնամ:

Նա վազեց դէպի վերի փոքրիկ սանդուխով, և կէրը վստահ նրա խօսքի վրայ, մնաց մենակ Պլանիւսի հետ, անց կացնելով այն գերազոյն և անորոշ բոպէներից մէկը, որոնք այնքան երկար են թւում իրանց ընթացքում արուած անթիւ և նթագրութիւնների շնորհիւ:

Մի քանի վայրիեան անցած՝ նեղ ու մուժի սանդուխը լցուեց շտապ քայլերի ստնաձայնով և կանացի հագուստի խշխչոցով:

Առաջինը ներս մտաւ Սիդօնին պարահանդիսային զգեստով, շքեղազարդ ու այնքան գունատ, որ նրա վայլատ կաշով վրայ շողացող բազմաթիւ գոհարները աւելի կենդանի էին թւում, քան նա, և կարծես շաղ տուած լինէին մի որ և արձանի սառը մարմարիոնի երեսին: Պարելու հեքը և յուզմունքի ու արագ քայլուածքի դողը դեռ ևս ցնցում էին նրա ամբողջ մարմինը, և նրա թեթև ժապաւէնները, զգեստազարդերը, ծաղկիները և աշխարհիկ վարժամ պաճուճանքը սմիքել էին նրա շուրջը տրագիկաբար: Նրա յստեղյը ներս մտաւ Ռիսլէրը ծանրաբեռնուած տուփերով, արկղիներով ու արժէթզթերով: Կող սենեակը հասնելուն պէս նա յարձակուել էր նրա զարդասեղանի վրայ, ու վերցրել ինչ որ արժէքաւոր բան կար մէջը, գոհարեղէն, արժէթզթեր, Անիէրի տան վաճառուման թուղթը, և յետո սենեակի շէմքիցը բարձրածայն կանչել նրան պարահանդէսից:

—Տիկին Ռիսլէր...

Սիդօնին ձեռաց վազել էր նրա մօտ և այդ բոլորը այնքան արագ էր կատարուել ու երեկոյթի այնքան տաք միջոցին, որ ոչ հիւրերից ոչինչ չէր նկատել: Տեսնելով ամուսնուն կանգ-

նած իր սեղանի առաջ, արկղիկները բաց, ջարդուած ու գորգի վրայ թափթփուած՝ մէջները եղած հազար ու մի մանր մունք բաներով, նա իսկոյն հասկացաւ, որ ինչոր սարսափելի բան է տեղի ունենում:

—Շուտ արէք, եկէք,—ասաց Ռիսլէրը,—ամեն ինչ յայտնի է ինձ:

Սիդօնին ուզեց, ըստ սովորութեան, անմեղ ու հպարտ կերպարանք ընդունել, բայց Ռիսլէրը այսպէս ուժգին բռնեց նրա կռնից, որ նա մտաբերեց Ֆրանցի խօսքը. «Փուցէ նրան մեղսի այդ բանը, բայց մնանելուց առաջ նա ձեզ կը սպանի անշտաշտ...» Եւ որովհետեւ նա սաստիկ վախենում էր մահից, ուստի թոյլ տուեց քաշ առաջ իրան առանց դիմադրութեան, և նոյն իսկ շը համարձակուեց ստել:

—Ո՞ւր ենք գնում,—հարցրեց նա կամաց ձայնով:

Ռիսլէրը պատասխան չը տուեց: Սիդօնին, որ երբէք չէր մոռանում հոգս տանել իր վրայ, հազիւ ժամանակ ունեցաւ իր մերկ ուսերի վրայ գցելու մի թեթև շղարչէ վղակալ, որովհետեւ Ռիսլէրը իսկոյն քաշ տուեց, աւելի ճիշտ ասած, հրեց նրան դէպի սանդուխը, որով իջաւ. նրա հետ միասին, քայլ առ քայլ հետելով նրան, վախենալով, որ որսը վախչի ձեռքիցը:

—Ահա, ասաց նա ներս մտնելով գանձապահի սենեակը... Գողացել էինք, այժմ յետ ենք դարձնում... Վերցրու, Պլանիւս, լաւ փող գուրս կը գայ սրանից...

Ու գանձապահի սեղանի վրայ գարսեց այդ ամբողջ գողարիկ կողոպուտը, որով լին էին բռները, այդ կանացի սեթեթանքները, կաֆէտութեան մանրոյթները և զրոշմաւոր թըղթերը, իսկ յետոյ, դառնալով դէպի կինը, հրամայեց.

—Իսկ այժմ, ցնծացէք ձեր գոհարները... Շնուտ, շնուտ...

Սիդօնին չէր շտապում, ավասուելով էր բանում ապարանջաններն ու գինդերը և մանաւանդ աղամանդէ վզնոցի հոյակապ ճարմանգը, որի վրայ նրա անուան սկզբնատառը—մի շողողուն Տ—կարծես քնած օձ լինէր, ոսկէ շրջանակում բանտարկուած: Անհամբեր Ռիսլէրը, տեսնելով, որ բանը շատ է երկարում, սկսեց կոպտաբար ջարդնլ նուրբ հանգոյցները, և ձոխութիւնը ձչում էր նրա մատների տակ, ինչպէս պատժի ենթարկուող յանցաւոր:

—Հիմա իմ հերթն է, ասաց նա այնուհետեւ... Ես էլ պէսք է ունեցած չունեցածս տամ... Ահա քսակս... Էլ ինչ ունեմ... Էլ ինչ ունեմ...

Եւ նա փնտոռում, տնտղում էր իր վրայ տենդօրէն:

—Ախ, հա, ժամացնցս... Շղթայի հետ հազար ֆրանկ

կ'արժեհնայ... Այս էլ մատանիներս, այս էլ նշանամատնիքս... Ինչ կայ չը կայ գցէք դրամարկղը: Հարիւր հազար Փրանկ վը-ձարելիք ունենք այս առաւօտ... Լոյսը բացուելուն պէս պէտք է գործի կազել, ծախել ամեն բան, ոչնչ չը թողնել: Ես զի-տեմ մէկին, որ ուզում է Անիէրի տունը գնել: Զեռաց կարելի է ծախել:

Միայն նա էր խօսողը, գործողը: Սիգիզմունը և տիկին Ժօրժը լուռումունջ նայում էին նրան: Ինչ վերաբերում է Սի-գօնիին, նա կարծես թմրած, անզգայ լինէր: Սաոր օդը, որ պարտէզից ներս էր թափանցում Ռիսլէրի ուշաթափութեան ժամանակից կիսաբաց մնացած դռնովը, սասսացնում էր նրան, և նա, աչքերը սեւուն և մաքամոլոր, մեքենայաբար աւելի ու աւելի պինդ էր փաթաթւում իր շղարշէ վզակալի մէջ: Դժուար է ասել, լսում էր նա արդեօք իր պարերեկոյթի ջութակների ձայնը, որ լոռութեան բոպէներին, իբր մի անողորմ հեգնութիւն, լուսում էր տախտակամածը դողդողացնող պարերի ծանր աղ-մուկի հետո...

Մի երկաթէ ձեռք յանկարծ սղմեց նրան ու դուրս հա-նեց այդ թմրութիւնից: Ռիսլէրը, բոնկով նրա կոնից ու քա-տալով իր առևտրակցի կնոջ առաջ, հրամայեց.

— Զոքիր:

Տիկին Ֆրօմօնը յետ-յետ էր գնում, դիմադրում էր:

— Զէ, չէ, պ. Ռիսլէր, պէտք չէ այդպիսի բան:

— Ոչ, այդ անհրաժեշտ է, ասաց անողոք Ռիսլէրը... Պէտք է ուզգել արածը, պէտք է քաւել... Զոքիր, ասում եմ, թշուա-ռական...

Եւ մի անդիմադրելի շարժումով նա չպրտեց Սիդօնիին Կլէրի ստքերը ու, առանց կուռը բաց թողնելու, շարունակից Կրկնեցէք իմ յետերից բառ առ բառ այն, ինչ որ ասմ: «Տիկին...»

Սիդօնին, երկիւղից կիսամեռ, կրկնեց թոյլ ձայնով: «Տիկին...»

— Ամբողջ կեանքիս ընթացքում՝ խոն... Զէ, չէ, չեմ կա-րող... բացականչեց Սիդօնին և վայրի գազանի թափով ոսքի կանդնելով ու ազատուելով Ռիսլէրի ձեռքից, դուրս պրծաւ կիսաբաց դռնովը, որ այդ սոսկալի տեսարանի սկզբից ի վեր հրապուրում էր նրան դէպի գիշերային խաւարը ու վախուսա-պատութիւնը, և վաղ տալով փախաւ առանց ուշք գարճնելու ձիւնին և սաստիկ քամուն, որ խփում էր նրա մերկ ուսերին:

— Ամբողջ կեանքիս ընթացքում՝ խոն... Զէ, չէ, չեմ կա-րող... բացականչեց Սիդօնին և վայրի գազանի թափով ոսքի կանդնելով ու ազատուելով Ռիսլէրի ձեռքից, դուրս պրծաւ կիսաբաց դռնովը, որ այդ սոսկալի տեսարանի սկզբից ի վեր հրապուրում էր նրան դէպի գիշերային խաւարը ու վախուսա-պատութիւնը, և վաղ տալով փախաւ առանց ուշք գարճնելու ձիւնին և սաստիկ քամուն, որ խփում էր նրա մերկ ուսերին:

— Կանգնեցրէք նրան, կանգնեցրէք... Ռիսլէր, Պլանիւս,  
ինդրում եմ... Ի սէր Աստուծոյ, մի թողէք, որ այդպէս գնայ...

Պլանիւսը մի քայլ արեց գէպի գուռը: Ռիսլէրը կանգնեցրեց նրան.

— Ես պահանջում եմ, որ դու չը շարժուես տեղիցք: Իսկ  
դուք, տիկին, խնդրեմ ներէք. մենք դրանից շատ աւելի կարեոր  
դորձեր ունենք կարգադրելու: Այլ ևս այստեղ հարց չը կայ  
տիկին Ռիսլէրի մասին... Մենք պէտք է աշխատենք այժմ փըր-  
կիլ Ֆրօմօնների առևտրատան պատիւը, միակ բանը, որ վտան-  
գի է ննթարկուած, միակ բանը, որ հետաքրքրում է ինձ այս  
բոպէին... Դէպի դրամարկզը, Պլանիւս, և զբաղուենք մեր հա-  
յւներով:

Սիկիզմունզը պարզեց ձեռքը գէպի նա:

— Դու պատուական մարդ ես, Ռիսլէր: Ներիր քո մասին  
տարած կասկածներիս համար:

Ռիսլէրը չը լսած ձեւացաւ:

— Պէտք է հարիւր հազար ֆրանկ վճարենք, այնպէս չը...  
ի՞նչքան փող կայ դրամարկզումդ...

Եւ նա լրջօրէն նստերով ցանցապատի յետելը, սկսեց  
թերթել հաշուեգրքերն ու հասոյթաթղթերը և բանալ զուզսե-  
ղինի տուփերն ու գնահատել Պլանիւսի հետ, որի հայրը գոհա-  
րավաճառ էր եղել, նրանց մէջի աղամանդները, որ նա մի ժա-  
մանակ հիացմունքով զիտում էր իր կնոջ վրայ առանց իմա-  
նալու, թէ ինչ համգին փող արժեն նրանք:

Կէրը այդ միջոցին, ամբողջ մարմնով գողալով, պատու-  
նանի միջով նայում էր ձիւնից սպիտակած պարտէզին, ուր  
Սիկոնիի քայլերի հետքը արդէն ջնջում էր ձիւնի նոր թափ-  
ուող փաթիների տակ, կարծես ասլացուցանելու համար, որ  
այդ փախուստը անդառնալի էր:

Իսկ վերենում պարում էին դեռ ես: Հիւրերը կարծում  
էին, թէ տանտիրուհին ընթրիքի պատրաստութեամբ է զբաղ-  
ուած, մինչ նա այդպէս զիխարաց փախչում էր, զսպելով կա-  
տաղութեան աղաղակներն ու հեկեկանքները:

Ո՞ւր էր գնում նա:

Նա սենեակից դժի նման դուրս պրծաւ ու վազելով ան-  
ցաւ գործարանի պարտէզը, բակերը և մութ կամարները, ո-  
րոնց տակ յորձանք էր տալիս ողբածայն ու ցրտաշունչ քամին:  
Աշիլլ քեոին չը ճանաչեց նրան, որովհետեւ շատ սիլուէտներ  
էր տեսել նա այդ գիշեր այդպէս սպիտակ շորերի մէջ կոլուսած  
անցնելիս:

Առաջին բոպէին Սիկոնին մտածեց դնալ տէնօր Կազա-

բօնիի մօտ, որին վերջ ի վերջոյ չէր համարձակել հրաւիրե պարահանդէսին, բայց նա ապրում էր Մօնմարտր թաղում, իսկ այդ շատ հեռու էր նրա պէս թեթև հագնուածի համար, և բացի այդ արդեօք տանը կը լինէր նա: Իր ծնողները անշուշ լաւ կ'ընդունէին նրան, բայց նա արդէն առաջուց լսում էր տիկին Շէքի ախ ու վախերը և հօր անվերջ ճառերը: Այն ժամանակ նրա միտքն ընկաւ. իր ծեր Դըլօրէլը, իր փառքի խաւարած բոպէին նա յիշեց այն մարդուն, որ նրա առաջին զեկավարն էր եղել աշխարհիկ կեանքում, որ նրա երեխայութեան միջոցին պարի և վայելչութեան դասեր էր տալիս նրան, ծիծաղում էր նրա գողարիկ շարժուածքները տեսնելով և սովորեցնում էր նրան սիրուն համարել ինքն իրան, երբ դեռ ոչ ոք չէր ասել նրան այդ Սիրծնիի սիրտը վկայում էր, որ այդ դասակիք մարդը իր կողմը լիը լինի, ուստի և նստեց դարպասի մօտ կանդնած կառքերից մէկի մէջ ու հրամայեց տանել իրան հօմարչէ բուլվարը, Դըլօրէների բնակարանը:

Մի ժամանակից ի վեր տիկին Դըլօրէլը յարդէ գլխարկներ էր շինում արտահանութեան համար,—մի սրտամաշ արհեստ, որ հազիւ հազ երկու Փրանկ ու կէս եկամոււա էր տալիս նրան տասներկու ժամուայ աշխատանքի համար:

Իսկ Դըլօրէլը շարունակում էր հաստանալ, մինչ իր առողջ կինը՝ նիհարանում էր աւելի ու աւելի: Հէնց այժմ էլ նա պատրաստութիւն էր տեսնում ուտիլու կրակարանի մոխրի մէջ տաք պահուած անուշաբոյր պանրապուրը, երբ յանկարծ ուժին ծեծեցին նրանց գուոր: Դերասանը, որ հէնց նոր թատրոնում տեսել էր ինչ-որ մի մուայլ, արիւնաշաղախ գրամա, որի պատկերագր յայտարարութիւնն անդամ լի էր արիւնով, ցնցուեց լսելով գուան բախումը այդպէս տարածամ:

—Ո՞վ էք, —հարցրեց նա փոքր ինչ այլայլուած:

—Ես եմ... Սիրծնին... Շուտ արէք, բայց էք գուոր:

Ետ ներս մտաւ, ամբողջ մարմնով սրսոթալով, և, դէղելով զգակալը, մօտեցաւ վառարանին, ուր կրակը հանգէլու վրայ էր: Նա սկսեց անմիջապէս խօսել, դուրս զեղելով արտ ամբողջ զայրոյթը, որ մի ժամից ի վեր խեղզում էր նրան եւ երբ նա այգակս պատում էր գործարանում պատահածը աշխատելով իւլացնել ձայնը կողքներին քնած տիկին Դըլօրէլին չը զարթեցնելու համար, նրա շքեղ արդուզարդը հինգեր յարկի այդ աղքատիկ ու լերկ սենեակում և նրա ձըն ուռած պաճուծանքի սպիտակ փայլը այդ իրար վրայ դարսուած կոպիտ յարդէ զլսարկների ու գետնին ցիր ու ցան ցօղու նակտորների մէջ՝ յիրաւի այնպիսի տպաւորութիւն էր գործում:

ինչպէս մի դրամա, ինչպէս այն սարսափելի կենսային ցընցումներից մէկը, երբ դասակարգերը, զգացմունքները և կարողութիւնները յանկարծակի տակնուվրայ են լինում ու խառնաշվոթւում իրար հետ:

—Օ՛, ես այլ ես ոտք չեմ դնի մեր տունը... Պրծած բանէ... Այսուհետեւ ես ազատ եմ, ազատ:

—Բայց ով կարող էր մատնել քեզ ամուսնուդ, հարցրեց դերասանը:

—Ֆրանցը: Ես հաստատ հաւատացած եմ, որ Ֆրանցն է արել այդ: Ուրիշ ոչ ոքի չէր հաւատալ նա... Հենց երէկ երեկոյ մի նամակ էր ստացել Եգիպտոսից... Օ՛խ, ինչպէս նա ստորացրեց ինձ այն կոոչ մօտ... Չոքեցրեց նրա առաջ... Բայց ես կը հանեմ վրէժս թարեքախտաքար, դուրս գալուց առաջ վերցրի հետս այն բանը, որ ինձ հնարաւորութիւն է տալու հանել վրէժս:

Եւ նրա հինաւուրց ժպիտը գալարուեց նրա գունաթափ շրթունքների անկիւնում:

Մերունի գերասանը լսում էր այդ բոլորը ամենամնծ հետաքրքրութեամբ: Զը նայելով իր կարեկցութեանը դէպի խեղճ միալէրը, և նոյն իսկ դէպի Սիդոնին, որ, թատրոնական ոճով ասած, «Գեղեցիկ մեղաւորուհի» էր թւում նրան, նա չը կարողացաւ չը վերաբերուել գործին զուտ բեմական տեսակէտից և ի վերջոյ բացականչեց, յափշտակուած իր թատրոնամոլութեամբ.

—Սակայն ինչ հիանալի դրութիւն է հինգերորդ գործողութեան համար...

Սիդոնին չը լսեց նրա ասածը: Անձնատուր եղած ինչ-որ չոր մոքերի, որոնք ժպիտ էին բերում նրա երեսին՝ գեռ ես յիրազործուած, նա մօտեցնում էր կրակին իր ոտները, որոնց թափանցիկ գուլպաները և նուրբ հողաթափները թրջուել էին ձիւնից:

—Հապա ինչ ես անելու այժմ,—հարցրեց Դըլօրէլը մի բոպէ լուռ մնալուց յետոյ:

—Կը մնամ այստեղ մինչեւ առաւօտ... Մի քիչ կը հանգըստանամ... Իսկ յետոյ կը տեմնենք:

—Բայց անկողին չեմ կարող առաջարկել քեզ, խեղճ աղջիկս: Կինս քնած է...

—Իմ մասին անհանգիստ մի եղէք, սիրելի Դըլօրէլ... Ես լազկաթոռի մէջ էլ կարող եմ քնել: Ես պահանջկոտ չեմ:

Դերասանը խոր հոգոյ քաշեց:

Հոկտեմբեր, 1901.

— Հա, կարելի է բազկաթոռում քննել... Խեղճ Զիգիիս  
բազկաթոռն էր այդ: Ո՞քան գիշերներ տքնել է նա դրա մէջ  
գործի թունդ ժամանակը... Լաւ որ մտածենք, բախտաւորը էի  
նրանք են, որոնք շուտ են մեռնում:

Նա միշտ պատրաստ ունէր մի այդպիսի սփոփիչ ու եսա-  
կան սկզբունք: Խօսքը նոր էր վերջացրել, երբ սարսափով նկա-  
տեց, որ ապուրը բոլորովին սառելու վրայ էր: Սիդօնին նկա-  
տեց նրա շարժումը:

— Կարծեմ, գուք ընթրիք էիք անում... Ինչո՞ւ չէք շարու-  
նակում:

— Ճիշտ որ, ինչ արած... այդ մեր արհեստի, մեր տաժա-  
նելի կհանքի անբաժան մասն է կազմում... Ինչպէս տեսնում  
ես, աղջիկս, ես գեռ դիմանում եմ: Չեմ հրաժարուել թատրո-  
նից: Երբէք չեմ հրաժարուի...

Այն, ինչ մնացել էր Դէզիրէյի հողուց այդ խղճուկ շրջա-  
պատի մէջ, ուր նա ապրել էր քսան տարի, պէտք է անշուշտ  
սարսուռ զգար այդ սարսափելի խօսքերը լսելիս: Նա չէր հրա-  
ժարուի երբէք...

### Դըլօբէլը շարունակեց.

— Ինչ ուզում են ասեն, դերասանութիւնից լաւ արհեստ  
չը կայ աշխարհում: Մարդ բոլորովին ազատ է ու կախում  
չունի ոչ ոքից: Ամեն ինչ միմիայն փառքի և հասարակութեան  
համար... Օ, ես զիտեմ, թէ ինչ կ'անէի քո տեղը: Դու այդ  
բուրժուաների հետ ապրելու համար չէիր ստեղծուած, ես ի՞ւ  
Աստուածը... Քեզ անհրաժեշտ էր արտիստական կեանք, յաջո-  
զութեան տենդ, անակնիաներ, յուզմունքներ:

Այդ ասելով նա նստեց, կապեց անձեռոցիկը կղակի տա-  
կիցը ու լցրեց իր համար մի ահագին ափսէ ապուրից:

— ... Ել չեմ ասում այն, որ սիրունութեանդ յաջողութիւն-  
ները ամեննեին չէին խանգարիլ գերասանական յաջողութիւն-  
ներիդ... Մի բան ասեմ. վատ չէր լինի, եթէ գէկլամացիայի  
մի քանի դասեր առնէիր... Քո ձայնով, քո խնկով ու ընդունա-  
կութիւններով հրաշալի ապագայ կարող էիր ունենալ:

Եւ յանկարծ, կարծես ուզելով մասնակից անել նրան գե-  
րասանական արուեստի բերկրանքներին, աւելացրեց.

— Բոլորովին մոռացել էի, որ գու անշուշտ ընթրիք արած  
չես լինի... Իսկ երբ մարդ յուզմունքներ է կրում, փորը վեց-  
վեց է անում: Նստիր ուրեմն սեղանի մօտ ու վերցրու այս  
ամանը: Հաւատացած եմ, որ վաղուց պանրապուր կերած չե-  
լինի:

Նա տակնուվրայ արեց ամբողջ պահարանը Սիդօնիի հա-

մար անձեռոցիկ ու գդալ գտնելու համար, իսկ Սրբոնին նըստեց նրա զիմացը և սկսեց օգնել նրան, մի քիչ ծիծաղելով հիւրասիրութեան դժուարութիւնների վրայ: Արդէն գունատութիւնը մի փոքր անցել էր: Նոյն իսկ մի տեսակ գեղեցիկ փայլ կար նրա աշքերում, չնորհիւ մի փոքր առաջուայ արցունքների և այժմեան ուրախութեան:

Կատարեալ գերասանուհի:

Կեանքի ամբողջ երջանկութիւնը, պատիւը, ընտանիքը, հարստութիւնը կորցրել էր ընդ միշտ: Արտաքսուել էր տանից, զրկուած ամեն բանից ու խայտառակուած: Մի քիչ առաջ ենթարկուել էր ամեն տեսակ ստորացումների, ամեն տեսակ թշուառութիւնների: Եւ սակայն այդ բոլորը չը խանգարեց նրան ընթրել հրաշալի ախորժակով և ուրախ-զուարթ պատասխանել Դըլօրէլի կատակներին իր կոչման և ապագայ յաջողութիւնների մասին: Նա զգում էր իրան թեթև, երջանիկ և պատրաստ մտնելու բօհեմական աշխարհը, իր համար ստեղծուած աշխարհը: Ի՞նչ էր պատահելու այսուհետե նրան: Ի՞նչ յաջողութիւններ ու ձախորդութիւններ էր տեսնելու նա իր նոր, անսպասելի ու քմահաճ կեանքում: Այդ մաքերն էին զբաղեցնում նրան Դէզիրէյի մեծ բազկոթուում քուն մտնելու ժամանակ, բայց նա մտածում էր նաև իր վրիժառութեան մասին, իր քաղցր վրիժառութեան մասին, որի գէնքը, անվրէպ ու դաժան զէնքը՝ նա պատրաստ ունէր ձեռքի տակ:

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(Կը օարունակուի)

## ՏԻԵԶԵՐՔԻ ԵՒ ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ<sup>\*)</sup>

(Երեխա Հեկելի)

Նրկրի զարգացման պատմութիւնը.—Կանստի տեսութիւնը տիեզերքի զարգացման մասին կամ կօմօլօդիական գաղի թէօրիան.—Արեգակի, մոլորակների և լուսնի զարգացումը.—Զրի ծագումը:

Չեզ արգէն յայտնի է այն հարցը, թէ չնորհիւ ինչ պատճառների կայուն, անփոխիս տեսակներից ծագել են կենդանիների ու բոյսերի նոր տեսակներ <sup>\*\*</sup>). Մենք դիտենք, որ մի կողմից խառնածնութիւնը (Bastardzeugung), միւս կողմից էլ բնական ընտրութիւնը գոյսութեան կուռում, ժառանգականութեան և յարմարացման օրէնքների փոխազդեցութիւնը՝ լիովին բաւական նու մեքենայօրէն բացատրելու ըստ երևոյթին մի յայտնի նպատակի համապատասխանող և որոշ պլանով կազմակերպուած կենդանիների ու բոյսերի անթիւ պէսպիսութիւնների առաջ դալը։ Հիմա էլ մի ուրիշ հարց է առաջ գալիս. ինչպէս նու ծագել առաջին էակները կամ սկզբնական այն արմատէակը, որից առաջ են եկել միւս բոլոր գործարանաւոր մարմինները։

Այդ հարցին Լամարկը նախածնուրեան կամ արխիզօնիայի և նթաղրութեամբ (կամ հիպօտէզով) է պատասխանել. Դարվինը ընդհակառակը, անտես աւենելով այդ, որոշակի յայտնում է որ ինքը «գործ չունի ոչ հոգեկան և ոչ էլ կեանքի հիմնական որ-

\*) Այս գասախօսութիւնը վերցրած է նշանաւոր բնախորդ Ֆ. Հեկէլի «Natürliche Schöpfungs-Geschichte» (Բնական առեղծազործութեան պատմութիւնը) հանրամատչելի գրքից. Պրօֆ. Հեկէլը իր մասնագիտական և ընդհանուր աշխատութիւններով մեծ հոչակ է ձեռք բերել բնագիտութեան և բնափիլիսոփալութեան մէջ. զարգացման ուսմունքի մէջ նաև առաջին տեղն է բռնում անմահ Դարվինից լետոց։

\*\*) Դարվինիզմի մասին սկզբնական գաղտնաբար կազմելու համար առաջարկելի են հայերէն լեզուով հետեւալ գրքովիները. Խոլագիտան աԴարվինիզմ, Տիմիրեազել Հարրլ Դարվին» (Թարգմանութիւն),

Ժերի ծագման հետոյ: Եր զբքի վերջում նա հետեւել աւելի ուրոշ խօսքերն է ասում միենոյն հարցի նկատմամբ. «Ես ենթադրում եմ որ բոլոր գործարանաւոր էակները, որոնք երբեցիք ապրել են երկրիս վրայ, ծագել են հաւանականօրէն որևէ նախատիպարից, որին առաջին անգամ Արարիչն է կեանք ներշնչել»: Բացի դրանից Դարվինը, չանհանգստացնելու համար այն մարդկանց, որոնք ծագման ուսմունքի մէջ տեսնում էին «աշխարհի բարոյական կարգերի» ամբողջական կործանումը, յենում է մի նշանաւոր գրողի ու եկեղեցականի խօսքերի վրայ, որ նրան զբել էր թէ. «Նա կամաց-կամաց հասկանում է որ նոյնչափ վեհ գաղափար է Աստուածութեան մասին հաւատալ, որ Նա ինքնազարդացման ընդունակ մի քանի անհրաժեշտ նախախփեր է ստեղծել, որոնք կարող էին հէնց իրանց սեփական օրէկների ներգործութեամբ զարգանալ, ինչպէս և հաւատալ որ Նա պակասները լրացնելու համար կարիք է ունեցել ձեռք զարիկելու. Նորանոր ստեղծագործութիւններից: Նրանք, որոնց համար հաւատը դէպի գերբնական Ստեղծողը մի ներքին պահանջ է, կարող են նոյն այս գաղափարով հանգստանալ: Նրանք կարող են հաւատը զեսցենդենց (ծագման) թէօրիայի հետ հաշտեցնել, որովհետեւ առաւել պէտք է զարմանան Ստեղծողի իսկապէս մեծ հսարողութեան ու իմաստութեան վրայ, որ ստեղծել է միակ մի սկզբնական օրգանիզմ՝ ընդունակ ժառանգականութեամբ ու յարմարացմամբ իրանից զարգացնելու միւս բոլոր օրգանիզմները, քան հաւատալով որ նա ստեղծել է իրարից անկախ զանազան տեսակներ:

Եթէ երկրիս առաջին էակի առաջ գալը, որից ծագել են միւս բոլոր էակները, անձնաւորեալ ստեղծողի նպատակայարմար ու խորհրդալից գործունէութեամբ բացատրենք, մենք հրաժարուած կը լինենք ստեղծագործութեան գիտական ընթացնումից և այդպիսով ճշմարիտ գիտութեան սահմանից անցած կը լինենք: Ստեղծագործութիւնը գերբնականօրէն բացատրելով, մենք ոստում արած կը լինենք անընբռնելիութեան մէջ: Նախ քան այդ յուսահատական քայլն անելը և այդպիսով այդ երևոյթի գիտական ընբռնումից հրաժարուելը, յամենայն դէպս փորձենք միենոյն երևոյթը մնագ հասկանալի մեքենականութեան ենթադրութեամբ լուսաբանել: Պէտք է քննենք, թէ արդեօք այդ երևոյթն իսկապէս այնքան էլ զարմանալի՞ է, կամ կարող ենք արդեօք մի կայուն գաղափար կազմել առաջին էակի (օրգանիզմի) սոսկ բնականօրէն առաջ գալու մասին: Այդ ժամանակ միայն կը կարողանայինք «ստեղծագործութեան» հրաշքից բոլորովին հրաժարուել:

Դրա համար ստիպուած ենք մի քիչ հեռուից սկսել և երկի ու տիեզերքի ընական ստեղծագործութեան պատմութիւնից իր ընդհանուր գծերով աչքի անցկացնել: Երկրի կազմութիւնից որքան այժմ մեզ յայտնի է, հանում ենք մի կարևոր ու մինչ հիմա գեռ չը հերքուած եզրակացութիւն, որ մեր երկրի միջուկը գտնուամ է հրաշէկ հեղուկի դրութեան մէջ. զանազան շերտերից բազկացած պինդ կեղեր, որի մակերեսոյթի վրայ ապրում են օրգանիզմները, կազմուամ է այդ հրանեղուկ միջուկի խիստ բարակ ծածկոցը: Մենք Այդ եզրակացութեանն հասել ենք տարբեր, սակայն իրար չը հակասող փորձերով և դիտողութիւններով: Նախ և առաջ ի նպաստ դրան խօսում է այն փորձը, որ երկրիս կեղեկի տեմպերատուրը (ջերմութիւն-ցրտութիւնը) գեպի նրա միջուկը գնալով աւելի էլ բարձրանում է նրա տաքութիւնը, և այն յարաբերաբար, այսինքն՝ իւրաքանչիւր 100 ոտնաչափի խորութեան տեմպերատուրը բարձրանում է մօտաւորապէս մէկ աստիճան: Հստ այսմ՝ 6 մղոն խորութեան մէջ տաքութիւնն արգէն հասնում է 15000 (աստիճանի): Այդ արգէն մի ջերմութիւն է, որ կարող է մեր երկրի կեղեկի պինդ նիւթերից շատերը հալցնել և հրաշէկ հեղուկի դրութեան մէջ պահել Այդ խորութիւնը կազմում է երկրիս տրամագծի 286-րորդ մասը (1717 մղոն): Յետոյ, մենք գիտենք, որ այն աղբիւրները որոնք երկրիս խորութիւնից են բղխում, խիստ բարձր տեմպերատուր ունեն, և մասսամբ էլ դրանց ջուրը եփուող դրութեամբ է հասնում երկրիս մակերեսոյթին: Վերջապէս շատ նշանաւոր ապացոյց են նաև հրաբիսային երևոյթները, հրաշէկ հեղուկ զանգուածների ցայտումը երկրիս կեղեկի պայթած տեղերից: Երկրի միջից դուրս եկած հրաշէկ հեղուկ լաւայի հոսանքը 2000 և աւելի աստիճան տաքութիւն է ցոյց տալիս: Այդ երմոյթները ստիպում են մեզ մեծ վստահութեամբ ենթադրել, որ երկրիս ամուր կեղերը, ինձորի բարակ կճեպի նմանութեամբ, կազմում է երկրագնափառ ամբողջ տրամագծի մի շատ չնշն մասը, որ երկրագունադր տակաւին այսօր գտնուամ է մեծ մասամբ հալուած կամ հրհեղուկ դրութեան մէջ:

Եթէ այդ ենթադրութեան հիման վրայ երկրագնատիս զարգացման պատմութեան մասին մտածելու լինենք, կարող ենք մի քայլ ևս առաջ գնալ և ենթադրել որ վաղեմի ժամանակները ամբողջ երկիրը մի հրենելուկ գտնեն էր, և որ այդ գնտի բարակ կեղեկի սառչելը յետագայի պրօցէս է եղել: Կամաց-կամաց շիկացած երկրագնատի մակերեսոյթը, իր ներքին բոցավառ տաքութիւնը ցրելով սառը շրջապատի մէջ, խտանում է և դառ-

նում մի բարակ չերտ-կեղի։ Թէ առաջ երկրի տեմպերատուրն ընդհանրապէս շատ աւելի բարձր էր, հաստատում է շատ երեսոյթներով։ Ի միջի այլոց այդ ցոյց է տալիս երկրի պատմութեան առաջուայ ժամանակների օրգանիզմների համաչափ բաժնումք։ Յայտնի է որ այժմ երկրի զանազան գոտիներին և սրանց տեղային տեմպերատուրներին համապատասխանում են որոշ կենդանիներ ու բոյսեր, բայց առաջ այդպէս չէր։ Հին ժամանակներում կազմուած քարացածների բաժանումից մենք տեսնում ենք որ շատ ուշ, օրգանական երկրի պատմութեան հետ համեմատած նոր ժամանակներում (այսպէս կոչուած տերցիէր կամ երրորդական շրջանի սկզբում) տեղի է ունեցել գօտիների և դրանց համապատասխան օրգանական բնակչութեան բաժանումք։ Առաջնական և երկրորդական խիստ երկար շրջաններում արեւադարձային բոյսերը, որոնք տաքութեան շատ բարձր աստիւան են պահանջում, ապրել են ոչ թէ միայն այժմեան տաք գոտիում՝ հասարակածի տակ, այլ և այժմեան բարեխառն և ցուրտ գօտիներում։ Շատ ուրիշ երեսոյթներ էլ ցոյց են տալիս երկրագնտի ամբողջական և մասնաւորապէս բենեներից սկսած երկրի կեղեի տաքութեան աստիճանաբար նուազումք։ Բրոն իր նշանաւոր գրքում՝ «Untersuchungen über die Entwickelungsgechte der organischen Welt» հաւաքել է դրա մասին բազմաթիւ երկրաբանական և հնէախոսական ապացոյցներ։

Մի կողմից այդ երեսոյթները, միւս կողմից էլ մաթեմատիկական ու աստղաբաշխական հայեսցքը տիեզերքի կազմութեան մասին հաստատում են այն թէօրիան, թէ մեր ամբողջ երկիրը գետ անցիշատակ ժամանակներից առաջ, դեռ օրգանիզմների ծագելոց շատ առաջ, հրհնեղուկ գունտ էր։ Այս թէօրիան համապատասխանում է այն հոյակապ թէօրիային, որ վերաբերում է տիեզերքի և մասնաւորապէս մեր մոլորակների համակարգութեան ծագման, և որ մաթեմատիկական ու աստղագիտական փաստերի հիման վրայ առաջադրեց գերմանացի կրիտիկոս-վիլխոսովիայ Կանոր 1756 թ., իսկ յետոյ էլ մանրամասնորէն հաստատեցին նշանաւոր մաթեմատիկոս Լապլասը և Հերչելը։ Այդ մեթենական կոսմօգենիան կամ տիեզերքի զարգացման թէօրիան տակաւին այսօք միևնույն արժեքն ունի, քանի որ զրա տեղ աւելի լաւ թէօրիա չէ առաջադրեած, և մաթեմատիկոսները, աստղագէտներն ու երկրաբանները միշտ աշխատում են բազմազան ապացոյցներով միևնույն թէօրիան աւելի ու աւելի հաստատուն հիմունքների վրայ դնել։

Կանչի կոսմօգենիան (տիեզերքի ծագման տեսութիւնը) պնդում է, թէ ամբողջ տիեզերքը անցիշատակելի ժամանակներից

էլ առաջ գազային բառ էր։ Այն բոլոր նիւթերը, որոնք ներկայումս երկրի և միւս մոլորակների վրայ գտնուում են խտութեան զանազան դրութիւնների, այն է կարծր, կարծրնեղուկ, ծորհեղուկ և առաձգահեղուկ կամ գաղանման ալգրեղատ դրութեան մէջ, սկզբում ամբողջապէս կաղմում էին միանման՝ ամբողջ տիեզերքի տարածութիւնը հաւասարապէս լքցնող մի զանգուած, որ, չնորհիւ տեմպերատուրի արտաքոյ կարգի բարձր աստիճանի, գտնուում էր գազանման կամ օգանման խիստ նոսր դրութեան մէջ։ Տիեզերքի միլիօնաւոր մարմինները, որոնք ներկայումս արեգակնային զանազան համակարգութիւնների ներամանուած, այն ժամանակ զեռ գոյութիւն չունէին։ Երանք ծագել են ընդհանուր բոլորածն պտոյտների կամ բօտայիօնի չնորհիւ, որի միջոցին զանգուածային խմբի մի մեծ քանակութիւն աւելի խտացաւ, քան միւս գազային զանգուածները և ապա վերջիններիս վրայ աղղեց իրեւ ձգողական կենտրոն Այսպէս ահա առաջ եկաւ քաօսային տիեզերքի նախամշուչ կամ տիեզերական գազի բաժանում՝ շրջուող և աւելի ու աւելի խտացող միզագնտերի։ Մեր արեգակնային համակարգութիւնը նոյնպէս մի այդպիսի հոկայական զազանման միզագունած էր, որի մասնիկները շրջուում էին մի ընդհանուր կենտրոնի՝ արև-միջուուկի շուրջը։ Միզագունածը բօտայիօնի պատճառով միւսների նման ընդունեց սփէրօիդ ձև կամ սեղմուած գնափ կերպարանը։

Մինչդեռ կենտրոնածիկ ոյժը միշտ քաշում էր շրջուող մասնիկները դէպի միզագնտի թանձր կենտրոնը, և այդպիսով այդ գունան աւելի ու աւելի խտացնում, կենտրոնախոյս ոյժն ընդհակառակը ձգուում էր շրջանակի զրսի կամ պերֆերական մասնիկներն աւելի հեռացնել կենտրոնից և ցրել։ Երկու բեկաներում տափակած գնտի հասարակածի կողմնորում այդ կենտրոնախոյս ոյժն ամենից զօրեղ էր. երբ գնտի անընդհատ խտացմանը կենտրոնախոյս ոյժը կենտրոնածդի նկատմամբ առաւելութիւն է ստանում, իսկոյն շրջուող գնտից անջատուում է մի օղակած մզային զանգուած։ Այդ մզային օղակները ուղեցոյ են զանում ապագայի մոլորակների համար։ Օղակի միզային զանդուածը կամաց-կամաց խտանալով, կազմում է մի մոլորակ, որ շրջուում է իր սեփական առանցքի և միննոյն ժամանակ կենտրոնական մարմնի շուրջը։ Բոլորովին միւնոյն եղանակով հէնց որ կենտրոնախոյս ոյժը կենտրոնածդի նկատմամբ կրկին առաւելութիւն է ձեռք բերում, մոլորակների զանգուածի հասարակածից անջատուում էին նոր միզային օղակներ, այդ օղակները միենոյն եղանակով շրջում էին մոլորակների շուրջը, ինչպէս

այս վերջինները արեգակի շուրջ: Այդ միգային օղակները նոյն պէս խտանում են և կազմում նոր շրջող գնտեր: Այսպէս ծագում են լուսնեակները, որոնցից միայն մէկը՝ երկրի, չորսը՝ իւսպիտերի (լուսնթագ), վեցը՝ Ռւրանուսի շուրջն են պտըտում: Աստուրնուսի (Երեակ) օդակը տակաւին այսօր մեզ ներկայանում է իրքն մի լուսին՝ գարգայման երիտասարդ շրջանում: Մինչդեռ խտացման և անջատման այդ հասարակ պրօցէմները աստիճանական սառուցմամբ յաճախ կրկնւում են, առաջ են գալիս զանազան արեգակնային համակարգութիւններ, մոլորակներ, որոնք պտըտում են շրջան աննշով իրանց կենտրոն կազմող արքի շուրջը, իսկ այդ մոլորակների արբաննեակները կամ լուսինները պտըտում են իրանց ծնող մայր մոլորակների շուրջը:

Այդպէս ահա տիեզերքի շրջող մարմինների նախնական գաղային գրութիւնը աստիճանական սառուցմամբ և խտացմամբ ստանում է հրհեղուկ կամ հալած գրութիւն: Խտացման չնորհիւ մեծամեծ կոյտերն ազատւում են տափութիւնից, և այդպիսով շրջող արեգակները, մոլորակներն ու լուսինները ձևակերպուելով դառնում են հրաշէկ գնտեր, հալած մետաղի մի տեսակ հակայական կաթիլ, որ ճառագայթում է լոյս ու տաքութիւն: Հրհնուուկ գնդի մակերեսոյթը իր տաքութիւնը կորցնելով, կրկին խտանում է, և այդպիսով առաջ է գալիս բարակ ու կարծր կեղեց, որ պատում է հրհնուուկ միջուկը: Այդ տեսակէտներից մեր մայր երկիրն էապէս չէ տարբերւում տիեզերքի միւս մարմիններից:

Որովհետեւ մեր այս դասախոսութիւնների նպատակն ուրիշ է, ուստի չնոք կարող մասնաւորապէս զբաղուել «Տիեզերքի բնական ստեղծագործութեան պատմութեան»՝ իր զանազան արեգակնային ու մոլորակնային համակարգութնամբ և տարբեր աստղադիտական ու երկրաբանական ապացոյցներով մաթեմատիկորէն հաստատել: Ես կը բաւականանամ վերը բերած հիմնագծերով և մատնացոյց կ'անեմ՝ ինդրին աւելի մօտ ծանօթանալու համար՝ հետհեալ գրքերը. Կանչ՝ «Allgemeine Naturgeschichte und Theorie des Himmels», Կարու Շերնեկ՝ Werden und Vergehen» և Վիլհելմ Բեօլչ՝ «Entwickelungsgeschichte der Natur»: Միայն մի նկատողութիւն կ'ուզենայի աւելացնել. այս պանչելի թէօրիան, որին անուանում են նոյնպէս կոմօլօգիսկան գաղիք թէօրիա, համապատասխանում է ցայժմ մեզ ծանօթ բոլոր երկոյթներին: Յետոյ, այդ թէօրիան զուտ մեթենական կամ մօնիթուսական (միական) է. նա նկատի ունի բացառապէս յաւիտենական նիւթի նախնական ոյժերը և բոլորովին մերժում է ամեն մի գերբնական երեսիթ, որեէ անհատ արարչի նպատա-

կայարմար ու գիտակցական գործունէութիւն։ Կանչի՝ տիեզերական գաղի թէօրիան բռնում է անգործարանաւոր մարմինների գիտութեան կամ անօրգօգիալի (նամանաւանդ Երկրաբանութեան մէջ) այն տեղը և պահում է նոյն ձևով մեր ընդհանուր իմացողութիւնը, ինչ տեղ բռնում է Լամարկի կենսաբանական դեսցենդենց (ծագման) թէօրիան—ամբողջ բիոգիալի կամ կենսաբանութեան, նամանաւանդ մարդաբանութեան մէջ։ Երկուսն էլ յենուում են բացառապէս մեժենական կամ նպատակագուրկ (causae efficientes) և ոչ ըստ նպատակի գործող կամ գիտակցական պատճառների վրայ (causae finales)։ Երկուսն էլ գոհացում են տալիս գիտական թէօրիայի բոլոր պահանջներին և այնքան ժամանակ կը պահեն իրանց արժողութիւնը, մինչ որ մի ուրիշ աւելի լաւ թէօրիայով փոխարինուեն։

Ես չեմ ուզում ծածկնել, ի հարկէ, որ Կանչի հոյակապ կօսմօգենիան մի քանի թոյլ կողմեր ունի, որ թոյլ չէ տալիս մեղնրան անվայման վստահութիւն ընծայել, ինչպէս Լամարկի դեսցենդենց թէօրիային։ Ամբողջ տիեզերքը լքցնող նախամկարնական գաղանման քառակի գաղափարը զանազան տեսակ զըժուարութիւններ է յարուցանում։ Մի ուրիշ մեծ և անլուծելի դժուարութիւն էլ ներկայացնում է այն, որ տիեզերական գաղի թէօրիան չէ տալիս մեզ ոչ մի յենակէտ՝ առաջին խթանը բացատրելու, որ պատճառ եղաւ գաղով լքցուած տիեզերքի մէջ շրջումն առաջ բերելու։ Այդպիսի մի խթան որոնելով, ակամայից կ'ընդհարուենք Շախատակիզմբը՝ որոնով սխալ հարցի հետ Սակայն տիեզերքի յաւիտենական շարժման երևոյթների նախասկզբի մասին կարող ենք այնչափ քիչ գաղափար կազմել, որ չափ և վախճանի մասին։

Տիեզերքն ըստ ժամանակի ու տարածութեան անսահման է ու անչափելիք։ Նա յաւիտենական է ու անվախճան։ Անընհատ և յաւիտենական շարժման մէջ, որի մէջ գտնուում են մշտնջենապէս տիեզերքի բոլոր մասնիկները, չենք կարող ոչ սկիզբ և ոչ էլ վերջ երեակայել։ Ամենակարող էութեան կամ սուլբանցի օրենքն է մեզ ստիպում այդ ենթագրութիւնն անելու, մի օրէնք, որ Գիզիկայի մէջ յայտնի է ուժի պահպանութեան, քիմիայի մէջ—նիւթի պահպանութեան<sup>\*)</sup> օրէնք անունով, և կազմում է մեր ամբողջ բնահայեցողութեան հիմքը։ Աշխարհը որքան նա մարդու իմացողական կարողութեան մատչելի է, նիւթական շարժողութեան և դրա հետ կապուած ձևերի անընդհատ փոփոխման մի շղթայ է։ Իւրաքանչիւր ձև, լինելով շար-

<sup>\*)</sup> Համեմատիր «Մուրճ» № 2—«Ո՞վ էր Լավուազիէն» լոգուածը, Խմբ.

ժողութիւնների գումարի առժամանակեայ արդիւնք, ըստ ինչքեան սննդողական է ու սահմանափակ տեղութեամբ. իսկ ձեւերի այդ մշտնջենական վոփոխութեան ժամանակ նիւթը, և դրանից անընդամ ոյժը, մնում է յաւիտենական ու անջինջ: Այս է ծշմարիտ «յաւիտենականութիւնը»:

Թէև կանչի տիեզերաբանական գաղի թէօրիան անկարող է ամբողջ տիեզերքի զարգացման պատմութիւնը զազանման քառա դրութիւնից էլ առաջ բաւարար կերպով լուսաբանելու. թէի այդ թէօրիան բայց դրանից մի քանի վարանումներ է առաջ բերում, մանաւանդ քիմիայի ու երկրաբանութեան տեսակէտից, բայց և այնպէս միւս կողմից պէտք է ընդունենք նրա մեծ նշանակութիւնը, որ պանչելի կերպով բացատրում է զարգացման պատմութեամբ՝ մեր դիտողութեան մատչելի տիեզերքի շնորածքը, արեգակնային և մասնաւորապէս մեր մոլորակային համակարգութեան «անատօմիան»: Թերևս այդ զարգացումն իրաք ուրիշ տեսակ է եղել, թերևս մոլորակները նոյնպէս և մեր երկիրն առաջ են եկել ազգրեգացիօնի միջոցով — անթիւ մանր և տիեզերային տարածութեան մէջ ցրուած մետերօխտներից: Մի այդպիսի թէօրիա առաջարկել է Շաղեն-հառուպէնը, «Isis» և «Osiris» նշանաւոր երկերի հեղինակը: Սակայն իմ կարծիքով այս և նման կօսմօգենիաներն առաւել մեծ դժուարութիւններ են յարուցանում, քան կանտինը:

Մօխիսական կօսմօգենիայի կամ «տիեզերքի բնական զարգացման պատմութեան» վրայ այս ընդհանուր հայեացքը ձգելուց յետոյ, դառնանք կրկին նրա փոքրիկ մասին՝ մեր մայր երկրին: Մենք թողեցինք երկիրը հրհեղուկ, երկու բենուների մօտ տափակած գնտի դրութեան մէջ, որի մակերեսոյթը չնորհիւ սառուցման խտացել և դարձել է բոլորովին բարակ ու ամուր կեղես: Պնդացած առաջին կեղելը պատում է հաւասարաչափ կերպով երկրագնտի ամբողջ մակերեսոյթը, ինչպէս մի հարթ ու բարակ պատեան, բայց շուտով դառնում է անհարթ ու խորտուրորտ: Երբ անընդհատ սառուցման ընթացքում հրհեղուկ միջուկն աւելի ու աւելի խտանում և կծկւում էր, և այդպիսով երկրի տրամագիծը փոքրանում, բարակ ու ամուր կեղելը, անկարող լինելով միջուկին հետեւ, խորշումում, ծալքեր էր կազմում և փշրւում. միջուկի ու կեղելի միջն մի դատարկ տարածութիւն պիտի առաջ գար, եթէ զիւրաբեկ կեղեն արտաքին մթնոլորտի ճնշման տակ դէպի ներս չը սեղմուէր: Միւս անհարթութիւններն էլ առաջ են եկել հաւանականօրէն այն պատճառով, որ զանազան տեղերում սառչող կեղել պնդուելով սղմուել և ճեղքուածներ է առաջ բերել: Հրհեղուկ միջուկն այդ ճեղքուածք-

ներից գուրս է և բղխել վերստին պնդացել։ Այդպիսով առաջ են եկել այլեայլ բարձունքներ ու խորութիւններ, ցամաքներ ու ծովեր, սարեր ու ձորեր։

Երբ սառած երկրագնատի տեմպերատուրը մի որոշ աստիճան իջել էր, հետեւ մի նոր շատ կարեոր երեսյթ, այն է առաջին անգամ առաջ եկաւ զուրբ։ Մինչի այդ, ջուրը գոյութիւն ունէր երկրագունածը պատող մթնոլորտի մէջ գոլորշու ձեւով։ Երբ մթնոլորտի տեմպերատուրը եռացման կէտից իջել էր, այն ժամանակ միայն, պարզ է որ ջուրը կարող էր ծորհեղով դրութիւն ստանալ։ Զրի ոյժի չնորհիւ սկսում է երկրի կեղեցի յետագայ կերպարանափոխութիւնը։ Անձրեփ ձեռվ թափուելով, ջուրը երկրի կեղեցի բարձունքները քերում, լուսնում և նրանց տիղմով լքյնում է խորութիւնները, շերտ-շերտ դարսելով իրար վրայ. այդ պրօցէսը առաջ է բերում երկրի կեղեցի նեպտունական կերպարանափոխութիւնը։ Այդ ժամանակից սկսած ջրանիստ կազմութիւնն անընդհատ շարունակում է և առաջ բերում հսկայական շերտաւոր լեռնային զանգուածներ, ջրանիստ քացումներ։

Գերմ. թարգմ. Ս. Տ. ԳԱՅՊԱՐԵԱՆ

(Կը ռարունակուի)

## ԲԻՔՈՐՆԱԾՈՆ ԻԲԻՇԻ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ

### I

Օտարների համար Բիէօրնսօն միայն մի մեծ բանաստեղծ է, իսկ հայրենի Նորվեգիայի համար և՝ բանաստեղծ, և՝ հասարական գործիչ։ Նա ոչ միայն երգել է լաւն ու բարին, ոչ միայն գեղեցիկ գրամաներ ու պատմուածքներ է գրել, այլ և մասնակցել է հասարակական հրատապ հարցերին և միշտ աշխատել է պաշտպանել արդարութիւնն ու ձմարտութիւնը։

Նա զեռ երիտասարդ հասակում անվախ կոփւ է սկսել գրական ասպարէզում և իր համարձակութեան ու եռանդի չնորհիւ կարողացել է միշտ էլ ուշադրութիւն գրաւել...

Նրա գործունէութիւնն ունեցել է զգալի արդիւնք, ցանած սերմերը բերել են պառողներ։

Խնչպէս յայտնի է, մի հեղինակ կարող է տաղանդ ունենալ, բայց անհաշտ մնալ իր ազգի և շրջապատող ժողովրդի հետ։ Այստեղ պատճառն այն տարբերութիւնն է, որ գոյութիւն է ունենում հեղինակի համոզմունքների և ժողովրդական բնաւորութեան ու զարգացման աստիճանի մէջ։ Այդ հանգամանքը շատ երեկի մարդկանց գառնութիւն է պատճառել և նոյն իսկ տարագիր դարձել։ Բաւական է յիշել Բայրընին, Հայնէին, Իբսէնին, Տուրգենևին և այլն։ Շատ հեղինակներ էլ թէն մնացել են իրանց հայրենիքում, բայց միշտ սնջատուած, մեկուսացած են զգացել իրանց։

Սակայն բոլորովին ուրիշ է Բիէօրնսօնի բախտը։ Ճիշտ է, նա էլ ունի հալածողներ ու հակակրողներ։ Ճիշտ է, կառավարութիւնն ու ամբողջ լշխող տարրը հակառակ են նրան և ամեն կերպ աշխատում են հարուածներ հասցնել, բայց ժողովուրդը սիրում է նրան, յարգում է նրա ձգտումներն ու համոզմունքները։ «Բիէօրնսօն անունը մի դրօշակ է նորվեգացիների համար», ասում է Բրանդէս<sup>\*)</sup>, եւ զա շատ ճիշտ է, որովհետեւ

\*) Georg Brandes «Moderne Geister» Berlin 1881.

նրա անունը կարող է նոյն չափով դէպի իրան քաշել առանձին անհատներին, ինչպէս ազգային դրօշակը։ Նրա ամբողջ գործունէութեան նշանաբանն է եղել՝ պաշտպանելու արծարծելի հայրենակիցների սէրը դէպի հայրենիքն ու ազատութիւնը, դէպի արդարութիւնն ու ճշմարտութիւնը։

Նա ինքն էլ միշտ՝ սիրել է իր հայրենի երկիրը։ «Ես ուզուեմ Նորվեգիայում ապրել, գրում է նա 1880 թ. Բրանդէսին, Նորվեգիայում հարուածել և հարուածների ենթարկուել, Նորվեգիայում երգել ու մեռնել...»

## II

Բիէօրնսօնը ծնուել է 1832 թ. գելտեմբերի 8-ին, Նորվեգիայի Կուրիկնէ աւանում, որտեղ նրա հայրը պաստօր էր։

Այդտեղ բնութիւնը աղքատ է և մուալլ; Մերկ ժայռեր ցիր ու ցան կանգնած ծառեր—ահա նրա ամբողջ հարստութիւնը; Երկիրն անպտուղ է և եղանակը խիստ Զմեռը ձեան հաստ շերտն է ծածկում սար ու հովիտ, իսկ ամառը—յորդանձրեն է իր դերը խաղում։

Ահա այդպիսի մոայլութեան, այդպիսի աղքատիկ բնութեան մէջ է անցկացրել Բիէօրնսօն իր մանկութեան առաջին տարիները։

Բարեբախտաբար շուտով նրա հայրը տեղափոխուեց Նևստէտ—(Nässset), որ ամբողջ Նորվեգիայում հոչակուած է իր գեղեցկութեամբ ու բնական հարստութեամբ։ Այդ ժամանակ Բիէօրնսօնը վեց տարեկան էր։

Բնակավայրի փոփոխութիւնը բարերար աղղեցութիւն է ունենում նրա վրայ։ Նա աւելի կենսուրախ ու կայտառ է դառնում, աւելի ազատութիւն է տալիս իր բանաստեղծական ձգտումներին։

Դպրոցական շրջանում մանուկ Բիէօրնսօնը իր ընկերներից մի փոքրիկ խմբակ է կազմում և նրանց գեկավարը դառնում։ Այդ շրջանում նա մեծ նուանդով կարգում է պատմական և բանաստեղծական գրուածքներ, ժողովրդական երգեր, աւանդութիւններ և վէպեր։

Տասներօթ տարեկան հասակում նա գալիս է Խրիստիանիա՝ ուսանողական քննութեան պատրաստուելու և այդտեղ սկսում է կարդալ դանիական գրականութիւնը, մինչեւյն ժամանակ ծանօթութիւն հաստատելով յայտնի բանաստեղծ Ֆինիկի պատմաբան Սարսի և ուրիշ աչքի ընկնող մարդկանց հետ։ Նրա վրայ առանձնապէս մեծ աղղեցութիւն է թողնում դանիական

թատրոնը: 1852 թ. նա վերադառնում է ծնողների մօտ իբրև ուսանող և սկսում է երգեր յօրինել, ժողովրդի կեանքով աւելի ու աւելի հետաքրքրուել:

Կարճ միջոցում նա նորից գալիս է Խրիստիանիա և գրական ասպարէզ մտնում իբրև թատրոնական գրուածքների քննադատ: Այդտեղ նա գառնում է «Aftenblad» թերթի ամենամօտ աշխատակիցներից մէկը:

Այդ ժամանակ նա սկսնակ էր, բայց անվախ սկսնակ: Նա գրում էր երիտասարդական ամբողջ աւիւնով և անինայ խըստութեամբ: Ահա այդ իսկ պատճառով նրա թշնամիներն աւելցնում էին օրէ ցօր: 1860 թ. նա տեղափոխուեց Կոպենհագէն, իսկ այնտեղից Հռովմէ: 1863 թ. Ֆրանսիայի և Գերմանիայի վրայով վերադարձաւ հայրենիք և 1866—71 թ. վարեց «Norsk Folkeblad» թերթի խմբագրի պաշտօնը: 1873 թ. նա նորից զնաց արտասահման, ուր մնաց մինչև 1875 թ. և ապա վերադարձաւ Նորվիեյիա: Այդ ժամանակամիջոցում նա անդադար աշխատում էր, մասնակցում էր բոլոր հասարակական հարցերին, նոյն իսկ հեռուից: 1882—88 թ. նա ապրում էր Պարիզում, բայց այդտեղից էլ իր գրչով շարունակում էր հատպարակախօսական գործունէութիւնը: Նա իր համոզմունքներով միշտ հակուած է եղել ձախակողմնան—(դեմոկրատիական) կուսակցութեան կողմը:

### III

Իր գրականական գործունէութեան առաջին շրջանում Բիէօրնսօնը գրում էր և լիրիքական ոտանաւորներ ժողովրդական երգերի նմանողութեամբ: Սակայն այդ զրադմունքը նրան բաւականութիւն չէր տալիս նա սկսում է գրել թատերական երկեր և առաջին անգամ լոյս է ընծայում «Ճակատամարտում» («Zwischen den Schlachten») դրաման, որի մէջ պատկերացրած է մի միջնադէպ միջնադարեան նորվեգիայի կեանքից:

Գլխաւոր հերոսը Սվերրէ թագաւորն է, որ ունի բարի և փափուկ սիրտ, բայց չարաբաստիկ հանգամանքների չնորհիւ ստիպուած է լինում կեղծ անուան տակ թափառել և ժողովրդին մեծ զրկանքներ պատճառել:

Վերջապէս 1857 թ. լոյս է տեսնում նրա «Սիննեօվէ Սոլբակկէն»—(«Syntøve Solbakken») վէպը, որի մէջ բանաստեղծոքն նկարագրուած է գիւղական կեանքը, ընտանեկան բարք ու վարքը: Վէպի հերոսներն ին Սիննեօվէ Սոլբակկէն և Թորթորն:

Հարևան ընտանիքների զաւակներ էին երկումն էլ, ուստի դեռ մատաղ հասակից նրանց մէջ սկսուեց սերտ յարաբերութիւն:

Նրանք յաճախ պատահում էին միմեանց, խօսակցում և խաղում էին իրար հետ: Մանկական անարատ սէրը զարգանում էր անմեղ սրտերում և աւելի ու աւելի մտերմացնում նրանց յարաբերութիւնը:

Անցան տարիներ: Սիննեօվէն և Թորբիորնը արդէն չափահաս էին: Փոխադարձ սէրը հասել էր իր զագաթնակէտին և վերջապէս ամուսնական կապը հաստատեց նրանց երջան կութիւնը:

Իսկական սէրը մի զօրեղ ոյժ է, որ ոչնչացնում է ամեն աեսակ արգելքներ—ահա սա է վէպի իդէան, որ պատկերացրած է այնքան գրաւիչ, այնքան բանաստեղծական ձեռվ: Այդ վէպը միանգամից հոչակ պարգենեց Բիէօրնունին:

Թէ բովանգակութեամբ և թէ իդէայով այդ վէպին շատ նմանութիւն ունի «Արնէ» անունով պատմուածքը:

Այդտեղ էլ նկարագրուած է կրակոտ սիրոյ զարգանալլ և իր կէտ նպատակին համնելը: Այդտեղ էլ հեղինակն իրան յատուկ ճշգրիտ ու բանաստեղծական ձեռվ պատկերացնում է ժողովրդի կեանքը, սովորութիւններն ու համոզմունքները:

Այդ երկու զրուածքի աջողութեան գլխաւոր պատճան այն էր, որ նրանց իդէան համապատասխանում էր «ազգային լիբերալներ» կոչուող կուսակցութեան փայփայած զաղափարներին:

Պէտք է նկատել, որ այդ կուսակցութիւնը կասկածանքով էր վերաբերում դէպի եւրոպական գրականութիւնն ու գիտութիւնը: Նա հաւատացած էր, թէ միայն Հիւսիսը, միայն Նոր վեղիան կարող է ծնունդ տալ այն ամենին, ինչ որ թարմ է և մաքուր, ինչ որ լաւ է և գեղեցիկ: Նա ուզում էր ունենալ զուտ ազգային, զուտ սկանդինավական բանաստեղծութիւն և այդ ցանկութեան բաւարարութիւնը տալիս էր Բիէօրնունին: Պարզ է ուրեմն, որ նրան պէտք է սիրէին ու բարձրացնէին:

Թէ վերոյիշեալ մեծ պատմուածքները և թէ միւս մանրները (օր. «Հայրը», «Արծիւի բունը», «Հաւատարմութիւնը», «Կեանքի հանելուկը» և այլն) իրանց մէջ պարունակում են մի առանձին թարմութիւն և նորվեգիական աւանդութիւններին յատուկ ոճ:

Այդ մանրավէպերի բնորոշ գիծն այն է, որ հեղինակը նկարագրում է առօրեայ կեանքը, պատկերացնում է գիւղացու մտածմունքներն ու հաւատալիքները ճիշտ այնպէս, ինչպէս կայ

առանց անձնական ձգտումներ մտցնելու, առանց վիլխսովայօշէն քննադատելու:

Զը նայելով այդ հանգամանքին, նրա այդ գրուածքներն էլ զուրկ չեն բանաստեղծական գրաւչութիւնից: Դրանց մէջ հեղինակը միացրել է կենսական ծանօթութիւնը լիրիկական քընդութեան հետ և դրանով կազմել է ընթերցանութեան համար հետաքրքիր երկեր: Ժողովրդական աւանդութիւնները, երգերն ու հեքիաթներն են եղել այդ երգերի աղբիւրը:

## IV

Այդ պատմուածքներին հետեւում են դրամաներն ու ոտանաւորները: Այստեղ ժողովրդական ոգու խորքից գուրս է բըղիում անհատականութիւնը և աւելի ու աւելի զարգանում: «Ճակատամարտում» («Zwischen den Schlachten»), «Չար Սիգուրդը» («Sigurd der Böse») և «Արնլեու Գելինէ» («Arnljot Geline») դրամաներում աչքի է ընկնում միենոյն մեծ տիպը, որ ուժեղ է և ազնիւ, որ ստեղծուած է ժողովրդի բարերարը մինելու, բայց հանգամանքների չնորհիւ ստիպուած է չարիքներ գործել:

Ամբողջ քաղաքներ հրդեհի կերակուր են դառնում բոլոր այն տեղերում, որտեղից անցնում է Սվերրէն \*): Նա դառնացած սրտով պատմում է. «Ես ճանաչում եմ մի իշխանի, որ ուզում էր իր ժողովրդի բարիքն ու օրհնէքը դառնալ, բայց նրա չարիքն ու նզովը դարձաւ: Անընկճելի ճակատագրի նըման նա անցնում է մի արեան դաշտից դէպի միւսը, մի հրդեհած քաղաքից դէպի միւսը: Նրա ճանապարհը ծածկուած է ծխացող դիակներով ու աւերակներով: Նրան հետեւում է անվերջ հառաջանքն ու ազմուկը... Շատերն ասում են թէ սատանան նրա օգնականն է, ոմանք էլ պնդում են թէ նա ինքը սատանայ է...»

«Բայց ես զիտեմ, այս, զիտեմ հաստատապէս որ նա անկարող է առանց իր դժբախտութիւնը մեծացնելու մէկի վրայ ձեռք բարձրացնել, նոյն իսկ այն ժամանակ, երբ ուրիշները դադաների նման իրար պատառուում են... Նա միայն բարիք է կամենում...»: Այդ իշխանն ինքը Սվերրէն է:

«Չար Սիգուրդի» հերոսը—Սիգուրդը ժողովրդին ատելի է

\*.) Սվերրէն «Ճակատամարտում» դրամալի հերոսն է:

գառնում նրա համար, որ իր արդար իրաւունքն է պաշտպանում և Նորվեգիայի բախտը կամենում:

«Արնեօս Գելինէ»-ի հերոս—Արնեօս իր ամբողջ հոգով հեզ ու բարի է, բայց հանգամանքներից ստիպուած դառնում է աւազակ ու մարդասպան:

Հասկանալի է, որ այդպիսի տիպեր ստեղծելու համար մեծ դեր է խաղացել հեղինակի «Ես»ը, անհատականութիւնը Սակայն, ինչպէս վերևում նկատեցինք, այդ անհատականութիւնը բղխում է հէնց ժողովրդի ողուց և զարգանում է, որպէս զի նորից միանայ ժողովրդի հետ:

Այդ կէտում Բիէօրնսօնի կատարեալ հակապատկերն է ներկայացնում Նորվեգիայի միւս պարծանքը—Իբսէնը: Իբսէնը իր ամբողջ էութեամբ հեռու է ժողովրդից: Նա միայնակ է բախիքուն նշանակութեամբ: «Ես կը մնամ միայնակ, հեռու օտարութեան մէջ», ասում էր նա դեռ 1875 թ. իր ճառում և այդ խօսքերը դարձել են նրա ամբողջ կեանքի նշանաբանը: Նա աշխատում է թափանցել մարդկային սրաի խորքերը:

Դու, ծանր մուրճ, բաց ինձ ուղի

Դէպի անհօւն խորքը սրտի:

Ասում է նա իր հերոսի բերանով:

Բիէօրնսօնն ընդհակառակը չի ձգտում դէպի խորքերը «Նրա հանճարն ազատ թեեր ունի», ինչպէս իրաւացի կերպով նկատում է Բրանդէսը \*): Իբսէնը հասարակութեան համար մի խիստ գատաւոր է, իսկ Բիէօրնսօնը՝ մարդարէ, որ զերծադին նախագուշակում է գալիք լաւ օրերը: Իբսէնի տաղանդն իր մէջ մի յեղափոխող տարր է պարունակում: Նա «Սիրոյ կօմեդիայում» («Nora») մտրակում է ամուսնութեան վատ կողմերը, «Հըդեհ»-ում («Brand») քաղաքական եկեղեցին, «Հասարակութեան հիմքեր»-ում («Stützen der Gesellschaft») ամբողջ քաղաքացիական հասարակութիւնը և այնի:

Նրա սուր քննադատութիւնը ջախջախում է այն ամենը ինչ որ ուզում է: Իսկ Բիէօրնսօնը ընդհակառակը՝ հաշտեցնող ողի է և կորիւ է մղում առանց դառնութիւնների:

Իբսէնը միշտ սիրում է գաղափարը և տրամաբանական հոգեբանական տեսողութիւնը \*\*), իսկ Բիէօրնսօնը դրա փոխարէն ունի խոր սէր սէր դէպի մարդարարածը:

Մի ուրիշ տարբերութիւն էլ է նշմարւում այդ երկու խոր բանաստեղծների առաջին դրամաներում: Իբսէնը իրը

\*) G. Brandes „Menschen und Werke“.

\*\*) Adolf Stern: „Studien zur Litteratur der Gegen Wart.“

զուտ դրամատուրգ իրան միշտ հեռու է պահում բնութեան նկարագրութիւնից: Նրա երկերում տեղտեղ՝ պատահող նկարագրութիւնները սիմբոլական նշանակութիւն են ստանում:

Բոլորովին այլ կերպ է վարւում Բիէօրնսօնը: Նա իր դրամաներում ազատօքէն տեղ է տալիս մայր բնութիւնից ստացած տպաւորութիւններին, նրա պէս-պէս նկարագրութիւններին:

Ինչ վերաբերում է Բիէօրնսօնի ոտանաւորներին, պէտք է նկատել, որ թէն նա ոտանաւորներ շատ չէ գրել, բայց գրածները այնպիսի յատկութիւն ունեն, լիրիկական այնպիսի ոյժ են պարունակում իրանց մէջ, որ միշտ էլ անմոռանալի կը մնան: Նրա յօրինած ժողովրդական երգերը հնչում են անարատ քնչութեամբ. նրա ոտանաւորներից շատերը արդէն ազգային երգեր են դարձել...

## V

Եօթանանական թուականներից Դանիայում սկսւում է գրական մի նոր հոսանք, որ իր ազդեցութիւնը տարածում է և նորվեգիայի վրայ...

Ահա այդ ժամանակ, այդ վերածութեան շրջանում էր որ Բիէօրնսօնը զրում է իր բարեկամ Բրանդէսին՝ «Ես այժմ աչքեր ունեմ, որ տեսնում են, ականջներ ունեմ, որ լսում են»:

Եւ իսկապէս մութ կէտերը, անորոշ հարցերը հետզհետէ պարզում, լուսաբանուում են նրա համար: Նա անդադար կարդում էր բազմազան գրքեր ու պարբերական հրատարակութիւններ օտար լեզուներով: Նրան հետաքրքրում էին ամեն տեսակի և ուղղութեան գրուածքներ՝ թէ բնագիտական, թէ պատմական, թէ փիլիսոփայական, թէ քննադական և թէ վիպական: Նա մեծ եռանդով կարգում էր Միլլ՝ Դարուին, Մաքս Միլլէր, թէն, և այլն:

Ահա այդ բազմակողմանի ընթերցանութիւնն ու անդուլինքնակրթութիւնն էր նրա մէջ նոր յեղափոխութիւն առաջ բերողը և տաղանդին զարկ տուողը:

Այդ նոր շրջանի առաջին մեծ աշխատութիւնն էր «Սնանկութիւն» («Ein Falissemment») գրաման, որ անսպասելի աջողութեան արժանացաւ թէ նորվեգիայում և թէ Գերմանիայում:

Բիէօրնսօն Սկանդինավիայի առաջին բանաստեղծն էր, որ ամենայն լրջութեամբ պատկերացնում էր փողի տրագիկօմի-

կական էութիւնը։ Այդ հանգամանքի չնորհիւ նրա յաղթանակն աւելի զգալի ու մեծ եղաւ։

Ցիշեալ դրամայի հետ միաժամակ լոյս տեսաւ և ռևմբագիր («Der Redacteur») դրաման, որ զաւեշտական գոյներով պատկերացնում է նորվեգիայի ժամանակակից մամուլի վիճակն ու կարգերը։

Այդ երկու դրամաներին հետեւում են «Թագաւոր» ուսանաւորը, «Մագնիլդ» նովելլան, «Նոր սիստէմ», «Լէօնարդ» դրամաները, ևյուն։ Դրանցից ամենաջողը կարելի է համարել «Լէօնարդ» դրաման, որի իդէան է՝ բարոյական և կրօնական համբերատարութիւն։

Գլխաւոր հերոսուհին տիկին Լէօնարդա ֆալկն է, որ ուրիշ բախտաւորութեան համար զո՞ն է բերում իր սէրը։

Զափազանց պաղատու և արգիւնաւէտ էր Բիէօրնսօնի գրիչն այդ շրջանում։ Սակայն պահպանողականներն աշխատում էին Բիէօրնսօնի տաղանդը նսեմացնել, արժեքը զցել՝ աջ ու ձախ տարածելով, թէ նրա բանաստեղծութիւնը որոշ ձգտում ներից է առաջ եկել, թէ նա զեղարուեստական արժեք չունի, ևայլն։

Բայց որքան արդարացի էին այդ մեղադրանքները, ինչ էին ներկայացնում նրա բանաստեղծութեան թերութիւնը կադմող ձգտումները։ Եւ միթէ բանաստեղծը կարող է ապրել առանց այդպիսի տեսնդենցիայի, առանց այդպիսի թարմ գաղափարների։ Ի հարկէ ոչ։ «Այդ գաղափարները բանաստեղծի համար նոյն դերն են կատարում, ինչ որ արեան շրջանառութիւնը—մարմնի համար...» \*):

Բիէօրնսօնի նոր ուղղութեան հակառակորդները պնդում էին, թէ Բիէօրնսօնի տաղանդը կանգնած է իր բարձրութեան վրայ միայն այն ժամանակի, երբ հեռու է առօրեայ հրատապ հարցերեց, հասարակական հոսանքներից։ Սակայն որքան արդարացի է այդպիսի դատավճիռը։

Հադհակառակը՝ այդ վերջին զրուածքներում Բիէօրնսօնի ոճը, տեխնիկական առաւելութիւններն աւելի բարձր են քան թէ առաջ. իսկ ապագան հաստատեց որ հէնց յիշեալ ճճրդ տումներն ու գաղափարներն» են ամենից շատ ուշադրութիւն գրաւողը և հեղինակի հոչակը բարձրացնողը։

\*) „Moderne Geister“, 429 էր.

## VI

Բիէրնսօնը ոչ միայն իր դրամաներով է նպաստել թատրոնի նշանակութիւնն ու ազգեցութիւնը բարձրացնելուն, այլ և անմիջական գործունէութեամբ։ Նա եղել է թատրոնի դիմակտօր 1857—59 թ., Բերդէն քաղաքում, իսկ 1865—67 թ. Կրիստիանիայում։ Նրա ջանքերն այդ տապարէզում պատկանել են կատարեալ աջողութեամբ, իսկ այդ միջոցով ձեռք բերած փորձերը օգուտ են հասցրել նաև նրա գրչին։

Նրա երիտասարդական «Հուլդա» դրաման դրեթէ աննկատելի անցաւ, բայց դրա փոխարէն միւս դրամաները բեմական մեծ աջողութիւն ունեցան։

Դրանցից ամենանշանաւորներն են՝ «Մարի Ստիւարտը Շոտլանդիայում», «Նորապսակները», «Ձեռնոց», «Մեր ոյժից վեր է» \*) և «Աշխատանք» («Laboremus»)։

«Մարի Ստիւարտը Շոտլանդիայում» դրամայի ֆաբուլան հետեւեալն է.—Թագուհի Ստիւարտն ամուսնացած է լորդ Դարնլէյի հետ, բայց չի սիրում նրան։ Վերջինս տանջւում է սիրուց և խանդից, մանաւանդ որ թագուհին մի առանձին մտերմութիւն է ցոյց տալիս դէպի իր մասնաւոր քարտուղար կաթոլիկ Ռիցցիօյին։

Դա մի չափազանց խելացի մարդ է և իր ազգեցութեան չնորհիւ մեծ չափով նպաստում է կաթոլիկութեան բարձրանալուն Շոտլանդիայում։

Ահա այդ է պատճառը որ նրանից գժգոհ են թէ բողոքական ժողովուրդը և թէ լորդերից շատ շատերը։

Վերջապէս լորդերը մի դաւագրութիւն են կազմում, որպէս զի ոչնչացնեն Ռիցցիօյին և զահընկէց անեն թագուհուն։

Այդ դաւագրութեան միանում է և Դարնլէյը—միայն խանդից դրդուած...

Սակայն դաւագրութիւնը յաջողուում է կիսով չափ։ Ռիցցիօյին սպանում են, իսկ թագուհին փախչում է և ապա ժողովրդի ու լորդ Բաթվէլլի միջոցով կարողանում է իր իրաւունքները պաշտպանել...

Այստեղ թագաւորը նորից անցնում է իր սիրեցեալ Մարիայի կողմը, բայց վերջը ընկնում է ամենատրագիկական վիճակի մէջ։ Ամենքը ծաղրում ու արհամարհում են նրան։ Ի մի-

\*) Այս ուշագրաւ դրամայի մասին արդէն խօսել ենք «Մուրճում» (1901 թ. № 6), ուստի չենք ուզում նորից կանգ առնել նրա վրա։

Չի այլոց շատ սրտաշարժ է այն տեսարանը, երբ Դարնկէյը գալիս է Շոտլանդիայի կրօնական վերանորոգիչ կնօքսի մօտ և օգնութիւն ու խորհուրդ է աղերսում...

Բօթվէլլը որոշում է ամուսնանալ թագուհու հետ և պղնապատակի համար մահացնել է տալիս թշուառ Դարնկէյին:

Սակայն Մարիան հակառակ է այդ ամուսնութեան և համաձայնւում է միայն ամենայուսահատական բոսէում, արտասուճն աչքերին:

Հէնց այն բոսէին, երբ Բօթվէլլը թագուհուն ստորագրել է տալիս ամուսնական պայմանագիրը, զրսից լսւում է աղմուկ, զղրդոց: Բօթվէլլը սկսում է համոզել թագուհուն, որ փախչեն, բայց վերջինս չի համաձայնում:

Ներս են թափւում հակառակ կուսակցութեան ներկայացուցիչները լօրդ Մուրրայի առաջնորդութեամբ և յայտարարում են որ թագուհին արդէն գահընկէց է եղած և նրա փոխարէն թագաւորելու է թագաժառանգ Յակովը VI: Թագուհին արտասուճն աչքերին անձնատուր է լինում իր հակառակորդներին և զայրացած բացականչում է՝ «Իմ ազնուականութիւնը իմ ժողովուրդն ու սէրը—բոլորը խարեցին ինձ... Ես այժմ գերի եմ...»

Նոյնիսկ համառօտ բովանդակութիւնից երևում է, որ պղնապատաժը լի է զրամատիկական կեանքով և ուժեղ տպակրութիւն թողնող տհասարաններով, ինչպէս օրինակ կաթոլիկութեան պաշտպան Ռիցցիօյի սպանութիւնը, Դարնկէյ թագաւորի մահը թագուհու փախուատը, և այլն: Միայն վերջը քիչ թոյլ է կամ աւելի ճիշտն ասած՝ նա չի վերջանում:

«Նորապասակները» փոքրիկ զրամայի Փաբուլան չափազանց հասարակ է: Նրա մէջ նկարագրուած է այն կոլլիզիան—մաքառումը, որ երբեմն տեղի է ունենում երիտասարդ կնոջ սրտում: Ծնողական սէրն ու ամուսնական սէրն են միմնանց դէմ մաքառողը:

Լառուրան ամուսնացած է Ալեքսի հետ, բայց շատ սառն է դէպի նա, որովհետեւ իր ամբողջ սրտով, ամբողջ էութեամբ ծնողներին է սիրում:

Ալեքսը խանդակառում է, իրան գժբախտ է համարում: Վերջապէս նա Լառուրային հեռացնում է ծնողներից, որպէսզի տէր դառնայ նրա սրտին: Այդ միջոցը դուր չի գալիս աչ Լառուրային և ոչ էլ նրա ծնողներին: Սակայն Ալեքսի հաստատակամութիւնը յաղթող է հանդիսանում: Ամուսնական սէրն օրէցօր ուժեղանում է:

Այդ երկու զրամաներում էլ նկատում է միենոյն թերու-

թիւնը, այսինքն չափազանցրած ամօթխածութիւն և հոգեբառնական աւելորդ նկարագրութիւններ:

Բայց այդ թերութիւնը որոշ չափով ներելի կը դառնայ, եթէ աչքի առաջ ունենաք Բիէօրնսօնին Միջապատող հանգամանքները:

Այդ ժամանակ թէ Դանիայում և թէ ամբողջ Սկանդինավարակողութիւնը որ պահպանողականութիւն: Մարդկային զգացմունքները չափում էին կրօնի ու բարոյականութեան տեսակէտից և սէրն առանց պատկի ոճրագործութիւն էր համարւում:

Ամբողջ մտաւոր ու հոգեկան կեանքը նմանում էր արևագուրկ բոյսին, որ հազիւ հաղ է պահպանում իր գոյութիւնը:

Նոյնիսկ զարդացած մարդկանց Միջանում չառ քիչ էին յայտնի Դարութինի, Սպենսէրի, Ստիւարտ Միլլի անունները: Նոյնիսկ զբանք չէին ըմբռնում որ Եւրոպան իր քաղաքակօրութութեամբ, դիտութեամբ ու զրականութեամբ արդէն չառ առաջ է անցել, որ նա կարօտ չէ Հիւսիսի հնացած «իդէալիզմին» և նրա արձակած պատգամներին:

Բայց չը նայելով դրան, Նորվիեդիայի երիտասարդութեան մի մասը զեռ կարծում էր, թէ միայն ինքն է լինելու աշխարհի աղն ու համեմը, միայն ինքն է ուղղութիւն տալու ժամանակակից գրտկան ու դիտական հոսանքներին:

Ահա այդպիսի միջապայրում էր ապրում Բիէօրնսօնը, այդպիսի պայմաններում էին ծնունդ ստանում նրա վերոյիշեալ երկերը: Շատ հասկանալի է ուրեմն որ վաստ աղգեցութիւնը թերութիւններ պիտի առաջացնէր:

## VII

«Laboremus» զրաման Բիէօրնսօնի ամենավերջին<sup>\*)</sup> գըրուածքն է և բնորոշ տպաւորութիւնն է թողնում իր բովանդակութեամբ:

Նրա գլխաւոր իդէան այն է, թէ վերջ ի վերջոյ պիտի յաղթանակեն բարոյականութիւնը և նրա անխախտ օրէնքները:

Հեղինակը հանդարտ և համոզուած ձեռվ պատկերացրել է մարդկանց կեանքը բարոյականութեան հետ շաղկապուած: Արդեօք անհատը կարող է իր անձնական երջանկութեան համար զոհել ուրիշի բախտաւորութիւնը. արդեօք կարող է դիմել

<sup>\*)</sup> Այդ զրամանի գերմաներէն հրատարակութիւնը լոյս տեսաւ 1901 թ. Սիւնիսնում:

գէպի լոյս, դէպի լաւն ու գաղափարականը, միջոց ընտրելով  
վատութիւնն ու չարութիւնը:

— Ո՞չ, պատասխանում է Բիէօրնսօն: Բարոյականութեան  
դէմ մեղանչողը միշտ էլ կը ստանայ իր պատիժը, կը կորցնէ իր  
ներքին հանգստութիւնը, եթէ նոյն իսկ արտաքին պատժից  
աղատ մնայ:

Ամբողջ դրաման կենարոնացած է միայն մի քանի մար-  
դկանց շուրջը: Չը կան աւելորդ զէմքեր, չը կայ ոչ մի կողման-  
կի միջնագէպ: Բնականն ու երեկայականը շաղկապւած են:  
իրար հետ և երկուսն էլ զարգանում են աստիճանաբար:

Երիտասարդ կօմպողիտօր Լանգֆրէդն ուղաւմ է յօրինել  
«Ունդինա» անունով մի նոր օպերայ և նրանով պատկերացնել  
այն մշտական թախիժը, այն անվերջ ձգտումը, որ բռն են  
դրել մարդկանց սրտերում:

Ունդինան ջրահարս է և ներկայացնում է մարմնացած  
ծով, այն վրդովուած ու մրրկածուփ ծովը, որ ձգտում է միշ-  
ցամաքն ու երկինքը: Կատաղի ալիքները գալիս շիռում են ցա-  
մաքի փէշերը, բայց չեն կարողանում յաղթել նրան և տեղահան-  
անել:

Վշտացած ծովը զգում է այդ և հառաջանքներ է արձակում:  
Կապուտակ երկինքն իր անհամար աստղերով անդրադառնում է  
նրա ջրերի մէջ. ծովը տեմնում է այդ, ձգտում է դէպի վերն,  
բայց չի համնում:

Ունդինան էլ ծովի նման միշտ ձգտում է դէպի իր փայ-  
փայած նպատակը, դէպի երջանիկ կեանք. նա աշխատում է  
ցամաք դուրս գալ և նրա տէրը գառնալ, բայց չի կարողա-  
նում:

Նա իր ամբողջ էութեամբ սէր է ներկայացնում, բայց  
սառը, դաժան ու անհոգի սէր: Նա աշխատում է տէր դառնալ  
ուրիշի հոգուն, որպէսզի նրա միջոցով նոր կեանք ու երջան-  
կութիւն ստանայ: Նա ինքը հոգի չունի և չի հասկանում որ  
մարդկանց համար դոյութիւն ունեն բարձր բարոյական օրէնք-  
ներ: Իր մշտական ձգտումով տոգորուած, նա ոսնատակ է  
տալիս այդ օրէնքները և ինքն էլ զոհ գնում:

Ահա այդ է «Ունդինայի» բովանդակութիւնը, այդ մտքերն  
են երիտասարդ Լանգֆրէդին զբաղեցնողը...

Բայց ինչ որ ծնունդ է առնում երիտասարդ երաժշտա-  
գէտի երեակայութեան մէջ, անսպասելի կերպով կատարում  
է իրական կեանքում:

Լանգֆրէդը սիրահարում է տիկին Լիդիա Վիսբիի վրայ:

Երաժշտութիւնն է նրանց սիրոյ օղակը կաղմում. բայց Լիւզիայի անցեալն անթիծ չէ:

Դեռ օրիսրդ ժմամանակը նա տաղմնդաւոր գաշնակահար էր և միշտ էլ կարողանում էր հմայել իր ունկնդիրներին: Երկար ժամանակ նա շրջիկ կեանք էր վարում, բայց ամեն տեղ իրան օտար էր զգում, անբախտ էր համարում: Մարդիկ սիրահարում էին նրա վրայ, զլուխները կորցրած քաշ էին դալիս նրա յետնից, բայց այսուամենայնիւ Լիդիան բաւականութիւն չը սահնում: Նա ուզում էր ուրիշների նման սեպհական ընտանիք ունենաւ, սովորական կեանք վարել: Նա այսու անկարող էր օտարների հաճոյքին ծառայել, նրանց բաւականութեան համար աշխատել:

Մի անգամ նրան կանչում են մի հիւանդ կնոջ մօտ—վիսթի ընտանիքում: Այստեղ Լիդիան տեսնում է հիւանդի ամուսնու և աղջկայ վիշտն ու հոգատարութիւնը, տեսնում է թէ որ քան սէր ու բախտաւորութիւն է վայելում հիւանդը և չար նախանձը շարժում է նրա սրտում: Նրան թուում է, թէ ինքն աւելի իրաւունք ունի բախտաւոր լինել: Քան թէ հիւանդը և վճռում է խել նրա բախտաւորութիւնը:

Նա մի կողմից թուլակամ Վիսթի սիրտն է գրաւում, իսկ միւս կողմից իր տաղմնդի հմայքով հիւանդ կնոջ մահը շտապեցնում...

Հիւանդը մեռնում է և Վիսթին ամուսնանում է Լիդիայի հետ: Սակայն հարսանիքից յետոյ Վիսթին հասկանում է կատարուած իրողութիւնը: Երազում երիւում է նրա կինը և յայտնում որ Լիդիան է ևուել իր մահուան պատճառը, Դրանից յետոյ Վիսթին իր ծանօթներից ու բարեկամներից իմանում է Լիդիայի արկածալի անցեալը և վերջնականագետ հիասթափուում է:

Նրա սէրն անհետանում է և Լիդիայի երեակայած ընտանիքան երջանկութիւնը ջախջախւում:

Սակայն դա խրատ չի լինում սիրատենչ Լիդիային, չի կանգնեցնում նրա անզուսազ ձգտումը դէպի նոր կեանք, դէպի բախտաւորութիւն...

Սկսում է նոր սիրահարութիւն: Լանդֆրէդն իրան անչափ երջանիկ է զգում: Նա ուզում է հեռանալ մարդկանցից, առանձնանալ Լիդիայի հետ և ապա սկսել իր մեծ գործը—«Ռւզգինա» օպերան: Բայց նրա ոյժն ու եռանդը կարծես ընդհակառակը հետզհետէ նուազում են...

Իսկ Լիդիայի սէրը զուտ եսական է: Նրան չի գրաւում ոչ կանդֆրէդի երաժշտական հմտութիւնը և ոչ էլ նրա միւս յատկութիւնները: Նրա սիրտը լի է վիշտ ու թախիծով, հոգին

ձգտում է դէպի բարձրը, դէպի նոր կեանք, ուստի և նրան գույ  
է գալիս ֆանտաստիկական «Ունդինան» և նրա մէջ արտայա-  
տուած անսահման թալիքը:

Սէրը հետզհետէ ուժեղանում է և Լանդֆրէդին կորստեան  
ճանապարհին կանգնեցնում, բայց միջամտում է նրա քեռին-  
գոկոր կանը և չարիքի առաջն առնում: Վիսբիի մօտիկ ընկե-  
րը լինելով, նա հեշտութեամբ իմանում է Լիդիայի անցեան  
ու բարոյական յատկութիւնները և ապա վճռում է Լանդֆրէ-  
դին ազատել նրա ճանկերից:

Նրա թելաղրութեամբ Վիսբիի աղջիկը—Բօրնին դալիս է  
Լանդֆրէդի մօտ, կիսահանանք, կիսալուրջ ձեռլ սկսում է խօսել  
նրա օպերայի մասին, առանց անուններ տալու պատմում է իր  
մօր մահը, Լիդիայի ոձրագործութիւնը և վերջը հասկացնում է  
թէ իր երջանկութեան համար հիւանդի կեանքը զոհող կինն է  
այն ջրահարսը, որ բարոյական օրէնքները խախտելու համար  
կորստեան է մատնուած:

Լանդֆրէդը հասկանում է գործի էութիւնը: Նրա մէջ  
բարոյական յեղափոխութիւն է կատարւում: Նա սկսում է  
առաջուայ նման աշխատել և լրջօրէն մտածել իր օպերայի մա-  
սին:

Լիդիան գալիս է որ նրա հետ հեռանայ և նոր կեանք  
սկսէ, բայց Լանդֆրէդը մերժում է, առանց ուշք գարճներու  
նրա աղաչանքի, լաց ու հառաջանքների վրայ:

Այդ միջոցին ներս են մտնում զօկ. կանը և օրիորդ Բօր-  
նին Յուսահատ Լիդիան հեռանում է...

Դօկ. կանը յայտնում է Լանդֆրէդին որ նա այժմ կարող  
է աշխատել, որ արդէն անցկացաւ Լիդիայի ներշնչած անզօրու-  
թիւնը:

Կ'անցնեն տանջանքները և կը յաղթանակէ մարդկային  
կեանքի օրէնքը—աշխատանքը (Laboremus), որ սերտ կապուած  
է բարոյականութեան հետ:

Ինչպէս տեսանք, այդ դրամայի մէջ չը կան մութ գալա-  
վարներ, խրթին ու անհասկանալի մաքեր:

Ալեգարդ հեղինակն աշխատել է ցոյց տալ, թէ բարոյա-  
կան օրէնքներն առաջնակարդ նշանակութիւն ունեն իւրաքանչ-  
չիւր անհատի համար, թէ նրանցից է կախուած մարդկային  
կեանքի ներգաշնակութիւնը, և նրան միանգամայն աջողուել է  
այդ բանը:

Դրաման զուրկ չէ և թերութիւնից: Օրինակ, անբնական  
է մեռած կնոջ երեալը Վիսբիի երազում, անքնական է նաև  
նրա մահը Լիդիայի չնորհալի երաժշտութիւնից: Մինչև օր

գեռ ոչ ոքի յայտնի չէ թէ երաժշտութիւնը մահացնող յատկութիւն էլ ունի:

Սակայն դրանք ներելի թերութիւններ են, որոնք երբէք չեն խանգարում դրամայի ամբողջութեանն ու ընդհանուր ուժեղ տպաւորութեանը:

## VIII

Վերեւում նկատեցինք որ Բիէօրնսօնը յայտնի է և իբրև քաղաքական գործիչ: Նա զեռ երիտասարդ հասակից մտել է ասպարէղ և մինչի օրս էլ շարունակում է իր արդիւնաւէտ գործունէութիւնը:

Նրա առաջին քաղաքական յօդուածներն ուղղուած էին չուեղական պետութեան գէմ, որ աշխատում էր սահմանափակել նորվեգիայի իրաւունքները և նրան մի նոր տեսակի իրանդիա դարձնել:

Ինչպէս յայտնի է, նորվեգիան ամբողջ դարերի ընթացքում զուրկ էր ազատութիւնից և կրում էր Դանիայի ծանր լուծը Միայն 1814 թ. նա ազատունց այդ լծից և Շուեղիայի հետ մի առանձին պետութիւն կազմեց: Սակայն չուեղական կառավարութիւնն էլ իր կողմից ձգտում էր նրա ինքնուրոյնութիւնը սահմանափակել:

Ահա այդ ձգտման, այդ սահմանափակման գէմ զուրս եւ կաւ Բիէօրնսօնը իբրև Bergensposten՝ թերթի խմբագիր (1858): Նրա կրակու յօդուածները որոշ շարժում առաջ բերին և բաց արին նորվեգացիների գիտակցութիւնը:

Այդ պայքարը նա նոյն եռանդով շարունակեց նաև իբրև «Aftenbladet» և «Worsk Folkeblad» թերթերի խմբագիր...

Նա միշտ անվախ է եղել և միշտ ինքն է նետուել դաղափարական կոռու ասպարէզը: Ակզեռունքի կամ հասարակական մի որ և է հարցի համար պայքար մղելը նրա համար անհրաժեշտ պահանջ է դարձել: Իր բնաւորութեան այդ յատկանիշը Բիէօրնսօնը արտայայտել է նոյն իսկ բանաստեղծութեան մէջ: Իբրև ապացոյց վերցնենք հետևեալ գէպքը:

Դանիական մի գրավաճառ օրացոյցի յաւելուած կազմելու համար դիմում է 12 յայտնի հեղինակների և խնդրում է որ նրանցից իւրաքանչիւրը մի ամիս ընտրէ և նրա համապատասխան մի բան գրէ: Բիէօրնսօնը ընտրում է Ապրիլը և գրում է հետևեալ ոտանաւորը:

Ես ընտրում եմ Ապրիլ ամիսն \*),  
Ուր հացածը կը կործանուի.  
Եւ երբ նորք շաղով բացով  
Խորն ու ամուր արմատ կ'առնի,  
Գերազոյնը երբէք, երբէք  
Անդորրը չի, որ մարդ կ'ուղէ:  
Ես ընտրում եմ Սուրիլ ամիսն,  
Նա կը յուղէ ամենուրեմ.  
Նա կը ժամայ, կ'եռայ, չողայ,  
Եւ կ'եռայ կեանքը նորեկ.—  
Որովհետեւ ողի ունի.  
Եւ գառ ամառ բերել կ'ըղձայ:

ՄԵնք զիտմամբ առաջ բերենք այդ ամբողջ ոտանաւորը,  
որովհետեւ գա ամենից լաւ. Է բնորոշում Բիէօրնսօնի բնաւո-  
րութիւնն ու ձգտումները:

Բիէօրնսօնը յայտնի է նաև իբրև ճառախօս: Նրա խոր-  
իմաստ ճառերը միշտ մեծ տպաւորութիւն են թողնում: Նա  
բուն ժողովրդի սիրելին է: Բաւական է հնչուի նրա անունը,  
որպէսզի գատարի զահլիճները լցուին հետաքրքիր ունկնդիր-  
ներով...

Ներկայումս էլ չը նայելով իր գառամեալ հասակին, նա  
միշտ մասնակյում է նորվեգիայի ընթացիկ հասարակական ու  
քաղաքական հարցերին և մերթ ընդ մերթ բարձրացնում է իր  
ազգեցիկ ձայնը, որ այնքան քաղցր է հնչում նորվեգացիների  
ականջին...

Ե. ԹՈՓԶԵԱՆ

---

\*) Այս ոտանաւորը զերմաներէնից թարգմանել է պ. Աւետիք Խառհակեանը:

## Գ Ի Ւ Ղ Ե Մ Ա Ր Դ Ի Կ

Գ Լ Ո Ւ Խ Զ Ո Ւ Ւ Ո Ւ Դ \*)

### Ա.

Գիշերը պաշտօնապէս մուտք էր գործել ձմեռը: Եւ կաւ բարակ ձիւն, վաղ առաւօտից ամբողջ քաղաքը սպիտակել էր, բայց սկսուեց հալոցքը. ձիւնը մինչև կէսօր էլ չը պիտի դիմանար: Դարա-Մուրադեանը, այնու ամենայնիւ, սովորականից շատ վաղ շտապեց աղքատանոց:

Նրան թւում էր թէ առաջին ձիւնը անպատճառ որ և է անյարմարութիւն ստեղծած կը լինի փախստականների համար և պէտք է կարգադրութիւններ անել: Թէև ցուրտ օրերի պատրաստութիւններ տեսնուած էին արդէն, բայց թշուառներին իննամոզները այն աստիճան զգայուն և ուշադիր էին գարձել, որ նրանց շարունակ թւում էր թէ մի բան պակաս է կամ կիսատ:

Դեռ քնած էր աղքատութեան օթևանը: Կարգադրիների սենեակի մի հատիկ պատուհանի առաջ կանգնած՝ Դարա-Մուրադեանը լսում էր գոնապահ Յակոբին, որ իսկոյն, առանց հարց ու փորձի, ներս էր եկել պատմելու այն ամենը, ինչ տեղի էր ունեցել երէկուանից, այն ժամից, երբ երիտասարդը գնացել էր այստեղից:

Ամեն ինչ լաւ էր: Գիւղական ուսուցիչը հաճութեամբ իրար էր շփում ձեռքերը, ժպտում էր շարու-

\*) «Մուրճ» № 5.

նակ և միւմի անգամ էլ ուրախուրախ կրկնում էր ծերունու խօսքերը:

Այդպէս ժպտուն ու գոհունակ էր և Յակոբը՝ Կարճ միջոցում նա մոռերմացել էր գիւղի վարժապետի հետ։ Հեշտ էր այդ բանը. գիւղի վարժապետը ընտանի մարդ էր, հարազատ՝ իր գիւղական բարքով ու սովորութիւններով։ Լինում են, ի հարկէ, և քիթը ցցած, իրանց բարձր պահող գիւղական վարժապետներ։ Բայց այս մէկը գրանցից չէր. սա սրտի մարդ էր։ Այժմ ծերունին շուտշուտ էր նամակ ուղարկում գիւղը։ Գրով պատրաստ էր ամեն օր, այն էլ ինչ գրող։ Մի բանի բոպէում լցում էին պօստային փոքր թերթի չորս երեսները. և երբ վարժապետը սկսում էր կարդալ իր գրածը, Յակոբի սիրտը լցում էր անսահման երախտագիտութեամբ և հրճուանքով։ Ի՞նչպէս գեղեցիկ կերպով էր վարժապետը մի պանդուխտ, կարօտող հօր սրտի խօսքերն ու թրթուումները շարում թղթի վրայ, գնում ծրարի մէջ, տուն ուղարկում։

Եւ երբ նա, պատրաստուելով փակել ծրարը, վեր ջին անգամ հարց էր տալիս իրան թելադրողին՝ բաւական է գրածը, ոչինչ չունի նա աւելացնելու, ծերունին արտասուբից դողացող ձայնով մրմնջում էր.

— Սրտից փռւշ հանեցիր...

Այդ նամակների վրայ էլ նրանք մոռերմացան։ Յակոբի սրտում ոչինչ չէր մնացել, որ յայտնի չը լինէր գիւղական վարժապետին։ Եւ Դարա-Մուրադեանը խրախուսում էր այդ սրտաբացութիւնը իր անկեղծ կարեկցութեամբ։ Նա գիտէր արդէն այն հեռաւոր, կորած գիւղում մենակ ու կարօտ ապրող ընտանիքի բոլոր հանգամանքները, հալց ու փորձ էր անում ծերունոց մանրամասն կերպով, պատմել էր տալիս և լսում վառուշադրութեամբ։

Գիւղի սովորական, անչափ տարածուած ցաւերից մէկը գտաւ նա ծեր դռնապահի մէջ։ Եւ սակայն Յակոբը հաւատացնում էր նրան, որ աշխարհի մէջ չէ կա-

բող լինել իր պէս մի անճար մարդ։ Երիտասարդը պատասխանում էր այդ խօսքերին յուսատու, զարմանալի հեշտ հասկացուող ժպիտներով։ Տեսել էր նա աւելի դժբախտ անճարութիւններ։ Քանի՛ դիւղերում...

Յակոբին նա մի շարք խրատներ տուեց։ Երբեմն որքան երկար էին խօսում նրանք։ Աղքատանոցի կառավարութիւնը յանձնուած էր Ղարա-Մուրագեանին. նա այստեղ էր լինում ամեն օր և Յակոբը չէ յիշում մի դէպը, երբ նա լսած չը լինի իրան աշադրութեամբ, կամ ձանձրացած լինի իր հարց ու փորձերից։ Վաշխառուի զոհը, վերջապէս, հասկանում էր իր դրութիւնը, իմանում էր թէ ինչ է ինքը և ինչ կարող է անել։ Առաջին անգամն էր որ մի օտար, ցաւակից մարդ աշխատում էր բաց անել նրա աչքերը, Սարուի պահանջների սահմանն էր գտնում ճիշտ հաշիւներով։ Եւ մոռացուած ծերունին տեսնում էր որ բացւում են իր աչքերը. նա նեցուկ ունէր, կարող է քայլել, ստրի վրայ կանգնած մնալ իր դժբախտութեան մէջ անգամ. նրան չէր տապալի իւրաքանչիւր պատահական քամի։

Այդ արթնացող ինքնազգացումը ուրախութիւն էր ուշադիր, դիւղող Ղարա-Մուրագեանի համար։ Գիւղի միանման, կորած մարդկութեան մէջ նա սիրում էր որոնել բնաւորութիւններ, ուսումնասիրել նրանց։ Պակաս չէին վերին աստիճանի հետաքրքրական, ուսանելի անհատներ, որոնք իրանց առաքինութիւններով կամ արատներով բարձր էին իրանց շրջապատից, որոշ սկզբունքներ, որոշ դաւանանք էին ներկայացնում իրանց ազգատիկ ու խեղճ ապրուստի մէջ։ Այդպիսիներից էր և Յակոբը։ Նա ճանաչեց ծերունուն այն ժամանակ, երբ սա պատմեց թէ ինչ դրութեան մէջ էր ինքը փախստականների նոր եկած ժամանակը, ինչպէս պատրաստուել էր փախչել, տուն գնալ և ինչպէս յանկարծ մոռացաւ իր փախերն ու յուսահատութիւնը, ինչպէս արիութիւն և ոյժ ստացաւ դարձեալ այստեղ մնալու։

Համարեա ամեն օր, զանազան պատրուակների տակ, Ղարա-Մուրագեանը գառնում էր այդ պատմութեան։ Այսօր էլ նա փորձեց ծերունուն և յանկարծ հարցրեց։

—Իսկ նամակ չը ստացա՞ր։

—Տանից, վարժապետ... ԶԵ գալիս, մատաղդ լինեմ, երեք ամսի վրայ ենք... Մենք քանիսը գրեցինք, բայց պատասխան չը կայ։

Նա խորը հառաջեց և կարօտով լի հայեացքն ուղղեց դէպի բակը, դէպի այն ճանապարհը, որ տանում էր գուրս, հեռացնում էր այստեղից։

—Աստուած ողորմած է, կը լինի, ասայ վարժապետը, տիրած ծանր լոռութիւնը ընդհատելու համար։

—Հա, մատաղ, ես էլ այդպէս եմ ասում։

—Էլ հօ գնալու միտք չունես։

Պատահեց նոյնը, ինչ եղել էր ամեն անդամ։ Մի տեսակ շփոթուածի նման, կարծես ինքն էլ չիմանալով թէ ինչպէս և ինչու, նա արտասանեց ցած ձայնով։

—Ո՞ւր գնամ, ինչպէս գնամ...։

Ծերունին չէր փոխուած։ Փոխուել չէր կարող մանաւանդ այսօր։ Ղարա-Մուրագեանը գիտէր որ այդ օրը հերթապահութիւնը տիկին նուրեանինն էր և լուս մտիկ էր տալիս Յակոբի աչքերին ու հանդարտ, ինքն իր մէջ, ժպտում էր։ Խօսել չը համարձակուեց, նա չափաղնց շատ էր յարգում այդ խեղճ մարդու զգաց մունքները։ Մի աւելորդ անդամ էլ նա համոզուեց թէ նրբան է տիկինը յափշտակել, կախարդել այդ գեղջուկի սիրտը։ Գիտէր նա թէ ինչ բան է գիւղական ջերմեռանդ ուխտաւորը, երբ գնում է պաշտելու իր սուրբին, փռելու նրա առաջ իր սրտի վառ հաւատը, մեծարանքները։ Այդպիսի մի ուխտաւոր էր այժմ կանգնած Ղարա-Մուրագեանի առաջ, զանազանութիւնըն այն էր որ սրա պաշտածը հին, մամուապատ բարնէր, դարերի ընթացքում սեացած խունկի և մոմերի

ծխից, այլ մի կենդանի, ժամանակակից մարդ, վերջին մօդայով հագնուած մի տիկին:

Մըքան էր նա, լուռ ու մունջ նայելով այդ պաշտամունքի վրայ, հիանում իր սրտի մէջ՝ Անձնազոհութեան համառ մի պաշտամունք։ Զափազանցութիւն էր նա: Ո՞չ Խնքը, Ղարա-Մուրադեանը հիացած էր տիկնոջ վրայ: Եւ միթէ միայն ինքը. ամբողջ բաղաքն էր այժմ խօսում նրա մասին. մամուլը դրաւատում էր նրան, արձանագրելով նրա գործերը: Ի՞նչ զարմանք, եթէ չար բախտից հալածուած մի խեղճ պանդուխտ, բնութեան որդի, աւելի մեծ ու լայն սիրտ ունի՝ բարութիւնը պաշտելու համար: Ծանր է նրա ուսին դրած խաչը. բայց ահա սիրտը գտել է այդ ծանրութիւնը թեթևացնող սէր, յոյս եւ նա տանում է խաչը. զըրկանքները, դժբախտութիւնները այլ ևս չեն խեղդի նրան...

Յակրբը կարծես զգում էր որ վարժապետը այսպիսի մտքեր է անում իր մասին և լուռ էր, չէր նայում նրան, մի կերպ ճնշուած էր, անկիւն քաշուել էր ուզում: Ղարա-Մուրադեանը շտապեց փոխել խօսքը:

—Ասում ես հիմա խեղճերը գէպի լաւն են գնում, համարցեց նա: —Ես էլ տեսնում եմ որ այդպէս է:

Դունապահը կենդանացաւ իսկոյն, խօսեց և նրա խօսքը ախորժելի էր, ուրախ:

—Հիմա... ինչ խօսք, մատադ... Լաւ են, վառք Աստուծու: Ով մեռնելու էր, մեռաւ գնաց, ով ապրելու է, ապրում է շատ լաւ: Հիմա հօ մարդու երես կայ նրանց վրայ, ճանաչում ես ամեն մէկին. Աստուծու ստեղծածներն են, որը գեղեցիկ, որը տգեղ, որը բարի, որը շար: Մսերը եկաւ, հիմա էլ վախ չը կայ: Երեխաների թշերը բաել են, լցուել, իսկ մեծերը ներս ու դուրս են անում: Էլ չեն վախենում ամեն մի շուաբից: Մարդը ինչով է մարդ, վարժապետ ջան: —Երբ սիրտը տեղն է, մարդն էլ մարդ է: Ամենքը հիմա մարդ են:

— Ելի այս մարդը... Ո՞վ է սա, ի՞նչ գործ ունի  
այստեղ. Երկրորդ անգամն եմ տեսնում, ասաց վարժա-  
պետը, նայելով բակին:

Յակոբը մօտեցաւ պատուհանին և պատասխանեց.

— Կոնատն է...

— Ի՞նչ կոնատն

Ծերունին շտապեց գուրս գնալ, աւելացնելով.

— Խեղճ մարդ է...

Դրում նա երկար խօսում էր այդ խեղճ մարդու  
հետ:

## Բ

«Մեծերը ներս ու գուրս են անում, էլ չեն փա-  
խենում իրանց շուաքից»: Դա ճիշտ էր: Ղարա՛Մուրա-  
դեանը այժմ տեսնում էր նրանց: Դոները բացուեցին,  
մարդիկ գուրս էին դալիս, ներս էին մտնում; խօսում  
էին. — սովորական մարդիկ: Առաջին ձիւնը նրանց ա-  
խորժելի զարմանք պատճառեց: Այդ իսկ միջոցին մեծ  
քաղաքում մերկութիւնը իր անթիւ որչերում անիծում  
էր այդ կանխահաս ցուրտը, գողդողում էր, կուչ դա-  
լիս, ոռնում: Իսկ սրանք այստեղ անհոգ են, ա-  
պահով:

Ո՞րքան ջանքեր էին հարկաւոր՝ մի այս տեսակ ան-  
կիւն պատրաստելու համար: Քանի ժողովներ, որքան  
գնալ-գալ, ո՞րքան գրել, աղաչել... Աղքատանոցի մի  
մասը վերանորոգուել էր, նոր կեանք ստացել: Այժմ  
բակին նայում էր մի սպիտակ պատ, նորոգուած դռնե-  
րով: Դա էր փախստականների մասը և նրան, կարծես,  
նախանձով էր նայում շինութեան միւս մասը, որին չէր  
դիպել հոգատար ձեռքը, որ շարունակում էր մնալ նոյն  
պէս հին, նոյնպէս կեղառա ու սև, ինչպէս էր առաջ:  
Եւ ոչ ոքին չէր զարմացնում հնի ու նորոգուածի տես-  
քը. ամենքը գիտէին որ հնի մէջ շարունակում էին ապ-  
րել «սովորական» անունը կրող աղքատները:

Նախանձում՝ էին ոչ միայն պատերը։ Աւելի սառտիկ էր նախանձը, որ գրգռում էին սովորականների մշջ անսովոր դժբախտները։ Սև, բորբոսնած պատերի մշջ որպիսի ուշադրութիւն էր լարուած դէպի սպիտակ պատերը։ Նայում էին, տեսնում էին ամեն բան և հառաջում ներս էին ընկնում՝ զարմացնող լուրեր բարեկարգ մասից։ Շորեր ու անկողիններ բաժանեցին. թէյ են տալիս. կերակուրներ բերեցին. փող պէտք է տան։ Նորութիւններ էին սրանք, որոնք տանջում էին սովորականներին իրանց անողորմ պարզութեամբ։ Եւ աղքատանոցի սեւցած մասը հեծում էր անճարութիւնից։ Ամենքն են՝ մոռացել նրան. այժմ ամեն ողորմութիւն, ամեն տուրք ուղղում է դէպի բարեկարգ մասը։ Բախտաւորներ... Բախտաւոր են նրանք, որովհետեւ սովորական չեն. բախտաւոր են, որովհետեւ լացացնել գիտէին։ Իսկ իրանք, այդ սովորականները։ Շատ են ոռնում դրանք, շատ են քարշ գալիս, բայց նայող ու լսող չը կայ։ Այժմ սովորական դժբախտութեան ժամանակ չէ. այժմ փտող միս, քրդի նիզակի տեղ և հրացանի վերը էր հարկաւոր՝ ուշադրութեան արժանանալու համար։ Իսկ խեղճերը որտեղից գտնէին այդպիսի բաներ։

Եւ սովորականները ստիպուած էին անսովորների վշանքները մուրալ իրանց բերանների համար։ Որո՞նում էին անդադար, որոնում էին պատերի տակ, խոհանոցի շուրջը, այն տեղերում, ուր նստում էին փախստականները։ Շատ չնշին էին նրանց գտած վշանքները։ Եթէ գօնէ թոյլ տային որ աղքատանոցի հին ու նորոգուած մասերը միմեանց հետ ազատ յարաբերութիւններ ունենային... հեշտ կը լինէր այդ դէպքում։ Փախստականները—սա փորձուած բան էր—յօժարութեամբ կը բաժանէին իրանց մի կտոր հացը դժբախտ սովորականների հետ։ Բայց չէին թոյլ տալիս, հսկողութիւնը խիստ էր։ Խօսում էին մինչև անդամ թէ պէտք է տախստակէ բարձր պատով բաժանել բակը երկու մասի, որպէս զի փախստականները բոլորովին առանձնա-

ցած լինեն։ Բացի տնտեսական պատճառից, այդտեղ կար և բարոյական մի մեծ հանգամանք։ Խնամատարները որոշել էին ոչ միայն հաց ու ջուր մատակարարել հեռու երկրից փախածներին, այլ և թոյլ չը տալ որ նրանք փշանան օտար երկնքի տակ։ Իսկ սովորական աղքատները այնպիսի արատաւոր տարր էին, որ կը փըշացնէին փախստականներին շատ կարճ միջոցում։

Բարոյական մաքրութեան հարցը Մասնաժողովի շատ նիստերում էր քննուել։ Ամենքը, մանաւանդ բըժիշկ Յովասափեանը, պահանջել էին որ սովորական աղքատները հեռացուեն աղքատանոցից։ Բայց այդ վճիռը անկարելի եղաւ իրադորձել։ Ոչ մի ոյժի առաջ տեղի չը տուեցին սովորականները. նրանք չը բողոքեցին, ձայն չը բարձրացրին, իրանց նիհար բագուկները գործ չը դրին, այլ լոկ երեսի պնդութեամբ, լուելով և ազրուկի պէս կաշելով իրանց սե պատերին, կարողացան պահպանել իրանց տեղերը։ Յաղթահարուած Մասնաժողովը այդ ժամանակից սկսեց խօսել բակը բաժանելու մասին։

Ղարա-Մուրադեանն էլ այդպէս պահանջողներից մէկն էր։ Փախստականներին նա վերաբերում էր իբրև սուրբ նշխարների, որոնց պէտք է պահպանել աչքի լոյսի պէս։ Նա ամենից լաւ գիտէր, թէ ովքեր են գըրանք, որտեղից են եկել։ Ուսուցչի ճակատագիրը մի ժամանակ գցել էր նրան այն երկիրը, ուր ապրում էին այդ նահատակները։ Իր աչքերով տեսաւ նա քրդական դժոխքը. տեսաւ այդ դժոխքի մէջ հալուող հայ ժողովուրդը։ Սաստիկ սիրեց թէ երկիրը և թէ այդ խեղճ ու բարի ժողովուրդը։ Հարիւրաւոր անգութ բերաններ ծծում էին նրան, բայց նա դեռ ապրում էր։ Ի՞նչ գեղեցիկ երկիր և որքան դժբախտութիւններ։ Նահապետական, առաքինի ժողովուրդը, աչքը արտասուրի ծով դարձրած, սպասում էր փրկութեան։ Նա արժանի էր լաւ օրերի. նրան պէտք էր ազատել, նրա համար արիւն պէտք էր թափել։ Մի անգամ վարժապետը մի

դժբախտ զոհ էր ազատում թիւրք պաշտօնեաների ձեռքից և գրա համար հարկադրուած եղաւ հեռանալ այն սիրելի երկրից Եւ այնուհետեւ նա շարունակ երազում էր նրա ազատութիւնը, ապրում էր այդ մըսով։ Յանկարծ, երբ ազատութիւնը այնքան մօտիկ էր երեւում, երբ ամեն ժամ սպասում էին թէ այդ ժողովուրդը վերջապէս իր դարաւոր տանջանքների հատուցումը կը ստանայ, բարձրանում է զարհուրելի իրողութիւնը։ Կոտորած... Հազարներ ու հազարներ մորթւում են ահոելի սպանդանոցի մէջ, հազարներ փախչում են աշխարհի չորս կողմերը, հազիւ ազատելով իրանց կոկորդը քրդի սրբց և զինուորի սուխնից։ Նահատակ էր անբախտ ժողովուրդը դեռ այն ժամանակ, երբ արեան գետեր չեն վազում նրա երկրում, երբ նա նստած էր իր տանը և արիւնքրտինքով ապրուստ էր հանում իր հողից իսկ այժմ... Այժմ, երբ նա այդքան զոհուել էր, այդքան անլուր տանջանքներ կրել... Այժմ ինչ անուն ունէր նա։

Նուիրական նշխարներ... Ղարա-Մուրադեանը այդ կիսամեռ հալածականների, գերեզմանային այդ ստուերների մէջ տեսնում էր ոչ միայն ֆիզիկական մահ, այլ աւելի ծանր դժբախտութիւն—գաղափարի հոգեվարք։ Մերկ մսերը, որոնց ծածկելու համար նոյն իսկ ցնցոտիներ չեն գտնուել, ցրտից ու քաղցածութիւնից ճանճերի պէս կոտորուղները ինչ սարսափելի աղետ էին գուշակում։ Ոչնչանում էր մի ամբողջ ժողովուրդ, նրա հետ ոչնչանում, գերեզման էր դնում և մեծ գաղափարը, մարդկայնութեան գաղափարը, առանց որի կարելի է ապրել իբրև անսասուն միայն. մի ժողովրդի, մի ցեղի գոյութեան, բախտի գաղափարը... Թշնամին արեան ծովերի մէջ խեղդել է ուզեցել այդ գաղափարը։ Թոյլ պէտք է տալ որ կատարուի նրա բարբարոս մոտագրութիւնը։ Ո՞չ Պէտք էր պահել-պահանել այդ ժողովրդի ջարդուած, փշուած բեկորները, այդ նուիրական մասունքները, որպէս զի շիրագործուած գաղա-

փարը շարունակէ ապրել գոնէ իբրև թանկագին անօմի փշանքներ, իբրև սուրբ արեան կաթիլներ...

Եւ ահա պահպանում են այդ նշխարները: Ղարա-Մուրադեանը նրանց էր նայում իր պատուհանից:

Մարդիկ էին դրանք, այս, ճիշտ էր ասում Յակոբը: Ծեր, երեխայ, պառաւ ու երիտասարդ, նրանք շարժում էին, առօրեայ հոգուերով էին զբաղուած. ընդհատուած կեանքը կամաց-կամաց իր սովորական ընթացքն էր ստանում, թէև շատերը հաշմանդամ էին դարձած, շատերը նոր լաւացող դիմուներ էին: Գոհունակութեամբ և շնորհակալութեամբ յիշեց երիտասարդը ծեր գոնապահին, որ վկայում էր թէ այդ կորածները, ձեռքից գնացածները նորից մարդկային դէմք են ստանում, նորից վերադառնում են կեանքին, պիտի ապրեն, պիտի շարունակեն իրանց գոյութիւնը աշխարհի վրայ: Միամիտ ծերունի... Գիտէր նա արդեօք թէ ինչ է ասում իր գեղջուկ բացատրութիւններով: Սոսկալի իրողութիւնների ծանրութեան տակ փշուած էր յոյսը: Սարսափի առաջին բոպէններում թւում էր թէ ամեն ինչ կորաւ, մանում է գերեզման: Այժմ հաստատ է, որ այդ գերեզմանը ամեն ինչ չը կլանեց, որ նրա բերանից խլուած է մի կեանք, նորից աշխարհ է բերուած, նորից պիտի ապրէ, նորից պիտի քայլ-քայլ, աանջանքներով, առաջ տանէ իր մեծ խորհուրդը: Յոյսը նորից ապրել էր սկսում:

Ժողովրդի այդ կտորը պէտք էր ապրեցնել այնպէս, ինչպէս յոյսն է ապրում—մաքուր, անաղարտ: Ահա ինչու երիտասարդը այնպէս եռանդով պահանջում էր առանձնացնել փախստականներին, բոլորովին բաժանել սովորական աղքատներից:

Նատ անդամ էր նա գիտել կեանքը աղքատանոցի հին մասում, շատ անդամ էր լսել Յակոբի պատմութիւնները: Քստմնելի տեսարաններ, ամեն անդամ նրա մազերը բիզ-բիզ էին կանգնում: Սոսկալին այնքան այն

կեղաերը չէին, որ երկար տարիների ընթացքում կուտուել էին այդտեղք կար աւելի հրէշաւորը—բարոյական ապականութիւնը, որի մէջ թաղուած էին այդ կեղաերի մէջ ապրող դժբախտներից շատ շատերը։ Ուրիշ ինչ կերպ կարող էր լինել։ Իրանց ճակատագրի կամքին թողնուած խեղճ, անօդնական և խաւար մարդիկ։ գիւղերից գուրս եկած և ապրելու յոյսով արդիւնաբերական մեծ քաղաքը եկած ընտանիքների խղճուկ բեկորներն էին դրանք. և լոյսի ոչ մի հատ շող չէր մտնում այդ զարհուրելի, Աստուծուց և մարդկանցից մոռացուած աղբանոցը։ Տուել էին միայն չորս պատեր. և այդքանը բաւական էր, մարդկային բարեսրտութիւնը գոնէ այս մոայլ ու յուսահատական ձեփ մէջ էր գլունում իր բաւարարութիւնը։ Այնուհետև ում ինչ, որ աղջիկը մօր կողըին պոռնկութիւն էր անում, որ հանգիստ կերպով, իբրև սովորական բան, վաճառւում էր ամեն ինչ—պատիւ, մարմին, խիղճ…

Դա զարակման մի օջախ էր։ Ղարա-Մուրադեանը լարում էր իր ամբողջ ուշադրութիւնը, որպէս զի փախստականները չը մօտենան այդ օջախին, ը վարակուեն։ Խղճում էր նա սովորականներին։ Կորած ու այլանդակուած մարդիկ էին դրանք և փրկել դրանց այլ ևս չէր կարելի։ Եւ երիտասարդը գտնում էր որ խղճալ դրանց ասլարդիւն է. պէտք է միայն առողջներին թոյլ չը տալ վարակուել դրանցից։ Բոլոտներին հեռացնում են հասարակութիւնից, առանձնացնում են։ Արանք էլ բարոյական բորոտներ էին. պատով բակը բաժանելը ահադին նշանակութիւն ունէր. պէտք էր շոտապել, օր առաջ ձեռք տոնել այդ նախապաշտպանողական միջոցը։

Մամնաժողովի նիստերում նա այս էր ապացուցանում և գտնում էր կատարեալ համակրութիւն։ Զը կար մի մարդ, որ չասէր թէ այն, պէտք է շտապել, որովհետև սարսափելի է այն վտանգը, որ սպառնում է աղքատանոցի հին մասը։ Բայց այդքան կարեսր գործը յետաձգւում էր, որովհետև դեռ դրամական միջոցները

այնքան նուազ էին, որ հազիւ կարողանում էին ծածկել առօրեայ ծախսերը:

Ղարա-Մուրադեանը մի քանի օրից ի վեր սկսել էր մեծ ուշադրութեամբ վերաբերուել այդ հարցին: Մի երկու գէպք էլ, որոնք յայտնի գարձան սովորականների կեանքից, հարկադրեցին նրան աւելի ևս շտապել: Զէր կարելի մի ուրիշ ելք գտնել: չէր կարելի մի գիւտ անել և գեկուցանել Մամնաժողովին:

Նա հանեց սեղանի արկղից կանաչ կազմով մի հաշուեգիրք և սկսեց դանդաղ կերպով թերթել՝ գրամական հաշիւների դրութեան հետ մի անդամ էլ ծանօթանալու համար: Յատուկ երեսների վրայ նշանակուած էին մուտքի գումարները. դրանք բացառապէս նուիրատութիւններից էին կազմուած:

Բազմաթիւ յիշողութիւններ յարուցին այդ անշունչ թուանհանները այս վաղ առաւօտին, այս փոքրիկ սենեակի մէջ: Իւրաքանչիւր առանձին գումար, նուիրողի անուան հետ, մի փոքրիկ պատմութիւն էր: Պատմութիւնների մի ամբողջ կրյտ. նրանք տեսակ-տեսակ էին, ազգու, նոյն իսկ անմոռանալի. դուրս էին թռչում հաշուեգրքի երեսներից, գրաւում էին երիտասարդի ուշադրութիւնը, չէին թոյլ տալիս որ նա իր նկատողութիւնները գրէ առանձին մի թերթի վրայ: Եւ նա թողեց ամեն ինչ, այդ յիշողութիւններին նուիրուեց:

Մօտիկ անցեալի գործեր: Շատերի վրայով նոյն իսկ երկու-երեք շաբաթ չէր անցել:

Մամնաժողովը օրերով շրջում էր, նուէրներ հաւաքում: Նրա հետ էր և Ղարա-Մուրադեանը, որ քարտուղարի պաշտօն էր կատարում: գրում էր անդորրագրեր, կազմում էր ցուցակ՝ լրագիրներին յանձնելու համար: Այդ իսկ կանաչ հաշուեգիրքը, որ այժմ նրա ձեռքին էր, առաջնորդում էր Մամնաժողովի անդամներին, ծեծել էր տալիս ամեն նշանաւոր տան գուռը: Եւ որտեղ ասես չը մտցրեց նա գժբախտների խնամատարներին: Նա եղաւ չքեղ սալօններում, բացեց այն-

պիսի առանձնասենեակների դռներ, ուր ամենից անուանի, ամենից հոչակուած դրամական առիւծներն էին գտնւում:

Նորը, անտեղեակը շրջողների մէջ միայն Ղարա-  
Մուրագեանն էր: Նա շլացել էր իր տեսածից, չէր հա-  
ւատում թէ զա իրական աշխարհ է, հէքիաթ, առաս-  
պել, երևակայութիւն չէ: Ոսկին ցրուած էր ամեն տեղ  
և որբան շքեղութիւն, որպիսի յարմարութիւններ էր  
ստեղծել: Խեղճ գիւղական ուսուցիչը չէր կարողանում  
զսպել իր հիացմունքը, երբ նրան պատմում էին այդ  
հարստութիւնների ծագումը: Շատերը ազգատ էին մի  
տարի առաջ. շատերը միշերկու ամսուայ մէջ այսպէս  
հարստացան: Խոկ քանի քանիսները կան, որոնք հէնց  
այժմ վաղվզում են, հեռում են հարստանալու համար:  
Երէկուայ գիւղացին այսօր գերմանուհի և ֆրանսուհի  
դաստիարակչուհիներով է լցրել իր տունը. նա հազիւ  
է կարողանում իր անունը ստորագրել, բայց վազում է  
արտասահման. նրա կինը դեռ երէկ, անցեալ օրը մի  
«տնացի» էր միայն, այսօր բեռնաւորուած է աղա-  
մանդներով, հագնում է շորեր, որոնց ուղղակի Պարփ-  
զից է բերել տալիս և փայլում է երեկոյթներում ա-  
մենալայն ու բաց գէկօլտէով...

Ամեն տեղ գործել էր մի գիւթական գաւազան:  
Բախտը պատահաբար, առանց ընտրութեան, աչքերը  
փակած, ոսկու հեղեղներ էր թափել, և շատերն էին  
ոզողուել այդ դեղին տարափներից, ոզողուել էին մին-  
չե ոսկորների ծուծը: Միայն նուրեանը չէր այնպիսի  
շլացուցիչ շքեղութեան մէջ ապրում: քանի քանի նու-  
րեաններ կան այս քաղաքում: Մի ահագին սենեակում  
Ղարա-Մուրագեանին ասացին թէ չը կայ այդտեղ մի  
շիւղ, մի թել, որ բերուած չը լինի Վիեննայից: Մի  
ուրիշ սենեակում այլ ևս տեղ չէր մնացել ճոխութիւնը  
ցուցահաննելու համար և թանկագին մետաքսեայ կտոր-  
ները փռուած էին բազմոցների վրայ, կախուած էին  
բաղկաթուների մէջբերից: Տասնեակ հազարներ էր

ծախսել մէկը՝ իր դահլիճն ու ընդունարանը ղարդարելու համար։ Մի տեղ ասացին թէ տիկինը դրսումն է. Ղարա-Մուրադեանը պատուհանով տեսաւ նրան բակում. այդտեղ նա իր սեփական ձեռքերով շաքար էր ուտեցնում մի զոյգ սե, հրաշալի ձիաներին, որոնցից իւրաքանչիւրը հազարներ արժէր։

Այդ առասպելական շքեղութիւնների հետ ծանօթացնողները գլխաւորապէս երկու օրիորդներն էին, մանաւանդ Շուշանիկը։ Պատմում էր նա ոգևորութեամբ, աշխատելով որքան կարելի է շատ շլացուցիչ փաստեր գտնել՝ գիւղական խեղճ վարժապետին ափշեցնելու համար։ Դրա մէջ նա մեծ բաւականութիւն էր տեսնում։ Իւրաքանչիւր խօսքի ետևից նա, կարծես, ուզում էր արտասանել. «Այսպէս ենք մենք»։ Եւ իրաւ, ամեն ինչ ցոյց էր տալիս որ նա էլ այդպէսներից է, որ նա էլ կ'երթայ իր նմանների ճանապարհով։

Մի ըիչ ուրիշ տեսակ էր երեսում միւս օրիորդը։ Սիրանոյշը աւելի ծանրաբարոյ էր, աւելի խոհուն։ Խօսում էր ըիչ, բայց խօսած ժամանակը նրան կարելի էր լսել աւելի մեծ հաճութեամբ։ Շատ անգամ էր պատահում որ նա դուրս էր գալիս մի որ և է շքեղ տանից խիստ անբաւական։ Այդպիսի դէպքերում նա իր գանգատները Ղարա-Մուրադեանին էր անում։ Այս տանտէրը, ասում էր նա, իր ծախսով կարող է պահել ըոլոր փախստականներին, բայց ինչ էր նրա տուածք. —միայն հարիւր ոուրիշ Հարիւր... այժմեան ժամանակ ծառաներն անգամ քիչ են համարում այդքան պարգև. իսկ մենք քանի հոգի ենք և ինչի համար ենք շրջում։ Շուայլութեան համար փող կայ, իսկ հասարակական բարի գործերի համար կոպէկներ են միայն երեան դալիս։

Եւ սրանք խօսքեր չեին միայն։ Օրիորդը գործով էլ ցոյց տուեց թէ իր ասածներին հաւատում է ինքը. նրա հայրը ամենից մեծ գումար տուողն էր։

Օրիորդ Շուշանիկի երկար պատմութիւնները, ճիշտ

է, հիացմունք և զարմանք էին պատճառում գիւղական ուսուցչին, բայց մի և նոյն ժամանակ մի տեսակ կոշտութիւն ունէին, քերում, վիրաւորում էին սիրտը։ Նատ ուրախ կը լինէր Ղարա-Մուրադեանը եթէ խօսողը միշտ Սիրանոյշը լինէր։ Սրա խօսքերից համգստանում էր վիրաւորուած սիրտը, չքանում էր գծուծ հարուստների թաղած տպաւորութիւնը. Խրախոյս, յուսադրութիւն, գործելու եռանդ էին բգիսում այդ համակրելի դատողութիւններից և երիտասարդը աշխատում էր որքան կարելի է շատ խօսել Սիրանոյշի հետ։ Նկատել էր որ օրիորդը ուշադիր էր գէպի իրան, հետաքրքրութեամբ էր լսում իր ասածները, իսկ մի քանի հարցերի մէջ նոյն իսկ հեղինակութիւն էր համարում։

—Ոսկու, մարմարի ցուրտ աշխարհում ո՞րպիսի զգայուն սիրտ,—ասաց երիտասարդը ինքն իրան, կանգ առնելով մի թուանշանի վրայ, որ մի առանձին տեսակի հաճելի պատմութիւն էր անում նրան։

Դեռ շատ միամտութիւն և անփորձութիւն կայ այդ նորաւարտ աշակերտուհու մէջ. դեռ հասկացողութիւններն ու հայեացքները շատ էին թերատ ու տհաս նրա մէջ։ Նոյն իսկ այս բարեգործութիւնը նա յանձն էր առել ոչ թէ իր սեփական կամքի դրդմամի, այլ ուրովինետեւ տիկին նուրեանն էր այդպէս կամենում, իսկ նրան չէր կարելի վիրաւորել մերժումով։ Բայց և այնպէս, երեսում էին նրա մէջ նշոյներ. կար սրտի խորքում մի փոքրիկ կայծ, որ կարող էր տաքացնել, կար մի բիւրեղ, որը պէտք էր յղկել ու թրաշել...

Երիտասարդը կարմիր մատիտով ընդդեց իր ուշադրութիւնը գրաւող այդ թուանշանը։ Ի՞նչ էր նշանակում այդ կարմիր հաստ գիծը։ Թուանշանը մի առանձին, աչքի ընկնող մեծութիւն չէր ներկայացնում։ Բայց նրան նուիրողն էր «Ա. Սարաֆեան և Ընկ»։ գրասենեակը, որ այդ միջոցին շատ մեծ անուն էր հանել ոչ միայն քաղաքում, այլ և հեռաւոր գաւառներում։ Այդ գրասենեակը գնալիս էր որ օրիորդ Սիրանոյշը ուղ-

դակի գատապարտում էր իր գասակարգի մի քանի արատները։ Եւ երիտասարդը չէր մոռանում այն ողեռութիւնը, որով խօսում էր նա, այն թեթև յուզմունքը, որ այնքան գեղեցկութիւն էր հաղորդում նրա սիրուն դէմքին։

Ատում էր նա մանաւանդ այն անգործութիւնը, որ գերել էր բոլոր հարուստ ընտանիքները։ Անգործ են, ժամանակը անդութիւն կերպով սպառողներ են ոչ միայն կանայք ու աղջիկները, այլ և երիտասարդները։ սրանը հօ եթէ ունեն որ և է իդէալ, դա այն է որ վատնեն հայրական կարողութիւնը ամեն տեսակ վատ միջոցներով։ Օրիորդը մինչև իսկ բերեց մի քանի հատ օրինակներ։ Զգուելի էր, այն, ոչ միայն թղթախաղի, այլ և մուրհակներ տալու և առնելու մէջ խարդախութիւններ, կեղծիքներ գործած երիտասարդը, միլիօնատէրի որդի, որին գատարանը խիստ պատժի գատապարտեց։ Մի ուրիշը, նոյնպէս շատ հարուստ, պատուաւոր ընտանիքի որդի, փշացրել է իրան այն աստիճան, որ գեռ թարմ հասակում անդամալոյն է գարձել։

—Ինչից է առաջանում այդ բոլորը, հարցնում էր սիրուն օրիորդը և ինքն էլ պատասխանում։ —Անգործութիւնից, եռանդի ու գործունէութեան բացակայութիւնից։

Եւ սակայն, գործելու, աշխատելու մեծ ասպարէղ կայ այստեղ։ Ապացոյց այն գրասենեակը, ուր այժմ գիտում էին նրանք։ Ոչնչից է ստեղծուել այդ գործը, որ այժմ այնքան խօսեցնել է տալիս մարդկանց։ Մի նոր սկզբունք է մտցրած նրա մէջ. խոշոր գրամագլուխների վրայ չէ նա հիմնուած, այլ մանր, մեծ մասմբ նոյն իսկ աղքատ գրամատէրի ընդհանուր գործակցութեան վրայ։ Այդ փոքրիկ, աննշան միաւորները, որոնք առանձին-առանձին վերցրած ոչնչութիւն են, չեն կարող ոչ մի դեր կատարել արդիւնաբերութեան մէջ, այժմ մի մեծ ոյժ են ներկայացնում, որովհետեւ

միացան, մէջ բերին իրանց փոքրիկ խնայողութիւնները, որոնցից կազմուեց մի շատ խոշոր գրամագլուխ:

«Ա. Սարաֆեան և Ծնկ.» գրասենեակը տեղաւորուած էր մի մեծ, նորաշէն տան միջին յարկում: Նա ունէր երկու մուտք. մէկը բակի կողմից էր և նշանակուած էր ծառայողների համար, իսկ միւսը, հանդիսաւորը, բաժանետէրերի և այցելուների համար: Այդտեղով գնաց Մասնաժողովը: Ղարա-Մուրագեանը գարձեալ ափշած էր: Մեծ ու լայն մարմարեայ սանդուխը տանում էր գէպի վերև մի գեղեցիկ, թուջի վանդակ, զարդարուած պղնձի արձանիկներով և օրնամենտներով, ոլորւում էր սանդուխի կողքով: Վերևից բարձր մեծ պատուհանները առատ լոյս էին թափում սպիտակ մարմարի վրայ: Ելեքտրական գեղեցիկ լամպաները կախ էին ընկած նըլկարներով զարդարուած առաստաղից:

Նարունակ մտածելով որ այս մուտքի պէս դահլիճ ունենալն էլ փարթամութիւն է, երիտասարդը բարձացաւ վերևի փորբիկ հրապարակը: Այս և ձախ կողմերում միմեանց էին նայում երկու գոներ. մէկը տանում էր ընկերութեան դիրեկտորների մեծ առանձնասենեակը, իսկ միւսի վրայ կպցրած էր նոր, փայլուն պղնձէ տափտակ, որի վրայ Ղարա-Մուրագեանը կարդաց. «Արտաշէս Մանուկեան Սարաֆեան, ինժենէր-մեքենագէտ»:

«Արտաշէս Մանուկեան»... Այս անունները մի վայրկեան խլեցին նրա ուշագրութիւնը: Նա հարցնում էր ինքն իրան. «Միթէ սա այն Արտաշէսը չէ, մեր Արտաշէսը, ոսկերիչ Մանուկի որդին»: Ղարց ու փորձը ցոյց տուեց որ դա նոյն Արտաշէսն է, իր դպրոցական ընկերը: Այդ յանկարծակի յայտնութիւնը այնքան սառտիկ ուրախութիւն պատճառեց նրան, որ նա ասաց թէ իսկոյն և եթ կը տեսնուի նրա հետ և մինչեւ իսկ սեղմեց զանդակի կոճակը:

Բայց նրան ասացին, որ ինքը, Արտաշէսը, այս ընկերութեան գլխաւոր հիմնադիրը և գլխաւոր կառավարիչը, այստեղ չէ, գնացել է արտասահման՝ թէ մի քիչ

հանգստանալու և թէ արդիւնագործութեան մի ճիւղ ուսումնասիրելու համար։ Դուռը բացող աղախինը այդ տեղեկութեան վրայ աւելացրեց թէ իր պարոնը արդէն ճանապարհ է ընկել և մօտ օրերը այստեղ պիտի լինի։

Ահա ինչ էր նշանակում կարմիր գիծը «Ա. Սարաֆեան և Ընկ.» փառահեղ գրասենեակի տուած գումարի տակ։

Երկու յիշատակներ էին կապուած այդ գումարի հետ. մէկն այն էր, որ ազնիւ յուղմունը մի սքանչելի գոյն էր հազորդել օրիորդ Սիրանոյշի սիրուն դէմքին։ Սա գլխաւորն էր և ամենագեղեցիկը։ Մէկն էլ այն էր, որ նա գտել էր իր վաղեմի ընկերներից մէկին։

Կանաչ մատեանը վերջանում էր մի փոքրիկ թուանշանով, որ նոյնպէս արժանացաւ կարմիր մատիտի գծին։ Նրա առջև գրուած էր Արտաշէսի անունը։ Այդ գումարը ինըն Արտաշէսն էր տուել Ղարա-Մուրագեանին, երբ առաջին անգամ երկու ընկերները տեսնուեցան իրար հետ։ Քանի՛ տարիներից յետոյ... Նրանք գրկեցին իրար, համբուրուեցան։ Առաջին սիրալիր ողջոյններից ու ծիծաղներից յետոյ Արտաշէսը ինքնաբերաբար հանեց քսակը։ Յետոյ յայտնեց որ սաստիկ զբաղուած է, ընկերութեան գործերը իր բացակայութեան ժամանակ փոքր ինչ խճճուել են։ Մի քանի օրուայ գործ է դրանց դրստելը։ Յետոյ նա հրաւիրեց Ղարա-Մուրագեանին ճաշի։

Այդ ճաշը այսօր պիտի լինէր։

## Գ.

Տիկին Նուրեանը, կանգնած մեծ հայելու առաջ, շտապեցնում էր աղախինին։ Պէտք էր շուտ վերջացնել զգեստը, որպէս զի կարելի լինի ժամանակին աղքատանոց գնալ հերթապահութեան։ Նաբաթը մի անգամ էր գալիս նրա օրը. և իբրև սկսած գործի սիրտն ու հոգին, նա ինքը աշխատում էր ճշտապահութեան օրի-

նակ դառնալ միւսների համար։ Հրամանները թափւում  
էին միմեանց ետևից. ջահէլ աղախինը հագիւ էր կա-  
րողանում կատարել դրանց, թէև շտապում էր սաստիկ,  
վազէվազ մօտենում էր չքեղ պահարանին, իսկոյն ջո-  
կում պահանջածը և հագնում տիրուհուն։

Թէև աղքատանոցում հանդիպողները պիտի լինէին  
մի և նոյն մարդիկ—գունապահը, ծախսարարը, դիւղա-  
կան վարժապետը և շատ շատ՝ մի քանի հետաքրքրուող  
այցելուներ, սովորաբար հասարակ գասակարդից, բայց  
դա միևնոյն էր տիկնոջ համար։ Տանից գուրս էր գնում  
նա, հետեւաբար պէտք էր կարգին հագնուել։ Իսկ այդ  
«կարգինը» մի ամբողջ արուեստ էր, որ գուցէ ամբողջ  
քաղաքում ոչ ոքին այնպէս չէր աջողում, ինչպէս Սա-  
մուէլ նուրեանի ամուսնուն։

Մի ակնթարթում էր տիկինը որոշում թէ որ գոյ-  
նը որի հետ կը գայ և ինչ պէտք է հագնել՝ երէկուայ  
նման չը լինելու, միևնոյն ժամանակ և նուրբ ճաշակ  
պահպանած լինելու համար։ Մեծ հայելին ցոյց էր  
տալիս որ նա շատ քիչ է սխալում ընտրութեան մէջ։  
Նա վկայում էր որ այդ նազելի արարածը միանգամայն  
գիտէ թէ ինչ լեզուով են խօսում և ինչ են ասում  
պահարանի մէջ հաւաքուած գոյները, կտորները։ «Նորը  
կպչում է նրան, կարծես բսած լինի վրան», ասում էին  
նրա սեռակիցները, նախանձից գունատուելով։ «Նա միշտ  
այդպէս ջահէլ կը ննայ», աւելացնում էին ուրիշ տե-  
սակի նախանձողները։

Մօդայի վերջին խօսքը տիկին Աննան էր առաջին  
անգամ մոցնում քաղաքի մէջ։ Այսօր նա հագաւ ձմեռ-  
ուայ մի նոր զգեստ, որ, ի հարկէ, շատ գեղեցիկ  
կերպով էր նստել նրա վրայ, երեան հանելով, մի տե-  
սակ ընդգծելով նրա կազմուածքի գեղեցիկ ձևերը։  
Այդպէս էր պահանջում վերջին մօդան, իսկ տիկինոջ  
դերձակուհին գիտէր մի առանձին չարաճճի համարձա-  
կութեամբ կատարել այդ պահանջը։ իւրաքանչիւր ժա-  
պաւէն, իւրաքանչիւր ծալը իր առանձին ճաշակն ու-

նէր, իր առանձին խորհուրդը և ծառայում էր մի միակ ընդհանուր, վերջնական, այնքան խիստ աչքի զարնող, ամենքի համար այնքան մերկ ու հասկանալի նպատակն—կնոջ մարմնի բոլոր հրապոյըները ցուցահանելուն...

Աննան շատ գոհ մնաց իրանով. հայելու միջից մի սիրուն, քնքոյշ դէմք էր ժպտում. այդ ամբողջ դէմքը, այդ դիւթող ժպիաը չէր թոյլ տալիս ենթագրել անդամ, որ այդ կինը երեք երեխաների մայր է:

Աղախինը, վերջացնելով իր գործը, գուրս դնաց: Կարծես հէնց գրան էր սպասում պարոն Նուրեանը. նա ներս եկաւ, գեռ իր առաւօտեան հագուստի մէջ:

—Հիանալի՛ է, բացականչեց նա, մի քանի վայրկեան լուռ դիտելով իր կնոջը և նստելով նրա առաջ, թաւիշեայ աթոռի վրայ:

Այժմ այն վեհ ու անմատչելի, սակաւախօս Նուրեանը չէր, ինչպէս և Աննան այն սիրալիր, համեստ ու քաղցր տանտիրուհին չէր: Երկու ամուսինները մարդկանց մէջ ունէին իրանց առանձին կանոնները: Այմ մենակ էին, դէմ առ դէմ: Եւ ինչպէս միշտ, Սամուէլը նման էր շնորհ աղերսողի, իսկ նրա կինը—շնորհ անողի:

—Ի՞նչպէս շուտ սկսուեց ձմեռը, Աննա, ասաց նա, ըստանալով իր առաջին բացականչութեան պատասխանը:

Առաջին ձիւնը առատ կաթնագոյն լոյս էր թափում պատուհաններով. վարագոյրները բարձրացրած էին, Աննան այդ առաւօտեան լոյսի մէջ աւելի թարմ, աւելի սպիտակափայլ էր երեսում: Աշխոյժ ու թեթեաշարժ, ինչպէս թիթեռնիկը մայիսին, նա անդադար թռչկոտում էր, հոտաւէտ ջրերի սրուակներն էր վերցնում միմեանց ետևից: Նրա քայլերը ձայն չէին հանում: սեննակի ամբողջ յատակը ծածկուած էր փափուկ գորգերով:

—Սկսուեց հա,—քիչ ուշ պատասխանեց նա իր ամուսնուն: Դու այս ձմեռ էլ պիտի ճանապարհորդես:

—Այո, սիրելիս, եթէ գործերը պահանջեն:

— Գործերը միշտ պահանջում են...

— Ե՞նչ արած... թողնել չէ կարելի:

Եւ ապա նուրեանը կարծես մի ինչ-որ անյարմանութիւն զդալով շարունակել այդ խօսակցութիւնը, փոխեց խօսելու եղանակը և ասաց.

— Դա գեռ հեռուի բան է: Դու այն ասա, Աննա. դարձեալ ձեռք չես վերցնում այդ գործից:

Տիկինը նրա վրայ դարձրեց իր զարմացած հաւեացը:

— Ո՞ր գործը, հարցրեց նա:

— Այդ ազբատների գործը: Բաւական է, սիրելիս: Այսքան վաղ առաւօտեան դնալ, մինչև ժամի երկուսը մնալ այնտեղ... Ինձ սաստիկ անհանգստացնում է... Դու ուզում եիր փառք վաստակել իրբե նախաձեռնող, հովանաւորող, և արդէն վազուց հասել ես նպատակիդ...

— Դու արդէն բաւական ես համարում:

— Ե՞ս, այս Քանի ժամանակ է որ գրում, խօսում են քո մասին:

— Իսկ ես բաւական չեմ համարում, կտրուկ, նոյն իսկ փոքր ինչ սառն կերպով ընդհատեց Աննան: — Ես գեռ էլ եմ ուզում, շատ եմ ուզում: Ինձ համար քիչ է եղածը...

Այստեղ աւելի պարզուեց թէ ինչ իշխանութիւն ունի այս տան թագուհին այդ կարճահասակ, վայելչակազմ տղամարդի վրայ, այն իսկ նուրեանի վրայ, որ առետրական հրապարակում ամենակարողներից մէկն էր, առանց խղճահարուելու տապալում էր մարդկանց, ոչնչացնում էր նրանց բախտը, ապագան՝ շատ անգամ մի փոքրիկ քմահաճութեան պատճառով։ Այստեղ, այս շքեղ սենեակում, մենակ այս կնոջ հետ, նա ընկճուած էր, շղթայակապ: Բաւական էր մի փոքր անսովոր շեշտ արծաթահնչիւն ձայնի մէջ և նա, հաւատարիմ շան նման, պոչը ծալեց...

— Քո կամքն է, հոգիս, — արտասանեց նա մեղաձոկտեմբեր, 1901.

պարտի եղանակով.—չեմ բողոքում ես, ցուցմունքներ, խրատներ չեմ տալիս քեզ։ Միայն... շատ անհանդիստ եմ, մի տեսակ վախ եմ զգում...»

—Վախ. ինչու՞»

—Այն Միշտ մտածում եմ... Դու՝ այդ անսովոր կեանքի մէջ, առաւօտները այսպէս շուտ վեր ես կենում... Սարսափելի էլ է մտածելը. դու այնտեղից, այն աղքատների որջից, կարող ես, ոհ, հիւանդութիւն բերել...»

Աննան կանգնեց նրա առաջ։ Նոյն հպատակ, ողորմութիւն և բարեհաճութիւն ազերսող Սամուէլն էր նա, որ ոչինչ չէր ինայում իր կնոջ հտմար, որ պատրաստ էր իր ամերող կարողութիւնը գնել նրա ոտների տակ։ Շնորհի փոխարէն շնորհ։ Աննան իր հրաշալի ժողով հասկացրեց նրան թէ կարելի է իրան գգուել։ Եւ Սամուէլը շտապեց օգուտ քաղել այդ թոյլաւութիւնից։ Մօտ քաշելով կնոջը, նա գրկեց նրան, սկսեց շոյել նրա թշերը, գուրգուրալ, արձակելով հիւացական բացական-չութիւններ»

—Հիւանդութիւն էիր ասում... Բայց ում համար ես վախենում...»

—Քեզ և միայն քեզ համար։ Դու իմ հրեշտակն ես և առանց քեզ ոչինչ է այս աշխարհը...»

Խեղճ ամուսին։ Նրան թոյլ էլ չէին տալիս իր սլրատի զեղումները արտայայտել։ Այդ խօսքերը այն տպաւորութիւնը թողեցին, որ Աննան շտապով, յանկարծ, դուրս եկաւ նրա գրկեց ու դրսուելով մազերը, ասաց։

—Պէտք է գնալ, իմացիր, Սամուէլ. Ես գեռ բաւական չեմ համարում, և եթէ հիւանդութիւն բերելու էլ լինեմ...»

Ու նա շուռ եկաւ մի այնպիսի շարժումով, որ ամուսինը հասկացաւ մնացածը. նա ասում էր թէ գե էլ իր գիտնալու բանն է։ Աննան սեղմեց ելեքտրական դանդակի կոճակը և արգէն գլխարկը դնում էր, երբ եկաւ աղախինը։ Հրամայելով որ կառքը տան, նա վերցրեց

ծածկոցը՝ Բայց Սամուէլը, յանկարծ բռնկուածի պէս,  
բռնեց նրա թեփ և էլի առաջ քաշեց:

—Իսկ եթէ ես չեմ կամենում, իսկ եթէ ես դեռ  
ուզում եմ քեզ հոտոտել, իմ ծաղիկս, իմ անմահա-  
կան...

—Իսկ եթէ ես Էլ չեմ կամենում... Թող, Սամուէլ,  
քնքութիւնների ժամանակ չե...

Եւ նա ազատեց իր թեք, նորից գրստել սկսեց իր  
զգեստը:

—Ապա երբ է ժամանակը:

—Դու լաւ դիտես... Դու սառն, լուրջ մարդ ես,  
աւելի կլուբներին, ժողովներին, հանդէսներին ես սա-  
զում, քան այս սենեակին: Դիշերները ժամի 1-ին, 2-ին  
ես գալիս, իսկ ցերեկները ոյնքան զբաղուած ես:

—Աննա, Աննա...

—Ես ոչինչ չեմ ասում, ես քեզանից դժգոհ էլ  
չեմ... ես քո կինն եմ: Ուրիշ էլ ինչ ես ուզում

—Ոչինչ, հոգիս: Եթէ դու իմանաս թէ որպիսի  
հպարտութեամբ, որպիսի պարծանքով եմ ես կարդում  
քո մասին գրածները... Շատ անգամ, լրագիրը վայր  
դնելով, ես սկսում եմ մտածել: Եւ սա իմն է, ասում  
եմ ես. իմը, ամբողջապէս իմը. Տէր Աստուած, ինչքան  
երջանկութիւն ես տուել ինձ: Ա'խ, հաւատացիր, Ան-  
նա, եթէ մի օր մեր ամենամեծ շոգենաւը ոսկով բեռ-  
նաւորուած գայ, ես գարձեալ այն հաճութիւնը չը պի-  
տի զգամ; ինչ քո անունից, քո արածներից...

—Հէնց այդ է պատճառը որ ես գեռ բաւական  
չեմ համարում: Ուզում եմ դեռ էլ շատ հաճոյք պատ-  
ճառել քեզ: Բաւական չես...

Պատասխանի փոխարէն Սամուէլ Նուրեանը մի ա-  
ղերսաւոր հայեացը դցեց նրա վրայ: Աղախինը յայտնեց  
թէ կառքը պատրաստ է:

Աննան իր գէմքը մօտեցնելով ամուսնուն, մի սքան-  
չելի ժպիտով ասաց.

—Համբուրիր, եթէ կամենում ես...

Սամուէլը տեղից վեր թռաւ, բայց յանկարծ մէկ էլ նստեց:

—Ի՞նչ ասացիր, Աննաւ Ի՞նչ է նշանակում դա— «Եթէ կամենում ես»...

—Նշանակում է... նշանակում է, իմ ամուսինս, որ ես պէտք է քեզ յիշեցնեմ: Խնդր չիմացար, շատ անգամ ես մոռանում որ կնոջ համբուրում են, որ կինը համբոյրներ է ուզում... Դէ, համբուրիր, եթէ կա...

Սամուէլը ձեռքը դրեց նրա բերանին, թոյլ չը տուեց արտասանել բառի միւս կէսը: Առնելով նրա գլուխը իր երկու ձեռքերի մէջ, նա առաջ համբուրեց նրա աջ թուշը, ապա ձախը և յետոյ շրթունքները: Աննան ժպտուն էր, չարաճճի:

—Վատ էր, հարցրեց նա, մօտեցնելով իր դէմքը նրա դէմքին:

Պատասխանի փոխարէն ամուսինը մի անգամ էլ համբուրեց: Բայց այդ հարցի մէջ, Աննայի դեղեցիկ հայեացքի մէջ նա մի տեսակ յանդիմանութիւն նկատեց: Առաջին անգամ, հազիւ հազ արտայայտուած... Եւ այդ առաջին տպաւորութեան տակ մի կերպ ճընշուած, նա մի քանի անգամ՝ «Աերիր, Աերիր», արտասանեց:

—Ի՞նչը ներել, հարցրեց Աննան մի միամիտ ձևով, որ իսկոյն էլի ցրուեց կասկածը:—Ա՞յն, որ դու կնոջ չես համբուրում, կամ թէ, ճիշտ ասած, քիչ ես համբում... Վնաս չունի... Ես հօ չեմ մոռանում: Եւ կը յիշեցնեմ քեզ, միշտ կը յիշեցնեմ: Իսկ երբ կը սկսեք սովորական ձմեռային ճանապարհորդութիւնը, ես ամեն նամակում կը յիշեցնեմ որ ինձ համբուրես: Եւ տես, Սամուէլ, պիտի համբուրես, թէկուզ հէնց այնպէս, օդի մէջ: Պիտի իմանաս, որ այստեղ ունես մի կին, որ ուզում է համբոյրներ, ջերմ, այրող համբոյրներ: Այ, այսպէս...

Նա կպաւ Սամուէլի շրթունքներին և մի երկար

համբոյր գլուխմեց։ Ապա շտապով գուրս գնաց, տանելով  
իր մետաքսների մեղմ, հաճելի խշողը։

Նուրեանը գեռ նստած էր իր տեղը, մտածում էր։  
Ի՞նչ է սա։ Ինո՞չ մի սովորական խանդոտութիւն, թէ  
նա իսկ որ մի բան սկսել է հասկանալ։ Նայելով Ան-  
հայի մահճակալին, տեսնելով տուալէտի վրայ թափթա-  
փած կանացի իրերը, շարած սրուակները, նա մի վայր-  
կեան մտքով փոխադրուեց ուրիշ այսպիսի սենեակներ  
հեռաւոր քաղաքներում։ Երկուսը. նա մի հատով էլ չէր  
բաւականանում։ Այսօր Աննան ի՞նչ յամառութեամբ էր  
խօսում նրա ձմեռային ճանապարհորդութեան մասին։  
Գիտէ մի բան։ Բայց ի՞նչ կարող է իմանալ, երբ ամեն  
ի՞նչ արուած է, որ ոչ ոք ոչինչ չիմանայ։ Եւ վերջապէս...  
նա սիրո առաւ, հանգստացաւ, ասելով ինքն իրան.

—Ամենքն անում են...

Այն, ամեն տեղ... Ամբողջ աշխարհի վրայ չէ կա-  
րող լինել իր պէս մի հարուստ վաճառական, որ չու-  
նենայ իր ծածուկ չարութիւնները։ Անհնարին է. ուրիշ  
կերպ շատ տաղտկալի կը լինէր... Մնալ տնարար, եր-  
բէք չը ծծուել, չը ճաշակել ուստուհու, ֆրանսուհու  
գեղեցկութիւնները... Ինչու, ի՞նչ պատճառով կինը—իր  
կարգին։ Ոչ ոք նրան չէ զրկում, չէ ստորացնում։ Նա  
մնում է առաջինը, ամենից սիրելին, նրա համար չէ  
կարելի ոչ մի նիւթական գոհողութիւն խնայել։ Բայց  
դա չէ նշանակում թէ ճաշակել ուրիշ տեսակ քաղցրու-  
թիւններ անկարելի է։

Նրա աշքի առաջ եկան այն երկուսը։ Ուրիշ համ,  
ուրիշ հոտ։ Հայուին կարող է գեղեցիկ ամուսին լինել,  
տուն պահել, նրա պատիւը բարձրացնել. բայց այն  
հմայքները, որ ունեն եւրոպացի կանայք, անմատչելի  
են իրան. նա չունի այն կրակը, այն սիրային տենդը,  
որ այնքան կպչուն է, այնքան գլուխ պտտեցնող։ Մը-  
տական հոգսերի, ահագին բիսկերի, գործնական իրա-  
րանցումի մէջ ճնշուած վաճառականը շատ շուտով կը  
փայտանայ, եթէ նրա երակների մէջ այդպիսի վարա-

կիչ տենդ, չերմութիւն չը թափէին։ Դա անհրաժեշտ  
է՝ ներվեր չը բթացնելու համար։ Խիստ ցնցումներ զգա-  
լու համար հնարել են թղթախաղը։ Բայց ով կ'ասէ թէ  
այդ միջոցը այնքան իրական է, ինչպէս գնովի ծա-  
ծուկ սէրը...

—Ամենքն են ինձ պէս, դա ընդհանուր սովորու-  
թիւն է, ասաց նուրեանը ինքն իրան, դուրս գալով  
սենեակից։

Այժմ նրա դէմքի վրայ երեսում էր մի ցինիկ  
ինքնազոհութիւն։ Դա այլ ևս այն հպարտ ու վեհ ա-  
ռիւծը չէր...

Սննան, ի հարկէ, շատ խելօք ու խոհեմ է։ Աշ-  
խարհը փոխել նա կարող չէ և նրա հասարակական  
դիրքը այնպէս է, որ չէ կարելի յայտնի չափով զոհու-  
զութիւնների անհրաժեշտութիւնը չը զգալ։ Նա լաւ  
գիտէ իր պարտաւորութիւնները։ Հասարակութեան  
մէջ առաջնը լինել, նախանձ յարուցանել իբրև օրի-  
նակելի, հաւատարիմ ամուսին, յարգանկքներ վայելել,  
տեսնել իր շուրջը հիացմունք և խոնարհ երկրպագու-  
թիւն—աստուածուհու այդ փառքին նա այնքան մոլեգ-  
նաբար է նուիրուած, ինչպէս արբեցողը խմիչքներին։  
Ուրիշ հարց չէ կարող լինել։ Եւ միթէ նուրեանը պա-  
կաս խոհեմ ու խելօք կերպով է իրան պահում։ Նրանք,  
երկուսը, իրար հասկանում են։ Միմեանց մի յայտնի  
առողք են տալիս երկուսի դիրքը, հռչակը չեն կարող  
խանգարել երկու հատ ջահէլ, զարմանալի գեղեցիկ  
կանայք, որոնց այցելում է նուրեանը տարին մի եր-  
կու-երեք ամիս միայն, իր ճանապարհորդութիւնների  
ժամանակ։

## Դ

Նոյն այդ առաւօտեան ուրիշ տեսարան էր ներ-  
կայացնում մի այլ ննջարան։ Տիկին Գուլուրէկեանի աղ-  
ջիկը, առատ արտասուբներ թափելով, խնդրում, աղա-

շում՝ էր, բայց իր պնդակազմ ու հաստավիկ ամուսնուց լսում էր միայն այսպիսի խօսքեր.

—Դու յիմարութիւն է, դու միշտ յիմար ես...

Այդ խօսքերի գէմ չէր բողոքում լալկան տիկին Նատալիան։ Օ՛, վաղուց էր նա սովորել դրանց և պատրաստ էր աւելի խիստ հայհոյանքներ լսել, աւելի մեծ վիրաւորանք կրել, միայն թէ այդ տղամարդը դոնէ այս մի գէպքում հասկանայ իր կնոջը, հասկանայ թէ ինչ է նրա սրտի ուզածը, ինչնվ կարող է բախտաւորեցնել նրան գոնէ մի անդամ։

Իսկ տիկին Գուլուբէկեանի փեսան ոչ միայն չէր ուզում հասկանալ, այլ դնալով աւելի և աւելի էր գրգռուում, հակառակուում։ Միայն այս փոքրիկ սենեակն էր, ուր նա իրաւատէր ամուսին էր։ Ամբողջ աշխարհում միայն այս տեղն էր, ուր չէր հասնում տիկին Գուլուբէկեանի իշխանութիւնը։ Երկնագոյն պաստառներով ծածկուած այս չորս պատերը ահագին նշանակութիւն ունէին նրա կեանքում։ Նրանք ծածկում էին ամեն ինչ տիկին Գուլուբէկեանի աշքերից և իրանց հաստ ու թանձր կողերով պահպանում էին նրա փեսայի աղատութիւնը։ Ո՞րքան հառաջանքներ, ո՞րքան գաղտնիքներ էին խեղդուում այստեղ։ Նրանք կարող էին դուրս գալ միւս սենեակները, հասնել սեազգեստ, խոշոր այրիի ականչին, եթէ այդպէս կամենար նատալիան։ Այն ժամանակ տիկնոջ իշխանութիւնը, ի հարկէ, կը մտնէր և այս մի հատիկ սենեակն էլ...

Բայց նատալիան հոգով նուիրուած էր այս սենեակին, իբրև իր ընտանեկան սրբարանին։ Այստեղ էր նա որոնում ուրախութիւն իբրև ամուսին, այստեղ էր նա աշխատում սեփական բախտ ստեղծել, այնպիսի բախտ, որ ամենակարող մօր հրամաններով չէ հաստատում, այլ ուրիշ կերպ, ուրիշ ինքնարուղի դրդիչների թելագրութեամբ։ Ի՞նչ է նա մարդկանց աշքում։ Միայն հարուստ հօր ժառանգ, միայն պատուաւոր, հրամայող մօր աղջիկ։ Բայց միթէ ինքը, այդ ժառանգը,

այդ աղջիկը, սեփական ոչինչ չունի։ Ապա սիրտը։ 0՝ սրա մասին ոչ ոք չէ մտածում։ Ոչ ոք չը գիտէ թէ ինչու է այդ բարակ կինը այնքան պաշտում, աստուածացնում երաժշտութիւնը։ ոչ ոք չը գիտէ որ այդ սիրտը նոյնքան բնքոյց է, զգայուն, տպաւորուող, որքան այն ձայները, որոնք դուրս են գալիս նրա մատների տակից, երբ նա նստում է գաշնամուրի առաջ և նըւածում է իր բոլոր լսողներին...

Ահա այդ սրտի համար էր նա ուզում մի տաքրոյն պատրաստել այստեղ։ Ուժեղ չէր նա, երաժշտի փխրուն, ողբացող, երազող սիրտ։ Միայն երաժշտական ձայներն են նրա լեզուն։ Իսկ այդ ձայները չեն հասկացւում։ Եւ նա աւելացնում է իր սրտի այդ լեզուի վրայ մարդկանց հասկանալի մի այլ բան—արտասուբներ։

Բայց որպիսի թշուառ զուգագիպութիւն։ Այնտեղ, ուր երաժիշտ սիրտն էր երազում, ճիշտ այդտեղ տիկին Գուլուբէկեանի փեսան ազատ է զգում իրան։ ազատ, իր կամքի տէրն է միմիայն այդտեղ։ Ի՞նչ անել...

Եւ նորից խնդրում է նատալիսն։ Ահ, դժուար բան չէ նրա խնդրածը։ Միայն բարի տրամադրութիւն, միայն մի քիչ ուշագրութիւն գէպի նրա զգացմունքը—և ամեն ինչ կարգին կը լինի։

—Գալուստ, ինձ համար... ահ, ինձ համար արա այդ բանը։ Մինչեւ որ չանես, ես պոկ չեմ գայ ըեզանից։ ամեն գիշեր, ամեն առաւօտ պիտի ասեմ, ասեմ... և...

Մնացած նա չասաց, այլ ցոյց տուեց։ Նստած աթոռի վրայ, նա գլուխը կախ արեց կրծքին և արտասուբի կաթիլները անձայն թափուեցան նրա աշքերից։

—Յիմար են և այդ արտասուբները, խրոխտաբար արտասանեց տիկին Գուլուբէկեանի փեսան և շարունակելով սենեակի մի ծայրից միւսը գնալ ու գալ, արհամարհանքով ժպտում էր։

Նա հասել էր անգիտութեան։ Այսպէս էր նա վրէժ հանում։ Ամեն տեղ նրա ճնշուած ինքնասիրութիւնը այստեղ էր հատուցում ստանում, այս լալկան, մօր պահած կնոջից, որի հետ նրան կապել էր լաւ ու փափուկ ապրելու ցանկութիւնը։ Ամեն տեղ նա արհամարհանքի և հեգնութեան էր հանդիպում։ այստեղ գոնէ նա կարողանում էր արհամարհել ուրիշն, տանչել նրան։ Փոքրիկ, հազիւ նկատելի էր այդ ինքնասիրութիւնը, բայց, այսուամենայնիւ, գոհացում էր ստանում։ Հաշիւը, որ բերել էր այս ամուսնութեան և պարապ ու անհոգ կեանք էր ստեղծել, այստեղ չէր արդելում որ նա իր տէրը լինի, իր սեփական դէմքն ունենայ։

— Զեմ անի, չէ... Զեմ ուզում... Դնա, գանգատուիր մօրդ, թռղ նա հարկադրէ ինձ։

Եւ նա մինչեւ անգամ ոտը գետնին խփեց, թէն դիտէր որ ձայն չի գուրս դայ, որովհետեւ գորդի վրայ է կանգնած։ Պահպանելով իր արժանաւորութիւնը, նա, այնու ամենայնիւ, իր ձայնը բարձրացնել չէր կարող. դիտէր որ իր զոքանը միւս սենեակումն է։

— Դնա, նորից հրամայեց նա խեղդուած ձայնով և յուզմունքից կապտելով։

Նատալիան բարձրացրեց իր դլուխը, մի աղաչաւոր հայեացր գցեց նրա վրայ։ Աղաչում՝ էր ինայել... Միթէ նա այնքան տարիների փորձով գեռ չէ համոզուել, որ ինքը չի դիմի իր մօր օգնութեան՝ ճնշում գործ գնելու, հարկադրելու համար։

— Ուզում ես, խեղդիր,—միմնջաց նա, — ես ոչինչ չեմ ասի։ Դու շուտով ծեծին էլ կը հանես, ես այդ տեսնում եմ։ Թռղ այդպէս լինի։ Ես մենակ էլ կը մնամ։ Երեխայ չեմ, որ ուրիշներին գանգատուեմ։

Կարծես յոգնելով այդքան խօսելուց, կարծես ինքն էլ զգալով որ ոչինչ, անհամոզեցուցիչ են իր խօսքերը, նա լոեց։ Բոյց շարունակում էր խօսել իր մէջ, իր համար։ Ա՛խ, եթէ հասկանալին իրան, եթէ կարելի լինէր

ամեն ինչ լեզուով հասկացնել: Քանի անդամ է նա աղաջել իր մօրը, բարեխօսելով ամուսնու համար. քանի անդամ է փոխել տուել մօր վճիռներն ու կարգադրութիւնները: Նրան վիրաւորում էր այն դիրքը, որ ստեղծուած է նրա ամուսնու համար այս տան մէջ: Ինչու հրամաններ. ինչու արգելքներ և ժոյլտութիւններ: Ա՛խ, իրան, այդ քաշուող, սակաւախօս, շփոթուող կնոջը չեն հարցնում: Եթէ հարցնէին, եթէ իմանային... Սիրում է նա, բայց ուզում է ել շատ սիրել նրան, որի հետ կապուած է ամուսնական ուխտով, մինչև կեանքի վերջը: Քիչ բան է հարկաւոր որ նա միանդամայն գոհ լինի, իր ամբողջ էութեամբ նուիրուի իր տղամարդին: Բայց ինչ անէ, երբ այդպէս կոպիտ կերպով դէն է հրում նրան ամուսինը:

Զգում է նա որ մեծ պահանջներ անելու իրաւունք չունի: Ի՞նչ է նա: Գեղեցիկ, աշխոյժ ու կայտան, ինչպէս ուրիշ շատ շատերը:—Ո՛չ. նա այդ գիտէ: Բայց գիտէ նոյնպէս, որ այդ պակասութիւնների փոխարէն ինքը կարող էր տալ մի տաք, անձնազոհ սիրու: Ուզում է նա վառել այդ կրակը, ուզում է մատուցանել նրան իր ամուսնուն, տաքացնել նրան, լնտաննեկան սերտ, մտերմական, փոխադարձ անձնուիրութեամբ երջանիկ մի նեղ շրջանի, մի փոքրիկ դրախտի մէջ առնել: Բայց դժբախտութիւնն այն է, որ դրա համար նա լեզու չունի, բառեր չը գիտէ: Խօսել... նա ամաչում է դրամնից, յոգնում է, վախենում է: Ա՛հ, ինչու սրտերը միմեանց չեն հասկանում առանց բառերի, առանց լեզուի միջնորդութեան:

Եթէ այդպէս լինէր, որքան հեշտ կը լինէր հասկացնել թէ ինչ է նա խնդրում: Ինչու համար էին նրան այնքան արտասուբները, կարճ, միանման, անպերճախօս աղաջանքները:

Նուրեանների տանը նա լսեց փախստականների սարսափելի թշուառութիւնը, և նրա սիրու արիւնլուայդարձաւ: Այնուհետև նա լսեց թէ ինչ են ուզում անել

բարի մարդիկ՝ այդ անբախտներին մահուան գրկից ազատելու համար, և նրա սիրտն զգաց մի անսահման բերկրութիւն, նորից կենդանացաւ, սկսեց լայն ու համարձակ թրժուալ։ Կամենում էր նա իր մասնակցութիւնն ունենալ այդ բարի գործի մէջ։ Ահ, ըռնել խեղճի ձեռքից, բարձրացնել նրան, շունչ տալ... որքան լաւ է Բայց նա այդ չէ կարող անել։ Չէ կարող տեսնել դըժքախտութեան երեսը. մէկ էլ այն, որ պէտք է մարդկանց հետ խօսել, գնալ գալ, իսկ ինքը այդ շնորհը չունի։ Եւ հարկաւո՞ր էր որ անպատճառ նա ինքը լինի գործի մէջ։ Ապա ամուսինը, միթէ նա ուրիշ է, միթէ նա չէ կարող փոխարինել իր ամբողջ տունը բարի գործի մէջ։ Կը գնար նա, և տանը նստած կինը կ'իմանար թէ ինչու է նա գնացել, կը գար նա և կը բերէր իր հետ կատարած պարտքի գիտակցութիւնը։ Եւ նրա բերածից կը ճաշակէր և ինքը։ Լու է նստել տանը և իմանալ որ օգնում ես խեղճին, որբում ես նրա արտասուրք...

Այդ էր ահա նա խնդրում իր ամուսնուց այն երեկոյից գէսը. ասում էր միշտ, թացացնելով իր աղաշանքը արտասուքներով։ Բայց այդքան հասարակ բանն էլ մերժում էին նրան։

Խնչու է այդպէս:

Տիկին Գուլուբէկեանի փեսան շարունակում էր բայլել սենեակում և կարծես իր կողմից հարցնում էր՝ ինչու չը պիտի այսպէս լինի։ Տասը քայլ երկարութիւն ունէր սենեակը և վեց քայլ լայնութիւն։ Այս տարածութեան բռնակալը ոչնչով չէր տարբերում աւելի մեծ աշխարհի աէր բռնակալներից։ Նա չէր ուզում հէնց այն պատճառով, որ վրէժ հանէ մարդկանցից, չէր ուզում, որովհետեւ խնդրողը՝ անկիւններում լուռ արտասուք թափող իր կինն էր։

Նրա հաստ ու կարմիր վիզը, նրա լիքը, կարմիր գէմքը և խոշոր ոչխարային աչքերը վկայում էին, որ

տեխնիկի նշաններով զարդարուած այդ գիւղացին չի զիջի այստեղ...

Քիչ էլ լուռ մնալուց յետոյ նատալիան վեր կացաւ, խնամքով լուաց իր դէմքը, մազերը նորից սանրեց ու դուրս գնաց: Նա ուղղակի դիմեց գահինը, առանց այս ու այն կողմը նայելու նստեց գաշնամնուրի առաջ և սկսեց նուագել, իր մոռքերը ձայների աշխարհում թաղել:

Տիկին Գուլուբէկեանը նստած էր սեղանատանը, նրա ոտների մօտ խաղում էր նրա թոռնը: Թէյը վազուց պատրաստ էր, բայց նա համբերութեամբ սպասում էր: Մարդ ու կնիկ ննջարանումն են. թող լինեն, թող իրար վայելեն. մայրը միայն ուրախ ու գոհ կարող է լինել: Աղջկայ վազորդեան երաժշտութիւնը եկաւ հասկացնելու սպասող մօրը թէ ինչպէս անուշ կերպով է վերջանում վայելը: Բայց այդ մայրը երբէք չը պիտի մոռանար իրան, և նորից նրան սկսեց զբաղեցնել երկրորդ երեխայի հարցը:

Պէտք էր... Բժիշկ Յովասափեանը բաւական օգնել էր նրան, բայց նա դարձեալ դժուարանում էր, դարձեալ գտնում էր որ իր դրութիւննը նահատակի դրութիւն է. մի կողմից աղջկայ առողջութիւննը, միւս կողմից այն, որ մենակ է իր թոռնը...

Այդ մտատանջութիւնը ընդհատեց նրա փեսան: Բաց անելով դուռը, նա սովորական հեղութեամբ արտասանեց.

—Բարի լոյս, մայրիկ:

Համբուրեց նրա ձեռքը, համբուրեց երեխային և ապա նստեց թէյի սեղանի մօտ, որի վրայ դրուած էին կարագ և զանազան թխուածքներ...

## b

Կարգադրիչների սենեակի մուտքում իմբուած էին փախստականները, մեծ մասամբ կանայք: Յայտնի էր

ամենքին որ բարեսիրտ տիկինն է այսօր հսկում և ամեն մէկը շտապում էր մի ժամ առաջ յայտնել նրան իր սրտինը, ինդրել, հարցնել: Միայն նրան էին յայտնում միայն նա էր, որ լսում էր ու կարգադրում: Եւ որովհետև հերթապահութիւնից դուրս նա քիչ էր լինում ազքատանոցի մէջ, ուստի այս օրին շատերն էին անհամբեր սպասում:

Տիկինը արդէն սովորել էր այս տեսարանին. ուստի սպասեց մինչեւ որ Յակոբը ճանապարհ բաց արաւ նրա համար և միայն այդ ժամանակ ներս մտաւ: Իսկոյն բարձրացան գանազան ձայներ, իրար խառնուեցան: Բայց տիկինը գեռ բարեկց Ղարա-Մուրադեանին և ասաց նրան:

—Ես պէտք է մի լաւ լուր հաղորդեմ ձեզ, պ. Ղարա-Մուրադեան: Օրիորդ Սիրանոյշը կամենում է ձեզանից հայերէնի դասեր վերցնել: Երէկ նա ինձ մօտ էր եկել յատկապէս խորհուրդ հարցնելու համար: Եւ ես, ի հարկէ, խորհուրդ տուի:

Ղարա-Մուրադեանը մի քանի անգամ գլուխ տալով շնորհակալութիւն յայտնեց նրա բարի ուշադրութեան համար:

—Դուք, ի հարկէ, ընդունում էք այս առաջարկութիւնը:

—Մեծ ուրախութեամբ, տիկին:

—Դինը ինքներդ որոշեցէք: Այսօր երեկոյեան, ժամի 7-ից մինչեւ 8-ը մտէք օրիորդի մօտ, նա տանը կը լինի: Դիտէք որ կարող է լաւ վճռել.

—Շնորհակալ եմ, տիկին, կը մտնեմ, շտապեց պատասխանել երիտասարդը, կարծես կամենալով ընդհատել խօսքը վարձատրութեան մասին:

—Անձամբ ինձ համար շատ ուրախալի է այդ բանը, շարունակեց Աննան: —Մի կողմից այն, որ դուք շատ էք դանդատում թէ այժմեան սերունդի մէջ հազուագիւտ երեսոյթ է դարձել մայրենի լեզուն սո-

վորելը. ահա մի դէպք, որ կարող է ոգևորել ձեզ. դա  
մի խոշոր օրինակ է, և օրիորդը անկասկած, հետեւող-  
ներ շատ կ'ունենայ: Միւս կողմից դուք կ'ունենաք պա-  
րապմունք: Ես չեմ կասկածում, որ շատ հաճելի կը լի-  
նի ձեզ համար այդ պարապմունքը. կրթուած բարձր  
դասակարգի չահէլ օրիորդի...

Վերջին խօսքերը նա արտասանեց իրան յատուկ  
մեղմ, հազիւ նկատելի, բայց շարաճճի ժպիտով: Ու-  
սուցիչը դարձեալ և դարձեալ յայտնեց իր շնորհակա-  
լութիւնները: Նա ինքն առաջին իսկ խօսքից զգաց թէ  
նրբան գեղեցիկ ու հաճելի անակնկալութիւն է դա և  
տիկնոջ սիրուն ժպիտը աւելի վառեց այդ զգացմունքը:

Դուան մօտից, ուսը պատի անկիւնին յենած, նը-  
րան էր նայում Յակոբը: Նա էլ լսեց, հասկացաւ. և  
նրա ձեր դէմքի վրայ նկատուեց այն ամբողջ սքանչելի  
տրամադրութիւնը, որ այդ միջոցին յուզում էր նրա  
երիտասարդ բարեկամի սիրութ: Տեսնելով նրա յան-  
կարծակի փոխուած ուրախ դէմքը, ծերունին քիչ էր  
մնում որ կանչէ նրան. «Ահա այդպէս է տիկինը»: Բո-  
պէն իսոր տպաւորող էր. հրճուանքի ազդեցութեան  
տակ ծերունին հէնց այդտեղ խօսք տուեց իրան կա-  
տարել կոնատի ազաշանքը, այն է, թոյլ տալ նրան  
գիշերել աղքատանոյի հին մասի մի շէմքի մօտ...

Աղմուկը սաստկացաւ. ամբոխը հերթով խօսել չէ  
կարող: Բայց Ղարա՛Մուրադեանը այս անդամ չէր  
հսկում կարգի վրայ. Նա կատարեալ ազատութիւն  
տուեց ինդրողներին: Ինչու հեռացնել, ինչու իանդա-  
րել: Գաղափարը մօտեցրել է մարդկանց: Այդ իսկ գա-  
ղափարը չէր, որ այս երեկոյ պիտի տանէր նրան հա-  
րուստ օրիորդի տունը: Երբ և իցէ կարելի կը լինէր  
մտածել անդամ այդ մասին:

Գիւղի երկու սերունդներ—մէկը ձեր գոնապահ,  
միւսը երիտասարդ, կարդացած, շատ բան տեսած ու-  
սուցիչ, մի տեսակ, մի աստիճան էին ոգևորուած:

Ո՞րքան շատ էին փախստականների ցանկութիւն-

ները, որքան մանր՝ մունք։ Զարմանում էր տիկին Աննան այդ մարդկանց վրայ։ Ի՞նչ խեղճ աշխարհից են նրանք, ի՞նչ խորին վայրենութիւն կայ գեռ այնտեղ։ Մի պառաւ իր համար չափու էր ինդրում։ Մի մայր գանգատում էր որ իր երեխային կարճ շորեր են տուել և կրծքի վրայ կոճակներ չը կան։ Մէկը պատմում էր իր մի երազը և ինդրում էր որ «խաթունը» երազագրքին նայէ։ Մի ուրիշը մօտեցաւ, «ուս փարայ» խընդրեց։ Մինչև իսկ եղաւ մէկը, որ հարցնում էր թէ ի՞նչ պիտի ուտեն վաղը։

Առաջին անգամը չէր որ տիկինը ականջ էր գնում այդպիսի խօսակցութիւններին։ Բայց դրանք հետզհետէ ձանձրալի էին գաւնում նրա համար։ Ոկզբում գեռ բնական էին այդ մարդկանց փոքրիկ ցաւերն ու մըրմունչները, նոյն իսկ մի առանձին յուղիչ տպաւորութիւն էին թողնում։ Բայց այժմ... Անցել էին գժբախտովթեան սուր ժամանակները. թշուառները այլ ևս այն չէին, հետզհետէ մարդ էին գառնում։ Այժմ այլ ևս չէր կարելի ներել շատ բան. այժմ դրանք մարդիկ էին, որոնց պակասութիւնները չափազանց աչքի էին ընկնում, փչացնում էին խնամողների բարի տրամադրութիւնը։ Եւ տիկինը մի քանի ժամանակից ի վեր չէր թագցնում իր գժգոհութիւնները։ Այս անգամ էլ նա դիմեց Ղարա-Մուրադեանին։

—Ի՞նչ տեսակ մարդիկ են, հարցրեց նա. —այս ի՞նչ ժողովուրդ է...  
—Միամիտ, նահապետական ժողովուրդ, տիկին, պատասխանեց նա իր սովորական ոգեսորութեամբ, որով միշտ խօսում էր այս ժողովրդի մասին։ —Ապրել է իբրեւ երեխայ, բնութեան, աւանդութիւնների, հնութեան երեխայ։ Միշտ փորձանկների մէջ է եղել, ծնուել ու մեռել է այդ փորձանկների մէջ։ Նրան վիճակուել է ամենասարսափելին աղէտներից, շշել է, բաց աչքով գերեզման է մտել։ Նոր միայն յարութիւն է առնում, տեսնում է իր շուրջը ուշադրութիւն, խնամք, սրտագին

հոգատարութիւն։ Այդպիսի բաներ նա երբէք չէ տեսել... Պէտք է հասկանալ նրա հոգեբանութիւնը...

—Աստուծու մարդիկ են, խօսեց Յակոբը իր քունջից, կանգնած մարդկանց ետևից։

Նրա վրայ ուշադրութիւն դարձնող չեղաւ. բայց դա մի և նոյն էր նրա համար։ Խառնել իր խօսքը այդ լաւ մարդկանց խօսակցութեան հետ՝ նրա սրտի նուիրական ցանկութիւններից մէկն էր։ Տեսնում էր նա տիկնոջը շատ անդամ, կատարում էր նրա հրամանները, պատասխանում էր նրա հարցերին։ Բայց այդ բոլորը պաշտօնական էր և նա սպասում էր ուրիշ տեսակ բախտի—խօսել առանձին, խօսել սրտից, իր սեփական զգացմունքները, իր գատողութիւնները յայտնել։

—Սարսափելի՛ է, ասաց տիկինը մի եղանակով, որ ցոյց էր տալիս թէ Ղարա-Մուրադեանի բացատրութիւնը բաւարար չէ նրա համար։

Ամենքից յետոյ մի ջահէլ աղջիկ մնաց։

—Ա՛, գեղեցկուհիս, բացականչեց տիկինը.—մօտ արի... արի...

Աղջիկը մի քայլ առաջ գնաց, և իր խոշոր կապտագոյն աչքերը լայն բացած՝ նայում էր տիկնոջը, չէր խօսում։

—Ի՞նչ ես ուզում, աղջիկս, քնքշութեամբ հարցրեց տիկինը, ձեռքը պարզելով գէպի նրան և նշան անելով որ մօտ գայ։

Դարձեալ մի քայլ արաւ աղջիկը, դարձեալ լուռ էր, պլած։ Երեսում էր որ նա մի առանձին հետաքրքրութիւն էր պատճառում հարուստ տիկնոջը։

—Ո՞րքան լաւանում է խեղճը, ասաց տիկինը, նայելով Ղարա-Մուրադեանին։

Դա, ճիշտ որ, մի խեղճ էր. չունէր հայր ու մայր, ոչ էլ մի ազգական։ Ո՞ւր էլն մնացել ծնողները—նա ինքն էլ չը գիտէր, առհասարակ չէր հասկանում թէ ինչ է պատահել և ինչու ինքը յանկարծ ընկել է այս օտար երկիրը, օտար մարդկանց մէջ։

Բայց հէսց այդ խեղճն էր փախստական ժողովրդի ծաղիկը։ Դեռ առաջին օրերում, այն ժամանակ, երբ ամենքը բաց, հալուող մսի մի զանգուած էին ներկայացնում, այս 12—13 տարեկան երեխան ցոյց էր տալիս թէ գժբախտութիւնների հետ ինչ տեսակ գեղեցկութիւն կարող է ստեղծել հառաջանքների և արեան այն երկիրը։ Իսկ այժմ, երբ նրա գոյնը տեղն էր եկել, երբ նրա չքնաղ աշքերի մէջ նորանոր սկսել էր վառուել կեանքի կայծը, իւրաքանչիւր տեսնողին զարմացնում էր միայն այն, թէ ինչ հրաշքով է սարի այդ ծաղիկը աղատուել երկիրը բանդող հրէշ գաղանների ձեռքից...

Բարձր լեռների գեղեցկութիւնն էր նա։ Մշտատեմշուշները, երկար ձմեռը իր խոր ձիւներով ու բուքերով, ծաղիկը, խոտը, աղբիւրը, խիտ ու մուժ անտառը, կայծակն ու որոտը, հազուագէպ անամազ գիշերների դիւթական լուսինը, այծեամն ու եղնիկը,—սրանք բոլորն էին միասին հրաշակերտել այդ գեղեցկութիւնը։ Այդ խրոխտ ընտութիւնն էր նայում նրա աշքերի անյատակ խորութիւնից, այդ լեռնային աշխարհն էր իր քնիքութիւնների ու խստութիւնների հետ խօսում նրա սիրուն, նուրբ յօնքերի մէջ։ այրուել, գունատուել էր նրա կաշին, բայց դա ժամանակաւոր աւերմունք էր, որ գործել էր թշուառութիւնը։ և լեռնային մայր բնութիւնը դարձեալ իրանն էր վերցնում այս օտար ու տափարակ աշխարհում։

Գեղեցիկ բերանը շարունակում էր լուսվթիւն պահապանել։ Բայց շագանակագոյն մազերը, որոնք չքեզ հիւսերով գուրս էին թափուել նրա գլուխը ծածկող չթէ աղլուսի տակից, տալիս էին այդ գէմքին մի ինչոր առանձին, զայրենի, մուժ կիրճերում ծաղկած և լանջերի ետևում թագնուող գեղեցկութեան ամբողջ հրապոյը։

Տիկին նուզեանը իր ձեռքերի մէջ առաւ նրա ձեռնոկտեմբեր, 1901.

բերը։ Ո՞րպիսի տարբերութիւն քաղաքացի կնոջ սպիտակ, քնքոյշ, խնամուած կաշու և այդ գեղջուկ ձեռքերի մէջ, որոնք ոչ մաքուր էին, ոչ փափուկ։ Բայց կարծես հէնց այդպէս էլ վայել էր բնութեան ծոցից դուրս եկած գոհարին։ Նա մեղմ նկատողութիւն արաւ միայն եղունգների մասին. իսկ աղջիկը ուշադրութիւն չը դարձնելով այդ նկատողութեան վրայ, իր մատների ծայրով բռնեց տիկնոջ ականջների փայլուն օղերը և զարմացած դիտում էր թէ ինչպէս նրանց քարերը զանազան գոյնի փայլեր էին տալիս։ Լեռնային այդ եղնիկը, ինչպէս երևաց, խնդրելու ոչինչ չունէր. եկել էր միայն նայելու, տեսնելու։ Եւ տիկինը չը կարողացաւ գոնէ մի բառ առել՝ վայրենու այդ հետաքըրբութիւնը զսպելու համար։

Օղերից յետոյ աղջկելը դիմեց սեղանի վրայ դրած գլխարկին, տնտեղ նրա զարմանալի փետուրներն ու պապղուն զարդերը:

—Հասկ, ցած ձայնով արտասանեց նա, բռնելով  
այդ դաստիքերից մէկը:

Հայրենի ծանօթ առարկան այնպիսի հրճուանք պատճառեց նրան, որ տիկինն ու Ղարա-Մուրագեանը միասին բացականչեցին.

-Երեխան...

Նա դարձեալ ուշադրութիւն չը դարձրեց այդ  
խօսքի վրայ, դեռ չէր յագեցրել իր հետաքրքրութիւ-  
նը և նրա զարմացած հայեացքը սահեց սենեեակի ա-  
ռաստաղով ու պատերով, մի վայրկեան կանգ առաւ  
Ղարա-Մուրադեանի վրայ, և որովհետև շատ էր նրան  
տեսել, նորից ել բևեռուեց չքեղ հագնուած տիկնոջ  
վրայ:

— Աւզմաւմ ես ինձ հետ խօսել, Մարո, հարցուեց  
վերջինս:

Նա գլխով հաւանութեան նշան արտւ:

—Հիմա ասա, Մարտ. ի՞նչ ես ուզում:

—Ոչինչ, հաղիւ լսելի ձայնով պատասխանեց նա

և էլի աչքերը շրջեցրեց՝ զարմացնող առարկաներ որունելու համար:

—Մարօն ուղժում է այսպիսի շորեր հագնել —և նա ցոյց տուեց իր զգեստը, ես կը բերեմ այսպիսի լուշորեր, այսպիսի գեղեցիկ գլխարկ։ Ուղժում ես...

Փոքրիկ շրթունքները մեղմութեամբ ձգուեցին և մի հրաշալի ժպիտ կազմեցին։

—Խեղճ երեխայ... որքան հարուստ գեղեցկութիւններ ունի, բայց և որքան անտաշ է ու կոպիտ, —մտածում էր տիկինը, նայելով այդ զարմանալի դէմքին, որ, կարծես, նկարչի վրձինի տակլից էր գուրսեկել, այնքան կանոնաւոր ու գեղեցիկ գծեր ուներ։

Նրա մտածմունքները խանգարեց Զարվագարեանը, որ այդ բոպէին աղմուկով ներս մտաւ։

—Ա՛, Աննա Եգորօվսա, իմ խորին յարգանքները... Այսքան վաղ ես չեի սպասում հանդիպել ձեզ այսեղ...

Առաջ թերուելով և գլուխը խոնարհաբար ցածացնելով, նա թօթուեց տիկնոջ ձեռքը, ապա «բարե» ասելով, մեկնեց իր մասները գիւղական վարժապետին։

—Եկայ իմ ծառայութիւնները առաջարկելու ձեզ, Աննա Եգորօվսա։ —ի՞նչ հրամաններ ունիք։

—Եատ չնորհակալ եմ, Ֆէօդօր Ներսէսիչ, դուք շատ բարի էք, ինչու այսքան նեղութիւն էք յանձն առնում։ Եթէ հարկաւոր լինէր մի բան, ես կ'ուղարկէի ձեզ մօտ։

—Այնու ամենայնիւ, ասացէք մի բան, Աննա Եգորօվսա, սկսեց նա աշխուժով, բայց յանկարծ դանդաղեցրեց խօսքը, կարծես խառնուում էր, որովհետեւ միաժամանակ նրա ուշադրութիւնը գրաւեց Մարօն։ —Դուք այնքան շատ էք ձեզ չարշարում... այնքան նեղութիւններ էք կրում, Աննա Եգորօվսա... որ ես ամօթեմ համարում ձեզ չօգնելը... Հէնց գոնէ աման լուանալ կամ լուացածը սրբել, թէյ կամ կերակուր տանել բաժանել... Մի խօսքով որ և է գործ...

Տիկինը գոհութեամբ ծիծաղում էր և վերջը առաց.

—Ես այդպիսի գործեր չունեմ ձեզ առաջարկելու։ Բայց տեսնում էք, Ֆէօդօր Ներսէսիչ, ինչ գեղեցկուհին է այս խեղճ աղջիկը։

—Երկրորդ թէ երրորդ անգամն եմ տեսնում։ Ֆիշտ որ վարդի պէս է բացւում։

Մարօն ամբողջ ժամանակ իր ուշադրութիւնը այդ հաստ ու կոլոր մարդու վրայ էր կենտրոնացրել. ոչինչ նշան չը կար թէ նա լսում է խօսքերը, հասկանում է նրանց. աչքերն էին միայն գործում և նա պլած զըննում էր նորեկի շորերը, դէմքը, շարժումները, ծիծաղը։

—Ահա եթէ սրա համար մի բան անէինը, խօսեց տիկինը։

—Ներեցէք, Աննա Եգորօվսա, ես նախ և առաջ կ'ուզէի, որ վարժապետը ինձ զիջէր իր տեղը. առնուազը, ես տարիքով մեծ եմ նրանից և վատ չէր լինի, եթէ ես նստէի և նա կանգնէր... Այս ծեր էշն էլ մեզ հարկաւոր չէ. թող գնայ բակը սրբելու։ Այդ էր պակաս որ Սամուել Նուրեանի ամուսնու խօսակիցը դռնապահը լինի։

Վարժապետը ներողութիւն խնդրեց և վեր կենալով, ասաց թէ կը գնայ տիկինը մի քանի կարգադրութիւնները կատարելու։ Իսկ Յակոբը մրուեց յօնքերը և դանդաղ կերպով իր անկիւնից դուրս եկաւ, հետեւ վարժապետին։ Ամեն անգամ, երբ այս շաղ, աղմկաբար պարոնը աղքատանոց էր գալիս, ծերունին մի ինչոր վատ բան էր զգում, կարծես թէ խաղաղ ու երջանիկ ընտանիքի մէջ օտար խառնակիչ մտաւ։ Եւ հակառակի պէս, նա գալիս էր միայն այն օրերը, երբ տիկինն էր լինում այստեղ։

Դռնապահը հեռու չը գնաց, այլ նստեց պատի տակ, կարծես պատրաստ՝ ամեն ըոպէ վրայ հասնելու, եթէ հարկաւոր լինի օգնութիւն։ Ղարա-Մուրադեանը, ընդհակառակն, մի առանձին խորհուրդ չէր տեսնում

Չարվագարեանի այցելութիւնների մէջ։ Տիկինը գրաւում էր, բայց ում չէր գրաւում։ Գաղափարը երբ կնոջ մէջ է մարմնանում, անհամար երկրպագուներ է զըսունում։ Չարվագարեանին, ինչպէս և ամեն մարդուն, մատչելի է գաղափարը։ Երիտասարդը չէր էլ նկատում որ հաստ մարդը վերջին ժամանակները փոխել էր իր վերաբերմունքը, այլ ևս այնքան հեգնութեամբ չէ վարւում իր հետ, կարծես ուզում է գիւղական վարժապետի սիրտը գրաւել, նրա բարեհաճութիւնը ձեռք բերել։

—Լաւ շորերի մէջ նա հրաշալի կը լինի, ասում էր տիկինը։

—Լաւ շորեր հագնել և այստեղ պահել։ Ինչի նման կը լինի։ Հագցրէք ձեր շորերը մի թուրք թարաքամայի, միայն ծիծաղել կարելի կը լինի։ Պէտք է և շրջան, պէտք է խնամատարութիւն, կրթութիւն։ Ես կարծում եմ, Աննա Եգորօվսա, մեղք է այս երեխային այստեղ պահելը. աւելի լաւ է, տուէք մի տուն։ Գուցէ բժիշկ Յովասափեանը կը վերցնէ...

—Ներեցէք, ոչ բժիշկը, ոչ դուք, —բողոքեց տիկինը, յանկարծ շառագունելով։

—Ինչո՞ւ։

—Ամուրի մարդուն այսպիսի աղջիկ յանձնել չէ կարելի։

—Ես գիտեի որ այդ պիտի ասէիք, բարձր ծիծաղելով պատասխանեց նա և իսկոյն իր դէմքի վրայ մի լողիրշ արտայատութիւն հանդէս բերելով, ասաց իրան յատուկ հեգնութեամբ։

—Ամսւանացածներն են այդպիսի համբաւ ստեղծել ամուրիների վերաբերմամբ։ Թոյլ տուէք ասել որ դա փարիսեցիութիւն է։ Ամուրիներին ես չեմ պաշտպանում, բայց ամունացածները... Մի հաւատար թէ նրանք անմեղ աղաւնիներ են, Աննա Եգորօվսա։ Դաւաճանում են իրանց կանանց այնպիսի ամուսիններ, որոնք արժանի չեն այդ կանանց կօշիկն անդամ համ-

բուրելու։ Փաստեր՝ նրբան կամենաք, բայց ես չեմ համարձակուի ձեր առաջ բաց անել...

—Ի հարկէ, չէ կարելի ասել թէ մարդիկ հրեշտակներ են...

—Ահա ճշմարտութիւնը. ես ծափահարում եմ ձեր խօսքերին։ Ես այժմ հասկանում եմ. Եւ մարդիկ ասելով, դուք, ի հարկէ, հասկանում էք երկու սեռն էլ...

Նա նկատեց որ տիկինը շատ նեղն է ընկել և չէ կարողանում նոյն խոկ նայել իրան։ Ու վարպետութեամբ փոխեց խօսքը։

—Յովասափեանը անշնորհք է, ժամանակ էլ չունի. նրան տալ չէ կարելի։

—Ես չեմ հետաքրքրում ազբի մէջ ընկած այդ մարդարիտով։ Սարաֆեանը... ահա նա շատ յարմար է։ Այդ մարդու ճաշակը, վառվուն, հնարագէտ խելը ինձ ապշեցնում են։ Նա կը պահէ դրան թաւիշների մէջ։ Խոկ ձևական բարեմտութիւնը, որ հարկաւոր է հասարակութիւնը հանդստացնելու համար, կարող է այն լինել որ Սարաֆեանի մօտ ապրում է նրա քրոջ աղջիկը...

Խօսակցութիւնը ընդհատուեց անակնկալ կերպով։ Մարօն պինդ քաշեց տիկին Աննայի թերքից և երեխայի լրջութեամբ ասաց, նայելով նրա աչքերի միջին։

—Մարօն նոր շորեր կը հագնէ. Մարօն ուզում է այս շորերից։

Տիկինը, ոչինչ վիրաւորանք չը զգալով այդ շեռնային կոպտութիւնից, նորից խոստացաւ նրան լաւ շորեր տալ, հանդստացրեց և ճանապարհ դրեց։

—Տեսնում էք, Աննա եգօրօնսա, դուք պահապան հրեշտակ էք նրա համար, բայց ձեր թերքից այդպէս քաշելը, այնպէս խօսելը... զգուելի է...

—Այն, նա ունի, շատ ունի պակաս կողմեր։ Բայց ունի և մի ժպիտ, որ միայն բաւական է բոլոր տղամարդկանց գժուացնելու համար...

Զարանձի, խոր թափանցող մի հայեացք դցելով

իր խօսակցի վրայ, նա մի և նոյն ժամանակ ժպտաց ու աւելացրեց.

—Ահա ինչն է վտանգաւոր...

—Ինձ, յամենայն դէպս, չի գժուացնի նրա ժպիտը։ Այն ուրիշ ժպիտ է, որ խակապէս այրում է. և այդ ժպիտը ես... այս վարկեանին տեսայ, նա դեռ չէ մարել, դեռ իմ աչքի առջե է...

Տիրեց մի ծանր լոռութիւն։ Զարվադարեանի աչքերը բորբոքուել էին, բայց և այնպէս, նա դեռ իր մէջ մի երկիւղ էր զգում։ Սրտաւրոփ սպասում էր թէ ահա այդ կինը շանթահար կ'անէ իր բարկութեամբ, բայցատրութիւն կը պահանջէ կամ չափը ճանաչել կը՝ հրամայէ։ Կարուկ, վճռական վայրկեաններ էին. բախտից երես առած, ամեն ինչ իր առջե հարթուած համարող այդ մարդն էլ զգում էր որ յանդգնութիւն է արել։ Եւ սպասում էր անխուսափելի վախճանին. կամ դուրս գոնդուել այստեղից, կամ թէ ստանալ յոյս թէ կարելի է շարունակել այդ տեսակ հաճոյախօսութիւններ։

Տիկինը, սակայն, չը շարժուեց։ Նա չէր խօսում, նա միայն լսող էր։ Եւ նրա լսած խօսքերից էր որ մի թեթև կարմրութիւն մի ակնթարթում ողողեց նրա ամբողջ դէմքը։ Հրաշալի էր այդ վարդադոյն բարակ քօղը. աչքերը չէին երեւում, նրանք ծածկուեցան երկար ու սրածայր թերթերունքների տակ։ Սամուէլ նուրեանի կինը, սալօնների այդ հպարտ ու անմատչելի թագուհին, այժմ նման էր դպրոցական հասակում գտնուող մի չափահաս աղջկայ, որ շփոթւում է ամաչկոտութիւնից, երբ անսպասելի կերպով մի հաճոյական, սիրային խոստովանութիւն է լսում։ Դիրք, կրթութիւն, հասակ կարծես մի վայրկեանում հալուեցան, կորան այդ կարմրութեան մէջ։

Իսկ Զարվադարեանը չափազանց հմուտ էր ու փորձուած։ Փոթորիկ չը կայ։ Բայց նա բաւական է համարում այդքանը։ Կարծես թէ ոչինչ չէր պատահել. և

նա իր սովորական ձևերով շարունակեց ընդհատուած խօսքը:

Ինչու հայերս այսպէս ենք, Աննա Եգորօվնա: Նոյն Սարաֆեանը ունի մի գերմանուհի աղախին, մի կատարեալ գեղեցկուհի. թիկնաւէտ, բարձրահասակ, հասած-զարդացած աղջիկ: Եւ այնուամենայնիւ, նա չէ վախենում ամուրիի տանը ծառայելուց: Հէնց դրանով է այդ շիկամազ աղջը աշխարհ նուաճում: Իսկ մենք... միայն մուլրացկաններ ենք պատրաստում: Հէնց ձեր այս աղջիկը... Ի՞նչ պիսաի գառնայ վերջը, եթէ ոչ մուլրացող, փողոցներում ու գինետներում փշացած մի կնիկ...

—Զը գիտեմ, պատասխանեց Աննան, նոր միայն համարձակութիւն ստանալով նայելու նրա դէմքին...

Այդ պատասխանը մանաւանդ հրաշալի էր: Չար-վագարեանը յաղթողի հաճութիւնն զգաց: Բայց խօսքը առաջ տարաւ մի և նոյն հանգիստ եղանակով.

—Ձեր թոյլտութեամբ—ասաց նա—ես կը խօսեմ Սարաֆեանի հետ. նա «հոգի-տղայ» է, ուզզակի հանճար. չի մերժի, և դուք կը տեսնէք թէ ինչպէս կը կրթէ այդ խեղճին...

—Եթէ հաւատացած էք, կարելի է...

—Ի՞նձ յանձնեցէք այդ գործը, Աննա Եգորօվնա: Ես ինքս, կրկնում եմ, նրանով չեմ հետաքրքրուում:..

—Թողէք, բաւական է, ընդհատեց նրան տիկինը:

Անսպասելի էր այդ հարուածը: Բայց Չարվագարեանը չը շնորհեց: Մի քանի վայրկեան միայն նա լոեց: Եւ գարձեալ մօտեցաւ նրան, բայց ուրիշ կողմից:

—Քանի ժամանակ է, Աննա Եգորօվնա, ես խընդ-րում, թախանձում եմ ձեզ որ մի բան հրամայէք ինձ, մի բեռը դնէք ինձ վրայ: Բայց դուք չէք կատարում իմ թախանձանքը: Դրանից ես եղակացնում եմ որ դուք բարեհաճութիւն չունիք գէպի ինձ:

Աննան ոչինչ չը պատասխանեց, մատներով խաղացնում էր իր հոգանոցի ծոպերը:

—Գոնէ այժմ հրամայեցէք, Աննա Եգորօվնա, հա-

մարեա աղաջաւոր ձայնով արտասահնեց Զարվադարեանը՝  
իր այլուող աչքերին մի տեսակ խղճալի արտայայտու-  
թիւն տալով:—Միթէ այդքան գժուար է ծառայեցնել  
մէկին, երբ դուք այսքան շատ դործ ունիք, ականա-  
տես էք այսքան կարօտութիւնների...

Վայրկեան չանցած, Անհան, շարունակելով խաղալ  
ծոպերի հետ, պատասխանեց:

—Այդ հեշտ է... Բեռն էք ուզում, և ձեզ վրայ  
նոյն իսկ ծանր բեռը կարելի է դնել:

Զարվադարեանը այտնեց որ այժմ կատարելապէս  
երջանիկ է ինքը...

## 9

—Չես ծխում:

—Ո՞չ:

Սարաֆեանը սիդարի տուփը դրեց սեղանի վրայ,  
ինքը վերցրեց մի հատ, սկսեց կտրել ծայրը:

Ճաշը նոր էր վերջացել: Ղարա-Մուրադեանը չէր  
կշանում իր վաղեմի ընկերից. ամբողջ ժամանակ հիա-  
ցած էր Արտաշէսի աջողութիւնների վրայ, հարց ու փորձ  
էր անում: Փառաւոր ապարանքը, ճոխ սեղանը այնքան  
ճնշով, մեծ տպաւորութիւն էին թողնում նրա վրայ. որ  
նա յաճախ չէր ուզում հաւատալ թէ այս բոլորի տէրը  
իր ընկեր Արտաշէսն է: Նա լսեց Արտաշէսի սկսած դոր-  
ծի ամբողջ պատմութիւնը, անկեղծ կերպով, հարազատ  
եղբօր նման, ուրախացաւ: Լաւ էր Արտաշէսը իբրև ընկեր  
դեռ դպրոցում: աւելի լաւ էր այժմ, երբ այնքան բարձր  
էր գնացել, երբ այսքան փառք ու հոչակ է ստացել:  
Ուրքան սիրալիր է, որպիսի հաճութեամբ վերանորոգում  
է յիշողութիւնները դպրոցական կեանքից, այն հեռու  
ժամանակից, երբ նրանք երկուուր, միանման աղքատ ու  
կարօտ, յաճախում էին մի մեծ բաղաքի միջնակարդ  
դպրոցը:

Արտաշէսը աւելի իր մասին կամ ճիշտն ասած, իր

գործի մասին էր սիրում խօսել։ Բայց և այնպէս ճաշի վրայ նա կարողացաւ իմանալ որ Ղարա-Մուրադեանը նոյնն է մնացել, չե փոխուել։ Նոյն գիւղացին, նոյն միամիտ գաղափարականութիւնը, նոյն անհոգութիւնը սեփական անձի մասին, նոյն համարձակ, շիտակ, նոյն իսկ ըմբոստ ոգին։ Վեցերորդ դասարանից գէնը նա չը կարողացաւ գնալ. նախ անտանելի գրութեան մէջ ընկաւ, երբ նրա խողարած, եղբայրները, իրանց հօր մեռնելուց յետոյ, միանգամայն երես դարձրին նրանից. և երկրորդ՝ որովհետեւ ըմբոստութիւն էր արել դպրոցում և այնքան յամառն էր որ չը կամեցաւ ներտղութիւն խնդրել վարչութիւնից։ Ահա այդ ժամանակից. նրանք բաժանուեցան միմեանցից և այժմ են հանդիպում իւրար։

—Գրքեր շատ ունիս, Արտաշէս, հարցրեց Ղարա-Մուրադեանը, նոտելով նրա կողքին, բազմոցի վրայ և ձեռքը գնելով նրա ուսին։

—Քեզ հետաքրքրող դրքեր—նչ։

Ղարա-Մուրադեանը ապշած էր։ Ի՞նչպէս կարելի է ապրել առանց դրքերի, մանաւանդ այսքան հարստութեան մէջ։

—Շատ հասկանալի է. ամենքը քեզ պէս գրքի մարդ չեն, բացատրեց Սարաֆեանը։

—Ա, յի գործնական կեանքի մարդ. այսպէս է...

—Զարմանալու կամ հեգնելու բան չը կայ։ Դործնական կեանք—այն։ Դա է մեր ժամանակի իրականութիւնը։ Եւ դու զուր ես կարծում թէ մարդիկ անխելքութիւնից են այսպէս դարձել։ Գրքերի մսախն ես քեզ հետ վիճել չեմ կարող. թէեւ բարձրագոյն ուսում եմ ստացել, բայց խոստովանում եմ քո առաւելութիւնը. գրքեր դու շատ ես լափել։ Սակայն փակիր քո հատորները։ Ի՞նչ ես տեսնում առջեղ։—Կեանք, այնպէս չէ։ Իսկ կեանքի մէջ դու արդէն չես կարող իմ հաւասարը լինել։ Պարզ է թէ ինչու. գիրքը՝ գիրք է, կեանքը՝ կեանք...

—Իզուր ես կարծում թէ ես ծիտ էի ծառի ճիւ-

զին կամ որ ու գիշեր երգող ճպուռ պատի ճեղքում:  
Գրքերը որքան էլ հրաշալի լինեն, կերակուր չեն դառնում։ Այս իրողութիւնը իմ առջև էլ կար դրած։

—Ահան դա շատ հետաքրքրական է։ Այսօր ես երկու անգամ հարցրի քեզ թէ ի՞նչ էիր անում այսքան տարիներ, բայց դու միայն իմ պատմութիւնն էիր ուղում իմանալ։ Եւ իմացար։ Այժմ թող ես քոնն իմանամ։ Թողնենք վերացական վէճերը. ամենից լաւ այս երկու պատմութիւնը կը վճռեն թէ ինչ ենք մենք, երկու ընկերներս, և ի՞նչ պիտի լինենք...

Սարաֆեանը կիսով չափ պառկեց փափուկ բաղմոցի վրայ և սիգարի խիստ անուշահոտ ծուխի բուլաներ արձակելով իր բերանից, նորից ասաց.

—Պատմիր... ի՞նչ էիր անում։

—Ե՞ս, հարցրեց Ղարաբ-Մուրագեանը, վեր կենաւլով տեղից և կանգնելով նրա առաջ։ —Ման էի դալիս, եղայր։ Այդ ուսուցչութիւնը ինձ ոչինչ չէր տալիս. բայց նրանից ձեռք չէի վերցնում, որովհետեւ նա ինձ շարունակ ման էր ածում։ Չեմ յիշում մի այնպիսի տեղ, ուր երկու տարի մնացած լինեմ։ Դպրոցական աշխարհում ինձ վիճակուած էր թափառական հրէայի ճակատագիրը։ Նատ քչերն էին ինձ պէս։ Բայց ես... ճանապարհորդել, տեսնել—բաւական էի և այս վարձատրութեամբ։ Համարեա ամեն տարի ինձ կարելի էր հանդիպել որ և է տեսակ ճանապարհի վրայ. կամ ձիով լեռները բարձրանալիս, կամ գիւղական սայլի մէջ արտերի արանքներում երերալիս, կամ երկաթուղութուչող գնացքի մէջ։ Մի փոքրիկ կապոց, իմ գրքերն ու թղթերը—այս էր իմ ամբողջ ծանրոցքը։ Եւ ես քամու թեթևութեամբ էի տեղափոխուում. ուրիշ ճար որ չէր լինում—ոտով էի գնում։ Չը գիտեմ, որ և է օգուտ տուել եմ իբրև ուսուցիչ—ես առհասարակ դժգոհ էի թէ ինձանից և թէ իմ պաշտօնակիցներից...

—Երեխ ամեն տեղ վէճեր սխառեմի, բարեխողձու-

թեան մասին և մի կոյտ շահեր՝ դպրոցի, աշակերտի,  
ժողովրդի... Ի՞նչպէս կարող էիր հաշտուել:

— Սպասիր, եղբայր. Եթէ ուզում ես «Հը հաշտուելու» մասին իմանալ, հարցըն և ոչ թէ վճիռներ արձակիր: Գիտե՞ս ինչ է հայ վարժապետը: Հանգամանքներն են նրա բախտը: Եւ ահա ինչ հանդամանքներ են լինում.

«Երևակայիր մի որ և է գիւղ լեռներում, անտառների մէջ կորած.—կորած, այս բառի բուն նշանակութեամբ: Եթէ ամիսը, երկու ամիսը մի անգամ մի գիւղացի բաղաք կը գնայ և վարժապետի նամակներն ու լրագիրները ստանալու և աեղ հասցնելու յօժարութիւնը յահճն կ'առնէ—մեծ շնորհակալութիւն: Վարժապետը, ինչըսն էլ ըլ լինի, ասժանի է այդքան ուշադրութեան. նա կարդացնում է, վառարանը վառում է, զանգակը աալիս է, գրագիր է ամբողջ գիւղի համար: Բայց գեռ քանի ուրիշ կարիքներ կան գիւղում: Եղ են գողացել.—վարժապետ, գրիր, նոյն իսկ եթէ կարող ես, գնա հետքը գտնելու. կարկուտը ծեծել է այդին. — վարժապետ, ինչ անենք: Ահա մտնում է մէկը, թոնդ դա լինի մի Մաթոս, ինքը ծերունի: Հարցնում է վարժապետի բէֆը, ապրուսողը, երկար ու բարակ պատմում է իր կենսագրութիւնը, բայց աւելի երկար է նրա բերած պատմութիւնը. ազնիկը տուել է այս ինչ մարդուն, կարծելով թէ լաւ օջախ է, բայց դուրս է եկել շան օջախ. ծեծում, կոտրատում են խեղճին, հաց չեն տալիս և մի շարք այսպիսի սարսափներ: Վարժապետը պէտք է գրէ առաջնորդին, փոխարէնը Աստուծուց կը ստանայ, որովհետև մի հոգի է աղատում գժոխիքից:

«Լաց լինելով մօտդ է գալիս մի իսեղճ մայր, որի երեխան մեռնում է դիքտերիտից: Մանաւանդ այդ մայրերի արտասուըները... որքան և որքան իմ տեսել ջիշում եմ, մի օր մի մայր աղաջում-պաղատում էր, ի հարկէ, արտասուք թափելով, որ ես աղատեմ նրա

որդուն։ Իսկ գիտես ինչ էր նրա որդին. — մարդաւ սպան։

«Մի խօմքով, վարժապետը պիտի լինի ամեն ինչ. մանկավարժ, ծառայ, բժիշկ, իրաւաբան, դատաւոր, խոստովանահայր, գրքաց... Կեանքի բոլոր դատնութիւնները նրա առջև են բաց անում, նա պիտի լինի ամեն մէկի ցաւերի, վշտի հաղորդակիցը։ Բայց, պէտք է շնորհակալ լինել, ամեն մի հարսանիքի գլխին էլ վարժապետն է նստած։ Այդտեղ էլ նա պէտք է խմէ. և վայ նրան, ով չէ կարողանում մեռելաթասեր ու կենացներ խմել գիւղական թթուշքացախ գինով։

«Ապրում ես այդպէս։ Մի գեղեցիկ օր յանկարծ յայտնի է դառնում որ գիւղը փող չունի, իր պատուելի վարժապետին ունիկ տալ չէ կարող Սակարկութիւն, գնալշգալ։ Վարժապետը պարտքով է ապրել. տուն չը կայ, որտեղից փոխ առած չը լինի ձու, հաց, իւղ, միմի էլ մի ճուտ։ Ի՞նչ անես։ Մէջ տեղ պայմանաթուղթ կայ, որ իրաւունք է տալիս դատարանին գիմել, իսկ պատշաճաւոր իշխանութիւնը խիստ հրամաններ է ուղարկում — հաւաքել, տալ, թէ չէ՝ այսպէս ու այսպէս կը լինի։ Մտածում ես. կարելի է վերցնել տանուտէրին և տնէ տուն ման գալ, ճիպոտի հարուածներով փող պոկել։ Ես երեք կարելի չեմ համարել այդ բանը։ Գիւղում ով է կուշտ, որ վարժապետը կուշտ լինի։ Հաց ու թաց — կայ, Աստուծու տուածն է, ոչ ոքին չէ խնայում Բայց փող...»

«Մնում ես։ Յունիսին, երբ արտերը կամ գեղնած են կամ ծաղկում են, պէտք է արձակել երեխաններին։ Երբէք վարժապետը այդքան հպարտ ու մեծ չէ լինում։ Հարցաքննութիւնն է. քահանան, ծերերը գալիս են, երբեմն ներս է մտնում տանուտէրը, երբեմն տեմնում ես մի մայր եկալ՝ գուլզան ձեռքին։ Կիրակի օրը պարգևաբաշխութիւնն է. գիւղի կէսը դպրոց է թափուել, — խօպք, աղմուկ, իրարանցում։ Օրուայ հերոսն ես։ Սեղանի վրայ դարսուած են գէսից-գէնից մուրացած գլքեւ-

ըլ. քանիսի՞ն ես խնդրել, քանի տեղեր ես գնացել՝ այդ գրօշանոց դրբերը հաւաքելու համար, որպէս զի պարգև տաս երեխաներին։ Արդէն դրել ես ամեն մէկի վրայ թէ որ աշակերտին է ընծայւում, գպրոցի մեծ կնիքն էլ ճիւռում ես, մի լաւ էլ ստորագրում։ Ճառ ես տառում։ «Ճերք, ամառը դասերը չը մոռանաք, շուտ-շուտ բաց արէք ձեր գրբերը. արտ գնալիս, տաւար պահելիս գիրքը հացի քսակի մէջ դրէք. հարկաւոր կը դայ»։ Այդ մի հատ օրը մոռացնել է տալիս ամեն մի զրկանք, գիւղական կեանքի բոլոր դառնութիւնները։

«Արձակուրդ ես յայտնել մինչեւ սեպտեմբեր, ուրախ ես երեխաների հետ. նրանք չը պիտի իմանան թէ դու ոսճիկ չը ստացող վարժապետ ես։ Նոյն օրը զանդակը վերցնում ես իր տեղից, դնում ես դասարանում, փակում ես և բանալին վերցրած՝ գնում ես քահանայի կամ տանուտէրի մօտ։ Իրիկնահացի վրայ խօսքը ապառիկներիդ մասին է. կամ խոստանում են յետոյ վճարել, թուզթ էլ են տալիս, կամ հէնց ուզիդ ասում են չը կայ և գործը վերջանում է նրանով որ թէ դու և թէ գիւղը «հալալ» էք անում միմեանց երախտիքը։ Ու միւս օրը, երկուշաբթի վաղ առաւտեան, էլի ճանապարհին ես Ետևումդ մնացին աշակերտներդ, որոնք դեռ չեն կշացել իրանց ընծայուած դրբերից, իսկ առջևումդ անյայտ ապագան։ Ո՞ւր պիտի լինես սեպտեմբերին։

«Քաղաքումն ես։ Ամառ է. քեզ պէս շատերը գպրոցական զանգակները փակել են դասարանում ու եկել են թարմանալու։ Նորաբոյս պատանիներ. շատերի դէմքի վրայ աղուամազը հազիւ է սկսել սեանալ. առոյդ ու արագաբայլ, միւմի ձեռնափայտ վերցրած, չափում են քաղաքը, պտտում են զբոսավայրերում, ծանօթութիւններ են սկսում և խօսում, խօսում են, նոր պատրաստառութիւններ են տեսնում, դիմում են ունեորներին. խնդրում են, մի բան գջում են գպրոցների

համար, պատուէրներ են տալիս, մի և նոյն ժամանակ քաղաքի գործերն են քննադատում, լրադրական վէճերըն են արծարծում և էլ ինչ ասեմ—խօսք ու զրոյց դասագրքերի, մանկավարժական սիստեմների մասին, երդ, երբեմն էլ ընկերական քէփ։ Ուկի՞ ժամանակներ...

«Իմ հասակալիցները չէին նրանք, շատերը սկզբընական խեղճ կրթութիւն ունէին։ Բայց այդ երիտասարդ, թարմ, եւացող շրջանի մէջ ես մոռանում էի ամբողջ աշխարհը, չէի իմանում թէ ինչպէս թռանանցան ամառային օրերը և ահա ես դարձեալ նոյն ծանըր հարցի առջև եմ—ուր պաշտօն գտնել։

—Բայց միթէ դու միշտ գիւղական ուսուցիչ էիր, հարցրեց Սարաֆեանը։

Ղարա-Մուրադեանը մօտեցրեց մի աթոռ, նստեց ու շարունակեց։

—Ո՛չ, մի քանի անդամ էլ բարձրացել եմ մինչեւ քաղաքի ուսուցչի պատիւը։ Քաղաքը—այստեղ արդէն ուրիշ մժնոլորտ է, այստեղ վարժապետը այլ ևս հասարակաց մարդ չէ, դոնէ առանց նրան եօլա կ'երթան։ Մի հատ խեցի պիտի գտնես բեզ համար ու փակուես մէջը։ Խեցիի կեանքը շատերը չեն տանում և քաղաքի ուսուցիչները մի առանձին մոլութեամբ նուիրում են թղթախաղին։ Բայց ես ատում եմ գիշերները սպանելու այդ միջոցը, ուստի և միշտ իմ խեցիի մէջ էի։ Սովորաբար այդ խեցին բաղկացած էր երկու սենեակից։ մէկի մէջ քնում էի, միւսի մէջ կարգում, գրում։ Բայց շասես թէ ես կատարեալ ճգնաւոր էի։ Սրի ու տես որ շրջան էլ էի դտնում։

«Ես նկատել էի որ գաւառական կեանքը անպայման մեռած չէ, բուսական չէ։ Դպրոցները նոր հոսանքներ էին հանում իրանց միջից, որոնք ընդհարուելով հնութեան հետ, նրա թանձր մարմնի վրայ կազմում էին մի բարակ, գեղեցիկ շերտ։ դա գաւառական փոքրիկ, աննկատելի իդէալիստների աշխարհն էր։ Ով փոքր ի շատէ աշխոյժ ունի, ով գրքից ու դպրոցից մի բան

վերցրել է, նա այդ խմբի մէջն է։ Փոքրիկ իդէալիստներ ասացի։ Զահէլ, խակ, դեռ չը կազմակերպուած բնաւորութիւններ, գոյութեան կռուփց, փորձից, պայքարից ոչինչ դաս չառած, վայր ի վերոյ հասկացողութիւններ, մի խօսքով զանազան արմատներից, զանազան հողերից ու միջնավայրից բուսած ընձիւղներ։ Այդտեղ կը տեսնէիր բաւական վարժ գործակատարին, որ թղթակցութիւններ է գրում լրագիրներին. ոյժ է նա, գոնէ նրան հալածում են, հայհոյում են, միմի նոյն խն ծեծում են, կան և նրան գովազներ, պատուղներ։ Կը տեսնէիր գալարոցը վերջացրած, դեռ օդային ամրոցներ կառուցանելու շրջանում գտնուող հպարտ պատահուն, որին դեռ ևս չէ կռացրել կեանքը. Կը տեսնէիր գալարական վարչութեան մէջ ամիսը 8 ռուբլով ծառայող գրագրին, որ Շեքսպիր է կարգում. կը տեսնէիր և հարուստի սրդուն, որ ոչինչ չէ կարդում, բայց մեծ գերմօկրատ է ու պարծենում է որ գրադրին Շեքսպիր տուղը ինքն է։

«Եւ այսպէս մի շարք անձնաւորութիւններ երեակայիր ու ներկայացրներ քեզ ցուրտ, մառախլապատ երեկոներ։ Վարժապետի փոքրիկ լամպան դրած է գրասեղանի վրայ. նրա կողքին մի այլ, աւելի մեծ սեղան, որի շուրջը հաւաքուել են իմ պատանի բարեկամները։ Թէյ ենք խմում, կամ դիրք ենք կարգում, կամ վիճում ենք։ Պատմում են նորութիւններ, սրտառուչ յափշտակութեամբ դատողութիւններ են անում։ Քանիշ-քանի հարցեր։ Անխիղճ հարստահարիչներին դատափետում են անխնայ, պաշտպանում են աղքատի դատը. դպրոցի ամենաջերմ բարեկամներն են, առաջադիմութիւն են ցանկանում նրան և ունին բազմաթիւ ծրագիրներ։ Մի ասա թէ միայն խօսքեր են այդ բոլորը. գիտեմ մի տեղ, ուր այդ իդէալիստները յօժար կամքով իրանց ենթարկել են կանոնադրութու տուրքի և նրանով օդնում են աղքատ աշակերտներին։ Խոկ մի ուրիշ տեղ այսպիսի մի հանգամանք երեան եկաւ։ Լուր տարածուեց թէ մի

գեղեցիկ աղջիկ ամուսնանում է մի շատ տղեղ երիտասարդի հետ։ Օրիորդը նոր էր աւարտել տեղական գպրոցը և ընդունակ աշակերտուհիներից մէկն էր. այդքանը բաւական էր որ նրան պաշտէին իմ պատանի բարեկամները։ Օ՛, եթէ տեսնէիր թէ որպիսի սրբազն, վառ սիրով էին նրանք վերաբերւում այն երկյարկանի շինութեան, ուր օրիորդաց ծխական դպրոցն էր պահում։

«Ի՞նչ և իցէ։ Լուր է տարածւում թէ օրիորդը հակառակ իր կամքի է գնում տղեղ երիտասարդին, որովհետեւ նրան ստիպում է հայրը. իսկ հօրը ստիպում էր մի հարուստ վաճառական, որին նա փող է պարտական։ Մի օր—սա փաստ է—օրիորդը ստանում է անստորագիր նամակ։ Կը կամենայի որ այդ թուղթը ինձ մօտ լինէր այժմ և ես կարդայի քեզ մօտ։ Մի ամբողջ պատմութիւն։ Ի՞նչ և ի՞նչ չէին մտածել նամակ դրոզները։ Նրանք սկսում են հինդերորդ գարի «փափկասուն կանանցից», երգուեցնում են եւրոպական ազատութեան անունով։ Չեմ մոռացել մի այսպիսի դարձուածք. «Երկինքն էլ որ փուլ գայ, աստղերն էլ որ թափուեն, ազատութիւնը դարձեալ կը մնայ»։ Պէտք էր տեսնել թէ որպիսի գովեստներով ու փառաբանութիւններով էր մեծարւում բռնութեան զոհ դարձած օրիորդը։ Նրան ազատում էին բարձր պահել այն դպրոցի պատիւը, որ նրան կրթել է իր մայրական ծոցում. այդ դպրոցը իդէալ է, սրբութիւն է և օրիորդն էլ պիտի իդէալ դառնայ հայ երիտասարդների և օրիորդների համար, պիտի դիմադրէ հերոսաբար, ոտի տակ տրորէ յիմար նախապաշտարմունքներն ու անարդ փողի ոյժը։

«Մի նամակ էլ ուղարկւում է փեսային. գա արդէն համառօտ է, սառն, արհամարհուա Առաջարկում են նրան հասկանալ թէ ով ու ի՞նչ է ի՞նքը և ում է յանդզնում մօտենալ։ Տգիտութիւնը, կոպտութիւնը չէ կարող տիրապետել դպրոցն աւարտած մի օրիորդի

վրայ, որ ամեն կողմով բարձր է նրանից։ Մի խօսքով, այդ բռնի ամուսնութեան շուրջը պատրաստւում էր մի ամբողջ յեղափոխութիւն։ Աւելորդ է ասել քեզ թէ նվազեր էին այդ նամակների հեղինակները։ Նրանք պատմեցին ինձ իրանց արածները շատ ուշ, նամակները ուղարկելուց յետոյ, պատմեցին թէ ինչպէս կամեցել են պատգամաւորութիւն ուղարկել այն հարուստ վաճառականի մօտ, որ այդ ամուսնութեան բուն պատճառն է և թէ ինչպէս այդ մասին համաձայնութիւն չէ կայացել ընկերների մէջ։ Զը գիտեմ ինչ դառաւ վերջը։ Հարսանկը յետածգուեց մինչև աշուն, իսկ ես սեպտեմբերին շատ հեռու էի այդ քաղաքից, ուսուցչութիւն էի անում Ալաշկերտի գիւղերից մէկում...»

—Բայց դու, ի հարկէ, մեծ նշանակութիւն էիր առջիս այդ երեխայութիւններին։

—Ի՞նչպէս ասեմ, Արտաշէս։ Երեխայութիւն անուանել չեմ կարող, բայց հասուն, կազմակերպուած ոյժեր էլ չեին իմ բարեկամները։ Նրանք հում նիւթեր էին, որոնց պէտք էր մշակել, ուղղութիւն տար։ Վարժապետի գործը, դպրոցից գուրս, հէնց այդ պիտի լինի, —այսպէս է իմ խորին համոզմունքը։ Եւ ես հաւատացած եմ որ մեր գաւառներում շատ են այդպիսի տհաս, բայց օգտակար պտուղներ, մաքուր հոգիներ, գեղեցիկ ձգտումներ, գոնէ նրանք գժգոհ տարին են կազմում, միշտ ծարաւ են առաջադիմութեան, ուղում են որ լաւ լինի աշխարհը։ Ես գիւղերում էլ, հասակաւորների համար, կազմում էի փոքրիկ ժողովներ, կարգում էի լրագիր, դրաբեր, հասկացնում էի։ Եւ պարտաւոր եմ վկայել որ ամեն տեղ, քաղաքում թէ գիւղում, բարի սերմը ապառաժների վրայ չէ ընկնում։ Կան ոսկի սրտեր, շատ են դրանք։ Պատահել են գիւղում այնպիսի անգրագէտ երիտասարդներ, այնպիսի տղամարդիկ, որոնք հիացրել են ինձ։ Բնական խելք, առողջ դատողութիւն, սուր ըմբռնօղութիւն։ Ո՞րքան ցաւում ես որ այդ գեղեցիկ ոյժերը անմշակ են մնացել. ի՞նչ

հասարակութիւն կ'ունենայինք, եթէ այդպիսի բնաւուրութիւնները կըթուած ու լուսաւորուած լինէին։ Կորչում են մեր ոյժերը այդպէս. ինձ հիացնող մարդկանցից շատերը ցնցոտիներ էին հագած, խողարած էին կամ փայտահատ, մարդիկ, որոնք գիւղում չեն լինում և խօսելու իրաւունք էլ չունեն...

«Ահա, եղբայր, ինչպէս էի ես ապրում։ Ես սովորել էի այդ կեանքին. բայց ինչ եմ ասում, — ես ուրիշ կեանք չէի ճանաչում և ճանաչելու ժամանակ էլ չունէի»...

Սարաֆեանը վերկացաւ պառկած տեղից. նրա սիգարը արդէն վերջացել էր։ Զեռքերը դնելով գրպաններում, նա գնաց մինչև սենեակի միւս ծայրը, վերադառն և կանգնեց Հարա-Մուրադեանի աթոռի մօտ։

—Այժմ տեսնում ես, հարցրեց նա մի հեղինակաւոր ոճով։ —Ես ասում էի քեզ. ասում էի որ մեր կեանքի պատմութիւնը ինքը կը բնորոշէ մեզ երկուսիս եւ պարզ է. գու աղքատութեան երդին ես, իսկ ես — հարատութեան։ Քեզ բաւականացնում է փոքրիկ գործը, մինչդեռ ես ատում եմ փոքրիկ գործերը։ Հիմա ումն է իրաւունքը։ Երբ գու գիւղերում, քաղաքներում մի կտոր գրագիտութիւն ես տարածում, մի քանի հատ սերմ ես գցում, ես ասում եմ. «շատ լաւ, բայց յետո՞յ»։ Յետոյ այդ բոլորը կը խեղդուի, կ'ոչնչանայ կամ առնուազն հէնց այդպիսի սազմնային դրութեան մէջ էլ կը մնայ։ Ոչ։ Աշխատաւոր հերկողներ էք դուք, բայց չէք իմանում թէ որտեղից սկսէք։ Դուք բռնում էք մտաւորից և ուրախանում էք երբ տրեխաւոր գիւղացուն մի կտոր գաղափար էք տալիս։ Բայց ինչ արդիւնք կը ստանաք, եթէ նոյն իսկ անվերջ աջողութիւն ունենաք։ Դուք կ'ունենաք մի խումք քաղցած, ցնցոտիներով ծածկուած, դժբախտ փիլիսոփաներ։ Բայց դա անկարելի է, դա անբնական է։ Առաջ պէտք է փորը կշտացնել, առաջ պէտք է բարդ պահանջների տէր դառնալ։ Աշխարհի սկզբից այս է ճշմարտութիւնը...

Ղարաւ-Մուրադեանն ուղում էր պատասխանել,  
բայց նա փոքր ինչ գրգռուած ասաց.

—Թոյլ տուր վերջացնել... Ես հօ լսում էի քեզ:  
Ես քեզանից մեծ գործ եմ կատարում նոյն իսկ հաստ-  
րակական տեսակէտից: Իմ ընկերութեան մէջ հարիւ-  
րաւոր մշակներ, արհեստաւորներ են մասնակցում:  
Նրանք, ի հարկէ, կը ստանան լաւ շահ, իսկ շահը կը  
դրաւէ նրանց, մեծ դրդիչ կը դառնայ, ձեռնարկող  
ոգի կը մտցնէ նրանց մէջ. և այնուհետև կը խօսեն  
մեր երկրի բոլոր հարստութիւնները: Պէտք է նախ հա-  
րստանալ...

—Բայց կրթութիւնն էլ հարստութիւն է...

—Դա արդէն յետոյ պիտի գայ: Կը գայ ինքն ըստ  
ինքեան, կը գայ իբրև անխուսափելի պահանջ:

—Ոչ, հարստութիւնը ծովութիւն է, իսկ կրթու-  
թիւնը ծոյլերին չէ ընդունում:

—Սիսալ, մեծ սիսալ: Ծովութիւնը ո՞րն է: Այն, որ  
մարդը իր համար յարմարութիւններ է ստեղծում: Տա-  
րօրինակ բան... Ես յոգնել էի և գնացի արտասահման:  
Այնտեղ ապրեցի շատ լաւ, ճաշակեցի շատ վայելչու-  
թիւններ: Զեր, ճգնաւորներիդ, կարծիքով սա ծովու-  
թիւն է, զեղխութիւն է: Բայց ո՞ւր են հիմա ճգնաւոր-  
ները: Գնա Եւրոպա, գնա տես: Բայց ինչո՞ւ այդքան  
հեռու գնալ: Թո՞ղ օրինակ լինի հէնց այս մեր քաղաքը:  
Ճարմանում են, կուրծք են ծեծում: որ երեկուայ դիւ-  
զացին այսօր այնքան հարստացել է, որ այլ ևս չէ ու-  
զում ոտով ման գալ: Ես չեմ զարմանում. ես, ընդհա-  
կառակն, ուրախանում եմ: Առաջադիմութիւնը հէնց  
դա ինքն է: Վաղը թող մեր երկիրը լցուի այդպիսի  
մարդկանցով, և դու կը տեսնես որ անհետացան մեր  
սարսափելի ճանապարհները, երեւացին յարմար կառ-  
քեր, երկաթուղիներ, ձիաքարշեր, աւտոմօբիլներ: Պա-  
հանջը հրաշքներ է գործում: պահանջը պէտք է զար-  
դացնել, իսկ զարդացնել նրան կարող է հարստութիւ-

նը, այն, ինչ դուք արհամարհանքով անուանում էք զեղխութիւն...

—Եւ ուրիշ ոչինչ. բարձր գաղափար, իդէալ...

—Զեր դժբախտութիւնը հէնց այն է որ դուք իդէալները ամպերն էք հանում, մինչդեռ նրանք այստեղ, մեր աշխարհում պիտի լինեն, մեր իրականութիւնից պիտի բղխեն և մեզ հետ ապրեն։ Յետոյ, երկրորդ դժբախտութիւն. ասում են թէ գաղափարին կարելի է ծառայել միայն քեզ պէս, աղքատ ու անփող, խեղճ, զրկուած։ Անձնազոհութիւն էք անուանում դուք այդ բանը։ Բայց—Ներիր—ես էջի մարտիրոսութիւն կ'անուանեմ։ Եւ զարմանում եմ, տեսնելով քեզ այստեղ։ Ի՞նչ ունիս, քո տեղն է։ Այստեղ անձնազոհութիւնը միանգամայն անհատսկանալի, վայրենի բան կը լինէր։ Տնկը և առ։ Եթէ շատ վաս են թւում քեզ իմ այս խօսքերը, խնդրեմ վաղը մի անգամ էլ պտտիր մեր այս կողմերում։ Հարիւրաւոր գործարանները, շոգին, շարժողութիւնը, ամեն ինչ—միմիայն այս են ասում։ —առկը և առ։ Զնջիր այս ուժեղ հրամանը, և մի քանի ամսից յետոյ այստեղ միայն անապատ կը մնայ։

Նա տարաւ Ղարա-Մուրագեանին իր առանձնասենեակը, ննջարանը, գահինը, ման էր ածում, ցոյց տալիս արտասահմանից բերած իրերը։ Ցոյց տուեց նոյն իսկ իր անձնական բիւջէն և ասաց.

—Տեսնեմ ես ես հարուստ ու շքեղ եմ ապրում, չէ։ Բայց երևակայիր, ես գեռ բաւական չեմ։ Դնում եմ աշխատանք, գործում եմ անդադար, ուրիշներին որքան կարելի է մեծ շահ տալու համար եմ դէս ու դէն ընկնում, և իմ սուրբ իրաւունքն է ստանալ փոխարինութիւն։ —Արքան շատ, այնքան լաւ։ Դու այս շափ փոխարինութիւն չես ընդունում, հետեւաբար քո տեղը այս չէ։

—Այն, բայց կրկնում եմ քեզ այն, ինչ արգէն ասացի։ Ես իմանում եմ, որ միայն օդով ապրել չէ կարելի։ Մեր գասակարգը չնջուած է։ Այլ ևս չեմ կտ-

բող իմ գիւղացիներին դասեր տալ։ Պէտք է մի գործ,  
որ հաց տայ ինձ։

—Մի գործ, որ հաց տայ։ Միևնոյնն էլ ես եմ ա-  
սում ինձ։ Բայց իմ և քո մէջ տարբերութիւնը ահա-  
գին է։ Դու քո հացը կարող ես գտնել և գիւղում, եթէ  
ոչ իբրև վարժապետ, գոնէ իբրև դրագիր։ Դու դրել ես  
քո ճակատին, որ փող երբէք չը պիտի ունենաս։ Այլ  
ես չես կարող ջնջել գրածդ, ուշ է, անկարելի է, զու  
կը լինես մի կեղծ, ճնշուած, թշուառ գրութեան մէջ  
և քեզ այդպէս չէ էլ կարելի յարդել։ Այնտեղ, աղքա-  
առութեան մէջ, դու հարկաւոր կը լինես. կ'օդնես, ահա-  
արծաթ մարդ ես։ Իսկ այստեղ։ Դնենք թէ վազը իմ  
այս գործի մէջ մի լաւ տեղ բացուեց։ Բայց ես նրան  
քեզ չեմ տայ։

—Դու էլ, Արտաշէս...

—Հարցրո՞ւ թէ ինչու։ Դործնական անկեղծութեամբ  
խօսելով, դու դիսօնանս կը մոցնես այստեղ. դու պատ-  
րաստուած չես, դու չես կարող արդիւնագործութեան  
հլու, կարգապահ զինուորը դառնալ։ Ես սիրում եմ  
հաւատալ թէ դու մի ամբողջացրած, ինքնակամ բնա-  
ւորութիւն ես մնացել, ինչպէս առաջ էիր։ Ուրեմն, դու  
չես կարող ձուլուել մեր աշխարհում, մեր մարդը դառ-  
նալ։ Դու կը շարունակես լինել այն, ինչ էիր—ծաղրող,  
բնադասապ, բողոքով...

ԴարաւՄուրագեանը կարողացաւ միայն գլխով լուս  
հաւանութեան նշան անել։

—Մի նեղանար... ես յարգում եմ քեզ։ Իմ դուռը  
միշտ բաց է քո առաջ։ Շնարհ արա ամեն օր ճաշի եկ  
ինձ մօտ. ես շատ և շատ ուրախ կը լինեմ։ Գիտեմ;  
դու կը վրդովուես. բայց պէտք է իմանաս, որ մենք,  
գործի մարդիկս, առանց զոհերի չենք կարող այսպէս  
լինել...

Բոլորովին մութ էր, երբ ԴարաւՄուրագեանը գուրս  
եկաւ իր ընկերի տանից...

լէ 0

(Ար ռարունակուի)

## Թ Ա Մ Ա Բ

(Խերմօնտօվի)

Դաւթեալի խորունկ, միզապատ կիրճում,  
Ուր Թերէք գետն է յուզում, մըռնչում,  
Կանզնած մի մըռայլ դըղեակ հընօրեայ,  
Սեւին էր տալիս սեւ ժայռի վրայ:

Եւ նա անբընակ, բարձրաւէն ու նեղ—  
Թամար բագուհին ապրում էր այնտեղ.  
Գեղեցիկ, որպէս երեսակ երկնային,  
Նենզամի՛ս ու չա՛ր, որպէս չար ոգին:

Եւ կէս գիշերուայ մըռուշի միջից  
Ասկեռող լոյս էր ցողում դըղեակից.  
Անցորդի ուշին էր նա հրապուրում,  
Եւ նինջ, եւ հանգիս նորան խոստանում:

Եւ մեղմ լլաւում էր մի ձայն տենչալի,  
Ախտայոյգ ձայնը չըքնաղ Թամարի.  
Եւ կա՛ր այդ ձայնում մի բովչանք քննոյց,  
Կա՛ր եւ անմեկին, յաղթական մի ոյժ:

Անտես փերիի ձայնին ունկնդիր՝  
Հովիւ, սովորակար, մարտիկ զըրհակիր—  
Դիմում էր դըղեակ—Եւ ժանի ներքինին  
Դուռն էր բաց անում հիւրի առաջին:

Փետրալից մահնում, քաղուած մետախում,  
Սյուսեղ Թամարն էր հիւրին սպասում,  
Վերան ակ, գոհար—եւ գինով լրցուած  
Երկու հատ գաւաք առջեւը դրցուած:

Եւ փարում էին ձեռքեր ցերմազին,  
Հպում վառվոուն ըրբուն ըրբունին.  
Եւ ախտաբորբոք, վայրախինդ ձայներ  
Դադա՞ր չունէին այնուեղ ողջ գիշեր:

Ասես, դրդեակում այն լուռ, ամայի  
Հարիւրով վառսիրս աղջիկ, պատաճի  
Եկած լինէին հարսանիեաց հանդէս,  
Կամ հարուս քաղման կատարում մի ծէս:

Բայց նէնց որ լոյսը վաղ առաւօսեան  
Սփռում էր ըողեր լեռների վերան,  
Մուր եւ լոռոքիւն պատում էր կրրկին  
Մի ակընթարթում մըռայլ դրդեակին:

Միայն Թերեկն էր Դարեալի խորեում  
Անդորրութիւնը խոռվում, աղմրկում.  
Ալիքի յետից ալիքն էր վազում,  
Ալիքն ալիքին հասնել էր ուզում:

Եւ տանում էին իրանց հետ արագ  
Նոքա ողբարով անմըռունց դիակ.  
Եւ մէկն այդ ժամին ներմակին տալով՝  
Զայնում էր հեռուից. «ա'խ, մընա՞ս բարով».

Եւ ժամն անջատման այնքան էր ֆընիյց,  
Եւ ձայնն էր հընչում այքան մեղմ-անյոյց,  
Որ կարծես կրրկին խոստանում լինէր  
Նոր տեսակցութեան հիացմունք ու սէր...

## ԱԼԻՔՆԵՐ ԵՒ ԽՈԿՈՒՄՆԵՐ

Յուզում է ծովն: Սսես, մի-մի հրսկայ լիռ,  
Գոռ աղմուկով խրոխ ու եռուն ալիքներ  
Նետում են ափ եւ նահանջում ուժասպառ.  
Ծովի խորքից ելք գտնելու տենչով վա՞ն...

Սակայն զո՞ւր է ալիքների այդ տենչանի.

Ծովից անջա՞ս՝ նորա չունին ո՞չ մի կեանի:

Յուզում է սիրտն: Անզուսայ, մըռայլ խոկումներ  
Խուլ աղմուկով, որպէս ծովի ալիքներ,  
Եռ են գալիս սըրտի խորունկ յատակում,  
Կուրծ մաշերով՝ ազաս մի ելք փափազում...

Սակայն զո՞ւր է, այ խոկումներ, ձեր տենչանի.

Սըրտից անջա՞ս՝ դո՞ւք էլ չունիք ո՞չ մի կեանի:

Ա. ՇԱՏՈՒՐԵԱՆ

## ՄԱՄՈՒԼԸ ԿՈՎԿԱՌՈՒՄ

Իր կոչման բարձրութեան վրայ կանոնած գրականութիւնը մի հզօր ոյժ է, որ խթանի նման առաջ է մղում ժողովրդի քաղաքակրթութիւնը: Իր նպատակին ծառայող մամուլը մի անյաղթելի գէնք է, որ միշտ պաշտպանում է լաւն ու բարին, դեղիցիկն ու ձմարիտը: Խսկ եթէ մամուլն ու գրականութիւնը ընկած վիճակի մէջ են, եթէ կորցրել են իրանց մաքրութիւնն ու վեհութիւնը, այն ժամանակ կատարեալ չարիք կը դառնան ժողովրդի զլիսին: Բայց երկու գէպքում էլ ինքը ժողովուրդն է իր մտաւոր, բարոյական ու նիւթական պահանջներով գրականութեանը որոշ առն և ուղղութիւն տուողը: Գրականութիւնը ընթացիկ կեանքի հայելին է, ուրեմն նրանով կարելի է չափնել այս կամ այն երկրի, այս կամ այն ազգութեան կուլտուրական վիճակը:

Իբրև օրինակ եթէ վերցնենք Եւրոպական ազգերն ու պետառութիւնները, այն ժամանակ կը նկատենք որ զրանցից իւրաքանչիւրի քաղաքակրթութեան աստիճանին համապատասխանում է նրա գրականութեան զարգացման աստիճանը: Նյուպէս միայն Գերմանիայում տպագրում են տարեկան մօտ 15,000,000 գիրք:

Պարբերական հրատարակութիւնները.

Անգլիայում	լոյս	են	տեսնում	6,500	հրատար.	*)
------------	------	----	---------	-------	---------	----

Գերմանիայում	»	»	6,000	»	
--------------	---	---	-------	---	--

Ֆրանսիայում	»	»	5,500	»	
-------------	---	---	-------	---	--

Ետալիայում	»	»	2,000	»	
------------	---	---	-------	---	--

Իտալիայում	»	»	1,500	»	
------------	---	---	-------	---	--

Աւստրիայում	»	»	1,300	»	
-------------	---	---	-------	---	--

Բուլղարիայում	»	»	900	»	**) )
---------------	---	---	-----	---	-------

\*) «Magasin d. Litteratur» 1900 № 7.

\*\*) Դանցից 91-ը լեհերէն, 49-ը գերմաներէն, 12-ը լատիշերէն, 11-ը էստոներէն, 7-ը վրացերէն, 6-ը ֆրանսերէն, 5-ը հայերէն և այլն:

Սպանիայում	»	»	994	Հրատար.
Բելգիայում	»	»	350	»
Հոլլանդիայում	»	»	310	»
Դանիայում	»	»	130	»
և այլն:				

Բայց պարբերական հրատարակութիւնների քանակը աւելի ճիշտ որոշելու համար պէտք է նկատի ունենալ բայց երկրի աղ-գարնակութեան թիւը, նաև այն՝ թէ իւրաքանչիւրից քանի օրի-նակ է լոյս տեսնում: Սյստեղ էլ նկատում է նոյն գրադացիան ինչ որ վերեւում, այսինքն քանակութեան աստիճանը համապա-տափանում է երկրի քաղաքակրթութեան աստիճանին: Այս-պէս օրինակ Պարիզի «Petit Journal» թերթը տպագրում է 1,000,000 օրինակ, Բերլինի «Local-Anzeiger» լրագիրը լոյս է տեսնում մօտ 300,000 օրինակ, այն ինչ Ռուսաստանի ամենաա-տարածուած թերթը միայն մի քանի տասնեակ հազար օրինակ-ներով է լոյս տեսնում: Անգլիայի «Macmillan u. C°.-ի» հրա-տարակած հեքիաթներից իւրաքանչիւրը տպագրուել է մօտ 1,027,000 օրինակ. «Richard Carvel» վէպը—մօտ 365,000, «The Forest Lovers» վէպը—մօտ 213,000 օրինակ, այն ինչ Ռուսաս-տանի ամենայայտնի, ամենատարածուած զրքերը միայն մի քա-նի հազար օրինակներով են լոյս տեսնում: Պարզ է որ այդ-պիսի տարբերութեան բուն պատճառը ընթերցանութեան պա-հանջի զանազանութիւնն է: Իսկ պահանջը կախուած է ժողո-վրրգի կուլտուրայից ու տեղական սօցիալական պայմաններից: Որքան բարձր է մի որ և է երկրի կուլտուրան, որքան մուծ է խօսքի և զրքի ազատութիւնը, նոյնքան էլ բարգաւած է ընթա-ցիկ մամուլն ու զրականութիւնը: Այս հարցում նկատելի գեր է խաղում նաև այն հանդամանքը, թէ մի որ և է երկրում նր-քան շուտ է սկիզբն ստացել պարբերական մամուլը և որքան նպաստաւոր պայմաններում է ընթացել նրա զարգացումը:

Առաջին պարբերական հրատարակութիւնը լոյս է տեսել հին հռովմայեցոց մէջ 49 թուականին, երկրորդը Զինաստա-նում—366 թ., իսկ ներկայ ազգերի մէջ այդ սկզբնաւորութիւ-նը տեղի է ունեցել հետևեալ թուականներին:

Ֆրանսիայում	.	1605	Թուականին.
Շուեցարիայում	.	1609	»
Աւստրիայում	.	1610	»
Գերմանիայում	.	1612	»
Անգլիայում	.	1622	»
Սպանիայում	.	1626	»

Շուեկիայում	.	1644	»
Ռուսիայում	.	1703	»
Հայերի մէջ	.	1794	»
Թիւքքիայում	.	1825	»
հայլն:			

Ինչպէս տեսնում ենք, քաղաքակիրթ երկրների շարքում՝ Ռուսաստանը վերջին տեղն է բռնում իր պարբերական մամուլի սկզբնաւորութեամբ։ Բայց նա անսախանձելի պատկեր է ներկայացնում նաև առհասարակ իր տպագրական գործի զարգացման տեսակէտից։ Ռուսերէն առաջին տպարանը հիմնուել է 1525 թ.։ Այդ օրից մինչև մեր օրերը անցել են երկար ու ձիգ տարիներ, զարեր, բայց այնուամենայնիւ տպագրուած երկասիրութիւնների քանակը դեռ չէ հասել ցանկալի աստիճանին։ Այսպէս օրինակ։

1880 թ.	տպագրուած	է	10,660	երկաս.	11,264	հատոր.
1890 »	»		14,849	»	15,820	»
1891 »	»		14,237	»	15,094	»
1893 »	»		15,683	»	16,371	»
1894 »	»		16,541	»	17,108	»
1895 »	»		17,895	»	18,365	» *)

Եթէ ընդունենք, թէ 1895 թ. Ռուսաստանում 125,000,000 ազգաբնակութիւն է եղել, այն ժամանակ գուրս կը դայ որ մի երկասիրութիւնը գալիս է  $\frac{125,000,000}{17,895} = 6990$  բնակչի.

այն ինչ արեմտեան Եւրոպայում, օրինակ Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում և այլն, այդ թիւը չափազանց անհամ է, այսինքն յւրաքանչյուր տարի լոյս տեսած երկասիրութիւնների քանակը անհամենատ մեծ է։ Անցեալ 1898 թուականին ամբողջ Ռուսաստանում եղել են 2812 գրավաճառանոց (366 Պետերբուգում, 219 Մոսկվայում, 183 Վարշաւայում և այլն) և 1,857 տպագրական գործարաններ, որոնցից 256 Պետերբուրգում, 212-ը Մոսկվայում, 143 Վարշաւայում, 50 Թիֆլիսում, 40 Բիդայում և այլն։

Այժմ գառնանք Ռուսաստանի «ծայրերից» մէկին—Կովկասին և տեսնենք, թէ ինչ պատկեր է ներկայացնում նրա տպագրական գործը։ Պէտք էր ենթադրել որ այդ մասին մի ամփոփ գաղափար կը տայ ներկայ ցուցահանդիսի «Մամուլի բաժինը», բայց այդ ենթադրութիւնը միանգամայն անհիմն կը

\*) «Россия въ концѣ XIX вѣка» стр. 903։

լինէր, որովհետև այդ բաժինն իր խառնիճաղանձ տեսքով, իր թափթփուկ իրերով ոչ մի մնունդ չի տալիս ոչ խելքին և ոչ եւ սրտին։ Երեակացեցէք մի ընդարձակ դահլիճ, որի պատերից կախված էն լուսանկարչական պատկերներ ու մի քանի թերթեր, որի մէջ տեղում շարուած էն մի քանի ողորմելի պահարաններ աւելի ևս ողորմելի տաղազրական նմուշներով և այն ժամանակ կը ստանաք ցուցահանդիսի «Մամուլի բաժին» կոչուող մասը։ Այդտեղ չը կայ ոչ կարգ, ոչ սիստեմ։ Այցելուն պիտի զիտէ ցուցազրած իրերի անպահոյժ տեսքը, պիտի նայէ նրանց մեռած տառերին և առանց մի որ և հասկացողութիւն կազմելու դուրս գայ, հեռանայ...

Այդպէս է այժմ, բայց բոլորովին այլ կերպ կը լինէր, եթէ ցուցահանդիսի վարչութիւնը հասկանար իր գործը և ջանք ու աշխատանք չը խնայէր իր պարտքը կատարելու համար։ Հարկաւոր էր նախօրօք վիճակագրական տեղեկութիւններ հաւաքել, թէ կովկասում ինչ լեզուով ինչքան զիրք է լոյս տեսնում, թէ երբ է սկսուել տպագրական գործը և ինչպէս զարգացել, թէ քանի պարբերական հրատարակութիւններ են լոյս տեսել և գաղգարել, թէ քանի գոյութիւն ունեն այժմ և իւրաքանչիւրից քանի օրինակ է լոյս տեսնում։ Այդ հարցերի պատասխանն ունենալուց յետոյ պէտք էր մի կողմում գասաւորել պարբերական հրատարակութիւնները, իսկ միւս կողմում զանազան լեզուներով լոյս տեսած զրբերի նմուշները՝ ժամանակագրական կարգով առաջդութիւնների համեմատ։ Դրանցից իւրաքանչիւրին կից պիտի լինէին բացատրիչ տեղեկութիւնները—ցուցակներ, զիտագրամներ և այլն։ Միայն այդ դէպքում «Մամուլի բաժինը» կ'ունենար որոշ արժէք ու կրթիչ նշանակութիւն, միայն այդ դէպքում նա կը կարողանար ցոյց տալ, թէ գրական տեսակէտից ինչ էր երկիրը առաջ և ինչ է այժմ։

Սակայն փորձենք մենք ինքներս լրացնել այդ պակասը։

Ինչպէս յայտնի է, ներկայում կովկասում գոյութիւն ունեղող թերթերից ամենահինն է «Կավեազէ»-ը։ Դեռ ոռւս-պարսկական պատերազմի ժամանակ, ոռւս կառավարութիւնը կարիք էր զգում պաշտօնական լուրեր հրատարակելու համար իր սեփական օրգանն ունենալու, գեռ այդ ժամանակ կոմս Պասկեվիչը պարբերաբար լոյս էր ընծայում զանազան պաշտօնական յայտարարութիւններ տեղական լեզուներով...

1828 թ. կոմսը կառավարութիւնից թոյլտւութիւն խնդրեց մշտական թերթ հրատարակելու։ Նրա ինդիրը յարգուեց։ Կառավարութիւնը բաւարարութիւն տաւեց վաղուց զգացուած կարիքին, հիմնելով «Տիֆլ. Բնեմոստի» պաշտօնական լրագիրը,

որ հէնց առաջին տարին 792 բաժանորդ ունեցաւ: Կարճ միջոցից յետոյ «Տիֆլ. ԵՇԴՈՒ»-ին սկսեց լոյս տեսնել երեք լեզուով՝ ռուսերէն, վրացերէն և թուրքերէն: Բայց նորահաստատ թերթը միայն հինգ տարի կեանք ունեցաւ. 1833 թ. նադադարեցրեց իր գոյութիւնը:

1836 թ. Կովկասի կառավարչապետ գեներալ Հեյգարդը հիմնեց աւելի լայն ծրագրով մի թերթ՝ «Յակավ. ԵՇՏՆԻԿ» վերնագրով: Նորից անցան տասը երկար ու ձիգ տարիներ և 1846 թ. սկսեց լոյս տեսնել «Կավկազ»-ը իրրե յաւելուած «Յակավ. ԵՇՏՆԻԿ» թերթի:

Նա իրրե քաղաքական-զրականական լրագիր մի կողմից օգտակար գիտելիքներ պիտի տարածէր կովկասեան ժողովրդի մէջ, իսկ միւս կողմից առաներին ծանօթացնէր անզական պահանջների և ազգաբնակութեան վարք ու բարքի հետ:

Այդ օրուանից անցել է 55 տարի, թերթը մի քանի անգամ անցել է արժանաւոր և անարժան խմբադրական ձեռքերից և վերջապէս հասել է իր ներկայ վիճակին:

Նա մինչեւ օրս ունեցել է 14 խմբադիր \*):

Շատ հասկանալի է, որ այդ աստիճան շուտափոխոխ խըմբագիրներ անցող թերթը երբէք չէր կարող մի որոշ ուղղութիւն ու գոյն տահապանել: Նա միշտ երեսուն վիճակ է ունեցել և իր խմբագիրների հայնցակէտի համեմատ միշտ փոփոխուել է: Բայց իր ամբողջ կեանքում «Կավկազ»-ը երբէք այնպիսի խոռվարար, այնպիսի միակողմանի ուղղութիւն չէ ունեցել, ինչպէս տիրահանչակ Վելիչկոյի ժամանակ...

Այժմ «Կավկազ»-ի բաժանորդագինն է 11 ռ. 50 կ. Թիֆլիսում և 13 ռ. գուրսօք: Նա լոյս է տեսնում 2300 օրինակ:

Ռուսաց միւս թերթերից առանձին բաժիններ ունեն «Խօսութեան»-ը 1600 օրինակ) \*\*), «Կավկազ. ԵՇՏՆԻԿ» ամսագիրը, (բաժանորդագինը 8 ռ., լոյս է տեսնում 1000 օրինակ), «Կավկազ. Սելյս. Խօս.» (շաբաթաթերթ, լոյս է տեսնում 620 օրինակ), «Արգոնատ» (շաբաթաթերթ, ամենօրեայ յաւելուածով) և «Տիֆլիս. Լիստօք» (օրաթերթ, բաժանորդագինը 6 ռ., լոյս է տեսնում 8000 օրինակ): Դրանցից իւրաքանչիւրը առանձին պահարաններում յուցագրել է իր հրատարակութիւններից աշքի ընկնող նմուշներ:

Առհասարակ կովկասում լոյս տեսնող պարբերական հրա-

\*) Տես «Ղազետա Կավկազ 1846—1901» դրագութեան:

\*\*) «Կավկազ. Կալենդար» 1901.

տարակութիւններից ամենատարածուածը «Տիֆլ. Լիստօք» օրաթերթն է, ուստի աւելորդ չենք համարում գէթ մի քանի խօսք ասել նրա անցեալի մասին \*):

Այդ թերթի հիմնադիրն էր երկրաշախական ճեմարանն ուսուրած մի պարոն՝ Բագասաւրով աղջանունով: Նա 1878 թուականից սկսեց հրատարակել թերթ «Տիֆլիսկի Օբъաւենիա» խորագրով, որ թէի ունէր մի քանի բաժիններ վրուն վերնագրով, բայց չունէր հետաքրքրի բավանդակութիւն:

Այսպէս օրինակ 1880 թ. № 1-ում «Հեռագիրներ միջազգային հեռագրական գործակալութիւնից» վերնագրի տակ միայն մի հեռագիր կայ, այն էլ և տողից բաղկացած: «Ծատրոն» վերնագրի տակ միայն մի թուցիկ յօդուած կայ գերասան Ազամեանի բենեֆիսի մասին, որ սկսւում է այս խօսքերով: «1879 թ. Դեկտ. 29-ը անջնջելի ու անմոռանալի կը մնայ հայկական թատրոնի վերածնութեան պատմութեան էջերում» և այն: Բայց աւելի տարօրինակ ու ծիծաղաշարժ էին այդ թերթու տպագրուող բանաստեղծութիւնները: Ահա մի նմուշ:

Для тебя готовъ съ кожею разгаться .

Изъ нея тебѣ сапожки сшить...

Для тебя готовъ отъ тѣла отдѣлиться

И мясо мясникамъ продать;

Для тебя я радъ раздѣлиться

Ноги, руки побросать,—оторвать.

Для тебя я зашиться готовъ!! Կալն:

Չը նայելով զրականական այդպիսի գոհարներին, այդպիսի բովանդակութեան, «Տիֆ. Օբъավ.» բաւականաչափ բաժանորդներ ունէր (1879 թ.—480, և 1880 թ.—560): Հրատարակութեան օրից 2 տարի անցած Բագատուրովը իր թերթը յանձնեց կաղարեան ճեմարանի ընթացաւարտ Սլիխանովին և այդպիսով «Տիֆ. Օբъավ.» մտաւ իր գոյութեան երկրորդ շրջանը (1880—84): Այդ շրջանում նա մի քիչ բարեկարգուեց և բաժանորդների թիւն էլ հասցրեց 800-ի:

Սլիխանովի մահից յետոյ թերթի իրաւունքը հրապարակական աճուրդով վաճառուեց Պոպօվին, որ 1885 թ. նրան վերամշրտեց «Տիֆլ. Լիստօք» անունով: Այդ շրջանում թերթը չափաղանց ընկած գրութիւն ունէր, ուստի բաժանորդների թիւն էլ աւելանալու վոխարէն իջաւ 700-ի:

Վերջապէս 1887 թ. «Տիֆլ. Լիստօք» անցաւ պ. Խ. Խաչատրովի ձեւքը և այդպիսով թեակոխեց իր ներկայ շրջանը: Եսոր խմբագիր-հրատարակիչը սկսեց ամեն ջանք ու ճիգ թա-

\*.) Տես «Տիֆլ. Լիստ. 1878—1901. Շամատկա» Ս. Տերեհանինա.

փեր, որպէս զի թերթը յարմարեցնէ ժողովրդի պահանջներին: Թերթի ծաւալը մնձացնելով, բովանդակութիւնը բարեկարգելով, նորանոր բաժիններ մտցնելով, նա կարողացաւ գրաւել մօտ 8000 բաժմանորդ, որոնց մնձամասնութիւնը թիֆլիսցիներ են:

Հայկական թերթերից առանձին բաժիններ ունեն.

1. «Մշակ» (տպագրւում է 2500 օրինակ) \*), որ ցուցադրել է իր հրատարակութեան առաջին տարուայ 1872 թ. № 1-ը, ներկայ տարուայ վերջին համարները և երեք ամբողջ տարուայ բոլոր համարները կազմած, այն է 1872 թ. երբ «Մշակը հրատարակւում էր շաբաթը մէկ անգամ, 1887 թ.՝ շաբաթը երկու անգամ և վերջապէս 1900 թ.՝ շաբաթը հինգ անգամ:

2. «Մուրճ» (տպագրւում է 800 օրինակ) ցուցադրել է իր նոր շրջանի բոլոր համարները:

3. «Աղբիւր-Տարագ» (տպագրւում են 900-ական օրինակ) առանձին պահարանում ցուցադրել է իր մի քանի յաւեւելուածները, պիեմիներն ու միւս հրատարակութիւնները:

և 4. «Թատրոն» (տպագրւում է մօտ 500 օրինակ) ցուցադրել է իր բոլոր գրքերը գեղակազմ:

Վրաց թերթերից առանձին բաժիններ ունեն հետևեալները՝

1. «Ճնօքիս Փուրցելի» (Տեղևկատու թերթ) օրաթերթը, որ լոյս է տեսնում 655 օրինակ, բաժանորդագինը 6 ռուբլի:

2. «Մօմբէ» ամսագիրը, լոյս է տեսնում 700 օրինակ, բաժանորդագինը 10 ռ.

3. «Իվերիա» (Վրաստան) օրաթերթը լոյս է տեսնում 1600 օրինակ, բաժանորդագինը 10 ռ.

4. «Զէջիլի» (Արտ) շաբաթաթերթը, որ լոյս է տեսնում 600 օրինակ և նրա յաւելուած «Կվալի» (մարդ) ամսագիրը, որ տպագրւում է 1000 օրինակ:

Ցուցահանդիսի վարչութիւնը աշխատել է Կովկասում լոյս տեսնող միւս պարբերական հրատարակութիւնների մասին էլ գաղափար տալ և այդ նպատակով մի առանձին պատի վրայ դասաւորել է բոլոր հրատարակութիւններից (թուով 51) միւմի օրինակ:

Հայերէն թերթերից այստեղ զետեղուած են նաև «Նորդարը» (լոյս է տեսնում 1100 օր), և «Արարատը» (լոյս է տեսնում 2500 օրինակ):

Ցաւօք սրտի պէտք է նկատել, որ այդտեղ գրքերի յա-

\*.) Պուերը վերցրել ենք «Կավկ. Կալենդարъ»-ից 1901 թ.

տուկ բաժին չը կայ, թէպէտ նա կարող էր չափազանց հետաքրքրաշարժ լինել այցելուների համար: Միթէ դժուար էր յատուկ պահարանում դասաւորել մի-մի օրինակ բոլոր այն գրքերից, որոնք լոյս են տեսել Կովկասում, գոնէ վերջին տարուայ ընթացքում... Բացի դրանից անհրաժեշտ էր ի ցոյց դնել նաև մի քանի նմուշներ անցեալից: ԶԵ որ ներկայ ցուցահանդէսը յօրելեանական է և պիտի բնորոշէ մեր երկրի առաջադիմութիւնը մի ամբողջ հարիւրամեակի (1801—1901) ընթացքում: Առանց այդպիսի նմուշների, առանց վիճակապրական տեղեկութիւնների երբէք չի կարելի գաղափար կազմել, թէ ինչ էր Կովկասը 100 տարի առաջ և ինչ է հիմա, թէ ինչ աստիճանի վրայ էր կանգնած նրա գրականութիւնն ու մամուլը առաջ և այժմ: Իսկ առանց դրան ցուցահանդէսը կորցնում էր կրթիչ նշանակութիւնը:

Վերջադաշտով մեր խօսքը մամուլի բաժնի մասին, աւելորդ չենք համարում մի քանի համեմատական թուեր առաջ բերել, որպէս զի ընթերցողը գոնէ մօտաւոր գաղափար կազմէ, թէ ինչ վիճակի մէջ է Կովկասի մամուլը:

Դեռ անցեալ 1892 թ. Կովկասում լոյս էին տեսնում ընդդամենը 34 պարբերական հրատարակութիւններ (21 ոռուերէն, 7 հայերէն, 5 վրացերէն և 1 ֆրանսերէն), այնպէս որ իւրաքանչիւր 235,000 հոգուն մի պարբերական հրատարակութիւններ գալիս, իսկ ներկայումս Կովկասում լոյս են տեսնում.

33 պարբ. հրատ. ոռուերէն \*)

9 » » վրացերէն

8 » » հայերէն \*\*)

1 » » ֆրանսերէն

Ընդդամենը 51 պարբ. հրատարակութիւն:

Ուրեմն իւրաքանչիւր պարբերական հրատարակութիւնը գալիս է  $\frac{9,248,695}{51} = 181,347$  բնակչի: Այդ թուերի ողորմելիութիւնը աւելի աչքի կ'ընկնի, եթէ համեմատենք մի որ և է քաղաքակիրթ երկրի հետ: Այսպէս օրինակ՝ Անդիայում մի պարբերական հրատարակութիւնը գալիս է միջին թուով 8,400

\*) Դրանց մեծամասնութիւնը զանազան հիմնարկութիւնների տեղեկութիւններ և արձանագրութիւններ են:

\*\*) Այսուել և նզագրական հանդէս, «Թատրոն» և «Լումալ» հանդէսներն էլ պարբերական հրատարակութիւն ենք համարում:

բնակչի, Գերմանիայում 8,335-ի, Ռուսաստանում 130,000 ըլլ-նակչի, ևայն:

Խոկ եթէ պարբերական հրատարակութիւնների թիւը համեմատենք իւրաքանչիւր ազգութեան թուի հետ, այն ժամանակ կը տեսնենք, որ մի հայերէն թերթը Կովկասում գալիս  
 $\frac{970,656}{8} = 121,322$  հոգու, մի ռուսերէն թերթը

$\frac{2,917,379}{33} = 88,105$  հոգու և մի վրացերէն թերթը  $- \frac{976,883}{9} =$

108,542 հոգու: Ուրեմն ամենից քիչ պարբ. հրատարակ. հայերն ունեն, բայց այդ երեսյթը երբէք չի կարելի ժողովրդի յետամացութեանը վերագրել: Դրա պատճառը բոլորովին այլ տեղ պիտի որոնել... Միւս ազգերից շատերը չունեն պարբերական հրատարակութիւններ, շատերն էլ բոլորովին դուրկ են գրականութիւնից, ուրեմն կուլտուրապէս աւելի ստոր աստիճանի վրայ են կանգնած:

Ահա այդպիսի ցաւալի պատկեր է ներկայացնում Կովկասի մամուլը, այդպիսի գեռափթիթ վիճակի մէջ է զանւում նրա գրականութիւնը, որ գեռ շատ ու շատ բաների կարիք ունի...

Ե. Թ.

## ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

43) «Վակ», գրական-բանասիրական ժողովածու Գ. Զահեսչանի  
լիտերատուրական ժողովածու, Թիֆլիս, 1901 թ., զինը 1 ռ. 50 կ.

Այս գիրքը բաժանուած է երկու մասի. առաջին մասում  
դետեզուած են գեղարուեստական գրուածքներ, իսկ երկրորդում  
գանազան յօդուածներ:

«Վակի» ոտանաւորների մէջ նոր մօտիւներ չը կան.  
Կրգուում են այնքան սովորական դարձած «ցոյսն» ու «վիշտը».  
Հիմնական մաքերը ննում են անփոփոխ («վաղ ուշ գարունը  
պիտ գայ», «աշխարհը փուչ է» ևայլն), փոխուում են միայն  
խօսքերը, համեմատութիւնները... Բացառութիւն կազմում է  
միայն Յովիհաննէս Թումանեանի «Պօէտն ու Մուգան»։ Այդ եր-  
գիծաբանական պօէմայի մէջ ինքնատիպ հումօրով շօշափւում է  
մեր հասարակական կեանքում մեծ նշանակութիւն ունեցող մի  
հարց. այն է որ մտաւոր ստեղծագործութիւնը բոլորովին չի  
գնահատուում հայերի մէջ։ Այդ հանգամանքի չնորհիւ մի ող-  
բերգական դրամա է ստեղծւում իսկական բանաստեղծի ձըգ-  
տման և հասարակութեան անտարբերութեան մէջ։ Ներքին ձայ-  
նը, ստեղծագործական պահանջը, մղում է բանաստեղծին դէպի  
մի կեանք, ուր ապրուստի, փողի հաշիւներ դոյցութիւն չունեն,  
մինչդեռ հացի ինդիրը, ընտանիքի հոգսերը, նրան ամեն օր յի-  
շեցնում են որ աւելի զօրեղ է իրական կեանքը իր առօրեայ  
հոգսերով։ Ուրիշ հասարակութիւնների մէջ երկնային կայծ  
ունեցողը, իսկական բանաստեղծը, այնպէս առատ է վարձատըր-  
ւում, որ կենսական հաշիւների մասին նա կարող է այլն չը  
հոգալ և անձնատուր լինել ստեղծագործութեան։ Այլ է հայկա-  
կան իրականութիւնը. բանաստեղծը պէտք է ամեն բոպէ մը-  
տատանջուի իր ապրուստի համար. նա պէտք է անիծի իր  
բախտը, որ բանաստեղծ է ծնուել և ոչ «կօմերսանո»։ Բա-  
նաստեղծի անձնական դժբախտութիւնը, իսկ հասարակութեան

բախմը հէնց նրանում է որ՝ ինչքան էլ ուզի իսկական բանաստեղծը երես շուռ տալ Մուսաներից—այդ նրան չի աջողութիւն նրա երգը կը գառնայ աւելի մաղձոտ, վշտալի, յոռենտես և ստեղծագործութիւնը աւելի պակաս չափով կ'արտայայտուի. սակայն հոգու հանգստութիւն չի կարող գտնել բանաստեղծը, թէկուզ նրան նշանակէք Բագուի կառավարիչների ոռծիկները, բայց պայման դնէք որ նա հրաժարուի Մուսաներից։ Հասարակական բնագգներ ունեցող ամեն մի գործիչ ընդունակ է բաւականանալ շատ համեստ անձնական բիւթէով. սակայն դըմբախտութիւնը այն է որ մեր հասարակութիւնը ոչնչի տեղ է դնում ամեն մի գործունէութիւն, որից նիւթական շահ չը կայ, ուստի այդ համեստ ապահովութիւնն էլ չի տալիս Այդ գիծն է շօշափում «Վտակի» մէջ տպուած և Մ. Նալբանդեանի նամակը։ «Հիւսիսափայլի» հոգին, նրա զարգը, վերջ ի վերջոյ ստիպուած էր «ծառայութեան» մասին հոգալ, որովհետեւ գրիչը չէր ապահովում նրա ամենահամեստ ապրուստն անգամ։

Անչ ինչ է ասում «Հիւսիսափայլի» այդ տաղանդաւոր հրապարակախօսը. «Գնում եմ Պետերբուրգ կանողիդատի քննութիւն տալու, որպէս զի մի արժանաւոր ծառայութիւն գտնելով, կարողանամ օրական ապրուստ ճարել և բժշկութիւնը շարունակել... «Հիւսիսափայլից» ձեռք վեր առի, ըստ որում մի ժանգոտ կոպէկ չեմ ստանում. ինչ հարկաւորութիւն ունեմ էշի նահատակ լինելու։ Այդ ինչ խելագարութիւն է, որ ես ուրիշից պարք առնեմ ապրեմ, «Հիւսիսափայլի» վրայ տիւ և զիշեր աշխատեմ, բայց «Հիւսիսափայլից» մի կոպէկ չը ստանամ. այդ որ գրքի մէջ գրուած է, Եւ որ մարզը, որ չունէ բնակարան, կերակուր և զգեստ, կարող է գործ կատարել և այն ձրի։ Մինչև այժմ ես զոհ եղայ. թնդ Աստուած ընդունէ այդ զոհը, բայց տեսնում եմ որ այսուհետեւ անկարելի է... Ես կարող եմ շատ աշխատել, բայց աշխատելու համար հարկաւոր են պայմանք, որ ես չունեմ... Գրիչս պիտի կոտրեմ և ձգեմ. միւս անգամ հայոց ազգի անուն տուած ժամանակները ես պիտի սիրտս խառնվի և փսխելիքս գայ... Ափսոս ինձ որ ես երեսցայ հայերի մէջ. մի, այլ ազգի մէջ երբէք այդ վիճակում գտանվելու չէի ես, անտէր և անօգնական, միմիայն յուսալով նախախնամութեան վերայ, որ կերակրում է և ճնճղուկները»...

«Վտակի» վիպական գրուածքների նիւթը,—բայցի Պ. Պոչեանի «Հինգերորդ Գինագիքը», որի մէջ նկարագրուած է քաղաքի (Ալեքսանդրապոլ) կորստարեր աղղեցութիւնը գիւղի (Աշտարակ) բարքերի վրայ, և Թիֆլիսի թշուառների կեան-

քից Բաշխնջաղեանի՝ «Բարերարներ» պատմուածքը — զլսաւորապէս թիւրքահայերի ներկայ ցաւալի վիճակին է վերաբերում։ Թեման, ինչպէս տեսնում էք, հին է, բայց միթէ կարելի է մեղազրել հիւանդին, որ նա անդադար իր ցաւից է գանգատում։ Հայութեան ամենամեծ ցաւը՝ Թիւրքիայում ապրող իր ստուար մասի գժախային դրութիւնն է, ուստի բնական է, որ մեր գրողները այնքան դրազւում են այդ խոր վէրքով։ Այդ գրուածքները գանգատ, ողք ու լաց է տանջուող սայայի։ Թշնամին սոսկալի է իր գաղանային անդութեամբ և ոյժով։ այդ պայմաններում միմիայն արդարութիւնը կարող է աղատել ճնշուածին։

Սակայն այլ ոդով է գրուած պ. Փափազեանի «Ըմբռուտ երգեր»։ զա նիշչականութիւնն է, սակայն հայկական անտաշ կնիքով։ Կարդալով այդ դրուածքը, յամենայն գէպս չի կարելի հիմնաւոր համարել հայասէր ի. Վեսելօվսկու կարծիքը, թէ «պ. Փափազեանը տալիս է նիշչէի տեսութիւնները մեղմելով և դուրս գցելով այն ամենը, ինչ նրան չափազանց խիստ և գէմընթաց է թւում և հակառակ հայ ընթերցողի պահանջներին» (եր. 387)։ Թնդ գատի ընթերցողը թէկուզ այս մի քանի կտորներից։

«Պարտականութիւնը մի ախոռն է, ուր էշեր են կապում կամ արածող և մորթելու սահմանած նախիր կուտակում։ Ո՞չ առիւծը կարող է ապրել այդ ախոռում և ոչ արծիւը։ Ցանկացիր մնապատ, բայց երբէք այդ ախոռը։ Պարտականութիւնը այն գերեզմանն է, ուր հոտում է ազատութիւնն, սէր և այլ բարձր յատկութիւններ...։ Պարտականութիւնը մի ջրազաց է, խոնարհած զլուխ, ուր փոշի են զամնում ձեռներէցութեան և անկախութեան ոգին...։ Եայլն։ Սարս մի քանի տող անց նիշչէի աշակերտը շարունակում է. «Ի՞նչն է որ կոչուել է առաքինութիւն։ — «Եղիր խոնարհ, համեստ, բարի, համբերող, Եղիր սիրալիր, երկանամիտ՝ և զու առաքինի ես»։ ... Իսկ ես ասում եմ. — «Կարեցէք այդ առաքինութեան հրէշաւոր զլուխը, շատ հաստացել է նա. Կարեցէք ուսները — շատ երկարացել է ու ծոմուել։ Կարեցէք անինայ։ Եղէք հպարտ, յանդուգն, եղէք նոյն իսկ չար, բարկացող, խիստ և կուտարար» եայլն։

Պարզ է որ այդ գայլային առաքինութիւնները շատ ձեռնտու է համիդական քրդերին, ինչպէս և Համիդին։ Իսկ «պարտականութեան» մասին այդ քարոզից յետոյ բոլորովին իզուր է «որբերի» մասին հոգալը, իսկ մեր հարուստները կարող են, իրանց նիշչական համարելով։ արդարանալ, որ չեն ուզում «էշեր լինել», այլ՝ «առիւծներ» ու «արծիւներ»... Մարդ ակա-

մայից մտաբերում է Արամաղդի և եղան մասին լատինական առածը...

Աւելի անմեղ է պ. Մինսս Բերբերեանի անհետելողականութիւնը: Այդ պարոնը «Վտակում» տպել է «Սմբատ Շահաղիզ» էտիւդը: Նոր մտքեր և լուսաբանութիւններ չը կան այդ յօդուածի մէջ, սակայն բնորոշ է մի հանգամանք: Ներկայումս «Նոր-Դարի» գաղափարների, մտքերի, համակրութիւնների և ճաշակի ամենաջերմ երկրպագու պ. Մ. Բերբերեանը մեր անցեալի մէջ երկրպագում է (աւելի ճիշտ կոկէտութիւն է անում) տըրամագծօրէն հակառակ մոտքեր, համակրանք և ճաշակ ունեցող զրական գործիչներին: Մի մարդ, որ չի ամաչում իր բարձրագոյն կրթութիւնից և պոսում է՝ «ի խաչ» հանել մի վարդապետի, որ յանդգնութիւն ունեցաւ հրապարակօրէն յարգանք արտայացտել «ուրացող» Միսիթարի յիշատակին, մի մարդ, որ փողոցային ամենափծուն և սրանց անձնական պատիւը չօշափող միմոսութիւններով լի մի թերթում զեկավարող ոյժի դեր է կատարում և տանում է զանազան Ֆիդարօնների բթամիտ կլունութիւնները, մի մարդ, որ աշխատակից է մի թերթի, ուր հայնոյանքների կոյտեր են թափել «Հիւսվափայլի» դործունէութիւնը շարունակող Գ. Արծրունու վրայ, յանկարծ ցոյց է տալիս իրան՝ նազարեանի, նալբանդեանի և զրանց չկօլայի անձանց ջատագով և գաղափարակից... Կրօնական անհամբերողութիւն—և նազարեան, փողոցային միմոսութիւններ—և նալբանդեան՝ Հետաքրքրական է իմանուալ այդ «կրիտիկոսի» վերաբերմունքը և դէպի Խ. Պատկանեանը: Երեկ նա բանաստեղծի կենդանութեան ժամանակ «Փոստվին» Աւագների» թունդ պաշտպանն է եղել, իսկ նրա մահից մի քանի տարի անց գուցէ և փառաբանողը լինի Սիւլիւկի կծու, անհաշտ և խիստ մտրակողական լեզուին...

Ողորմելի ուղղութիւն, ողորմելի համոզմունքներ, որ փոփոխուում են ըստ հանգամանաց»...

«Վտակի» երկրորդ բաժնի յօդուածներից ուշագրաւ է պ. Վ. Սուրէնեանցի «Հայ ճարտարապետութեան տեղը գեղարուեաստի պատմութեան մէջ»: Այս բաժնում զետեղուած յօդուածների մեծ մասը դժբախտաբար գրուած է ճապաղ ոճով, ուստի հետաքրքրութեամբ չեն կարգացւում:

44) Վննական պատմութիւն ԺԹ-րդ դարու հայ դպրութեան։ Գրեց Միհրան Ցովհաննէսեան։ Փարփ, 1901։ Մեծաղիք եր. 123, գինն է 5 գր.

Մեծահնչիւն և մեծախոստ վերնագիր ունի գիրքը, բայց բովանդակութիւնը վերին աստիճանի զարտակ և ողորմելի է։ Հեղինակը կարծես հին, խալֆայական դպրոցի աշակերտ լինի իր հայեացքներով և ուղղութեամբ։ Ժամանակակից հասկացողութիւնը թէ ընդհանուր գրականութեան և թէ մեր ազգային գրականութեան մասին՝ բացակայում է նրա մէջ։ Քննել ու հերքել հեղինակի միջնադարեան կարծիքները՝ զուր ժամավաճառութիւն կը լինէր. աւելի լաւ է, ճաշակ տալու համար այս «քննական պատմութեան» մասին՝ մի քանի նմուշներ բերել նրա տեսութիւններից՝ ընդհանուր և ազգային գրականութեան վերաբերեալ զանազան հարցերի մասին։

Հեղինակը պատմելով որ Տաճկաստանում հայ մամուլը սկզբում հնթարկուած էր պատրիարքարանի հսկութեան, բայց յիսնական թուականների մօտ հետզհետէ դուրս եկաւ այս հսկութիւնից՝ ցաւ է յայտնում մամուլի այս «կեղակարծ, տարադէպ և կանխահաս արձակման» պատճառով, որի հետեանքն եղել են իբր թէ «խօսական պայքար մը, զառանցող գործունէութիւն մը, լպիրը գրութիւններ», որոնք «խառն ի խուռն դուրս թափեցան շղթայագերծ, դիւային մամուլին տակէն», և իբր թէ այս «գրական զեղծումները կանխելու մտօք նախնական գրաքննութիւն ալ հաստատուեցաւ» (եր. 20—21):

Հեղինակը անյարմար է համարում, «որ աշխարհական մը Քրիստոնեական և Սրբազն պատմութիւն գրելու ձեռնարկէ» (եր. 56), և չէ տրտմում «թէ ինչու անցեալ դարէ մնացած 3000 (?) տեսակ արձակ հրատարակութեանց 2000-ը կրօնական նիւթերու գրայ կը ճառեն» (եր. 54):

Հեղինակը կարծում է, թէ 1834 թուականի մօտերը «աշխարհաբարը կ'երկծզի և կը ձեացնէ արևելեան և արևմտեան աշխարհաբարները»։ Սրա պատճառն այն է եղել, որ «քաղաքական դէպքերու բերմամբ 1828-էն մինչև 1844 էջմիածնայ կաթողիկոսին անունը չը միշտակուեցաւ Թիւրքիոյ հայ եկեղեցեաց մէջ, ինչ որ (իբր թէ) կը բայցատրէ Արարատեան լեզուի առանձին մշակութիւնը» (եր. 34):

Հեղինակը անպայման հակառակորդ է թարգմանութիւնների. նա յայտարում է. «Բանսասիրութիւնը թող անգամ մըն ալ արձակէ իր վճիռը անդարձ և անյեղի, այս, մէկ տող հեղինակութիւն աւելի կ'արժէ քան հազար հատոր օտարէ փոխա-

ոռւթիւն» (եր. 99): (Մեր ընթերցողների մաքերը թող չը գայթակին։ բանասիրութիւնը այդպիսի յիմար վճիռ երբէք չէ արձակել. «բանասիրութիւն» բառը, որ մի յարգելի մասնազիտութեան անուն է՝ հեղինակը շփոթում է իր անձի հետ. փոխանակ ասելու «ես» կամ «մենք»՝ նա, երեխ համեստութեամբ, ասում է «բանասիրութիւնը»։ Այսպէս օրինակ. «բանասիրութիւնը կ'օգտուի Տէր Մեսրովի յայտարարութենէն... բանասիրութիւնը չէ յաջողած ցանկել քերականութիւններն» (եր. 44), փոխանակ ասելու՝ «Մենք օդուեցինք... մեք չը յաջողեցանք» և այլն):

Բայց այնու ամենայնիւ հեղինակը զիջում է անում իրականութեան, այսինքն մեր գրական չքաւորութեան, որը գարմանելու համար հարկ է դիմել փոխառութեան. միայն թէ թարգմանելու նիւթը պէտք է առնել արեելեան ազգերից—պարսիկներից, արաբներից և թիւրքերից, և ոչ թէ եւրոպացիներից։ Մենք չենք այլայլում հեղինակի միաբը. նա բառացի այսպէս է ասում. «Եթէ մեր գրական չքաւորութիւնը պէտք է դարմանել օտարէ փոխառութեամբ՝ ալ ի՞նչ կը նշանակէ այնքան հեռուները թափառել (եւրոպական գրականութեան). մօտը, մեղ աւելի մօտ, մեղ հետ կող կողի ապրող, մեղ գրացի ազգերու գրականութիւնը կայ զոր անտես ըրած ենք... Այն, եթէ փոխառութիւն ընկել պէտք էր՝ իրազեկները կը ձայնակցին բանասիրութեան հետ (կարգացէք՝ մեզ հետ) յայտարարելու համար թէ մեր ու շագրութիւնը դէպի լուսաշող արեելք գարձնել մոռցած ենք» (եր. 99—100): Ապա ըերում է մի շարք պարսիկ, արաբ և 8 թիւրք հեղինակներ, որոնք անհրաժեշտ էր թարգմանել հայերէն։

Հեղինակը զգուշացնում է գրական միջակութիւնից, նրանից լաւ համարելով ստորութիւնը. Շեղու մը, ասում է նա, փանալու մէկ վտանգ մը ունի, այն է միջակութիւն. և յաջողելու երկու միջոց ունի—ստորնութիւն կամ վսեմութիւն։ Այն, բանասիրութեան (կարգացէք՝ մեր) այս կարծիքը տարօրինակ թող չը թուի ընթերցողաց» (եր. 123):

Հեղինակը այսպէս է զանազանում հանճարը տաղանդից. «Հանճարը չի քծնիր, չի շողոքորթեր, անուս կրեսոսի մը գարպաս ընել (faire la cour) չի գիտեր. . . Տաղանդը միշտ կը փորձէ հանճարին դիրքը գրաւել, իր ճկուն ձեւերով, իր փաղաքոյց լեղուով կը հրապուրէ զինք վարձատրելու կարող մարդիկ և կը ջանայ հանճարը ներկայացնել իբրև մենամոլ, եսասէր, արտակերոն գոռող, մինչեւ որ յաջողի զայն մեկուսացնել» (եր. 114): Այնպէս որ հեղինակի կարծիքով՝ տաղանդը այն է, ինչ որ մենք

անուանում ենք զրական սրիկայ, պնկալէզ զրպարտիչ և այլն:

Հեղինակը ամեն ինչ վարդագոյն է տեսնում հայոց մէջ, և նա ներբողում է ամեն ինչ և տմեն քայլափոխում: Ներբողում է Կ. Պօլսի հայոց հին պատրիարքներին այնպիսի մեծագործութիւնների համար, որոնց էութիւնն է՝ չարագործութիւն չանելը (եր. 12): Ներբողում է հայերէնը, որ, նրա ասելով՝ «չափէ, կիռէ, քանակէ անցուած ծաղկալից ծաղկաւէտ լեղու մըն է» (եր. 14): Ուրեմն ինչ զարմանք, որ նաև «ամեն հայ ներգանակութեան համար ծնած է, ամեն հայու ականջին ընտանի հրեշտակ մը մեղեգիներ կը փսփսայ... ինչ տաքուկ սիրտ կը բարախէ ամեն հայու կուրծքին տակ, ինչ խանդ, ինչ հրագուն ոգի, իր վեհ ճակտին ետի բոյն զրած է «երիակայութիւնը մը»... (եր. 57) Ներբողում է հայոց զրականութիւնը և սորտի բերկրութեամբ կը հաստատէ, թէ բարոյական սեռի զրականութիւնը իր կատարելութեան հասած է ի մեզ» և իբրև միակ ապացոյց այս կատարելութեան՝ անուանում է մի զիրք, որը կարգացողը կը տեսնէ «թէ ինչպէս մեր փառապանծ կայսրը՝ երջանկայիշատակ Դազի Սուլթան Մահմուտ խան, իր առատ չնորհներով ձոխացուց իր անձնուէր հպատակները» (եր. 104) \*): Ներբողում է և հայ հեղինակներին՝ բաւականաչափ «ինքնարոյս, քերթողական, բնատիպ, եզական» հանձարներ գտնելով նրանց մէջ, և այնպիսի անհամաչափ գովեստներ շուշլելով, որ գովուածը կարդալիս պէտք է կարմրի: Օրինակ. «Ս. Պալասաւեան.—Մեր պատմութեան մէջ քննադասութեան ողին մտցուց և իմաստափրութեան լոյսով հետազոտեց մեր անցեալը. նաև մեր արևելեան աշխարհաբարը սերտեց իր ամեն երեսթներուն մէջ»: Գ. Խալաթեան. —Լազարեան ճեմարմնի արժանաւոր պարծանք, յայտնի հեղինակ, հմուտ հայագէտ և իմաստափրող ճակատ: (եր. 117): Եւ այն:

Ուրիշ օրինակներ բերել աւելորդ է: Այսպանն էլ բաւական է հասկանալու համար, թէ ինչ կարող է լինել այսպիսի հայեացքներ ու պատրաստութիւն ունեցող մի հեղինակի զրած «քննական պատմութիւնը»: Յիրաւի, այս զիրքը ոչ զրականութեան պատմութիւն է, ոչ քննական է, ոչ 19-րդ դարին է պատկանում և ոչ հայ գրականութեան. սա ժողովածու է խակ ու սիալաշատ զատողութիւնների զրական զանազան խնդիրների մասին, բազմաթիւ անտեղի ու թերի ցանկերի, ինքնադոն ներբողների ու ինկարկութեան: Այստեղ ընթերցողը կը գտնէ

\* ) Ցիշեցնում ենք զարձեալ, որ գիրքը տպուած է Պարիզում և ոչ Բէ Կ. Պօլսում:

հին շարականների տաղաչափութեան մասին «քննութիւն», Ամերիկացոց 1895 թուին տպագրած հայերէն գրաբար Աստուածաշունչի տառասխանների ցանկ, բողոքական հայերի հոգեոր տաղարանների լեզուի ու տաղաչափութեան մասին «քննութիւն». ճարտասանութեան ու տրամաբանութեան օդուտների մասին խորհրդագրութիւն. մի բանաստեղծական նկարագրութիւն գեղջուկի ու գեղջկուհու սիրային կեանքին. մանրամունք յիտատներ զանազան հայ հեղինակներից՝ ժամանակագրական կարգով դասաւորուած, հայ հեղինակների անունների ցանկ՝ խրագանչիւրի մօս դրուած նրա ատտեսատը՝ «բանասիրութեան» ստորագրութեամբ, և այլն Եւ այս բոլորը առանց մի ներքին տրամաբանական կապի, խառն ի խուռն, պակասաւոր ու խակ և սրանց ամենամեծ մասը ոչ մի գործ չունի հայոց 19-րդ դարի գրականութեան քննական պատմութեան մէջ: Խոկի ինչ որ այսպիսի մի գրուածքի խսկական նիւթը պէտք է կազմէր՝ այն բացակայում է ամբողջապէս, կամ եթէ բերուած է՝ միայն ծաղր կարող է շարժել: Օրինակ, երրորդ գլուխը վերնագիր ունի «Գրական գեղծումն»: Ո՞վ չի հետաքրքրուի կարգալու, թէ մեր անցեալ դարի գրականութեան մէջ ինչ գեղծում է նկատել հեղինակը: Սկսում էք կարդալ հետաքրքրութեամբ, բայց ձեր հետաքրքրութիւնը հետզհետէ տեղի է տալիս հիամթափութեան, զայրոյթի, վերջապէս ծիծազի: Երեսակայեցէք. մեր անցեալ դարի գրականութեան գեղծումն այն է, որ շատ անդամ հեղինակները իրանք գրքերի կամ յօդուածների տակ չեն գրել իրանց անունները... Այս երեսյթը սարսափելի մտահոգութիւն է պատճառել հեղինակին, և նա, իր սովորութեան համաձայն, երկու ցանկ է պատրաստել՝ իր ասածը հաստատելու համար: Նա ասում է. «բանասիրութիւնը կը հիմնուի (կարդացէք մենք կը հիմնուենք) մանրակրկիտ քննութեան մը վրայ հաստատելու համար թէ նախորդ դարու մէջ մեծ ու պըզտիկ երեք հարիւր կտոր հրատարակութիւն եղած է առանց անոնց հայերէնը պատրաստողներուն անուան» (եր, 22): Այս գրական գեղծումը դատապարտելով հանդերձ «բանասիրութիւնը» թոյլ է տալիս և օրինաւոր է համարում կեղծանուն կամ ծածկանուն գործածել. այնպէս որ, նրա տրամաբանութեամբ, եթէ մէկը մի դիրք տպագրէ առանց վրան անունը դրելու՝ գրական գեղծումը կը կատարէ, խակ եթէ մակագրէ, օրինակի համար, «Անծանօթ» սա օրինաւոր կը լինի և թոյլատրելի է:

Հեղինակը «այ դպրութեան» քննական պատմութիւնն է գրում, բայց նրա գրքում բացակայում է մեր հայերէն գրականութեան կէսը, կարելի է ասել՝ լաւագոյն կէսը, այսինքն

արենելեան կամ ոռուսահայոց մատենագրութիւնը։ Եթէ հաւաքենք այն բոլորը, ինչ որ առուած է ոռուսահայոց լեզուի, գրականութեան և հեղինակների մասին՝ բոլորը հաղիւ թէ 2 երես տեղ գրաւեն, այն էլ ցրուած զանազան տեղեր ու կցկտուր։ Մինչդեռ մի կողմից «քանասիրութիւնը» յայտնի գրկանք մը ըրած պիտի ըլլար եթէ մոռնար յիշատակել Ա. Փանոսեան, Վ. Մալէզեան, Յ. Սեթեան որ ճոխ հանգերու սիրուն նիւթը կ'ընեն այնպէս որ շատ անգամ իմաստը տողերուն ծայրը կը բերէ հարուստ նմանավերջութիւններ առանց բռնայանգ կաղմելու. ինչպէս՝ լուսահեր—կը սահէր, նարօտի—կարօտի» ևայլն (եր. 94)։ միւս կողմից Գամառ-Քաթիպսն միայն երկու տողի է արժանանում. մի տեղ հետեւեալ կերպով։

«Ո՞վ ախորժելով չի յիշեր Պատկանեանի՝ «Վարդի թուփեր թող բումնինը» \*), Շահազիզեանի՝ «Կենացս գարունն էր գեռ»-ը և ևայլն (եր. 93). մի անդամ էլ այսպէս. «Ուրեմն բանասիրութիւնը ուրախութեամբ կ'արձանագրէ Սայաթ Նովա, Գամառ-Քաթիպս, Շահիր Խաչատուր, Աշուղ Շիրին, Աշուղ Զիւանի և Խելօք Կարապետ անունները...» Գամառ-Քաթիպսն, և աշուղների շարքում, Շահիր Խաչատուրի կողքին—և այս՝ հայոց գրականութեան քննական պատմութեան մէջ. . . ։ Եոյն պատիւն ու նշանակութիւնն ունեն այս գրքում նաև Խաչ. Աբովեանը, Ռաֆֆին, Ա. Շահազիզեանը, Գ. Սունգուկեանը, Պ. Պոօշեանը, և սրանք դեռ փառք պիտի տան, որ գոնէ յիշուած են. հապանչափ թշուառ ևն Ստ. Նազարեան, Միք. Նալբանդեան, պրօֆ. Պատկանեան, Ղ. Աղայեան, Աղ. Երիցեան և շատ նորագոյն հեղինակներ, որոնց անունն անդամ չը կայ այս «քննական պատմութեան» մէջ, որտեղ սակայն Միքաղաքայի հրոշակուած է իրեր և վառվուն երեակայութիւն, մշակուած միաք, քերթողական հանճար»։

Մէկ խօսքով՝ այս գիրքը մի ասպարէզ է, որտեղ մրցում են տգիտութիւնն ու յանդկնութիւնը, ներբողն («տաղանդ») ու ստորնութիւնը («յաջողութեան միջոց»), և ընթերցողը չը գիտէ, թէ այս յատկութիւններից որին տայ առաջին մրցանակը: Բայց աւելի ցաւալին այն է, որ այս գիրքը պատրաստուած է «մասնաւոր յանձնարարութեամբ «Բանասէր» հանդիսի խմբագրութեան», «յանմոռաց յիշատակ Միքիթար Աբրահօր», ինչպէս խոչոր տառերով տպագրուած է Զօնի մէջ, \*\*\*) և նախապէս տպա-

\*). «Արաքսի արտասովքը» բանաստեղծութեան միջի տողերից մէկը երեկի հեղինակը վախեղել է Պարիզի գրաքննութիւնից։

\*\*). «Մշակի» մէջ էլ պ. Բասմանեանը («Բանասէրի» հրատա-

գրուել է «Բանասէրի» էջերում։ Եթէ մի անփորձ, անպատրաստ մարդ ձեռնարկում է գրել իր չը գիտցած, չը հասկացած հարցերի մասին՝ այս ներելի և հասկանալի է—յանդզնութիւնը հէնց տգիտութեան հետեանք է.—բայց աններելի և անհասկանալի է այսպիսի անմիտ ու տղայական գրուածքը զետեղել մի մամնադիտական հանդէսի մէջ։ Ի՞նչ կարծիք պէտք է կազմենք մի խմբագրութեան քննական կարողութեան մասին, որ իր հանդէսում տեղ է տալիս այսպիսի խակութիւնների։ Ահա այս ցաւալի երեսյթն էր պատճառը, որ մեզ զրդեց մի քանի խօսք նուիրել «Քննական պատմութեան»—ուրիշ կողմից՝ նու արժանի չէր ոչ մի ուշագրութեան։

ԱՅ. ՄԱԼԻՍ. ՍԵԱՆՑ

45) ՏԵՐ-ՂԵՏԻ ՊՆԿԵԱՆ ՆԵՐ. Մայրենի լեզու. Ա. տարի. Թիֆլիս  
1900 թ. 26-դ տիպ. 35 կ.։

Այս դասագիրքը արդէն 26-դ տպագրութիւնն է տեսել։ այդ նշանակում է թէ նա կամ մեծ տաղանդով է կազմուած և կամ ուրիշը չեղածի համար է այդչափ տարածուած։ Բայց թէ նա շատ անջնորհք է կազմուած, այդ գիտեն բոլոր այն ուսուցիչները, որոնք փոփր ի շատէ ծանօթ են նոյն կարգի ոռւս դասագրքերի հետ։ ուրեմն աւելի ճիշտ է ասել, թէ նա՝ «ուրիշը չեղածի համար է տարածուած»։

Ուսւսաց դասագրքերի միջից վերջին ժամանակները յարձակումների են ենթարկում իլլովայսկու «Պատմութեան» դասագրքերը։ իրար ետեից դուրս բերուեցան նրա պակասութիւնները իբրև դասագիրք մանկավարժութեան տեսակէտից, և ապա՝ պատմական գիտութեան։ ակնյայտնի եղաւ որ այդ գրքերը, որ մի քանի տասնեակ հրատարակութիւններով գործածուել և գործածում են նոյնպէս տասնեակ տարիներ, վաղուց է որ պէտք է դուրս գցուեին դասագրքերի շարքից, բայց գործածուել են միայն ուրիշները չեղածի պատճառով։ Այժմ իրար ետեից դուրս էն դալիս նոյն կարգի դասագրքեր աւելի ու աւելի համապատասխանող թէ մանկավարժութեան և թէ գիտութեան։ իլլովայսկին աստիճանաբար հեռանում է ասպարիզից։

ըսկիչը) վկալում է որ ինքը այս գիրքը իր և հեղինակի անոնից նուիրել է Մխիթարեան մխարանութեան՝ երկու հարիւր ամեայ յորելեանի առիթով։

Նոյն վիճակին պէտք է արժանանայ իմ համոզմունքով և նիկ. Տէր-Ղեռնդեանի «Մայրենի լեզուն», մանաւանդ նրա Ա. մասը, և որքան չուտ, այնքան լաւ:

Այդ գասագրքի պակասութիւնները ցոյց տալու համար բաւական է կանգ առնել մի քանի էական կէտերի վրայ: Ակը-սենք այրբենական մասից.

Նախ՝ տառերը անցնելու կարգը շատ անաջող է ընտըրուած. օրինակ՝ երրորդ դասից արդէն տղայքը պէտք է անցնեն ջ, բ տառերը: Ապա ամեն մի տառը անցնելուց յետոյ վարժութեան նիւթ ևն տրւում միայն առանձին բառեր, այնինչ անհրաժեշտ է աստիճանաբար վարժեցնել նրանց՝ առաջ կարծ և ապա աւելի երկար նախադասութիւնների վրայ, որպէս զի յետոյ, երկրորդ մասում, կարողանան առանց դժուարութիւնների դիմել յօդուածների ընթերցանութեան: Ի՞նչ դուրս կը դայ, եթէ աշակերտները սեպտեմբերի մէկից մինչև գեկտեմբերի 20-ը, ամբողջ 4 ամիս, կարդալու նիւթ ունենան միայն «ուշ, նուշ, չուն, սագ, սա, աս, ըշ, ըն, նը, հաւ, նաւ, լաւ...»: Ամենապարզ կանոն է, որ ամեն բան ուսուցման գործումը պէտք է աստիճանաբար գնայ՝ հեշտից դժուարը, պարզից բարզը. իսկ այս դասագրքի մէջ տղայքը ինչպէս սկսել էին տարուայ ծայրից միավանակ, երկալիանակ, եռավանակ բառեր կարդալ, այնպէս էլ շարունակում են մինչև տարուայ կէսը, որպէսզի ապա առանց աստիճանաբար նախադասութիւններու մէկից սկսմն կարդալ առանձին յօդուածներ: Թէ այդ նրբան դժուարութիւններ է առաջնում, այդ ամեն մի ուսուցիչ դիտէ:

Ամեն մի տառը անցնելուց առաջ դասարանում մշակւում է մի բարոյակրթական հէքիաթ, որի գործուզ անձանց անունների միջից դուրս է բերւում նոր տառը. շատ սրամիտ է, չէ... Այդ միջոցով մատաղ սերունդը համ բարոյական դաս կը ստանայ, համ էլ անձանօթ տառը անցնելը հեշտ կը լինի, թէ ինչ, չը գիտեմ արդէն: Ես մինչև այժմ չեմ հասկացել այդ «արամիտ» միջոցի օգուտը: Ի՞նչ հարկ կայ տառը անցնելը միացնել բարոյակրթական դասի հետ: Բարոյակրթութիւն ասի. բայց ինչ տռանձին բարոյակրթութիւն կայ «Փիզ և Քոթոթ», «Սագն ու Բաղը» և ուրիշ հէքիաթների մէջ:

Դիմենք առաջին ընթերցարանին. ամենաառաջ մարդու աչքին է ընկնում առարկայական դասի համար յատկացուած նիւթի չափազանց, այն, չափազանց հարստութիւնը: Այստեղ կայ մի լրիւ մարդաբանութիւն, կենդանաբանութիւն, բուսաբանութիւն, հանքաբանութիւն, էլ որ մէկը ասեմ: Կարելի բան է արդեօք, որ 7—8—9 տարեկան մանուկը իր ուսման առաջին

տարին այդ ամենահարուստ նիւթը անցնելուց յետոյ յիշէ, թէ ինչ է բիբը, սառնատեսակը, դաստակը, բազուկը... Եթէ ոչ, ուրեմն ինչ հարկ կար այդ ամենը կոխել դասագրքի մէջ. լաւ չըր լինի արգեօք դրա տեղ ընդարձակել կարդալ-գրել-պատմելու յատկացուած առակների և հեքիաժների թիւք. չէ՞ որ ամբողջ դասագրքի մէջ միայն մի «Պառաւն ու այծը» կայ և մի «Ուկան ու գայլը», իսկ մնացեալը բոլորովին անպէտք մանկական դասագրքի համար՝ թէ լեզուի և թէ բովանդակութեան կողմից:

Այս մասումն էլ համարեա չը կայ աշակերտների ինքնուրոյն աշխատութեան համար նիւթ. իսկ այս անհրաժեշտ է, որովհետեւ սովորական, անխուսափելի երևոյթ է ծխական դըպրոցներում մի սենեակի մէջ երկու բաժանմունք մէկտեղ լինելը:

ՀԱՅ.

**ԱՅ) Յ. Արարագեանց. Մայրենի լեզու Ա. տարի. Ալեքսանդրապոլ 1901 թ. 30 կ.**

Այս դասագրքի մէջ էլ համարեա ոչինչ չը կայ աշակերտների ինքնուրոյն աշխատուանքի համար. միայն ամեն մի դասից յետոյ զնում է 4—5 բառ պակասորդ կամ խառն շարուած տառերով, որ աշակերտները պէտք է լրացնեն իրանք. այս է, սրանից զատ ոչինչ:

Սրա միակ առաւելութիւնը նիկ. Տէր-Ղեռնդեանի դասագրքից այն է որ ծ-րդ դասից աստիճանաբար աւելացող քանակութեամբ նախադասութիւններ են դրուած, որ ի հարկէ հեշտացնում է առանձին բառերի ընթերցանութիւնից յօդուածների անցնելը:

Երկրորդ մասում պատահում են նոյն յօդուածները, ինչ որ ունի Ն. Տէր-Ղեռնդեանի գիրքը, միայն փոփոխութիւններով: Զի կարելի առել, որ այդ փոփոխութիւնները միշտ յաջող նն. օրինակ՝ Ն. Տ.-Ղ.-Ռ. «Պառաւն ու այծը» անհամեմատ աւելի զեղցիկ է գրուած: Պ. Արարագեանցը իր մօտից աւելացրել է մի քանի յօդուած: Շատ ավասոս որ խնամք տարուած չէ Բ. մասի վրայ. պէտք էր նրան ճոխացնել փոքրիկ առակներով և պատմուածքներով, որոնք այնքան շատ են թէ հայ և թէ ոռւս գրականութեան մէջ և որոնք աւելի մօտ են մանկական սրտին ու հասկացողութեան, աւելի սիրելի, քան թէ կենդանիների, հանգերի, բոյսերի, տարուայ եղանակների ու ամիսների չոր ու ցամաք ցանկը:

ՀԱՅ.

47). З. АВАЛОВЪ. Присоединение Грузии къ Россіи, Спб., 1901, VIII+  
305 стр. 8°, ц. 1 руб. 50 коп. (2. Ավալօվ—Վրաստանի միացումը Ռուսաստանին. Պետերբուրգ, 1901թ.):

Վրաստանի միացումը Ռուսաստանին, որի հարիւրամեակը ամսուեց անցեալ սեպտեմբերի ամսի վերջերում, ունի շատ հարուսա ու մեծ գրականութիւն։ Այդ պատմութիւնը զրել են թէ ուսուները և թէ վրացիները. այդ պատմութիւնը ուսումնասիրելու համար կան պաշտօնական բազմաթիւ տեղեկութիւններ, որոնք հրատարակուած են։ Զանց անելով անթիւ մանր մունր գրուածքները, կօմպիլիացիները, որոնք լոյս տեսան թէ հարիւրամեակի ընթացքում և թէ մանաւանդ ներկայ յօբելեանական տարում, մենք այստեղ կը յիշատակենք միայն Դուքքօվինի աշխատութիւնները, որոնք մինչև այժմ էլ ամենամանը բամանական աղբիւրներն են Վրաստանի միացման պատմութեան համար, ինչպէս նաև Պօտտօի յայտնի «Հայաստանի Վոյնա» աշխատութիւնը, որ թէն մասնաւոր նպատակ ունի, լոկ պատերազմական գործողութիւններն է նկարագրում, բայց չօշափում է և շատ քաղաքական հարցեր, որոնք առաջ բերին այդ պատերազմները:

Բայց այդքան առատ ու հարուստ գրականութիւնը մի շատ աչքի ընկնող պակասութիւն ունէր նա տալիս էր միայն փաստերի զասաւորութիւն, պաշտօնական բնաւորութիւն էր կրում, բացատրում էր պատմական նեղելութիւնը միանգամբ ընդունուած տեսակէտից։ Կարգալով բազմաթիւ նոր հրատարակութիւնները, գուք տեսնում էիք նրանց մէջ միայն նոյն մըտքերի, նոյն հայեացքների կրկնութիւններ։ Թէ ուսւ և թէ վրացի հեղինակները չեն մանում պատմական իրողութիւնների խորքը, չեն վերլուծում նրանց գննագատօրէն։ Ընդհակառակն ուսուները, կարծես խնայելով վրացիների ինքնասիրութիւնը, ներկայացնում էին անցեալ գարերի Վրաստանը վարդագոյն բարերախտութեան մէջ, այնպէս որ այդ թագաւորութեան յանկարծակի վերջանալը մի առեղծուած էր մնում, հանելուկի պէս մի բան։ Վրացի գրողները աւելի հեռուն էին գնում. ապացոյցների կարօս չէ, որ վրաց պատմագրութիւնը այնպիսի սաստիկ չօվինիզմով է առգործուած, որ այժմ էլ նա շարունակ պարապում է պատմական փաստերը աղճատելով, վայրի վերոյ լուսաբանելով։ Նա աշխատում է տալ Վրաստանին այնպիսի քաղաքական և կուլտուրական դիրք, որ երբէք նա չէ ունեցել, աշխատում է ամեն կողմով բարեկարգ և բարգաւաճ մի երկիր

հրատարակել վրաց թագաւորութիւնը։ Այդպիսի հայրենասիրական պատմագրութեան մի նմուշ է ներկայացնում վրացի պրօֆէսօր Խախանով։

Ահա ի նկատի ունենալով այդ զրութիւնը, մի առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում պ. Աւալօվի այս աշխատութիւնը։ Նա կարգացւում է մոն հետաքրքրութեամբ։ Նա առաջինն է վրացի զրողների մէջ, որ նայում է անցեալին քննադատաբար, որ չէ ծածկում իրողութիւնները և լուսաբանում է նրանց մի լուրջ ու անկողմնակալ հետազօտողի տեսակէտից։

Հեղինակը նկարագրում է թէ ինչ հին, փոտած պետական կազմակերպութիւն ունէր Վրաստանը, թէ որքան անհեռտենս, միակողմանի քաղաքագէտաներ էին նրա կառավարինները, թէ ինչ ահազին նշանակութիւն ունէին Թիւրքիան և Պարսկաստանը վրաց թագաւորութեան ճակատագրի տեսակէտից։ Գալու միացման ժամանակներին, նա մի շարք լաւ ապացուցուած տեսութիւններ է անում, յայտնում է մի շարք ճշմարտութիւններ, որոնք բղխում են եղելութիւններից, բայց մինչև այժմ չին լուսաբանուած, ձևակերպուած։ Ռուսաստանը Վրաստանում չունէր տնտեսական շահեր, քաղաքական շահերն էլ, օրինակ՝ սուսական սահմանների «կանոնաւորումը», գոյութիւն չունէին։ Վրացինները, երկար ժամանակ յարաբերութիւններ ունենալով Ռուսաստանի հետ, չը կարողացան լաւ ճանաչել, ուսումնասիրել նրա պետական կազմակերպութիւնը, նրա վարչական աւանդութիւնները։ Նրանք առաջարկում էին ընդունել ուստաց հպատակութիւն, բայց յայտնի պայմաններով, արածնութիւններ ստանալու պայմաններով։ մինչեւ Ռուսաստանը չէր կարող արտօնութիւններ տալ, չէր կարող, որովհետև մի ուժեղ, միացած կայսրութիւն միամիացն անպայման հպատակութիւն, անպայման միացում կարող էր ընդունել։

Զէ կարելի, ի հարկէ, ընդունել թէ պ. Զ. Աւալօվ ասել է այդ առարկայի մասին այն ամենը, ինչ պէտք է ասել։ Վրաստանի միացումը, անշուշտ, ուրիշ բազմակողմանի ուսումնասիրութիւնների է կարօտ։ Բայց այս գիրքը, որ գրուած է կենդանի, աշխոյժ ոճով, իրեն առաջին փորձ քննական պատմութեան, մի շատ նշանաւոր երեսոյթ է։ Նա ցոյց է տալիս որ վրացինների մէջ էլ զարթնում է քննադատական ոգին։ Քննել իրողութիւնները, գուրս բերել ճշմարտութիւնները, որքան էլ նրանք դառն ու մուայլ լինեն, կա նշանակում է ինքնածանաշութեան, ճշմարիտ, անկեղծ հայրենասիրութեան նշաններ ցոյց

տալ: Եւ մեռում է ցանկալ որ պ. Աւալօվի այս գեղեցիկ գործը օրինակ հանդիսանայ շատ չատերի համար:

I.

—48) Բժ. Ա. Քուղուղեան: —1. «Կարիք եւ Քարեզործութիւն», 2. «Մամակավարժական համառօս գրոցներ», 3. «Ժառանգականութիւն եւ դաստիարակութիւն», 4. «Մարմամարզութիւն», տպագրուած 1901 թուին:

Դժուար կը լինէր մի առ մի մանրամասն քննել յարգելի բժշկի այս չորս նորագոյն աշխատութիւնները: Ընթերցողը վերնազբերից արգէն նկատում է որ շատ բազմակողմանի ինդիրներ է չօշափում հեղինակը իր աշխատութիւնների մէջ, որոնց թիւը այսօր հասել է 17-ի:

Բժկ. Քուղուղեանի գրելու եղանակի հետ մենք արդէն ձանօթացրել ենք «Մուրձի» ընթերցողներին: Նրա հեղինակութիւնները կարելի է խսկացէս երկուսի բաժանել: —սոսկ ժողովրդական ձեռնարկներ և փիլիսոփայական հայեացքներ որոշ հարցերի վրայ:

Վերե յիշած գրքոյինների մէջ առաջին տեսակին կարելի է վերաբերել նրա «Մարմամարզութիւնը», որ իր նկարներով դիւրամարս է գաւնում և գործնական նշանակութիւն ստանում:

Մի ակնարկ գցելով երեխանների կանոնաւոր կրթութեան ու դաստիարակութեան ինորքի վրայ, ցոյց տալով ընտանիքին կրթութեան ահազին նշանակութիւնը, նա կանդ է առնում ֆիզիկական մարզութիւնների և բարոյական ու մտաւոր կրթութեան վրայ: Գրքի վերջում հեղինակը (ալէտք է ասած համառօտքէն) խօսում է մարմամարզ մարզութիւնների մի քանի ձեերի մասին:

Յայտնի է որ նորագոյն մանկական-առողջապահական գիտութիւնը աւելի պահանջում է ազատ, բացօթեայ խաղեր—խաղ, թոփչք և զիմադրական մարզութիւններ (Շվեդական մարզութիւններ), ինչպէս և ասում է պ. հեղինակը:

Սակայն խսկական մարմամարզութիւնը (սենեակի մէջ, թէ դուրսը) թէ առանց գործիքների և թէ գործիքների միջոցով (օր. գնդակի, լեգուկի, ձողերի, պարանների, բետինէ լարերի զիրերի միջոցով) նոյնպէս շատ օգտաւէտ են և գործածելի են ձմեռը սենեակում:

Հոկտեմբեր, 1901.

Ինքը հեղինակը շատ իրաւացի նկատում է, որ Փիզիկական կրթութիւնը երբէք նկատի չը պէտք է ունենայ մանուկներից ատլէտներ պատրաստել, զարգացնելով միայն թերթի ուստերի մկանները, այլ պէտք է ձգտէ համաշխի կերպով, ներդաշնակօրէն զարգացնել կազմուածքի բոլոր մկանները, որով միևնույն ժամանակ զարգանում են ու ամրապնդում չնչառական ու արնաբաշխ գործարանները (թոք. սիրտ) \*):

Յարգելի բժիշկը մի լաւ միավէ յլացել. նա գետեղել է մի թերթի վրայ բոլոր նկարները (այդ թերթը արտասպաւած է առանձին հաստ թղթի վրայ՝ պատին կպցնելու համար): Բաւական է այդ թերթը բանալ ու նկարների ձեռվ մարզուել:

Կան 24 ձեի նկարներ, որ բաւարար կարելի է համարել սենեակում մարմնամարզութեան համար:

Եթէ հեղինակը աւելի լայն և աւելի լիակատար դրած լինէր գործը (օր. նկարագրէր նոյնպէս և մի քանի բացօթեայ խմբային խաղեր) \*\*), նրա գիրքը շատ աւելի գործնական կլողանար:

«Մարմնամարզութիւնը», պէտք է ամեն տան մէջ գտնուի և թնդ ամեն տան մէջ երեխանները առաւօտերելոյ կատարեն այդ մարզութիւնները:

Մնացած երեք գրքոյները ընթերցանութեան համար շատ յաջող կազմած աշխատութիւններ են, և շատ օգտաւէտ կը լինեն որոշ կարգի ընթերցողների համար, որոնք փոքր ի շատէ պատրաստուած են ըմբռնելու հեղինակի լայն մտքերը:

Բժկ. Բուղուղեանը զիտէ բազմակողմանի զարձնել իր աշխարհայեցողութիւնը և ստիպում է ընթերցողին հետաքրքրուել ու առանձին-առանձին ուսումնասիրնել չօշափած խնդիրները: Կրկին ցանկանում ենք տոկունութիւն անիրոնջ աշխատողին և սպասում խոստացած միւս հրատարակութիւններին:

ԲԺ. Վ. Ա.

\*) Տե՛ս իմ «Դոլոցական դաստիարակութիւն»:

\*\*) Այդպիսի մի ձեռնարկ կաղմել է ալ. Յարիսուղարեանը - «Մանկական խաղեր»:

Ն Ո Ր      Ս Տ Ա Ց Ո Ւ Խ Ա Ծ      Գ Ր Ք Ե Ր

---

- 1) Գ. Սունդուկեանց, «Պէպօ», կօմեղիա երեք արարուածով,  
2-րդ տպ., ուղղած, Թիֆլիս, 1901թ., գինն է 50 կուգ.:
- 2) Սահակ-Մեսրոպեան Մատենագարան, Ե. Գիրք թղթոց,  
մատենագրութիւն նախնեաց, Թիֆլիս, 1901թ., գինն է  
1ռ. 50 կուգ.:
- 3) Ե. Գօրկիյ, Մի անգամ աշնանը..., թարգմ. Ե. Շահումեանցի,  
Թիֆլիս, 1901թ., գինն է 7 կուգ.:
- 4) Յ. Մուրադեան, Համշէնցի հայեր, արտատպած «Ազգ.  
Հանդ.»-ից, Թիֆլիս, 1901թ., գինն է 40 կուգ.:

## ՏԵՍԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

«ՀՈՂԱՅԻՆ ՏՈՒՐՔԸ» ԵՒ ՀԱՐԿԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

ԳԼ. VII

Տնտեսական անհաւասարութեան պատճառները.—Անհաւասարութեանը վերջ դնելու գժուարութիւնները.—Հարկացին սիստեմի բարեփոխութիւնը իրքի սօցիալական հարցի լուծման միջոցներից մէկը.—Պրօդրեսսիւ և ժառանգութեան տուրքերի սկզբունքը.—Այդ տուրքերի չափն ու նշանակութիւնը անգիտական երկիրների, Գերմանիայի, Ֆրանսիայի համար։ Դրանց զարգանալը Ուսուաստանում, —«Ճառանգութեան», «Բնակարանների», «արդինարերութեան» և «պայմանագրերի» պրօդրեսսիւ բնաւորութիւն ունեցող տուրքերը

Այս ախուր կացութիւնը, որ մենք նկարագրեցինք քիչ վերե, հետեւանք է ոչ թէ այս կամ այն անհատի կամքի, ու չար դիտաւորութեան, այլ մեր օրերում իշխող տնտեսական-հասարակական բարդ սլայմանների։ Աղքատ գործաւորը, ինչը ան էլ խելօք, աղնիւ, աշխատասէր լինի նա, չի կարող այսօք հարըստանալ առանց որեէ անակնկալ զիպքի, առանց խորամանկութեան ու ծուոք միջոցների։ Եւ ընդհակառակը, չը նայած անվերջ շռայլութիւններին, միլիոնատէրը երկնքի թռչնի նման հնձում է այնտեղ, ուր չի ցանել, ստանում է տասնեակ ու հարիւր-հազարներ առանց մատը մատին խփելու։

Այդպէս չէր առաջ։ Շնորհիւ նահապետական նատուրալ տնտեսական կարգերի ամեն մարդ, ամեն գիւղ առաջ իր սպառածի մեծ մասը արտադրում էր ինքը իր նեղ շրջանում։ Հողորդակցութեան միջոցների բացակայութեան կամ վատութեան ու աղզարնակութեան քչուորութեան պատճառով առաջ «առ» և «տուրք»-ի էին ենթարկւում միմիայն արժէքաւոր ապրանքները։ Բացի այդ, շնորհիւ գիտութեան ու տեխնիկայի ցած լինելուն, աշխատանքի բաժանումը առաջ էր պրիմիտիւ բնա-

ւորութիւն, որի պատճառով համեմատաբար հեշտ էր թոյլի մրցումը իրանից ուժեղի հետ: Այս ամենի հետևանքը լինում էր այն, որ առաջ չը նայած իշխող անհատական սեփականութեան սկզբունքի տնտեսական անհաւասարութեան, զարգացումըն ընթանում էր շատ դանդաղ քայլերով, մանաւանդ ժամանակ առ ժամանակ կատարուող աւերումներն ու պատերազմները վերջ էին դնում այն մեծ հարստութիւններին, որ ձեռք էին գցում աւելի բախտ ունեցող ընտանիքները խաղաղ պատմական շրջաններում: Այս ամենը ենթարկուեց լուրջ փոփոխութեան վերջի դարերի, մանաւանդ XIX դարի ընթացքում:

Խաղաղ պատմական շրջանները դարձան մշտական, որի չնորհիւ աղգաբնակութեան աճումն ստացաւ կանոնաւոր բնաւորութիւն: Դրա վրայ աւելացան հազորգակցութեան միջոցների դիւրանալը, որ ահազին ծաւալ տուեց առևտրին, առաջ եկան նոր զիւտեր, որ մեծ դարկ տուին արդիւնաբերութեան զարգացման: Աշխատանքի բաժանումը, «առ և «տուրը», մրցումը, խոչոր ձեռնարկութիւնների զարգացումը հասան այն աստիճանի, որ չէր տեսնուած և երազուած պատմութեան ոչ մի շրջանում: Այդ ամենը պատճառ եղաւ նիւթական բարիքների ու յարմարութիւնների ստեղծուելուն, առաջներում չը տեսնուած ծաւալով:

Սակայն զրա հետ միասին, չնորհիւ սանձարձակութեան հասցրած անհատական սեփականութեան գաղափարի, առաջ եկաւ մի այն տեսակ ծայրայեղ անհաւասարութիւն հասարակութեան զանազան դասակարգերի մէջ, որ վտանգաւոր և անտանելի է դարձած ընդհանուրի բարեկեցութեան տեսակէտից: Սահման զնել տեխնիկայի, հազորդակցութեան միջոցների և ապահովութեան զարգացմանը—անկարելի է: Ոչ մի համայնք, ոչ մի ազգ, ոչ մի պետութիւն չի ցանկանայ այդ անել և նոյն իսկ չի կարող զրկուել մարդկութեան մտքի այդ հոր յաղթանակներից: Մնում է, ուրեմն, փրկութիւնը վնարել հասարակութեան դասակարգերի փոխախարձ յարաբերութիւնների փոփոխութեան մէջ՝ աշխատելով աւելի արդարացի կերպով բաժանել արտայայտուող ու ստեղծագործուող նիւթական բարիքները: Բայց անհաւական սեփականութեան և մրցման դաղափարի սկզբունքի վրայ հինուած հասարակական կարգերը ունեն գարաւոր անցեալ: Յենուելով զրա վրայ, հին ընժիմի պահպանողները լսել անգամ չեն ուղում նոր, աւելի արդարացի նպատակայարմար հասարակական կարգերի մասին:

Սկսուել է կատաղի կոխ հին կարգերի կողմնակիցների և նրանց, որոնք մարդկութեան դրախտը երազում են տեսնել ա-

պազայում: Կոիւը քանի գնում աւելի սաստկանում ու լայնանում է: Խնչպէս քաղաքակիրթ Եւրոպայում, այնպէս և մեզ մօտ հարստի ու աղքատի, կապիտալի ու աշխատանքի հարցը կաղմում է բոլոր հասարակական հարցերի ուղն ու ծուծը:

Այդ հարցի առաջ նսեմանում են բոլոր միւս հասարակական բնաւորութիւն կրող խնդիրները՝ ազգային, քաղաքական, բարոյական: Դրա բաւարար կերպով լուծուելուց է կախուած և բոլոր միւս հարցերի առաջ ընթանալը:

Թէս սօցիալական մեծ ինդրի լուծումը դեռ ևս իր սկզբնական շրջանի մէջ է, այնուամենայնիւ հիմա էլ պարզ է որ առաջայում աւելի արդարացի հասարակական կարգեր ստեղծելու համար անհրաժեշտ է բարեփոխիսել նորկայ անարդար կացութեան գանազան ճիշդերը: Ստեղծել ընտրողական և հաւասարութեան սկզբունքի վրայ հիմնած քաղաքական կարգեր, ատարածել կրթութիւնը ժողովրդի բոլոր խաւերում, կենդանի պահել բարոյականութեան գաղափարները, ապահովել նիւթապէս բոլորին և աշխատանքի սկզբունքը կանգնեցնել իր մեծութեան համապատասխան բարձրութեան վրայ:

Տնտեսական պայմանների բարեփոխութեան մէջ հարկային ձեր բարեկարգութիւնը, անկասկած, բոնում է առաջնակարգ տեղերից մէկը:

Որ առաջադէմ երկիրներում վազուց ի վեր գոյութիւն չունի ծխահարկը, յայտնի է, կարծեմ, ամենքին... Նոյն իսկ իտուսաստանում հարկի այդ փտած ձեզ 60-ական թուտկաններից անցած է առասպելների շարքը: Որ առաջադէմ երկիրներում աւելի քիչ են գեղծումները, աւելի արդարացի են բաժանուած հարկերը երկրի գանազան շրջանների մէջ, մարդուն ու տեղին համապատասխան են տուրքերը, այդ էլ հասկանալի է ինքն ըստ ինքեան:

Մայնելով ամեն տուրքի այն տեսակ ձեր, որով հարուստը վճարում էր շատ, աղքատը՝ քիչ՝ ամեն մէկը համապատասխան իր ստացուածքի, քաղաքակիրթ երկիրները զրա հետ միասին ապահովեցին աղքատին ու բանուորին հիւանդութիւնից, ծերութիւնից, աշխատանքից զուրկ մնալուց: Բայց այդ գեռ բաւական չէր:

Հարկաւոր էր արդարացի հիմքերի վրայ դնել «ուղղակի» անուաննեալ տուրքերի վճարումը: Եւ, իսկապէս, հարիւր հազարներ ստացող կրեսոսին ոչինչ բան է վճարել իր ստացուածքի 10% (մի քանի տասնեակ հազար) տուրք: Այդ գումարը վճարելով նա ոչնչեց չի զրկւում: Նա շարունակում է վարել իր փարթամ ու շքեղ կեանքը, և միևնոյն ժամանակ յետ դցել տա-

բեկան հարիւր հաղարներ: Տարբերութիւնը միայն նրա մէջն է որ 200—300 հաղար յետ գցելու տեղ, նա յետ կը գցէ 20—30 հաղարով պակաս:

Մի փոքր զգալի է 10% վճարելը 10,000 ստացող վաճառականի համար և ծանր 1000 սուբլի բիւդչէ ունեցող ուսուցչի ու մանաւանդ 100 սուբլով ապրող արհեստաւորի համար: Տասը սուբլի առուրք վճարելու համար արհեստաւորը պիտի զրկէ իրան ամենաանհրաժեշտից—հացից, հագուստից, վառելիքից. տասը սուբլի տուրքը այդպիսով արհեստաւորի մարմնի մի մասն է, նրա արիւնի մի քանի կաթիլները: Այլ է ուսուցչի համար 100 սուբլի վճարելը: Հարիւր սուբլի աւել ծախսից նա չի կրծատի իր ուսուելիքը, չի փոխի կօշիկները, չի տուժի ֆիզիկապէս: 100 սուբլին գտնելու համար նա կը կրծատէ թատրոն գնալը, զրքեր առնելը, 50 սուբլիանոց վերարկուի տեղ կ'առնէ 30 սուբլիանոց վերարկու, մի խօսքով կը զրկուի ոչ թէ անհրաժեշտից, այլ մի քանի յարմարութիւններից: Շատ աւելի հեշտ է 10,000 ռ. ստացողի զրութիւնը: Մինչև 1000 ռ. տուրք վճարելը նա ծախսում էր 5, 6, 8 հաղար, իսկ մնացածը աւելացնում դրամագլխի վրայ. 1000 ռ. տուրք վճարելով նա յետ կը գցէ մի հաղարով պակաս, կամ տասը սենեակում ապրելու տեղ կ'ապրէ 9 սենեակում...

Պարզ է որ միհնոյն չափով տուրքը հարուստի, սենեորի, միջակի և աղքատի համար միհնոյնը չէ: Տասը տոկոս տուրք վճարելով հարուստը ոչ մի ծանրութիւն չի զգում, ունիորը անձնապէս չի տուժում, միջակը զրկում է մի քանի յարմարութիւններից, իսկ աղքատը—ամենաանհրաժեշտից: Ահա ինչու Եւրոպայում առաջ եկաւ տուրքի նոր սկզբունք, որի հիման վրայ եկամուտի աւելանալու հետ միասին աւելանում է և վճարելիք տուրքի աստիճանը, տոկոսը: Դա պրօքրեսիւ տուրքի սկզբունքն է: Այդ սկզբունքի հիման վրայ մեր բերած օրինակներում՝

100 ռ. ստացող արհեստաւորը պիտի աղատ մնար տուրքից, կամ վճարէր չնչին, 1—2% (1—2 ռ.): Միջակ—1000 ռ. ստացող ուսուցիչը ծանրաբեռնուելու էր 3—4% կամ 30—40 սուբլով: Ունիոր—10,000 ռ. ստացող վաճառականը վճարելու էր 5—10%, կամ 500—1000 ռ.: Իսկ հարիւր հաղարներ ստացող միլիօնատէրը—15, 20, 30%, կամ 15, 20, 30 հազ. և աւել:

Պրօքրեսիւ տուրքի պաշտպանների տեսակէտից, այս սկզբունքի արդարութիւնն ու անհրաժեշտութիւնը առաջ է գալիս ոչ միայն բարոյագիտական հիմքից, այն ահագին եկամուսները, որ ստանում են հարուստները, հետևանք է ոչ թէ

այդ հարուստների աշխատանքի, այլ զանազան պատահարների կամ հասարակական պայմանների: Մէկը հարստանում է, որովհետև կաշառք է տալիս թոյլ պաշտօնեային և ձևոնտու պայմանով վորդնում այս կամ այն կապալը. միւսը երաշտի դէպքում 1,  $1\frac{1}{2}$ , 2 ռուբրով ծախում է 50 կոպէկով ժողոված հայը, երրորդը—որովհետև չնորհիւ երկաթուղու անցկացնելու 10 հատզարով առած կամ 10 հազար արժէքաւոր հողի գինը բարձրանում է 20, 30, 50 հազարի, վերջապէս շատ շատերի հարստանալու պատճառը չաղ ժառանգութիւն ստանալն է: Շնորհիւ ժողովրդի բազմանալուն և անհատական սեփականութեան ու տոկոսի գոյութեան—ժառանգած հարստութիւնը տարից տարի աճում և մեծանում է, առանց որեւէ աշխատանքի սեփականատիրոջ կողմից:

Ամենալուրջ հարց է ծագում՝ արդեօք հարուստը իրաւունք ունի օգտուելու այն հարստութիւնից, որ իր աշխատանքի արդիւնք չէ, այլ հետևանք ընդհանուր հասարակական պայմանների: Եւ միթէ աւելի բնական և արդարացի չէ այդ հասարակական պայմանների շնորհիւ աւելացած հարստութիւնը յատկացնել նոյն հասարակութեան կարիքներին: Առաջադէմ գետօրատիան տալիս է այդ հարցին դրական պատասխան և պահանջում որ նշանակուի բարձր տուրք ժառանգութեան վրայ, որ տուրքերը լինեն ուղղակի, եկամուտի համեմատ և պրօդրեսսիւ: Այդ սկզբունքը կամաց-կամաց հասունանում է և նրան սկսում են հետևել և պետութիւնները:

Տնտեսապէս աւելի զարգացած Անգլիան դեռ 1798 \*) թ., Նապալէօնի դէմ մղած պատերազմի ծախսերը ծածկելու համար, մացրեց տուրք եկամուտի վրայ, ինչից էլ այդ եկամուտը ստացուելիս լինէր՝ անշարժ կալուածքից, դրամից, վաճառականական արդիւնաբերական ճիւղերից, թէ ծառայութիւնից պետական հիմնարկութիւնների մէջ: Տուրքի չափը որոշուած էր 8 պենս 1 ֆունտ ստերլինգ զուտ եկամուտից (32 կոպ. ամեն 10 ռուբլուց, կամ եկամուտի մօտ 32<sup>0</sup>/<sub>0</sub>-ը): Այդ տուրքից աղատում էին 150 ֆունտից (1500 ռ.) պակաս եկամուտները և առաջի 120 ֆունտը մինչև 400 ֆունտ եկամուտ ստացողների համար: Բայցազիկ պարագաներում (պատերազմի տուրքի ժամանակ և այն) եկամուտի աստիճանը բարձրացւում է: Ներկայ 1901 թուի սկզբներում, օրինակ, այդ տուրքի չափը բարձրացած է մինչև 24 պենսի կամ 10% զուտ արդիւնքից: Նոյն Անգլիայում ժառանգութեան վրայ նշանակուած տուրքը ներկայում տա-

\*) Էնցիկլոպեդический словарь Брокгауза и Эфрона.

տանւում է 1—10%ի մէջ, նայած ժառանգողի ազգակցութեան մօտաւորութեան և ժառանգութեան չափին:

Չը նայած չքաւորներին տուած մեծ արտօնութիւններին և արդիւնքի ու ժառանգութեան տուրքերի աստիճանին, 1890—91 թիւը Անգլիայի օ միլ. ֆունտ. ստերլինգ (մօտ. 895 միլ. ռ.) զանազան կարգի եկամուտները կազմում էին.

Ժառանգութ.	տուրքից	135	միլ. ֆ.	կամ ամբողջ մուտքի	151%
Եկամուտի	տուրքերից	133	»	»	149 »
Մաքսային		195	»	»	218 »
Ակցիզ		248	»	»	278 »
Պոստ-հեռագր.	»	123	»	»	31 »
Հողային և բնակարան.	26	»	»	»	29 »
Այլեւայլ մուտք.	· · 36	»	»	»	44 »
<u>Ընդամենը . 895</u>					<u>100 %</u>

Այսպիսով կարելի է ընդունել որ Անգլիայում պետական ամբողջ եկամուտի 30% ստացում միմիայն ուներներից եկամուտի և ժառանգութեան տուրքերի միջոցով: Նոյն ուղղութեամբ գնացին կուլտուրապէս բարձր անգուստական միւս կառավարութիւնները՝ Աւստրալիան, Նոր-Զելանդիան, Ամերիկան:

Վերը բերած հարկային սիստեմի արդարացի ուղղութեամբ մասամբ բացատրում է անգլօսաքանական երկրների ցոյց տուած ասածագիմութիւնը և այն աղքատ և յևտոգէմ երկրների համար անհասկանալի հանգստութիւնը: Որով Անգլիան ահա մօտ երկու տարի շարունակ օրական 2—3 միլիոն սուրքի է ծախսում Տրանսվալում պատերազմ մղելու համար:

Պրօգրեսիստ. տուրքը ընդունուած է Եւրոպայի և միւս յառաջադէմ պետութիւններում, ինչպէս են՝ Գերմանիան, Աւստրո-Ունգարիան, Շվեյցարիան և միւսները:

Պրուսիայում, օրինակ, զեռ 1853 թուին հաստատուած է օրէնք (մայիսի 30-ին), որի հիման վրայ բոլոր ակցիօններական ընկերութիւնները, նայած այդ ընկերութիւնների ստացած զուտ արդիւնքին, վճարելու են տուրք զանազան չափով:

Մինչև 40%	եկամուտի գէպքում	21/20%	տուրք
» 4—5 »	»	»	5 » »
» 5—6 »	»	»	10 » »
» 6—7 »	»	»	20 » »

Առաջադէմ պետութիւններից միմիայն Ֆրանսիան է, որ չի հետեւում զեռ ևս պրօգրեսիստ տուրքի սկզբունքին: Բայց

Ֆրանսիայումն էլ այդ սկզբունքով տուրք մտցնելը օրուայ հարց է:

Զախարյան առաջագէմ կուսակցութիւնը այդ տուրքի մտցնելը ընդունած է իր համար նշանաբան եկող պատգամաւորական ընտրութիւնների համար: Համայնական ժողովի մեծամասնութիւնը կառավարութեանը աղքարարած է եկող տարուայ բիւզիչն կազմել այնպէս, որպէս զի չորս գլխաւոր կողմնակի տուրքերը ոչնչացուին (մօտ 600 միլ. ֆր.) և դրա տեղ հաստատուի պրօգրեսիւ տուրք եկամուտի վրայ:

Դատ հետաքրքրական է այն հանգամանքը, որ պատգամաւորների մի մասը պահանջում է պրօգրեսիւ տամացնել: Մի միջին ֆրանկ եկամուտ ունեցողների տուրքի տոկոսը, նրանց առելով, բարձրացնելու է մինչև 50%: Դա կը նշանակէ շատ հարուստ անձնաւորութիւնների եկամուտի կէսը յատկացնել պետութեան կարիքների համար, թողնելով մնացած կէսը սեփականատիրոջը:

Պրօգրեսիւ տուրքի արգարացի սկզբունքից յետ չի մնում և Ռուսաստանը, իսկ նրա հետ միասին նաև Կովկասը:

Օրինապէս մէկից միւսին անցնող կալուածների վրայ (ժամանդութիւն, ընծայ և այլն) տուրքը հաստատուած է 1882 թ. յունիսի 18-ի օրէնքով: Մէկ ամուսնուց միւսին անցնելիս, կամ երբ կալուածքը անցնում է մօտ աղքականներին բարձրացող կամ իշնող ճիւղաւորութեամբ, տուրքը կազմում է արժէքի 10%: Խորթ որդուն, եղբօր կամ քրոջ անցնելու գէպքում տուրքը կազմում է 40%: Երրորդ և չորրորդ աստիճանի աղքականներին անցնելու գէպքում տուրքը հաւասար է արժէքի 60%-ին: Աւելի հեռու աղքականներին անցնելու ժամանակ—80%-ին:

1893 թուի մայիսի 14-ին Բարձրագոյն որոշման համաձայն Ռուսաստանում մոցրած է «բնակարանների տուրք», որ որոշ չափով մօտ է եկամուտի տուրքին և ունի պրօգրեսիւ բնաւորութիւն:

Գետութեան բոլոր քաղաքները իրանց մեծութեան և հարըստութեան համեմատ բաժանուած են հինգ կարգի: Բոլոր կարգի քաղաքներում ամենաաղքատ դասակարգն աղքատուած է բնակարանի տուրքից, իսկ ամենահարուստը ենթարկուած է տուրքի՝ իր բնակարանի արժէքի 100%-ի չափով:

II կարգի քաղաքներում, օրինակ (որոնց մէջ են, ի միջի այլոց, Թիֆլիսն ու Բագուն), բնակարանի տուրքի չափը, նայած բնակարանի վարձին, հաւասար է:

Բնակարանների վարձ.	Տ ու ր ք ի չ ա փ լ.	0/00,0 բնակարանի վարձի:
Թուրլի:	0/00,0 բնակարանի վարձի:	
1— 225	0—	00/0—
225— 360	3— 6	10 — 21 <sup>0</sup> / <sub>0</sub>
361—1,000	8— 29	20 — 29 »
1,001—2,000	32— 86	33 — 43 »
2,001—3,000	95—165	47 — 55 »
3,100—4,000	181—239	6 — 59 »
4,100 և աւել	330— և աւել	8 — 10 »

III կարգի քաղաքներում (սրոնց հաշուի մէջ են Գանձակը, Երևանը, Կարսը, Քութայիսը, Փոթին, և այլն) բնակարանի տուրքից ազատուած են մինչև 150 ռ. բնակավարձ վճարողները, տուրքի պրօքրեսիան բարձրանում է աւելի արագ, համար նելով 10<sup>0</sup>/<sub>0</sub> և 3000 ռ. վճարողների համար:

Ամենազգաց և ամենափոքր քաղաքներում տուրքից ազատուած են 60-ից պակաս բնակարանի վարձ վճարողները, իսկ 10<sup>0</sup>/<sub>0</sub> վճարում են արդէն նրանք, ովքեր ազրում են 1000 ռուբ-լիանոց բնակարաններում:

Սակայն ինչքան էլ արդարացի լինէր բնակարանի տուրքը, նա չի ենթարկում տուրքի՝ գիւղի հարուստներին և մանաւանդ վաճառականներին: Համապատասխան չափով չի ծանրաբեռնում միլիոնատէրիքի լրաց:

Վերջիններս մի քանի հարիւր հազար զուա եկամուա ունենալով, ապրում են այն տեսակ բնակարաններում, որոնց արժէքը միայն մի քանի հազար է, այսինքն տան վարձը հատակար է իրանց եկամուաի 1<sup>0</sup>/<sub>0</sub>: Տասը հազար սուրլի ստացող հարուստների տան վարձը հաւասար է լինում արդէն ստացուածքի մօտ 1/10 կամ—10<sup>0</sup>/<sub>0</sub>: Միջակ ծառայողներինը (100 ռ.—700 ստացողներինը) արդէն 20<sup>0</sup>/<sub>0</sub>—25<sup>0</sup>/<sub>0</sub>:

Կարծ ասելով, բնակարանների վարձը չի համապատասխանում մարդկանց ստացած եկամուաին, այլ ծանրանում է աւելի չունեսորների լրաց: Մասսամբ գրանց առաջ եկած անարդարութիւնը սահմանափակելու, մասսամբ էլ եկամուաի նոր ազքիւր ստեղծելու համար, վերջերս հաստատուած է տուրքերի մի նոր ձև: Դա 1899-ի յունվարի 1-ից սկսուող «պետական արդիւնաբերական տուրքն է» «Արդիւնաբերական լրացոցիչ տուրքի» հետ միասին \*): Այդ տուրքերին ենթակայ են ինչպէս պարտա-

\*) Государственный промысловый налогъ, СПБ. 1897 г.

գիր հաշիւ ներկայացնող վաճառականական և արդիւնաբերական զանազան ձեռնարկութիւնները, նոյնպէս և այդ հիմնարկութիւններում ծառայողները:

Վերջիններս տուրք վճարում են.

Մինչ 1,000 ռ.	ստացողները	15 ռ.	կամ ստացուածքի	15 %
1,000—2,000 »	»	25 »	»	125 »
2,000—3,000 »	»	50 »	»	167 »
3,000—6,000 »	»	100 »	»	167 »

Արդիւնաբերական հիմնարկութիւնները վճարում են նախ առուրք այդ հիմնարկութիւնների հիմնական արժեքից (15 կոպ. ամեն մի 100 ռուբլուն), և բացի դրանից տոկոս եկամուտից: Եկամուտից վերցրած տոկոսը ունի պրօդրեսիւ բնաւորութիւն:

Մինչև 30% արդիւնք տուսղ	ձեռնարկները	տղատ են տուրքից.
3—4 »	»	» վճարում են եկամ. 3 %
4—6 »	»	» » » 4 —55 »
6—8 »	»	» » » 5 —55 »
8—10 »	»	» » » 55—6 »

Տասը տոկոսից՝ աւել արդիւնք բերող ձեռնարկութիւնները վճարում են տուրք 6% զուտ արդիւնքից և բացի դրանից 5% զուտ արդիւնքի այն մասից, որ աւել է, եթէ բնական համարել 10%-ը:

Վերջապէս մնալ պրօդրեսիւ տուրքի բնաւորութիւն ունի և 1900 թ. յունիսի 10-ին հաստատուած տուրքի «կանոնագրութիւնը» <sup>\*\*)</sup> պայմանագրերին վերաբերեալ:

Այսպիսով Եւրոպայի հետ միասին Ռուսաստանն էլ ընդունած է պրօդրեսիւ տուրքի սկզբունքը:

Դժբախտաբար, չորհիւ Ռուսաստանի ազգաբնակութեան նեղ տնտեսական վիճակին, վերը նշանակուած արդարացի տուրքերը կազմում են պետութեան եկամուտի շատ չնչին մասը: Այսպէս, 1900 թուականի պետութեան կազմած նախագծի հաշուազ պրօդրեսիւ բնաւորութիւն ունեցող տուրքերը կազմում էին.

162 միլ. ռ. (09%) արդիւնաբերական եկամուտից.

256 » » (15%) մէկից միւսին անցնող կալուածներից.

354 » » (2%) պայմանագրերից և այլն.

Բնդամենը 772 միլ. ռ. (44%):

Համեմատելով Ռուսաստանի եկամուտների պրիւրները կուլտուրապէս աւելի բարձր Անգլիայի եկամուտների հետ, չի

\*\*) Ստավ օ գերբօմք սբօրք 10. VI 1900 թ.

կարելի չը համաձայնել, որ մեր երկիրը հարկերի արդարացի բաժանման տեսակէտից դեռ ևս բաւականին յետ է մնացած: Սակայն չը պէտք է մոռանալ և այն հանգամանքը, որ պրօգրամի տուրքերը Խուսաստանում մտցրած են ամենավլութիւնն աւարիներս՝ ֆինանսների մինսար Վիտտէի և նրա օգնական Կօղմական կուտակութեամբ: Շատ հաւանական պիտի համարել, որ ժամանակի ընթացքում այդ տեսակ տուրքերի նշանակութիւնը աւելի և աւելի կը մնանայ: Այդ փոփոխութիւնը կ'ազդէ և կովկասի հարկային ձեր փոփոխութեան վրայ՝ տանելով դէպի հարկերի աւելի արդարացի բաժանմումը: Դա արդէն ազդած էլ է, որովհետեւ պետական բնակարանների տուրքի հետ միասին 1901 թուրից նոյն չափով վերջնելու է քաղաքներից տուրք և անդական կարիքների համար:

## ԳԼ. VIII

„Հողային տուրքի“ դերը հարկերի աւելի արդարացի բաժանման վերաբերմամբ. — Ախոռու, Գեղըլու, Աշուարսկ, Սաղեան, Շուլաւէր զիւղերի օրինակները. — Հողային տուրքը սկիզբն է հարողութեան և պրօգրեսայի աւելի արդարացի տուրքերի. — Վերջի ձեր տուրքերը անհրաժեշտ են նաև մի քանի արդարացի „աղաթների“ վերանալու պատճառով. — Ելդ սովորութիւնների բացակատութիւնը կարելի է միայն լրացնել համազատախան օրէնքներ հրատարակելով. — Մինչև այդ, կարելի է օպոտել համայնքների լոյն իրաւունքներից, բաժանել հարկերը համարնքի հայեցողութեամբ. — Մեր ինսելիդենցիալի դերը հարկային ինդրի բարեկարգման դործում:

Վերադառնալով հոգային տուրքին, չի կարելի չընդունել որ զրա մտցնելը «Ժխահարէի» վոլսարէն անկասկած, կազմում է Կովկասի համար հարկային ձեր զարգացման սկիզբը: Այն սխաները, որոնց վրայ մենք մատնանիշ արինք վերե, նոր հարկային ձեր մտցնելուց յետոյ զդալի կերպով կը վերացուեն՝ հող չունեցողները բոլորովին կ'ազատուեն հարկից, քիչ հող ունեցողների հարկը կը թեթեանայ, չատ ունեցողներինը կ'աւելացուի: Վերը բերած օրինակներում Շամախի գաւառի հողից զուրկ Բայաթնազր, Եռուսէին և Բասխալ գիւղերը բոլորովին կ'ազատուեն տուրքից: Էջմիածնայ գաւառի՝ կարգաբազարից երեք անգամ աւելի հող ունեցող Արմութի գիւղի տուրքը կ'աւելանայ երեք անդամ: Նոյնը կը լինի և հողով տարբերուող միւս գիւղերի մէջ:

Բացի այդ, անկասկած պիտի համարել որ «Հողային տուրքի» սկզբունքը կը նալաստէ նրան, որ գիւղացիք հարկերը մի-

մեանց մէջ բաժանելիս, ծխի կամ հոգու տեղ կը սկսեն զեկավարուել ունեցած հողերի տարածութեամբ և եկամուտով:

Հազախի գաւառի Միխայլօվկա գիւղում 44 գես. վարելահող ունեցող հարուստ գիւղացին չի վճարի այլ ևս հաւասար (322 սուրբի) աղքատ գիւղացու հետ, որ մի զեսեատին միայն հող ունի, այլ 44 անգամ աւել և այլն...

Այդ տեսակ փոփոխութեան օրինակներ արդէն կան:

Նոր-Բայազէթի գաւառի Հայ-Ախտա գիւղում, ուր հարեկերը վազուց ի վեր վերցուում են հողից, իսկ վարելահողերն ու խոտահարքները բաժանուում են հոգու (նախարի) վրայ, «հողային տուրքի» մտցնելը չունեցաւ տուանձին նշանակութիւն: Զը նայած արօտների մեծ նշանակութեան, մարդագլուխ վճարելիքը 67 կոպէկից (1900-ին) բարձրացաւ մինչև 73 կ.:

Նոյնն է և իջմիածնի գաւառի դաշտային Գեշրու գիւղում: 3700 ո. ծխահարելի տեղ 1901-ից գեշրուեցիք վճարելու են հողային տուրքը 6800 ո., չը հաշուած մօտ 1000 ո., որ կազմում է գիւղական («մասրաֆի») ծախքերը: Կրկնապատկուած տուրքերի ծանրութիւնը զո՞նէ որոշ չափով թեթեացնելու համար, գիւղը որոշել է այգիների տուրքը, համեմատած վարելահողերի հետ, կրկնապատկել, ազատելով տուրքից ճահճացած հողերը: Բայց որովհետեւ այգիների տարածութիւնը Գեշրուում շատ չնչին է (մօտ 50 գես., 1000 դ. ջրարքի հողից), վերը բերուած որոշումը չէր կարող ունենալ առանձին նշանակութիւն տուրքի աւելի արդարացի կերպով բաժանման նըկատմամբ: Միջին թուով մի թանափ (40 լիտր=2000 ք. ո.) հողը Գեշրուում 1901-ից վճարելու է տուրք 7 ո. 36 կ., իսկ մարդագլուխ 2 ո. 23 կ.: Աւելի նկատելի է հարեկերի բաժանման մէջ մտած փոփոխութիւնը այգեգործութեամբ պարապող Աշտարակ գիւղում:

Մինչև 1900 թիւը 700 ծխից և 3400 հոգուց բաղկացած Աշտարակը վճարում էր մօտ 4500 ո. պետական տուրք և 3500 ո. գիւղական ծախքերի համար. ընդամենը մօտ 8000 ո.: Ամեն մի գիւղացու վճարելիքը որոշելու համար այդ ընդհանուր գումարը բաժանուում էր կէսի. կէսը ցցւում էր այգիների վրայ, կէսը դէմի վարելահողերի, որ բաժանուած էին նախարի վրայ: Բայց որովհետեւ հոգու վրայ բաժանուած վարելահողերի եկամուտը համեմատած այգիների եկամուտի հետ շատ ցած էր (մօտ  $1/7 - 1/10$ -ը միայն), բնականաբար հարեկերով աւելի քիչ էին ծանրաբենուում նրանք, ովքեր այգիներ չատ ունեն, այսինքն հարուստները: 1901-ից պետական տուրքը բարձրացաւ մինչև 9100 ո., իսկ գիւղական ծախքերը մինչև 5000-ի: Գիւղը որո-

շում կայացրեց այդ բոլոր տուրքերը վճարել համեմատ ամեն մէկի ունեցած հողի զուտ արդիւնքի, ընդունելով վերջինիս քանակութիւնը այն, ինչ որ ընդունած էր գաւառական հարկաբաժան ատեանը՝ այդիներինը 122 ռ., արհեստական անտառներինը 100 ռ., գէմի վարելահողերինը 12 ռ., ջրովի վարելահողերինը—23-ական ռ. գեսեատինից:

Հաշուելով գրա համեմատ ամեն մէկի ունեցած հողերի եկամուտը, 100-ից գիւղը վերցնում է 86% պետական տուրքի համար և 49% գիւղական կարիքների, իսկ ընդամենը հողի զուտ արդիւնքի 185%-ը: Այդ հաշուով՝

հարստներից 1-ը 1901-ից վճարելու է 180 ռ., 1900 թ. 70 ռ. տեղ:

միջակներից » » » 22 » » » 16 » »

աղքատներից » » » 10 » » » 8 » »

Շամախի գաւառի այգեգործութեամբ պարապող Սաղեան գիւղում մինչև 1901-ը բոլոր հարկերը բաժանում էին ծխերի վրայ հաւասարապէս: 1900-ին, օրինակ, թէ հարուստը, թէ տղքատը և թէ միջակ ընտանիքը վճարում էին 18-ական ոռութիւն:

«Հողային» հարկը մտցնելուց յետոյ, ի նկատի առնելով զանազան կարգի հողերի եկամուտները, գիւղը որոշեց վերցնել տուրք՝ ամեն մի գեսեատին այգուց 17<sub>14</sub> ռ., վարելահողից 150 ռ.:

Այդ հաշուով, հարուստներից մէկին տուրքը ընկաւ 520 ռ.

միջակներից » » » 247 »

աղքատներից » » » 15 »

Այսինքն, հարուստի վճարելիքը բարձրացաւ 3 անգամ, միջակինը—1<sup>1/3</sup> անգամ, իսկ աղքատինը իջաւ, և այն էլ 12 անգամ:

Բօրչալուի գաւառի Շուլաւէր գիւղում բոլոր տուրքերը բաժանում էին ընտրուած պատգամաւորների խզճի համեմատ: Պատղամաւորներն էլ, ի նկատի ունենալով տուրքերի անարդար և համարեան հաւասար բաժանումը մօս անցեալում, աշխատում էին միայն կարելիին չափ մօտենալ կարողութեան սկզբունքին, բայց մինչև 1901-ը չափ քիչ առաջադիմութիւն էին արած այդ ուղղութեամբ: 1901-ից չը նայած որ պետական հարկը Շուլաւէրում զգալի չափով պակասել է (11 հազարից մինչև 7 հազ.), տուրքերը գցած են հողի վրայ, առանձին տուրքի են ենթարկուած արօտատեղերը, մի մասը միայն վճարելով «կարողութեան» համեմատ: Շնորհիւ այս փոփոխութիւնների, հարստութեան զանազան աստիճանի ընտանիքների վճարելիք տուրքերի ծանրութիւնը այդ գիւղում փոխուեց զգալի կերպով:

Սեփականատէր ընտան. մէկը 36 ռ. տեղ, 1901-ից վճարելու է 24 ռ.

Գիւղացի հարուստ	>	» 450	»	»	»	385	»
» միջակ	»	» 22	»	»	»	95	»
» աղքատ	»	» 6	»	»	»	15	»

Այսպիսով, սեփականատէր հարուստի տուրքը բարձրացած է 7 անգամ, հարուստ գիւղացունը ննացած է նոյնը, միջակ գիւղացունը իջած է  $2\frac{1}{2}$  անգամ, իսկ աղքատինը պակասած է 4 անգամ։ Նոյն տեսակ փոխիստութիւններ դէպի լաւը նկատում են և այլ գիւղերում։

Զը նայած այս ամենին, չը պէտք է կարծել, որ «հողային տուրք» մտցնելով, մտցնւում է հարկային ամենաարդարացի ձեզ կարողութեան կամ եկամուտի սկզբունքի համեմատ։ Ինչպէս յայտնի է, գիւղացու եկամուտը ստացւում է ոչ միայն հողից, այլ և անասնապահութիւնից, այգեգործութիւնից, բանջարանոցներից, վաճառականութիւնից ևայլն։ Աշխատանքի ամեն ձեւ, կարողութեան ամեն ձիւղ տալիս են եկամուտ՝ համեմատ այդ ձիւղում զբաղեցրած կապիտալի, համեմատ կարողութեան արժեքի չափի։ Լինի 1,000 սուրլին բանեցրած այգեգործութեան, գիւղացնտեսութեան, անասնապահութեան, վաճառականութեան, չերամապահութեան, թէ այլ այս կամ այն շրջանում ընդունած ձիւղի վրայ, նա կը բերէ մինոյն (տեղին համապատասխան) 10, 15, 20%—ը։ Լինի 10,000 սուրլի արժեքուոր կարողութիւնը հողի, անասունների, տների, առձեռն գըրամի մէջ, զա համարեա թէ մինոյն է, որովհետեւ ներկայացնում է մի աղքեր, որ բերում է (ահների կամ քօղարկուած կերպով) մօտ 500—1,000 ռ. գուտ եկամուտ։

Ես ենթադրում եմ, ի հարկէ, որ 1,000 սուրլի բանեցնողը միատեսակ հմուտ է բոլոր լրիցուած ձիւղերում և որ եկամուտի մէջ պիտի համարել հողերի գների տարէց տարի բարձրանալը, որ քօղարկուած է լինում։ Այլ կերպ չի էլ կարող լինել, հակառակ դէպքում մարդիկ կը թողնէին այս կամ այն քիչ արդիւնք բերող ձիւղը և իրանց կարողութիւնն ու աշխատանքը կը գործադրէին այլ՝ աւելի եկամուտ բերող ձիւղի վրայ, սա օրէնք է տնտեսական գիտութեան մէջ և յայտնի է ամենաավերջին գիւղացուն։ Այդ տեսակէտից 1901 թ. մտցնելիք տուրքը հողի վրայ, իբրև տուրք հարստութեան մի ձիւղի, համարելու է նեղ և միակողմանի։ Դրա հետ կարելի է հաշտուել միայն այն տեսակէտից, որ հարստութեան միւս ձեւերի որոշելը գեռ ևս զըժուար է, և որ հողային տուրքը կազմում է սկիզբը ապագայում մտցնելիք կարողութեան և եկամուտի տուրքերի լայն մտքով։ Սահմանափակ է հողային տուրքերի սկզբունքի աղղեցութեան

նշանակութիւնը և հարկերի տևելի արդարացի բաժանման նը-  
կատմամբ համագիւղացիների մէջ:

Ինչպէս վերև տեսանք, տուրքերի բաժանումը կարողու-  
թեան բոլոր ճիւղերի համեմատ կատարուում է շատ և շատ քիչ  
տեղերում: Նոր հաստատուած հողային տուրքը նազաստում է,  
ինչպէս վերև տեսանք, տուրքի բաժանման՝ հողի համեմատ,  
այսինքն համեմատ զիւղացու կարողութեան և եկամուտի մէկ  
ճիւղի, բայց ոչ բոլորի: Եթէ հարկերը ամեն տեղ մտցնե-  
լու և բաժանելու լինեն նոր օրէնքի համեմատ, արդարութիւնը  
կը հաստատուի նոյն չափով, ինչ չափով որ նա գոյութիւն ու-  
նի ներկայումս հայ-վրացական հողագործական շրջանում, ուր  
տուրքերը համագիւղացիների մէջ վաղուց ի վեր բաժանուում  
են գլխաւորապէս հողի համեմատ:

Նոր-Բայազէթի գաւառի կուլալի գիւղում, օրինակ, ինչ-  
պէս վերև տեսանք, տուրքը համապատասխան է բաժանուող  
հողի: Միջակ գեսեատինը վճարում է 174—180 ռ. տուրք և դրա  
չնորհի:

Հարուստ 12 դես. հող ունեցող ընտան. ծանրաք. է 210 ռ. հարկով:  
Միջակ 52 » » » » » 98 » »  
Աղքատ 42 » » » » » 76 » »

Բայց կուլալի գիւղում կարողութիւն կամ եկամուտ բերող  
հարստութեան հողի հետ միասին կազմում են և անասունները,  
դրամը, տները: Զանազան կարգի ընտանիքների ամբողջ կարո-  
ղութեան արժէքը (առանց հողի) ու ստացած եկամուտը այդ  
գիւղում չեն համապատասխանում հողին, այլ հաւասար են  
(սուբլով):

Ընտան.	Կարգեր.	Կարողութ.	Եկամուտ	Նախոք	Զատ արդինք (+)
		ռ.	ռ.	ռ.	կամ վնաս (-)
Հարուստ		2,948	1,353	1,231	+ 122
Միջակ		738	318	267	+ 51
Աղքատ		20	40	45	- 5

Այդ պատճառով էլ, համեմատելով ամեն մէկի վճարելիք  
տուրքը ամեն մի կարողութեան և եկամուտի տուրքի հետ,  
մենք տեսնում ենք որ վճարելիք տուրքի և կարողութեան ու  
եկամուտի մէջ չը կայ և ոչ մի ներդաշնակութիւն: Այսպէս,  
վերև բերած օրինակում տուրքը կազմում է:

Հարուստի կարողութեան 07% /, իսկ եկամուտի 15% /

Միջակի » 13 » » » 31 »

Աղքատի » 375 » » » 188 »

Հոկտեմբեր, 1901. 14

Այսինքն՝ չը նայած տուրքի բաժանման հողի համեմատ, տուրքը շատ ու շատ ծանր է աղքատի համար, տանելի՝ միջակի և թեթև հարուստի համար ։ Նոյն եղբակացութեան ենք դալիս մենք և կովկասի այլ շրջանների բիւրջէները քննելիս:

Ունեորների և չունեորների մէջ հաւասարակշութիւն մտցնելու համար՝ տուրքը վճարելու նկատմամբ, անհրաժեշտ է որ տուրքը բաժանուի համեմատ ամեն մէկի ամբողջ կարողութեան կամ ամբողջ եկամուտի՝ ինչ ճիւղերից էլ կազմուած լինի այդ եկամուտն ու հարստութիւնը:

Սակայն այդ էլ բաւական չէ:

Այն պատճառաբանութիւնները, որ առաջ բերին Եւրոպայում պրօգրեսսիւ տուրքի սկզբունքը, գոյութիւն ունեն և մեր գիւղերում՝ զանազան կարգի ընտանիքների վերաբերմամբ վճարել տուրք, որոց տոկոսի չափով (օրինակ 100/0), Կուլալի գիւղի աղքատին շատ ծանր է. նրա ամբողջ կարողութեան արժէքն է 20 ռ., տարեկան եկամուտը 40 ռ., իսկ ծախսը 45: Տարէց տարի նրա պարտքն աւելանում է 5 ռուբլով:

Տասը տոկոս եկամուտից տուրքը այդ գիւղացու համար (4 ռ.) հաւասար է նրա կարողութեան 250/0-ին: Վճարել նրան հինգ ռուբլի տուրք, կը նշանակէ զրկել նրան անհրաժեշտ չոր կտոր հացից, որ աւելանող տուրքը 5-ից բարձրանայ մինչև 9-ը: Այլ է նոյն չափով տուրքը միջակ և հարուստ գիւղացիների համար: Սրանց վճարելիք (100/0) տուրքը (318 և 1353 ռ.) հաւասար է իրանց կարողութեան 40/0-ի: Նա վերցւում է միմիայն զուտ արդիւնքից և չի կարող ոչ մի քայլայիչ ազդեցութիւն ունենալ գիւղացիների մնտեսութեան վրա:

Այս օրինակը պարզում է, կարծեմ, որ համագիւղացիների մէջ անհրաժեշտ է տուրքերը բաժանել ամբողջ կարողութեան համեմատ, ի նկատի առնելով կարողութեան բոլոր ճիւղերը և տունը, և՛ դրամը, և՛ անասունները, իսկ աղքատ չունեորին բոլորովին ազատելու է տուրքից: Վերջինս անում է նոյն իսկ պետութիւնը՝ քաղաքներում ազատելով չքաւորներին ընակարանավարձի տուրքից և անձեռնմխելի համարելով ապրուստի ամենանհրաժեշտ պիտոքները: Այսպիսով քաղաքացիական գործերի կանոնադրութեան 973 յօդուածի հրման վրայ հչ մի դէպքում չեն կարող պարսկի համար ծախուել՝ 1) ամենօրեայ հագուստը, տարուայ եղանակի համեմատ, 2) սպիտակեղէնները և տան անհրաժեշտ կահ-կարասիքը, 3) մահճակալներն ու անկողինները, 4) մի ամսուայ ապրելու պաշարն ու փայտը, սրբերի պատկերները (ոչ չքեղ), 5) ընտանիքին վերաբերեալ թղթերը, 7,8) ծառայողների պաշտօնական հագուստը և դրամը, 9) այն

շարժական իրերը, որ կազմում են անշարժի մասը, 10) գիւղացիների շարժական իրերի այն մասը, որ անհրաժեշտ է գիւղացու պարագմունքի համար: Եթէ աղքատներին տուրքերից աղատելու սկզբունքով զեկավարում է ինքը պետութիւնը, հասկանալի է որ նոյն սկզբունքները աւելի պարտաւորեցուցիչ պիտի լինեն զիւղի համայնքի համար, որովհետև վերջինս աւելի սերո կապով է կապուած իր անդամների հետ, քան թէ պետութիւնը իր հպատակների:

Գիւղերի հարստութեան ամենամեծ աղքիւրներից մէկը— հողը՝ ընդհանուր սեփականութիւն է, երբ մէկը շատ է օգաւում հողից, միւսը տուժում է և ընդհակառակը: Ընդհանուր են գիւղում և աղքիւրները, և ճանապարհները, և լուսաւորութիւնը, և հովիները: Չունեսոր ընտանիքում աղքատութիւնից առաջ եկած հիւանդութիւնները ոչ միայն վնասում են աղքատին, այլ և հարևան հարուստին, աղքատի ուժասպառ անսառնների հիւանդանալը ժանտախտով վարակում է և ունեորների անսառններին: Տուրքերի կանոնաւոր և ժամանակին վճարելը պետութեան առաջ ապահովում է ամբողջ զիւղը, չունեորի տեղ վճարում է ունեորը, որի շահը ակներև պահանջում է, որպէս զի զիւղը աղատ լինի տուրք վճարելու անընդունակ չքաւորներից: Իսկ չունեորներից աղատ լինելու համար անհրաժեշտ պայման է որ զիւղի այդ խեղճ դասակարգը բոլորովին աղատ լինի պետական հարկերից ու զիւղական ծախսերից:

Այս սկզբունքներով զեկավարուելը ունի վերջապէս և մի այլ հիմք:

Ինչպէս յայտնի է, հին նահապետական կարգերը իրանց յատուկ խոչոր թերութիւնների հետ ունէին և որոշ գրական կողմեր: Այդ գրական կողմերից ամենազլիմաւորը կայանում էր նրանում, որ նատուրալ (նահապետական) տնտեսութեամբ ապրող զիւղերում թոյլ էր առետուրը, ուստի չէր կարող լինել և չը կար ներկայիս անհաւասարութիւնը ու մրցման ճիգը: Անհատական եռական ձգտումների առաջ սահմաններ էին կառուցանում ադաթներն ու սովորութիւնները Ադաթը կամ չը գրուած օրէնքը պահանջում էր որ տուրքերը վճարուեն կարողութեան համեմատ: Ադաթը «համլիա-չարէքի» սկզբունքով պահանջում էր որ զանազան պատահարների ժամանակ (ժամանակա, կարկուտ, հրդեհ) վնասուողներին օգնութիւն հասցնէին չը վնասուածները իրանց կարողութեան չափով: Հարսանիքի, թաղման հանդէմները սահմանափակուած էին այն տեսակ սովորութիւններով, որ հարսանիքի և թաղման ծախսերը կատարելու հա-

մար գալիս էին օդնութեան իրանց կարողութեան չափով համագիւղացիք և ազգականները:

Աղաթը պահանջում էր որ հիւրերից և ճանապարհորդներից ոչինչ չառնուի, որ վերջիններս իջնեն և հիւրասիրուեն ունեորների մօտ... Մի խօսքով, առաջ սովորութիւնները այնտեսակ բնաւորութիւն ունէին, որ ապահովում էին գիւղացուն զանազան պատահարներից, միջոց էին տալիս թոյլին ոսքի կանգնելու, որպէսզի ուժեղանալով նա կարողանայ իր կողմից օդնել մի ուրիշ թուլացածի: Ստեղծուած էր մի այն տեսակ գրութիւն, երբ անհաւասարութիւնը անկարող էր ընդունել շօշափելի ծաւալ:

Վերջապէս այդ՝ «բախտից» կամ ընդունակութիւնից փոքր չափով առաջ եկած անհաւասարութիւնը սահմանափակելու համար, կարծես, աղաթը պահանջում էր որ ծերացած հարուստը՝ «հոգին փրկելու համար», զիկած հարստութիւնը գործադրէր հասարակական կարիքների համար՝ շինէր աղբիւր, կառուցանէր կամուրջ, եկեղեցի:

Այսպիսով նահապետական կեանքը, չնորհիւ իր աղաթների ու սովորութիւնների բացի գիւղացիններին ապահովելուց զանազան պատահարներից, զցում էր ունեորների և մանաւանդ հարուստների վրայ նաև հասարակական կարիքներից շատերի կրտարելը: Հասարակական պայմանների փոփոխութեան հետ միասին սկսուեցին փոխուել և այդ գեղեցիկ սովորութիւնները: Առետրական շրջանը, աշխատանքի բաժանումը, ծայրայեղ տնհատական սեփականութեան գաղափարը և հարկային նոր ձևերը, առաջ մղեցին «Ես»-ի և մրցման սկզբունքները և հպատակեցրին նրան ամեն ինչ Ունեորների օգնութիւնը չունեորին՝ պատահարների ժամանակ համարում է բայցառութիւն. հարսանիքները և թաղման ծէսերը քանդում են շատերի տները, պաշտօնեանների և մասնաւոր մարդկանց հիւրասիրութիւնը կատարում է համայքների հաշուով, «հոգի» փրկելու գաղափարի տեղ առաջ է եկել տոկոսով փող տալը գրացուն, իսկ աղբիւրների ու եկեղեցինների տեղ կառուցւում են գործարաններ, բանկեր: Հին աղաթների կամ բերանացի օրէնքների կործանումը ունեորների ուժեղանալու վերաբերմամբ հանդիսացաւ մի խոշոր նպաստաւոր պայման, իսկ չունեորների համար կորուստաբեր ուղի: Օդնել ներկայում՝ պահպանել հին սովորութիւնների յիշուած արդարացի կողմները այնտեղ, ուր նրանք գեռ ևս գոյութիւն ունեն—անկասկած լաւ է, բայց մեծ յայսեր գնել գրա վրայ չի կարելի: Աւելի ևս դժուար է վերականգնել գեղեցիկ նահապետական աղաթները այն շրջաններում, ուր

Նրանք ոչնչացած են նոր կեանքի ուժեղ հոսանքի շնորհիւ։ Հին աղաթների դրական կողմերի փոխարինելու միակ միջոցն է այդ չը դրուած օրէնքների, աղաթների, համապատասխան հաստատել գրաւոր, պարտաւորեցուցիչ օրէնքներ։ Նոր օրէնքների իմաստը պիտի կայանայ նրա մէջ, որ առւրբերը վերցնեն ոչ միայն հողից կամ հողից ստացած եկամուտից, այլ կարողութիւնից առհասարակ և եկամուտի բոլոր աղբիւրներից։ Հարկային ձեր ապաղայ յանկալի փոփոխութիւնը կայանալու է նրանում, որ չքաւորները բոլորովին ազատուեն հարկերից, իսկ մեացածները վճարեն համաձայն պրօքեսսիւ տուրքի սկզբունքի։ Վերջապէս մեր բոլոր զիւղերը վաղուց ի վեր ծարաւ են զգում մի այն տեսակ տեղական գրամարկղի, որ զանազան պատահարների ժամանակ կարողանար օգնութեան համնել չուներներին։

Բայց այս ամենը հեշտ է աւելի ասել, քան իրագործել, բնականաբար կը մտածէ ընթերցողը։ Նոր օրէնքներ հաստատելը պահանջում է ժամանակ, դու վերջապէս մեր ձեռքին չէ։ Իսկ ինչ անել մեր զիւղերը մինչև այդ օրէնքի հաստատելը, ինչով կարող ենք օգտակար լինել մենք, որ ապրում ենք ժողովրդի մէջ և տեսնում զիւղերում դոյցութիւն ունեցող հաղար ու մի անարդարութիւնները հարկերի բաժանման վերաբերմամբ։

Բարեբախտաբար կայ ճանապարհ և մեր, հասարակ մահկանացուներիս, գործունէութեան համար։

Հողային առւրբին վերաբերեալ կանոնադրութեան § 24-ի իմաստով, այդ հարկերի ժողովելը, պահելը, բաժանելը համագիւղիների մէջ կատարում է համաձայն 164, 168, 171, 172, 175, 187 և 188—191 §§-ի ընդհանուր կանոնների (Օсоб. որով. I և T. 18. Ըստ. Յան. պր. 1876 թ. և պօ. 1890 թ.): Իսկ այդ յօդուածների իմաստը կայանում է նրանում, որ ամեն զիւղական հասարակութիւն իր ամբողջ կազմով պատասխանատու է պիտակուն, տեղական և զիւղական տուրքերի կանոնաւոր վճարելում և վայելում է համարեալ լիակատար իրաւունքներ տուրքերը բաժանելու մէջ՝ վերաբերմամբ համագիւղիների։

Ի՞նչ ձև որ կ'ընդունէ զիւղի մնանամանութիւնը հարկերի բաժանման, ժողովելու, պահելու վերաբերմամբ, այն էլ պարտաւորւցուցիչ է բոլորի համար և ունի օրէնքի ոյժ։ Այսպիսով շնորհիւ օրէնքի յիշում կէտերի, բացւում է լայն ասպարէզ բարեկարգել զիւղերում դոյցութիւն ունեցող հարկային ձեռքը իրանց զիւղայիների միջոցով։

Ճիշտ է, բարեփոխութեան այս ուղին աւելի ևս կը բորբոքէ այն մեծ մասամբ՝ Բայֆայական կոիւները, որ դոյցութիւն

ունեն գիւղերում հէնց հիմա. ճիշտ է, գիւղերի ամենաազդեցիկ մասը՝ հարուստները, որոնց ձեռնտու չէ հարկերի բարեկարգելը, կը զիմեն ամեն սաոր միջոցի՝ դրան խանգարելու համար. ճիշտ է, վերջապէս, որ ժամանակի ոգին աւելի նպաստաւոր է անհատականութեան ու անհաւասարութիւն, իսկ ժամանակի ոգուն զիմաղրելը դժուար է, համարեա անկարելի. բայց անուրանալի է և այն, որ այդ խնդիրների լուծման վերաբերութեամբ մեծ նշանակութիւն ունի ժողովրդի զիտակցութիւնը, արդարութեան գաղափարի ըմբռնումն և օրէնքի պաշտպանութիւնը: Եթէ հասարակական հոսանքի առաջ կանդնելով չի կարելի նրա ուղին փոխել, կարելի է շեղել այդ հոսանքը դէպի աջ կամ ձախ: Դրա համար հարկաւոր է վարուել այնպէս, ինչպէս այդ անում է խելացի ջրափեռը, որ գետի հոսանքը փոխելու համար պատ չի կանգնեցնում ջրի առաջ, այլ թեքում է հոսանքը վերը կանգնեցրած փոքրիկ-փոքրիկ պատնէշներով: Վերջապէս «ժամանակի ոգին» անշարժ չէ և ներկայիս մասին մենք ունենք մի քիչ թերի զաղափար:

Վերը բերուած էին օրինակներ, թէ ինչպէս նահապետուկան կարողութեան սկզբունքից հարկային ձեր մի կողմից անցնում է դէպի ընտանիքի սկզբունքը, բայց որ և շատ տեղերում պահպանում է և զարգանում: Վերջի տեսակ գիւղերը սրանք են՝ Խըրթըզը, Վարդաշէնը, Մեղրին, ուր բազմակողմանի, զարգացած ու ինտենսիվ է գիւղական տնտեսութիւնը, ուր համեմատաբար ուժեղ է ժողովրդի զիտակցութիւնը:

Ինձ յայտնի են օրինակներ, երբ ամենախուլ գիւղերում հարկերի և հողերի բաժանման ժամանակ աղքատ զասակարգի պաշտպան ու պարագլուխ են հանդիսացել հարուստ «համփայ» գիւղացիները: Դրանք այն քրիստոնեայ մարդիկն» են, որոնք կամ դեռ չեն մոռացել իին աղաթները, կամ որոնց խիզճը մեռած չէ, որոնց սրտում կայ կենդանի Աստուած: Բացի այդ, չ՛որ քանի գնում, կեանքը աւելի բարդուում է, հողագործութիւնը ստանում է աւելի ինտենսիվ բնաւորութիւն, որի հետ միասին հարկերի բաժանման վերաբերմամբ հաւանական է սպասել և աւելի բարդ ու արդարացի ձեռքի առաջ զալը: Եթէ մնը ինտելլիգենցիան—խօսքս հասարակական շահերի մասին մտածող ու ցաւողների մասին է և ոչ դեպիօմաւոր «կրթուած» կարիերիստների—եթէ մեր իսկական ինտելլիգենցիան պաշտպան հանդիսանայ չունեոր մեծամասնութեան, եթէ մենք մտնենք գիւղերում գոյութիւն ունեցող հարկային կոհեների մէջ՝ մտցնելով զիտակցութիւն հարկերի արդարացի բաժանման մասին համագիւղացիների մէջ, զաղանի քուէարկութեան և այլ օրինական միջո-

ցով, կը հասնենք նրան՝ որ յաղթութիւնը անպայման արդարութեան կողմը կը լինի։ Ազատելով «աղքատ», «չունեոր», «չարեքաւոր», կով լծող, հողից զուրկ գիւղացիներին պետական և գիւղական հարկերից, մենք միջոց կը տանք դրանց ուշքի կանգնելու։ Օգնութեան գալով համայնական ընդհանուր միջոցներից, պատահարներից վասուածներին, մենք կը սահմանափակենք վաշխառուների գործունէութիւնը, կ'իջեցնենք տոկոսը։ Բաժանելով հարկերը եկամուտի բալոր ճիւղերի, —և հողերի, և շինութիւնների արժեքի, և անասունների, և առձեւն դրամի համեմատ, մենք որոշ չափով կը սահմանափակենք ներկայ ուղղութեան կորստաբեր հետևանքները։ Այսպիսով մենք սահման կը դնենք ներկայ կացութեան վատ կողմերին, որ անհաւասրութեան հետ միասին ուժեղացնում է գիւղերի պրօլետարիատը, բորբոքում է դասակարգացին կոփեր, նպաստում է անքարոյականութեան և յանցանքների աւելանալուն։

Հարկաւ այս ամենը հեշտ չէ։

Այդ տեսակ գործունէութիւնը կը պահանջէ մեր ինտելիգենցիայից եռանդ, ժամանակ, պատճառ կը լինի շատ անախորժութիւնների։ Բայց կայ արդեօք մի կենդանի և կարեոր գործ, որ չը պահանջէ այդ կարուստները. կայ արդեօք այլ ճանապարհ մեր գիւղերի մէջ հասունացած վէրքերը բուժելու համար։

Ինձ թւում է թէ ոչ։

Մեր գիւղերում գոյութիւն ունեցող հարկային ձևի բարեկարգութիւնը շատ աւելի մեծ և կարեոր է ժողովրդի համար, քան մեր գրականութիւնը զբաղեցնող այլևայլ հարցեր, որոնք հետաքրքիր են միմիայն քաղաքացիների և գրագէտների շատ նեղ շրջանի համար։ Հարկերի աւելի արդարացի բաժանման ինսդիրը համագլուղցիների մէջ կազմում է այն անհրաժեշտ և հասունացած խնդիրներից մէկը, որ իր մեծ տնտեսական և բարոյական նշանակութեամբ համարուելու է օրուայ հարց։ Միայն այդ տեսակ լայն և գիւղերի համար կենսական նշանակութիւն ունեցող հարցերով պարապելը կը պահէ մեղ ոչ միայն տեսականապէս, այլ և գործնական կերպով, իսկական գաղափարական հարցերի շուրջը, և կը նոպաստէ այն բանին, որ անձնական թայֆայութիւններից մենք կ'անցնենք լուրջ գաղափարական կուսակցութիւնների։

Ա. ԶԱՒԱՐԵԱՆՑ

# ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԱՇԽԱՐՀԻՑԻՑ

Հ Ա Յ Ո Յ Թ Ա Տ Ր Ո Ն

## I

Հայոց թասորոնը կովկասում, չը նայած մօտ կէս դար գոյութեան, դեռ այսօր էլ հաստատ հողի վրայ չի կանգնած. նա մի անարմատ տունկ է, ինչպէս առհասարակ և բոլոր զուտ հայկական հիմնարկութիւնները, կարծես հայի դպրոցը, թատրոնը, գրականութիւնը (էլ չնկք խօսում նրա հոգեսր գործերի մասին...) ճակատագրի անէծքով փակուած լինեն մի կախարդուած շրջանակի մէջ, որ նրանց միշտ պահում է խղճուկ, անկերպարան, թուլակազմ դրութեան մէջ։ Հայը միայն այնքան է զբաղւում այդ հաստատութիւններով, որքան հարկաւոր է միմիայն կիսատպատ ձեռվ «եօլա տանել» գործը։ Եւ դժբախտութիւնը այն է, որ չի երեսում տրամադրութիւն փոխել իրերի այդ գրութիւնը։ Այդ հանգամանքը իրաւոնք է տալիս եզրակացնել, որ մեր հասարակական գործերի ողորմելիութիւնը շատ խոր պատճառներ ունի։ Այդ պատճառներից ամենագլխաւորը հայի հակա-հասարակական ողին է, նրա մէջ հասարակական օգտի գիտակցութեան բացակայութիւնն է։

Հայը շատ նուրբ կերպով է ըմբռնում մասնաւոր, անձնաւկան շահը, իսկ «հասարակական շահ» գաղափարը անմատչելի է նրա խելապատակին։

Խօսէք անհատական, մասնաւոր շահից և ոչ միայն հայ վաճառականը, այլ և ինտելիգէնտը կը զարմացնեն ձեզ իրանց նուրբ ըմբռնողութեամբ, իսկ փոխէք ձեր խօսքը և հրաւիրէք հայի ուշադրութիւնը «հասարակական օգտի» վրայ և նա սառը ջուր կ'ածի ձեր զլիսին իր հօտտենտոտեան անտարբերութեամբ, կամ թէ կը բաւականանայ մի քանի խրատներով, որոնց իմաստը այն է՝ որ ամեն մարդ նախ իր մասին պէտք է հոգայ, նախ աշխարհիս բոլոր վայելքները ինքը տեսնի և ապա, երբ

ունենայ պալատի նման բնակարան, տասնեակ ծառաներ, սեփական մի գործ, որ ապահովում է նրա արքայավայել հնատել-վերկենալը—ինչու չէ, կարելի է և անուան մասին մտածել ու «քարեղործութիւն», «աղջասիրութիւն» անել: Այդտեղ էլ ուրեմն գուք տեսնում էք դարձեալ մի նեղ եսական, մնափառ ձրդտում, բայց ոչ զիտակյական վերաբերմունք դէպի հասարակական շահը:

Բչ միայն մեր «ապէրները», այլ և նրանց գործերի զիալ-լօմաւոր «կառավարիչները» շատ լաւ հասկանում են «Փիրմայի շահերը», իսկ թէ ինչ է «հասարակական շահ»—գա մնում է մի անհասկանալի առեղծուած գրանց համար, թէկուզ այդ այրութենական ճշմարտութիւն լինէր նոյն իսկ Քրիստոսից մի քանի դար առաջ ապրող ամենագուեհիկ մի յոյնի համար, որ մասնաւոր, զուտ անհատական շահի նուիրուած գործունէութիւնը համարում էր միայն ստոր զարգացման մարդկանց վայել պարապ-մունք, իսկ շատ բարձր էր զնուհատում մորքի և գնդարուեսաի ներկայացուցիչներին:

Անցել են դարեր, հայը մուտք է գործել քսաներորդ դարի մէջ, սակայն նրա հասկացողութիւնը հասարակական օգուտ բերող գործունէութեան մասին չի հասել Սօլօնի և Պերիկլէսի համարագործացիների ըմբանողութեան տն-կամ: Այդ շատ պարզ երնում է հայի վերաբերմունքից և դէպի իր թատրոնական գործը:

Հին աթենացին շատ լաւ էր ըմբռնում թատրոնի հասարակական կրթիչ նշանակութիւնը, նրա պետական մարդիկը նայում էին թատրոնի վրայ իբրև ժողովրդի զարգացման ուժեղ մի գործոնի վրայ. Սօլօնը օրէնքով պարտաւորեցնում էր հարուստներին՝ իրանց սեփական ծախսերով հոգալ թատրոնական գրուածքները բեմի վրայ ներկայացնելու մասին: Պերիկլէսը սահմանել էր՝ պետական զանձարանից փող տալ չքաւոր քաղաքացիներին՝ թատրոն յածախելու համար: Եւ այդ հասկանալի է: Թատրոնը իբրև հասարակական հիմնարկութիւն՝ դպրոցի նման պէտք է հանրամատչելի լինի. նա չը պէտք է առնտրական ձևնարկութիւն դառնայ, այլապէս մասնաւոր շահը ըստ մեծի մասին թատրոնը գարձնում է պքուուած անսառականոց, ուր ի վաճառ են հանուում գեղեցիկ կանաքը... Տարօրինակ կը լինէր որ թատրոնը, ինչպէս և համալսարանը, դպրոցը, շահ—զիվիգենտ տային: ընդհակառակը պետութիւնը, հասարակութիւնը կամ «քարեղործները» միշտ պէտք է գեռ նպաստ տան այդ հաստատութիւններին, որ գրանք կարողանան առաջադիմել ծաղկել, կատարելագործուել: Եւ թատրոնը նպաստ ստանում

էր ոչ միայն հին Աթէնքում, այլ և ժամանակակից Եւրոպայում։ Պարիզի ազգաբնակութիւնը մի՛թէ աւելի չէ քան ցիր ու ցան եղած ամբողջ հայութիւնը, բայց որ ֆրանսիացին կը բողոքի իր կառավարութեան դէմ նրա համար, որ այդ վերջինը իւրաքանչյուր տարի պետական գանձարանից Théâtre Français-ին տալիս է 240,000 ֆրանկ օժանդակութիւն, չը նայած որ ներկայացումները միշտ լիքն են լինում հանդիսականներով։ Իսկ հայը, երբ իր մասնաւոր կօմֆօրտին է գալիս, տասնեակ հազարներ չի ինայիլ միմիայն մի առանձնասենեակի կահաւորութեան համար, իսկ վայնասուն կը բարձրացնի, կը բղաւի, որ քանդում է, եթէ տողած գրպանից մի հարիւր սուբլի տայ թատրոնի պահպանութեան համար նա պահանջում է որ թշուառ վարձատրութիւն ստացող, միշտ անապահով հայ գերասանը կաշուից դուրս գայ, բայց շարունակի քաղցած փորով զուարճացնել մեր կուշտ «ազգասէրին», երբ սա կը բարեհաճի երբեմն բախտաւորացնել հայոց թատրոնը իր փայլուն ներկայութեամբ։ Ի՞նչ հոգ այդ պարոնների համար որ թատրոնը պէտք է իր տեսակում մի ժողովրդական համալսարան լինի. ուրեմն պէտք է նա հանրամատչելի գտանայ իր գնով էլ։ Ի՞նչ փոյթ որ միայն ապահովութիւնը կարող է բեմ գրաւել չնորբով և պատրաստած զերասանների անձնուէր և յարատե գործունէութիւն։ Սակայն այդ չի զբաղեցնում մեր կուշտ պարոնին, որ կարող է օպերա յաճախել կամ արագ գնացքով Մոսկուա, Պետերբուրգ գնալ՝ թատրոններ այցելելու համար...

Մի քանի իդէալիստներ անկեղծ հաւատում են որ մեր դերասանները իրանց իրանց ոյժերով, առանց հասարակական օժանդակութեան, կարող են գլուխ բերել գործը. բայց թէ ի՞նչ կարելի է անել «զերասանական ընկերակցութեամբ», այդ գժուար չէ գուշակել և այժմ։ Հոկտեմբերի 9-ին նշանակուած հայերէն ներկայացումը («Ալերուականների յետերից») տեղի չունեցաւ, որովհետև տոմսակները չէին բաժանած։ Անկասկած բեպերտուարը որոշ նշանակութիւն ունի, ինչպէս և աջող խաղը. սակայն նախ՝ որքան և զրանք օրինակելի լինեն, դարձեալ չի կարելի յուսալ տոմսակների մուտքով ծածկել անհրաժեշտ ծախսները («Եօլա տանել»—գուցէ), իսկ երկրորդ, չը յիշելով հանրամատչելիութիւնը, պէտք է ի նկատի ունենալ և այն, որ խստապահանջ լինել կարելի է դէպի զերասանները միայն այն ժամանակ, երբ աշխատանքի կանոնաւոր վարձատրութիւն է տրում։ Եւ վերջապէս երբ պէտք է հայը զադարի զոհաբերութիւն պահանջել իր հասարակական գործիչներից, երբ պէտք է զադարի նա արինածարաւ վամպիրի նման արիւն ծծել այն դժբախտ մարդկանցից,

որոնք ծնուել են հասարակական տեխնով և ոչ՝ գրիելու ախորժակով։ Զոհաբերութիւն աւելի արդարացի է սպասել ամրող հասարակութիւնից, քան անհատից։

Սրդ, թատրոնական գործի համար յիշեք վերե բերած մեր փաստերը և դժուար չի լինի հասկանալ թէ որն է հայոց թատրոնի գոյութիւնը սպահովող գլխաւոր միջոցը։ Հասարակութիւնը պէսք է ինքը կազմակերպի թատրոնին օժանդակութիւն տալու գործը։ Այն, կազմակերպի՛. այդ մի գաղափար է, որ չի մտնում հայի գլխի մէջ։ «Թատրոնական ընկերութիւն», թէ «կօմիտէ» կը կոչուի այդ կազմակերպութիւնը, դա կարևոր չէ. կարևոր այն է, որ այդ կազմակերպութիւնը գրած լինի լայն, խելացի հիմունքների վրայ, որպէս զի կենդանի մարդիկ, գործը սիրող անհատներ կարողանան հեշտութեամբ ծառայութիւն ցոյց տալ թատրոնին։ Խելացի կազմակերպութիւնը կարող է այնքան կենդանութիւն և ոյժ տալ թատրոնական գործին, որ առաջ կը գան հայերիս մէջ նաև այնպիսի ունեոր մարդիկ, որոնք կ'ուզենան օգտակար լինել իրանց ժողովրդին՝ թատրոնին նուիրած գումարներով։ Այդպէս ահա ինքը հասարակութիւնը և ունեւոր անհատները զոհաբերութիւններով կարող կը լինեն աւելի հաստատ հողի վրայ գնել հայոց թատրոնը։ Այլապէս նա կը մնայ կախուած երկնքի և երկրի մէջ տեղ, կամ կը նմանի մի անարմատ տունկի, որի կանաչութիւնը վաղանցուի և խարուսիկ է. մինչդեռ խելացի կազմակերպութիւնը կը հեռացնի արուեստի այդ տաճարից անձարներին ու անչորդ արհեստաւորներին և կը գրաւէ գէպի բեմական ասպարէղ տաղանդաւոր ոյժեր, առաջ կը քաշէ ու կը խրախուսէ՝ ապրուստի անասլահովութիւնից ճնշուած բազմամեայ գործիչներին, որոնք մինչև օրս հասարակական քաջութիւն ունեցան սիրած գաղափարի համար երկար տարիների ընթացքում տանջուել, թէն շատ մեծ հեշտութեամբ կարող էին «մակլէր» էլ դառնալ, «ագինտ» էլ, «բուխհալտէր» էլ, «կառավարիչներ» էլ, և առհասսարակ միանդամայն «ապահով» լինել...

Լ. Ա.

## ՏՆԱՅՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՑՈՒՑԱՀԱՆ- ԴԵՍՈՒՄ

Դեռ զարգացած չէ Կովկասի տնտեսական կեանքը, դեռ կատարելագործուած չեն նրա արդիւնաբերութիւնն ու արդիւնագործութիւնը։ Նա ունի բազմաթիւ բնական հարստութիւններ, բայց չունի այդ հարստութիւնները շահագործող համապատասխան կավլատաներ ու գործարաններ։ Ազգաբնակութեան ստուար մեծամասնութիւնը զբաղուած է երկրագործութեամբ։ Բայց այստեղ էլ հողի սակաւութիւնը, հարկերի ծանրութիւնը և կուլտուրայի յնտամնացութիւնն է խոչընդուռ հանդիսանուած։ Ահա հէնց այդ բացասական հանգամանքներն են, որ նպաստում են նրա տնայնագործութեան տարածուելուն և զարգանալուն։ Կովկասի բոլոր գաւառներում էլ այս կամ այն ձեռվ, այս կամ այն չափով գոյութիւն ունի տնայնագործութիւնը։ Նա մեր երկրի տնտեսական կեանքի նշանաւոր ճիւղերից մէկն է հանդիսանուած և այդ պատճառով էլ ներկայ ցուցահանդիսում աչքի ընկնող բաժիններից մէկը կազմում։

Դժբախտաբար այդ բաժինն էլ զուրկ է վիճակագրական թուերից ու բացարութիւններից և ունի մի աչքի ընկնող պակասութիւն, որ կարող է միւր հասկացողութիւն առաջացնել այցելուներից շատերի մէջ։ Պարզենք, այդտեղ ցուցադրուած են ոչ միայն զուտ տնայնագործական, այլ և արհեստագործական իրեր։ Բայց չը որ տնայնագործութիւն ու արհեստագործութիւն երկու տարրեր բաներ են և երբէք չեն կարող միևնույն բաժնում, միևնոյն վերնագրի տակ զետեղուել։

Մուսները «տնայնագործութիւնը» բնորոշում են „домашняя“, „семейная“, „кустарная“ և „побочная при земледелии“ էպիտէտներով, իսկ գերմանացիները՝ նոյն տարկային տալիս են «Hausindustrie», «Hausfleiss», «Hausgewerbe» անունները, ինչպէս տեսնում էք, երկու գէպիտում էլ շեշտուում է «տուն» խօսքը, որովհետեւ աշխատանքը կատարւում է տան մէջ, ընտանիքի

անդամների մասնակցութեամբ։ Ճիշտ է, երեմն տնայնագործութեանը „մելքայ պրոմաշենութեամբ“ կամ «kleingewerthe» անուներն էլ են տալիս, բայց այստեղ էլ նրան չի կարելի շփոթել արհեստների հետ, որովհետև նրանց մէջ մեծ տարրերութիւն կայ։ Արհեստաւորն աշխատում է որոշ պատուէրով, որոշ գնողի համար, իսկ տնայնագործը պատուիրող չունի. նա իր առարկաները պատրաստում է վաճառանոցի անորոշ գնողների համար։ Արհեստաւորի համար իր արհեստն է ապրուստի միակ միջոցը, իսկ տնայնագործի համար բացի զրանց կայ նաև երկրագործութիւնը և անամնապահութիւնը և այնու Պարզ է ուրեմն որ ցուցահանդիսի վարչութիւնը մի սխալ է գործել, արդիւնագործութեան երկու տարրեր ճիւղերը միհնոյն բաժնում և միենոյն անուան տակ զետեղելով։ Սակայն դառնանք բուն ինդրին։

Տնայնագործական բաժնում ցուցագրած առարկաների մէջ իրանց քանակութեամբ առաջին տեղը բունում են բրեղենին իրերը, ուստի հէնց այդտեղից էլ սկսենք նկարագիրը։

Խնչպէս յայտնի է, մեր կովկասը բաւական հոչակուած է իր գորգագործութեամբ ու կարպետագործութեամբ, որոնք երկուն էլ զուտ տնայնագործական կերպարանք ունեն։ Թէ Դազըստանում, թէ Ղարաբաղում, թէ Շիրակում և թէ ուրիշ գաւառներում չափազմնց տարածուած է այդ զբաղմունքը, չափազնց գործածական են նրա արդիւնագործած առարկաները։ Կանացի ձեռքն է աշխատողը, նահապետական վայտէ ոստայնն է միակ գործիքը, բայց նրան նուրբ, նրգան գեղեցիկ իրեր են արտադրում։ Դաշտանում կան ամբողջ ընտանիքներ, որոնք գորգագործութեամբ են պարապում, որոնք գորգեր են պատրաստում նչ միայն տեղական, այլ և արտասահմանեան վաճառանոցների համար։ Բայց ընդհանրապէս վերցրած գորգագործ ընտանիքները գորգ ու կարպետները միայն իրանց սեփական գործածութեան համար են պատրաստում և միայն ամենածայրայեղ, ամենածանր կարիքից ստիպուած են վաճառք հանում և մեծ մասամբ չափազնց էժան գնով ծախում։ Այսպէս օրինակ Ալկըսանդրապօլում 6×3 արշին մեծութեամբ կարպետը վաճառուում է 30—35 ոուբլով։ Այդպիսի մի կարպետ պատրաստելու համար հարկաւոր է մօտ մի փութ մաքուր լուացած բուրդ 10—12 ոուբլի արժողութեամբ, և 4—5 ոուբլու էլ զանազան ներկեր, ուրեմն միայն 14—17 ռ. նիւթեղէն։ Այդպիսով զուտ աշխատութեան վարձ, այսինքն բուրզը գզելու, մանելու, ներկելու և գործելու համար միում է միայն 16—18 ոուբլի։

Այդ ամբողջ գործը պահանջում է միջին թուռվ 140 օրուայ (10 օր գգել, 10 օր մանել, և 1 ամիս 4 հոգով գործել) աշխատանք, ուրեմն օրավարձ գալիս է  $\frac{18 \text{ ո.}}{140}$  =մօս 13 կոպ... Մի ամբողջ օր անընդհատ աշխատել և միայն 13 կոպէկ վարձատրութիւն ստանալ... Ծիծաղելի է, չէ. այս, ծիծաղելի է, բայց գառն իրողութիւն է: Դեռ այդպիսի ստոր չափով է գնահատուում կանացի աշխատանքը, դեռ այդքան խակ է տնտեսական կեանքը մեղանում...

Այդ պատկերն ամբողջացնելու համար պէտք է նկատեմ որ Շիրակն այն սակաւաթիւ վայրերից է, որտեղ գեռ գոյութիւն ունի «նիւթեղէնի փոխանակութիւն» (օմքեն պատցո՞յ), որտեղ դեռ ամբողջ ընտանիքներ զբաղուած են նահապետական ևման ու փոխով». Նրանք բրդավաճառներից առանց փողի բուրդ են վերցնում և իւրաքանչիւր մի փունտ բրդի փոխարէն երկողայգ պատրաստի գուլպաներ տալիս: Դրանց աշխատութեան վարձ մեռում է օրական ամենանշանաւորը 1 զոյգ գուլպայ—10 կոպ: Այդ «ման ու փոխն» էլ զուտ տնայնագործական կերպարանք ունի: Սակայն զրա համեմատութեամբ կարպետագործութիւնն աւելի ձեռնուու, աւելի օգտակար է, ուստի վերջին տարիներում նա կամաց-կամաց յետ է մզում «ման ու փոխը»:

Կարպետագործ ընտանիքների օրէցօր բազմանալը և նրանց փոխադարձ մրցումն իրանց բարերար ազգեցութեամբ աւելի զարգացրին այդ արհեստը: Այժմ Ալեքսանդրապոլի կարպետներըն իրանց նրբութեամբ, գոյների ներդաշնակութեամբ ու զիմացկունութեամբ ամենայն համարձակութեամբ կարող են մրցել այդ տեսակի ամենալաւ նմուշների հետ:

Գորգագործութիւնն ու կարպետագործութիւնը չափազանց տարածուած են նաև Փամբակում, Ղազախում, Գանձակում, Ղարաբաղում, Զանգեզուրում, Ղուբայի, Շամախու, Բագուի շրջակագրում, Սուրմալուի, Կաղզուանի և Ոլթիի գաւառներում և այն: Բուն Վրաստանում գորգագործութիւն բոլորովին չը կայ:

Վերոյիշեալ բոլոր տեղերում էլ զորդ ու կարպետները պատրաստուում են միայն բրդից: Թէ որքան մեծ նշանակութիւն ունի բուրդը կովկասի տնայնագործութեան համար, կարելի է եղբակացնել նրանից, որ միայն Անդրկովկասում է տարեկան 665,000 փութ բուրդ <sup>\*)</sup>, որից 250,000 փութ արտահանուում է գէպի Մարսէլ և ուրիշ տեղեր, իսկ մնացած

\*) „Կավազսկի Կալենդար չ 1901 годъ“.

415,000 փութը գործ է ածւում զուտ աեղական գործուածքների համար: Հիւսիսային Կովկասում ստացվում է 774,000 փութ, բայց միայն դրա 150% է գործ ածւում տեղում: մնացածը արտահնուում է դէպի արտասահման և Ռուսաստան, որովհետեւ բրդեղէնի տնայնագործութիւնը համեմատաբար քիչ է զարգացած լեռնականների մէջ:

Գորգերն ու կարպետներն ունեն բազմաթիւ տեսակներ, որոնք յայտնի են՝ խան, կիւրա, թախտուստու, սօմախ, վարնի զիլի, կիլմ և ուրիշ անուններով: Դրանցից իւրաքանչիւրն ունի իր բնորոշ չափը, նկարը և գոյների գասաւորութիւնը:

Դժբախտաբար ցուցահանդիսում չը կայ ոչ մի նմուշ Շիրակի կարպետներից: Չը կան շատ ու քիչ աչքի ընկնող նմուշներ նաև ուրիշ գաւառներից: Ցուցագրած են միայն մի քանի աննշան գորգեր պատահաբար այս ու այն կողմից հաւաքած: Դրանց մէջ ամենաուշագրաւը Զիբրայէլի գաւառից ուղարկած գորգն է տիկին Բաղդասարեանցի գործած՝  $10 \times 6$  արշին մեծութեամբ:

Հապա ուր են Փամբակի, Ղարաբաղի, Դաղստանի և ուրիշ կողմերի բազմազան նմուշները, ուր են դրանց բացատրիչ թուերը ու տեղեկութիւնները: ԶԵ որ ցուցագրած գորգերից աւելի շատ ու աւելի լաւերը կարելի է տեսնել իւրաքանչիւր «արևելեան մագաղինում» կը ինչումն է կայանում ցուցահանդիսի կրթիչ նշանակութիւնը:

Բրդէ գործուածքների շարքին են պատկանում նաև ցուցագրած բազմաթիւ ջէջիմները, մաֆուաչները, խուրջինները և այլն:

Ինչպէս յայտնի է, զէջիմները գործուում են առանձին կտորներով 6—9 արշին երկարութեամբ և մօտ  $1/2$  արշին լայնութեամբ: Կարելի է այդ կտորները միացնել և մեծ ու պստիկ ջէջիմներ կազմել: Զէջիմները ծախտում են արշինը 50 կոպէկից մինչև 1 ռուբլի, նայելով որակին: Քրգերը գործ են ածում չափազանց նուրբ և երբեմն բաւական ձաշակով ջէջիմներ, որոնք գործ են ածում վարագոյրի համար:

Մաֆուաչներն ու խուրջինները նոյնն են, ինչ որ կարպետներն ու գորգերը: Տարբերութիւնը միայն ձեփ, չափի և գործածութեան մէջն է: Ցուցագրած են բաւականաչափ նմուշներ, որոնցով կարելի է զաղափար կազմել դրանց մասին:

Վերևում Ալեքսանդրապոլի կարպետագործութեան մասին խոսելով, մենք արդէն նկատեցինք որ այդտեղ բանուորական օրակարձը հազիւ 13 կոպէկի է համարում: Պ. Խատիսովի \*) հա-

\*) Կ. Խատիսով: „Կուսարնեալ պրոմաքանակաց կազմ”.

ւաքած տեկեկութիւնների համեմատ գրեթէ այդ միևնոյն չափը տիրում է և ամբողջ Կովկասում: Նրա ասելով մի փութ բրդից դուրս է գալիս 22 ֆունտ բոլորովին պատրաստի մանուածք, որ գործելու համար բանուորուհին գործ է ածում 15—16 օր: Օրական 12 ժամ աշխատելով, նա կարող է գործել միայն  $\frac{1}{4}$  արշին և վաստակել միայն 9—15 կոպէկ:

Վիճակագրական տեսլեկութիւններից երեսում է, որ ամբողջ կովկասում տարեկան մօտաւորապէս 200,000 վութ բուրդ է գնում գորգագործութիւնն ու կարպետագործութիւնն համար: Փութը 6 ոռութիւն հաշուելով, կը ստացուի 1,200,000 ոռութիւն միայն բրդի արժէքը. բայց որովհետեւ արդիւնագործած բուրդը բնականից չորս անգամ թանգ արժէ, ուստի կարելի է ասել, թէ կովկասի գորգագործութիւնն ու կարպետագործութիւնը տարեկան 5 միլիօն ոռութիւն արժողութեան իրեր է արդիւնաբերում: Դժբախտաբար բուն աշխատաւոր տարրը շատ քիչ օգուտ է ստանում այդ մեծ գումարից, որովհետեւ նա զրկուած է անձամբ վաճառահանելու իրաւունքից և իր դառն աշխատութեան արդիւնքը  $\frac{1}{2}$  կամ  $\frac{3}{4}$  գնով յանձնում է հաւաքաղնողին...

---

Կովկասի տնայնագործութեան մի նշանաւոր ճիւղն էլ շալ (մահուդ) պատրաստելն է: Շալագործութիւնը մեծ կամ փոքր չափով տարածուած է առանց բացառութեան բոլոր գաւառներում: Տեղի կամ արդիւնաբերող ցեղի անունից շալերը ստացել են իրանց անունները: Ամենանշանաւոր տեսակներն են՝ լեզգիների, օսետինների, չեչենների, իմերէտինների և գուխուուրների շալերը: Առաջին տեսակը պատրաստում է զլիաւորապէս Դաղստանի գաւառներում, երկրորդը՝ լեռնային Օսետիայում, երրորդը՝ Քութայիսի շրջակացւում եայց:

Կովկասեան շալերը տարբեր որակ ու արժէք ունեն: Կամ այնպիսիները, որոնց արշինը հազի 15—20 կոպէկի է ծախւում (օրինակ Շիրակի շալը), բայց կամ և այնպիսիները, որոնց գինը տատանուում է 5 ոռութիւն մինչև 15 ոռութիւն մի արշինի համար: Իրանց նրբութեամբ ու դիմացկունութեամբ առաջին տեղը բնուում են լեռնականների—մանաւանդ Թաւլինի շալերը, որոնք պատրաստուում են զլիաւորապէս ուզտի և այծի գլխաթիւց: Այդ զըֆտիկը բաւական թանգ արժէք ունի, այսինքն մի ձուաքաշը ( $\frac{1}{5}$  ֆունտ)՝ 25—30 կոպէկով է ծախւում \*):

\*) О. Маркграфъ: Очеркъ кустарной промышленности на сѣверномъ Кавказѣ.

Հենց այդ պատճառով էլ նրանից պատրաստուած շալերն էլ չափազանց թանգ են գնահատում:

Շալերը գործ են ածւում զլիսաւորապէս չուխաների և չերքեղկաների համար: Դաղստանում կան զիւղեր, որոնք ամբողջապէս զբաղուած են չերքեղկայ պատրաստելով: Օրինակ, միայն Լագիչ զիւղը տարեկան 120,000 պատրաստի չերքեղկայ է արտադրում \*): Վերջին ժամանակներս լեռնականների նուրբ շալերը նոյն իսկ եւրոպական գործածութեան առարկայ են գարձել և բաւական քանակութեամբ արտահանում են գէպի արտասահման:

Գալով շալագործութեամբ պարապող կանանց օրավարձին, պէտք է նկատել որ այստեղ էլ նա կանգնած է նոյն ստոր սատիճանի վրայ, ինչպէս զորդագործութեան մէջ: Մարդկարափի հաւաքած տեղեկութիւնների համեմատ շալագործ բանուորուհին ստանում է օրական 10, 12, օ 16, օ և 25 կոպէկ, իրանց գործած շալի նրբութեան ու արժէքի համեմատ: Իւրաքանչիւր ընտանիքի տարեկան զուտ եկամուտը համում է միշտին թուով 25 սուբլու: Իսկ թէ Կովկասի ազգաբնակութեան որ մասն է շալագործութեամբ զբաղուած, այդ մասին, դժբախտաբար, վիճակագրական տեղեկութիւններ չը կան: Ցայտնի է, որ միայն Դաղստանի երեք գաւառներում մօտաւորապէս 51,000 հոգի զբաղուած են այդ գործով և պատրաստում են տարեկան 272,000 կտոր շալ՝ 2,151,000 սուբլի արժողութեամբ: Իսկ ամբողջ Կովկասի արդիւնաբերած շալի արժէքը հաւասար կը լինի minimum  $6^{1/2}$  միլիոն սուբլու \*\*):

Ներկայ ցուցահանդիսում կան շալերի նմուշներ, գրեթէ բոլոր տեսակներից:

Բրդեղէնի բաժինը վերջացնելու համար մի քանի խօսք էլ ենչագործութեան մասին ասենք: Դա բրդի արդիւնագործութեան ամենահասարակ, ամենապարզ տեսակն է, որ տարածուած է զլիսաւորապէս հիւսիսային Կովկասում: Դրա արդիւնաբերած առարկաներն են՝ եափունջիներ, քեչաներ, քեչեցէ զլիսարկներ, կօշիկներ, ձեռնոցներ և այլն:

Եափունջիները պատրաստւում են զլիսաւորապէս սև բըրդից, գործ են ածւում վերարկուների փոխարէն և իրանց որակի համեմատ ունենում են զանազան գներ: Մի եափունջու համար

\*) А. С. Пираловъ: „Краткий очеркъ кустарныхъ промысловъ Кавказа.

\*\*) Ibid.

հարկաւոր է մօտաւորապէս 3 ռ.— $3\frac{1}{2}$  ռ. նիւթեղէն, այդպիսի նիւթեղէնից պատրաստած եափունջին ծախւում է 5— $5\frac{1}{2}$  ռ., այնպէս որ տնայնագործին մնում է միջին թուով 22—28 կոպէկ օրավարձ: Բայց այստեղ մեր խօսքը ամենասովորական եափունջիների մասին է: Կան և այնպիսիները, որոնք վաճառում են 50-ական ռուբլով:

Մարգգրաֆի ասելով հիւսիսային կովկասի իւրաքանչիւր տնայնագործ ընտանիք պատրաստում է տարեկան միջին թուով 15 եափունջ՝ 80 ռ. արժողութեամբ: Իսկ ընդհանրապէս 120,000 հատ—637,000 ռուբլու արժողութեամբ: Դժբախտաբար Անդրկովկասի մասին վիճակագրական տեղեկութիւնները սացակայում են:

Քեչաներն էլ լինում են զանազան չափի ու տարագի, բայց նրանք տնտեսական մեծ նշանակութիւն չունեն, որովհետեւ պատրաստում են զուտ անային գործածութեան համար և շատ քիչ դէպերում են վաճառքի առարկայ դառնում:

Ցուցադրած առարկաների շարքում կան նաև եափունջիների և առհասարակ քեչեղէնի նմուշներ:

Դառնանք այժմ զինագործութեանը, որ մեր երկի տնայնագործութեան նշանաւոր ճիւղերից մէկն է կազմում և որի արդիւնաբերած առարկաներից բաւական հարուստ հաւաքածու կայ ներկայ ցուցահանդիսում: Այդ հաւաքածուի մէջ աչքի են ընկնում զինաւորապէս լեռնականների զէնքերը՝ զարդարուն հրացաններն ու զարաչաններ, սրեր, վահաններ ու սաղաւարտներ...

Ինչպէս յայտնի է, լեռնու կովկասն իր ծոցում պարունակում է հարուստ ու բազմազան հանքեր. բայց կուլտուրայի պակասութեան պատճառով դրանց արդիւնագործութիւնը զեռ ցանկալի աստիճանի վրայ չէ կանգնած, դրանց շահագործումը գեռ հարկաւոր չափով չէ տարածուած: Հին ժամանակներից սկսած կովկասցիների համար ամենայայտնի և ամենահեշտ ձեւով ձեռք բերուող մետաղներն են եղել երկաթն ու պղինձը, ուստի դրանց արդիւնագործութիւնն էլ ամենից շուտ և ամենից շատ է ժողովրդականութիւն ստացել:

Կովկասի բազմացեղ և բազմալեզու ազգաբնակութիւնը ունենալով բնականից պատերազմաէր տեմպերամէնտ և շրջապատուած լինելով աւարառու հարևաններով, բնականաբար անկարող էր առանց զէնքի ապրել: Դեռ 30-ական թուականնե-

րին միայն կագիչ գիւղում 8 զինագործարաններ են եղել \*) և 52 զինագուճառ խանութներ։ Աւելի մեծ քանակութեամբ զինագործարաններ ցրուած էին Դաղստանի լեռնոտ առվներում։ Դեռ այդ ժամանակ քաջամարտիկ լեռնականները զինագործութեան տեխնիկան հասցրել էին այնպիսի բարձր աստիճանի, որ Կովկասեան պատերազմում նրանց վիճականներն աւելի դիմացկուն էին և աւելի լաւ էին գործում, քան թէ ոռւսական հրացանները։ Բազմահոջակ Գունիբում կային մի քանի զինաձուլարաններ, որտեղ Շամիլի հրամանով թնդանօթներ էին պատրաստում։ Կազմիչի գիւղում՝ պատրաստած զաշոյններն այնքան մեծ հոչակ էին սուցել, որ արտահանուում էին նոյն իսկ մինչեւ Ռուսաստան։ Բայ տեղական բնակիչներն այնքան անհրաժեշտ էին համարում լաւ զէնք ունենալը, որ չատ անգամ 200 գլուխ ոչխար էին տալիս մի լաւ հրացանի համար \*\*)։

Ռուսական տիրապետութիւնը Կովկասում հաստատուելուց յետոյ լեռնականներին արգելուեց արագաձիգ հրազեններ պատրաստելը։ Միւս կողմից էլ արտասահմաննեան և ոռւսական մրցումը յետ մղեց նրանց արտադրութիւնները։ Ահա այդպիսով լեռնականների զինագործութիւնը կորցրեց իր աւանդական նշանակութիւնը և այժմ նա գոյութիւն ունի միայն սակաւաթիւ գիւղերում տնայնագործական ձևով։

Զինագործութիւնը մտցրել է լեռնականների մէջ աշխատանքի համապատասխան բաժանումն, Օրինակ՝ Ամուզզա գիւղում ընտանիքներից մի քանիսը պատրաստում են սրածայրերը, միւսը՝ կոթերը, մի քանիսն էլ՝ սրամանները և այլն։ Աշխատանքի բաժանում ափրում է նաև հարեստ գիւղերի մէջ։ Այսպէս օրինակ՝ Կարբուկի գիւղում ընտանիքների մի մասը շինում է հրացանափողերը, միւս մասը կտրատում, յղկում է և ապա վաճառում հաւաքագնողին, որ այդ անպատրաստ ապրանքը բերում, յանձնում է Կուբաչի գիւղի բնակիչներին։ սրանք նոյն կարգով վերջայնում են աշխատանքը և պատրաստի հրացանները վաճառում Կազբկումուխի բնակիչներին։ Այս վերջինները հրացանների կոթերը պճնում են արծաթէ ու սատափէ զարդարանքով և ապա ծախում են \*\*\*։ Աշխատանքի այդպիսի բաժանումն ունի այն առաւելութիւնը, որ տնայնագործներին հնարաւորու-

\*) Вейденбаумъ: „Замѣтки объ употребленіи камня и металловъ у Кавказск. народовъ“.

\*\*) Ibid, 292 եր.

\*\*\*) А. Пираловъ: „Краткій очеркъ куст. пром.“.

թիւն է տալիս աւելի մասնագիտականօրէն աշխատելու և իրանց արհեստն աւելի կատարելագործելու:

Բացի Դաղստանից զինագործութիւնը տարածուած է նաև Նուխուայ, Զիբրայէլի գաւառներում և Քութայիսի նահանգում: Զանազան շրջաններում պատրաստուած զէնքերը ունենում են զանազան գներ: Այդպիսով սրերի գները տատանուում են 1 ռ. մինչև 5 ռուբլի, դաշոյններինը 5—20 ռուբլի, հրացաններինը 5—10 ռ. և այլն: Զինագործ աշխատաւորի տարեկան վաստակը հասնում է 100—225 ռ. \*):

Պղնձագործութիւնն էլ բաւական տարածուած է Կովկասում, որովհետեւ շատ տեղերում գեռ գործածական են պղնձէ ափսէները, սինինները և ուրիշ ամանները: Դժբախտարար ցուցադրած հաւաքածուն այնքան աղքատ է, որ դիտողը երբէք չի կարող գաղափար կազմել, թէ որտեղ ինչ է պատրաստում և ինչպիսի պղնձեղէն է գործածում: Այդ արհեստի մէջ էլ առաջնութիւնը պէտք է տալ լեռնականներին, որոնք ոչ միայն իրանց տեղումն են պատրաստում բազմատարագ ամանիք, այլ և երբեմն շրջում են քաղաքից քաղաք, գիւղից գիւղ և բաւարարութիւն են տալիս տեղական կարիքներին: Այդ բանում ամենից շատ հոչակուած են Դաղստանի կազիկումուխ և Դարզին գաւառների բնակիչները: Յայտնի է նաև Շամախու գաւառն իր պատմական լազիչ գիւղով և Գեօկչայի գաւառը—լանչա գիւղով: Այդ տեղերից բաւական քանակութեամբ պղնձեղէն է արտահանուում նոյն իսկ զէպի Պարսկաստան: Զը նայելով այդպիսի բացառիկ հանգամանքներին, այդ գաւառներից ոչ մի նմուշը կայ ցուցադրուած:

Կաւեղենի բաժինն էլ հարուստ չէ, այստեղ աշքի են ընկնում Դաղստանի Դարլի գաւառոյ ուղարկուած բազմածն փառչերը իրանց նրբութեամբ. իսկ իրեղէնների շատութեամբ առաջնութեամբ նոյն տեղը բռնում է Քութայիսի գաւառը: Երևանի գաւառից էլ նմուշներ կան:

Զափազանց բազմակողմանի և հետաքրքրաշարժ է արձաթեղենի և ոսկեղենի բաժինը, որտեղ ամենամեծ տեղը բռնել են դարձեալ լեռնականները: Եւ զա հասկանալի է, որովհետեւ Դաղստանում գեռ մինչև այժմ էլ գոյութիւն ունեն մի քանի գիւղեր, որոնց աղդաբնակութիւնն ամրողապէս դրազուած է այդ

\*.) Ibid.

գործով։ Լեռնականների պատրաստած արծաթեայ և ոսկեայ իրեղէններն իրանց նրբութեամբ ու զեղանի տեպով նոյն իսկ համաշխարհային հոչակ են ստացել։ Առանձնապէս նշանաւոր են ոսկրի կամ փայտի վրայ ոսկեզօծած կամ արծաթազօծած փորագիր նկարները։ Այդ աշխատանքը կայանում է նրանում, որ ոսկրի կամ փայտի վրայ բզով փորագրում են որոշ ձեի նկարներ և ապա այդ փորուածքի մէջ ամրացնում են արծաթէ թելեր։ Այդ ձեռք են պատրաստում դագիրները, ծխամործները, ձեռնափայտի և արեակալի պյուխները, գրասեղանի զանազան զարդերը և այլն։ Արծաթազործ զիւղերից ամենանշանաւորներն են՝ կուբաչի, կումուկո, Ռւնչուղաթլի, կուբրա և Ռւնցուկուրուրուրն էլ Դաղստանի լեռներում։ Այդ տեղերի վարպետներից շատերը ճմնուը թողնում են իրանց բնակավայրը և այցելում մեծ քաղաքները—Թիֆլիս, Քութայիս և այլն։

Ներկայ ցուցահանդիսում լեռնականների ցուցադրած բազմանմուշ առարկաններից ամենանշանաւորներն են՝ իրրահիմ-օլլու փոքրիկ արկղիկը—(արծաթից տեղ-տեղ ոսկեզօծ) և Շաշխոսվի ծխախոսամանն ու գաշոյնները։

Կողկասի միւս գաւառներում արծաթազործութիւնն ու ոսկերչութիւնը հորցրել է իր անայնազործական կերպարանները և զուտ արհեստ է դարձել։ Այդ արհեստով չափազանց հոչակուած են ախալցիստացինները։ Կարելի է ասել լեռնականներն առաջին տեղն են բօնում փորագիր և սեատած արծաթ իրեղէններով, իսկ ախալցիստացինները դիմուորապէս արծաթէ թելերից շինած նուրբ ու բարդ գարգերով։ Այդպիսի բարդ աշխատանքի մի հետաքրքրաշարժ նմուշն է ներկայացնում ախալցիստի կարապետ Մրապեանցի ցուցադրած արկղիկը, որ բաղկացած է 33,000 կտոր արծաթից, քաշում է 45' մախալ և գնահատուած է 320 ռուբլի։ Այստեղ մեծ արժեք ունեցողը ոչ այնքան արծաթն է, որքան երկարած ու մանրակրկիտ աշխատութիւնը։ Նոյնաման մի արկղիկ էլ ցուցադրել է նոյն քաղաքացի Անրավեանը, որի վիարինան լի է նուրբ ու գեղատեսիլ իրերով։

Դրանցից աւելի ուշագրաւ է ալեքսանդրաստոլցի Համազապապ Ամիրջաննեանցի ցուցադրած արծաթ-ոսկեջուր ժշը, որ շինուած է ամրողապէս մի կտոր արծաթից։ Դա նշանաւոր է իբրև մի գեղարուեստական գործ, որովհետ զարդարուած է մի շաբք նուրբ նկարներով։ Շշի կատարին նստած է ողի Հայաստանին, իսկ նրա շուրջը՝ հին փառքի բեկորները—աւերակները։ Նեղլիկ կոկորդի շուրջը գտաւորուած են Գրիգոր Լուսաւորչի, ո. Մեսրոպի, Խորենացու և Գր. Նարեկացու պատկերները. զրանից ներքի Հայկի, Տիգրան Բ-ի, Տրդատի և Վար-

դանի պատկերները, իսկ շնի փորի վրայ՝ Անիի դիւանատունը, կիսպանդ պարիսպները և ալեզարդ Մասիսն ու ա. իջմածինը: Ճիշտ որ մեծ չնորհք է հարկաւոր այլքամն նկարները մի փոքրիկ անօթի վրայ զետեղելու համար: Այդ նրբազարդ անօթն ամենայն իրաւամբ կարող է մի անգնահատելի զարդ դառնալ ամեն մի հարուստ ընտանիքում: Դինը 200 ռուբլի է:

Այդ շնի մօտ դրած է նոյն պարոնի պատրաստած արծաթ-ոսկեջուր հսկայական գօտին—13 փունտ ծանրութեամբ:

Մնացած արծաթեղին իրեղիններից ամենանշանաւորն են՝  
1. Երեանի արհեստաւոր Արիստակէսեանի պատրաստած նուրբ  
նկարը արծաթէ տախտակի վրայ, որ ներկայացնում է այն նը-  
շանաւոր պատմական բոսէն, երբ Մեծն Պետրոս ալէկոծ ծո-  
վում խեղդուող զինուորին ազատներ էր աշխատում: 2. Երկու  
արծաթ-ոսկելոծ մոմականներ, որ ուղարկուած են Բագուից և  
3. ջահների զարդերի մի փոքրիկ հաւաքածու, որ ուղարկել է պ.  
Արզումանեանցը:

Այժմ կանգ առնենք տնայնագործական բաժնի մի համեստ  
անկինում, որտեղ ի ցոյց է զրուած գործուածքների նմուշ-  
ներ: Գեղեցիկ չէ այդ անկինը, զրաւիչ չեն այդ նմուշները,  
բայց այնուամենայնիւ նրանք զիտողի մէջ մի ուրախալի զգաց-  
մունք են զարթեցնում, որովհետեւ մի օգտակար գաղափարի  
մարմնացումն են ներկայացնում: Դրանք «Քութայիսի մետաք-  
սագործական ընկերութեան» սեփականութիւն են կազմում: մի  
ընկերութիւն, որ այնքան խրատական ու օրինակելի է իր  
կազմակերպութեամբ ու ընդգծած նպատակով:

Արդէն հինգ տարի է որ զոյութիւն ունի այդ ընկերութիւ-  
նը և այդ կարծ ժամարակաշրջանում նա կարողացել է զրաւել  
մօտ 9000 անդամներ: Խւրաբանչիւր աշխատաւոր 10 ո. անդա-  
մակճար տալով, դառնում է այդ ընկերութեան անդամը և զրա-  
նով իրաւունք է ստանում բացի իր օրավարձից, ստանալու  
դիվիդէնտի մի որոշ բաժինը: Այդ ընկերութեան բուն նպա-  
տակն է փոխադարձ օգնութիւն, որ հնարաւոր է դարձնում հե-  
ռուու մնալ կապիտալիստական կեղևքումից և կատարելագործումն  
մտցնել արհեստի մէջ: Իբրև ապացոյց բաւական է յիշել այն  
փաստը, որ այդ ընկերութիւնը մի երկու տարի առաջ Մարտէյ-  
լից հրաւիրեց հմուտ վարպետներ, որոնցից շատ բան սովորեցին  
տեղացիները: Նրա գործած սստայնն էլ տեղականի համեմա-  
տութեամբ ունի մնած առաւելութիւններ: Եթէ եկու խօսքով  
բնորոշելու լինենք այդ ընկերութեան էութիւնը, որէտք է ա-  
սենք թէ դա մի ընկերակցութիւն է, մի կօօպերացիա, որի բազ-

մազան տեսակները չափազանց տարածուած են թէ արևմտեան եւրոպայում և թէ նոյն իսկ Ռուսաստանում:

Այդ ընկերակցութիւնները լինում են՝ սպառող, արգիւնաբերող, վաճառահանող ևայլն: Բոլորի նպատակն է պաշտպանել բանուոր դասակարգի շահերը: Նրանց բարերար ազդեցութիւնն այնքան մեծ, այնքան զգալի է, որ նոյնիսկ յայտնի տնտեսագէտներից շատերին ենթագրել է տալիս, թէ միայն այդպիսի ընկերակցութիւնների չնորհիւ կարելի է հասարակական չարիքը վերացնել և ամբողջ աշխարհին կեղեքող սոցիալական ցաւը բռւժել, որովհետև դրանք միանգամայն վերացնում են չարկքների արմատը—վաճառականութիւնը և նրա կորստարեր մըցումը \*): ... Բայց մի կողմ դնելով այդպիսի չափազանցութիւնները, կարելի է ասել որ այդ ընկերակցութիւնները իսկապէս մեծ օգուտ կարող են հասցնել անօգնական աշխատաւորներին, ուրեմն ցանկալի է օր առաջ տեսնել նրանց տարածուելը մեր երկրում: Կննդանի օրինակները կան. հարկաւոր է միայն հետեւել... Սակայն դառնանք մեր բռւն խնդրին: Ցուցադրած փայտաշէն իրեղնների շարքում գերակշող տեղը բռնում են զարդարուն ձեռնափայտերը, երաժշտական զործիքները, երկրադրժական փոքրազիք իրերը ևայլն: Բայց ամենահատուքրքաշարժը իշխու. Մ. Թումանեանցի ցուցադրած թանկապին նարուին է, որ զետեղուած է մէջաեղի վիտրինայում: Նա շինուած է փայտից և զարդարուած է փըղուկի ու սատափի չափազանց մասը կառոներով:

Տնայնագործական բաւական մեծ տեղ են բռնել և այնպիսի առարկաներ, որոնք տնտեսական ոչ մի նշանակութիւն չունեն և ոչ տնայնագործութեան են պատկանում, ոչ էլ արհեստներին: Դրանց մէջ աչքի են ընկնում բազմաթիւ պնազարդ բարձերն ու մութաքանները և ասզնագործ ու ձեռագործ իրերը: Ասդնագործ առարկաների մէջ առաջնութեան պակը պէտք է տալ տիկին իգմիրեանցին, որի ցուցադրած նուրբ նըկարներից ամենաշանաւորը Լերմոնտովի «Մեր ժամանակուայ հերոսից» վերցրած պատկերն է: Այդ պատկերի մէջ կայ գոյների ներդաշնակութիւն և համաշափութիւն, որ չափազանց դըժուար բաներ են ասզնագործութեան համար: Դրանից յետոյ նշանաւոր է օր. Խօջայեանի ցուցադրած ասզնագործ իրերի հաւաքածուն (թղթադրամ, «Հովոե Օօօզքենիե», բաց արած նամակի կօնվերտ ևայլն), որ զետեղած է մի փոքրիկ սեղանի վրայ:

\*.) ԱԵ'Պ Prof. Ernst Busch: «Die soziale Frage und ihre Lsgsun»

Լաւ են նաև մի վրացուհու պատրաստառ Շօթա Ռուսթավելիի պատկերը, Չետերկինայի—«Երեխաներն այդում» պատկերը և այն: Բայց ամենից թանկագինը, ամենից հետաքրքրաշարժն է Լալայեանի ցուցադրած փոքրիկ պատկերը, որ ասղնագործած է մարդու մազերով—սպիտակ մետաքսի վրոյ: Թէ և այդ պատկերը բաւական փոքր է, բայց անսուամինայնիւ 1000 ռ. է գնահատուած: Եւ դա հասկանալի է, որովհետեւ մազերով մի այդպիսի նկար դուրս բերելու համար անհրաժեշտ է մեծ չորհք, հմտութիւն ու աշխատութիւն:

Ինչպէս վերեսում նկատեցինք, այդ միևնույն բաժնում մասնակցել են նաև մի քանի արհեստաւորներ—(դերձակներ, դարբիններ, կօշկակարներ, գլխարկ կարողներ և այլն)—և հիմնարկութիւններ (Թիֆլիսի Հայուհեաց Քարեգործական Ընկերութիւնը, Թիֆլիսի Աշխատութեան տունը և այլն), որոնք ցուցադրել են իրանց արդիւնաբերած առարկաներց՝ գլխարկներ, կօշկներ, պատրաստի հագուստեղէն, պայտեր, խողանակներ, կար ու ձեի և ձեռագործի արդ ու զարդ և այլն: Բայց մեղ համար միանդամայն անհասկանալի է այդ մասնակցութիւնը, որովհետեւ նրանց բաժինը ոչ տնայնագործութեան է վերաբերում, ոչ այնքան հարուստ է և ոչ էլ մի այնպիսի լրիւ ամբողջութիւն է ներկայացնում, որ զիտողին գաղափար տա կովկասի արհեստագործութեան մասին:

Կարծում ենք՝ ցուցահանդիսի վարչութիւնն աւելի խելացի ու նպատակայարմար գործ արած կը լինէր, եթէ մի յատուկ բաժին նուիրէր զուտ կովկասեան արհեստաներին, որոնք դեռ այնքան բազմաթիւ ու բազմազան են և այնքան մեծ նշանակութիւն ունեն մեր տնտեսական կեանքում: Այդ բաժինը, ի հարկէ, կարող էր տնայնագործական բաժնին կից լինել, բայց ոչ այնպիսի աղքատիկ ու ողորմելի կերպարանքով, ինչպէս այժմ:

Ամփոփելով մեր բոլոր ասածները կովկասի տնայնագործութեան մասին, կարելի է զալ այն եզրակացութեան, որ նա ամենից շատ տարածուած և ամենից շատ կատարելագործուած է Հիւսիսային Կովկասում—զլխաւորապէս Դաղստանում: Եւ դա հասկանալի է, որովհետեւ այդ երկիրը իր լեռնոտ դիրքով երկարատես և ցրտաշունչ ձմեռներով շատ քիչ յարմարութիւններ ունի երկրագործութեան համար: Նրա աղդաբնակութիւնը ստիպուած է բացի երկրագործութիւնից ու անասնապահութիւնից ուրիշ կողմնակի պարապմունքներ ստեղծել, որպէս զի

կարողանայ իր օրական պարէնը հայթայթել, իր ընտանիքի կարիքները հոգալ:

Բացի զբանից բաւական զգալի դեր են խաղացել և պատմական գէսպերը: Դեռ հին ժամանակներից սկսած զանազան հրոսակ ցեղեր ու ազգութիւններ եկել ենցել են կովկասի վըրայով և իրանց արշաւանքներով նրա բնակավայրերը հեղեղել: Այդպիսի պայմաններում արհեստն ու արդինագործութիւնը չէր կարող գաշտավայրերում, տափարակ տեղերում աճել, զարգանալ: Նա կենտրոնացել է համեմատաբար ապահով ու անառիկ տեղերում—լեռնաբարձ առևներում: Ի հարկէ երկրի բնական հարստութիւններն ու ազգաբնակութեան հակումներն էլ մեծ ազգեցութիւն են ունեցել:

Եթէ մի ընդհանուր հայեացք ձգենք ներկայ ցուցահանդիսում հրապարակ հանած տնայնագործական առարկաների վրայ, եթէ ուշի ուշով քննենք նրանց բոլորի ոճն ու ճաշակը, այն ժամանակ կը նկատենք պատմական կուլտուրական պայմանների երկու հակագիր ազգեցութիւն: Մի կողմից արևելեան—պարսկական կուլտուրան է իր կնիքը գրումնել այդ երկրի վրայ, իսկ միւս կողմից եւրոպական կուլտուրան: Նայեցէք գորդերին, ջէջիմներին, ձեռագործ իրերին—այդուեղ գուք կը տեսնէք ասիսկանան ու եւրոպական գոյնները և նկարները կամ խառնուած կամ առանձին-առանձին: Նայեցէք արծաթեղէնին, ուկեղէնին—այդտեղ էլ նոյն բանը կը նշմարուի:

Որ մեր կովկասցիները ենթարկւում են եւրոպական կուլտուրայի ազգեցութեանը, որ մեր տնայնագործները նորածեութիւններ են մուցնում իրանց զբաղմունքի մէջ—դա, ի հարկէ, միսիթարական և ցանկալի երեսյթ է, բայց աւելի ցանկալի է որ նրանք ուշք գարճնեն ոչ միայն արտաքինի (գոյների, նկարների և այլն), այլ և ներքին էութեան վրայ: Յանկալի է, որ նրանք օր առաջ ձեռք բերեն կատարելագործուած ոստայն-ներ և ուրիշ գործիքներ, որ նպատակայարմար ձեռվ բարեկարգեն նիւթեղէններ գնելու և պատրաստի իրերը վաճառահանելու միջները: Այսուեղ շատ մեծ դեր խաղալ կարող են ընկերականացները... Անհրաժեշտ է այդպիսի կազմակերպութիւններով զարկ տալ մեր տնայնագործութեանը, որ դեռ բաւական ժամանակ աղդու նշանակութիւն է ունենալու աընտեսակէս դեռ չը դարդացած կովկասի համար:

## ՆԵՐՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Խօսք և գործ.—Ցուցահանդէսի առիթով կայացած ժողովները.—Էրաւարանական օգնութիւն ազգաբնակութեան, — Գեղարուեստական դպրոցի՝ նշանակութիւնը.—Բագուի առեսրական դպրոցը.—Մեր հասարակութեան քննութեարերմունքը դէպի կեղծ անանկները... Հաղորդակցական միջոցների պակասութիւնը մեր երկրում. — Հեղուկ վառելիքի անմատչելիութիւնը մեր գաւառական գործարանների համար.—«Հեճնլա» շաբաթաթերթի խափանումը.—Բարձրագույն բէսկրիպտու

Թէ Գիւղատնտեսական Ընկերութեան նախաձնութեամբ կայացած զանազան ճիւղերի ժողովները և թէ Բժշկական Ընկերութեան գումարած Կովկասի բժիշկների համաժողովը հարաւորութիւն տուին ցուցահանդէսի առիթով Թիֆլիս եկած մեր երկրի զանազան մասնագէտներին հրապարակական քենութեան ենթարկել մեր կուլտուրական կեանքի առաջադիմութեան համար շատ կարևոր խնդիրներ։ Անշուշտ թէ այդ կայացած և թէ կայանալի ժողովներում (մամուլի և անասնաբայժների) շօշափած բազմաթիւ հարցեր շատ առաջ արդէն արծարծուած են եղել և մեր Կովկասեան մամուլի մէջ \*), սակայն, այնուամենայնիւ, այդ հարցերի մասին գործնական կեանքին աւելի մօտ կանգնած մասնագէտների կարծիքները առանձին կարևորութիւն ունեն, որովհետեւ աւելի մեծ չափով են կրում ոչ միայն տեսական մոգի, այլ և սոսկ իրականութեան դասերը։ Այդ համաժողովներում կենդանի խօսքը, մտքերի փոխադարձ շփումից և տարրեր կարծիքների բաղխումներից, ինչպէս և կեանքից վերցրած փորձերի և դիտողութիւնների առատ նիւթերից՝ ստեղծում է գործելու ծրագիրներ։ Անշուշտ այդ ծրագիրների վրայ ազդել է հասարակական այս կամ այն իդէալի կնիքը և հէնց զրամէջ պէտք է տեսնել մամուլի կատարած գերը. բաւական է, որինակ՝ յիշել այն նշանակութիւնը, որ արւում էր կօօպերացիայ-

\* Համեմատիր, ի միջի ալլոց, „Սշակ“, 1899 թ. № 184։

ին, գեմուտվօյին, մասսայի կրթութեան, ժողովրդի առողջապահական դրութեան, սակաւահողութեան ևայլն, համոզուելու համար որ խօսքը, հրապարակախօսական քարոզը, անհետևանք չէ անցել:

Ի հարկէ, այդ ժողովներումն էլ գեռ միայն խօսքեր, ցանկութիւններ էին լւում, բայց չը որ նախ հարկաւոր է որ ասուի այն բոլորը, ինչ կարելի է աւել այս կամ այն հարցի մասին, որ յետոյ միայն իրագործման մասին մտածուիք: Գործը իբրև արդիւնք, ի հարկէ, աւելի կարենոր է, սակայն առանց խօսքի նախապարաստող դերի անկարելի է լուրջ և կեանքի պահանջներին համապատասխան գործունէութեան ծրագիր որոշել. իսկ անծրագիր, որոյ ուղղութիւնից զուրկ գործունէութիւնը միայն զուր տեղը ոյժեր և միջոցներ կարող է վասնել: Այլ բան է ցանկալ, որ մարդիկ հէնց միայն խօսելու պրօցէսսին նշանակութիւն չը տան, այլ՝ ոչ պակաս եռանդով և իրագործման մասին հոգան:

Մի ժամանակ խօսքի ստագիայում էր նաև ժողովրդին իրաւաբանական օգնութիւն հասցնելու ինդիքը. մամուլը հսկանդով արձարծում էր այդ զաղափարը, յինուելով արդարութեան, ժողովրդի ընդհանուր օգտի վրայ: Եւ այդ «քարոզը» ապարդիւն չանցաւ. վերացական, ալտրուիստական զաղափարը համակրանք դատաւ նոյն իսկ այն դասակարգի մէջ, որի անձնական շահը կարծես հակառակ բան լինէր պահանջում. մայրաքաղաքների փաստաբանները իրանք իրանց բարի կամքով հիմնեցին իրաւաբանական խորհրդակցարաններ, ուր ճրի կամ չնշին վարձատրութեամբ տրում էին չքաւորներին իրաւաբանական խորհուրդներ, գրւում էին դատավարական թղթեր ևայլն: Խոչպէս հիւանդանոցը միջոց էր տալիս և չքաւորներին օգտուել բժիշկական գիտութեան բարիքներից, այնպէս էլ իրաւաբանական խորհրդակցարանները (կօնսուլտացիա) օրէնքի հովանաւորութիւնը գիւրացնում էին չքաւոր մարդկանց համար: Իսկ մինչև այդ չքաւորները կամ պէտք է անազին նիւթական զոհարեւութիւններ անէին իրանց դատը պաշտպանելու համար կամ ստիպուած էին զիմել աւելի տժան նստող զանազան զրագիրների և «արլականների» խորհուրդներին, որոնք մեծ մասամբ գործին տալիս էին սիսալ և կորստաբեր ուղղութիւն: Այդպէս ահա օրէնքի բարերար պաշտպանութիւնը դառնել էր սեփականութիւն միայն ունեար դասակարգի, իսկ չքաւոր անհատը, ինչպէս հիւանդութեան դէմքում բժշկական անխնամութեան չնորհիւ զոհ էր գնում հիւանդութիւններին, այնպէս էլ իրաւաբանական անօգնուականութեան պատճառով զոհ էր դառ-

նում հասարակական կեանքի անարդարութեան և յաղթւում աւելի ունեորից, թէկուզ այդ վերջինը անարդար լինէք:

Այդ է պատճառը որ գաղափարի յաղթութիւն կարելի է համարել Թիֆլիսի երգուեալ հաւատարմատարների և դրանց օգնականների ջանքերով մեր քաղաքում բացուած իրաւարանական խորհրդակցարանը: Թող Թիֆլիսի փաստաբանների այդ օրինակը վարակիչ լինի Անդրկովկասի և այլ քաղաքների իրաւարանների համար. գրանով ինտելիգէնցիան կատարած կը լինի իր պարտականութիւններից գոնէ մէկը դէպի մասսան:

Խօսից գործ է դառել և Թիֆլիսում Գեղարուեստական գպրոց ունենալու ցանկութիւնը: «Ոչ միայն հայիւ կեցցէ մարդ»: Առանց գեղարուեստի մարգու կեանքը զրկուած է իր հրապարներից: Նոյն իսկ կենդանիներից մի քանիսը զուրկ չեն իրանց նիստ ու կացը զարդարելու ցանկութիւնից: Այդ գեղարուեստական պահանջից զուրկ չէ և կայրենին:

Մենք, կովկասցիներս, չենք կարող փայլել առանձին գեղարուեստական նրբութեամբ: Գեղեցի զղացմունքը կամ ճաշակը շատ թող է զարդացած մանաւանդ հայերիս մէջ: Դրա մէջ համոզուելու համար բաւական է տեսնել մեր գիւղացիների որջերը, որ տուն են կոչում, բաւական է տեսնել զօկ կանանց գլխի աշտարակածն զարդարանքը...

Մեր ճաշակի գոհեկութիւնը երեսում է ոչ միայն մեր նիստ ու կացից, այլ և մեր արհեստաւորների, մեր տնայնազործների չէնքերից: Ինքնուրոյն, նուրբ և առաջադիմող ճաշակ գուք չէք տեսնիլ այդտեղ, այլ կրկնութիւն հին ձեերի կամ անտաշ, սարկական նմանողութիւն եւրոպականի: Հետնաբար մի գեղարուեստական գպրոց կարող է նշանակութիւն ունենալ մեզ համար ոչ միայն մեր ժողովրդի հոգեկան կարողութիւնը աղնուացնելու, այլ և նրա տնաեսական աջազդութեան տեսակէտից: Աւատի ցանկալի է որ Թիֆլիսում բացուած Գեղարուեստական գլացրոցը ձգտի կրթել մասսայի ճաշակը, զարդարել նրա կեանքը և զարկ տալ տնայնազործական և արհեստաւորական կերտուածների նրբաճաշակութեան:

Այլ նպատակ ունի Բագւում բացուած Ասեարական զըսրոցը: Առեարի հին սիստեմն էր—խարերայութիւն և խորամանկութիւն: Իսկ կեղծ մասնկութիւնը, «տակով անելը» այժմ էլ մի քաջապործութիւն է համարում մեր մէջ և ոչ ոք երեսը շուր չփտալիս այդ տեսակի խռչոր գողերից:

Այնքան ըթացած է մեր մէջ բարոյական մասշտաբը, որ կեղծ մասնկութիւն միջոց էլ ենք տալիս փառաւոր ապրել տակով արած փողերով: Այնքան սսակալի է այդ բարոյական անկումը,

որ կեղծ մնանկի գործերը կարդի դնողները (աղմինիստրացիա) դեռ նախ և առաջ այդ գողերի համար վառաւոր ապրուստ ապահովելու մասին են հոդ տանում: Երեկուայ գեադան յանկարծ մնանկանում է մի քանի հարիւր հաղարով: Բոլորը լաւ զիտեն, որ նա «տակով է արել», բայց դա անմեղ մի չարաճճութիւն է համարւում և «աղմինիստրացիան» որոշում է որ, բայցի թագաց ցումարներից, այդ երեսելի «կօմերսանտը» ստանայ այնքան էլ, որ կուրօրաներում կարողանայ վերականգնել իր թանկագին առողջութիւնը... Փոխարէն բանտ նստացնել, փոխարէն պատժել այդ աւաղակներին դեռ հովանաւորում են. իսկ օրէնքը Սիբիր է ուղարկում մի թշուառ գողի, որին գուցէ սովու է ստիպել ուրիշի սեփականութիւնից օգտաւելու: Այն, շատ և շատ քննոյց ենք գէպի «կեղծ մնանկները», դրանցից չեն խորշում և մեր «իդէալիստ» ինտելիգէնտներից շատերը...

Ահա այդ է մեր առևտրական աշխարհի մթնոլորտը, այդ է մեր կօմերսաննուների «սիստեմը» ինքն ըստ ինքեան պէսպէ հասկանալի լինէր, որ այդ երանելի պայմանները չեն կարող ապահովել մեր առևտրականնուներին եւրոպականաձև կազմակերպուած նմանօրինակ ձևոնարկութիւնների մրցումից: Միայն ընդհանուր զարգացումը և գործնական գիտութիւնը կարող են մեր մէջ պատրաստել իսկական առևտրականներ և արդիւնագործներ: Որքան բարձր լինեն իրանց զարգացումով և մամնագիտական նախապատրաստութեամբ մեր առևտրականները, այնքան աւելի հեշտ կը լինի մտցնել մեր կեանքի մէջ աշխատանքի դրութիւնը բարւոքող վերանորոգութիւններ: Բնականաբար չի կարելի չը ցանկալ որ Անդրկովկասի այդ երկրորդ առևտրական գարոցն էլ ծաղկի և տայ օրէցօր տնտեսապէս զարգացող մեր երկրին արժանաւոր գործիչներ:

Այդպիսի գործիչների կարենորութիւնը աւելի ես մեծ է դառնալու մեր երկրի հաղորդակցական միջոցների բարւոքումներից յետոյ: Այժմ մեր ճանապարհները դեռ շատ հեռու են նոյն իսկ կենտրոնական Ռուսաստանի հաղորդակցական դիւրութիւններից: Ստեֆենսոնի գիւտը 73 տարուց յետոյ դեռ միայն նոր նոր է մուտք գործում Արարատեան դաշտում: շոգեշարժի սուլոցը դեռ չի հնչել «ջրհեղեղին վկայ» Երեանում... Այդ երկաթուղային երակը և նրա շարունակութիւնը անշուշտ մեզ աւելի սերտ է կապելու Ռուսաստանի միջոցով և համայն աշխարհի հետ: Նա առաջացնելու է մեր երկրում նիւթերի և զաղափարների աւելի արագ շրջանառութիւն: Արարատեան դաշտի ազդաբնակութեան ոչ միայն տնտեսական, այլ և դասակարգային յարաբերութիւնները տակն ու վրայ են լինելու. նահապետական

կեանքը, բնական տնտեսութիւնը աւելի արագ քայլերով են վերանալու և եւրոպական քաղաքակրթութեան հզօր հոսանքը լուսաւոր և մութ կողմերով ողողելու են մեր երկիրը։ Հայի ինքնուրոյնութիւնը ամենամեծ վատանգի է ենթարկուելու։ Մըրցումը առեալրական և արդիւնագործական ասպարէզներում աւելի է սաստկանալու մեր երկիրը խուժած եւրոպացիների շշնորհիւ։ Ահա այդ մրցման գէմ մեր առեալրականների հին սիստեմը նոյնը կը լինէր, ինչ աղևներով մարտը կրուպպի թնդանօթների դէմ։

Այն օրից, երբ հինաւուրց Մասիսի ստորոտում՝ կերեայ հրաշունչ կառքը—համաշխարհային կեսնկի վիթխարի զարկը աւելի ուժգին կը թնդայ և հայի կեսնկում, սաստկացնելով հնի և նորի մաքառումը։ Ի հարկէ, երկաթուղու Երևանի ճիւղը բաւական չէ. մեր երկիրի ամբողջութեան զարգացման համար շատ կարեոր են երկաթուղային ճիւղերի մի խիտ ցանց, իսկ մնաք չունենք շատ տեղերում նոյն իսկ հասարակ խճուղիները Այդպէս, օրինակ, Եւլախից խճուղին գնում է հարաւ մինչև Կօրիս. գէնը կարծես մարդիկ չը լինեն ապրում իրանց հաղորդակցական պահանջներով։ Կօրիսը Հին-Նախիջնանի հետ միացնելու համար հարկաւոր էր շարունակել ևս 80 վերստ մինչև Բիշունագ։ Այն ժամանակ ստիպուած չէին լինի Հին-Նախիջնանի գաւառի բնակիչները, օրինակ, Բագու, Մոսկուա գնալու համար, Կօրիս-Շուշի-Եւլախ կարճ ճանապարհը թողած, մի ահազին պտոյտ անել Սղստափայի վրայով։ Կամ բերենք մի այլ օրինակ։ Ցայտնի է թէ որքան աղքատ է մեր երկիրը անտառներով և վառելիքով. մինչդեռ Բագուի մազուտը իբրև շատ ձեռնառու հեղուկ-վառելիք կարող էր շարժել մեր գաւառների բոլոր գործարանների մեքենաները, եթէ ունենայինք կարգին ճանապարհներ։ Սակայն ներկայումս ինչպէս, զիցուք, Օրդուբաղի մետաքսագործարանատէրը բներել տայ Բագուից մազուտ, երբ միայն ճանապարհի քրէն նա պէտք է տայ պուղին մի ոռւբլի։ Բնականաբար նա գերադասում է գնել իր զիւղացիներից ծիրանի և այլ փայտ ու այրել։ Թէ որքան ձեռնառու է հազար ու մի նեղութիւններով մեծացրած պտղի ծառերը կտրտել վառելիքի համար, այդ թողնում ենք վճռել մեր այգեգործներին։ Աւելի նպաստաւոր չէ Բագուից համեմատաբար մօտ գտնուող նուխուայ մետաքսագործարանատիրոջ համար. պուղը 7 կոպէկ արժողութիւն ունեցող մազուտը մինչև հասնի նուխի, ճանապարհածիսով գառնում է 40 կոպէկ, այն էլ եթէ անձրեային չէ եղանակը, հակառակ դէպքում սայլապանը Եւլախից նուխի կը վերցի պուղավճար 30 կոպէկ։

Ահա ձեզ մի զուտ Տանտալոսի տանջանք. բագուեցիք չը գիտեն ում ծախևն իրանց ծովացած հեղուկ վառելիքը, իսկ մեր դաւառական բազմաթիւ գործարանները հեղուկ վառելիքի ծարաւից տոչորւում են: Եւ զեռ զարմանում ենք որ մեր նաւթը չի գնում արտասահման, չի մտնում կենտրոնական Ռուսաստանի գործարանները, երբ տեղային բնական այդ հարստութիւնը անմատչելի է նոյն իսկ մեր Անդրկովկասեան գաւառների արդիւնագործների համար: Եթէ ունենայինք կարգին հաղորդակցական պայմաններ, մեր «կրիզիսներից» շատերը երբեք չէին ունենայ այն ծայրայեղ սուր բնաւորութիւնը, որին ականատես ենք այժմ նաւթային կրիզիսի դէպուում:

## ՀԵԻՌՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ, համաձայն պրաքինչական օրէնքի 131 յօդուածի, խափանուեց Պետնրբուրգում լոյս տեսնող «Հեծելա» շաբաթաթերթը:

Մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչի անունով տրուած  
բարձրագոյն բէսկրիպտ

Զերդ Կայսերական Բարձրութիւն. Վրաստանը Ռուսաստանի հետ միացնելու գարենոր տարեդարձի տօնախմբութեան արժանայիշատակ օրը Ես գոհութեամբ կանգ եմ առնում մեր անցեալի այս փառաւոր երեսի վրայ: Հարիւր տարի առաջ Վրաստանի թագաւոր Գէօրգի Իրակլիեավիչ զրեց իրան և իր երկիրը ի Տէր հանգուցեալ Կայսր Պավէլ I-ի հովանաւորութեան և իշխանութեան տակ: Այդ կամաւոր հպատակութեամբ սկիզբ դրուեց Կայսրութեան հետ Վրտառտանի անխօնելի միացման և Ռուսական Պետութեան տարածման կովկասեան լեռնաշղթայի միւս կողմը: Այն ժամանակից վրաց ժողովուրդը և մանաւանդ վրաց ազնուականութիւնը անփոփոխ յոյց են տալիս հաւատարմութեան օրինակ Ռուսաց Թագաւորներին և իրանց նոր հայրենիքին:

Պատերազմների բոլոր դաշտերում, որտեղ անցեալ դարի ընթացքում մեր զօրքերը կուրծք առ կուրծք հանդիպում էին Ռուսաստանի բոլոր թշնամիներին, վրաց իշխանների, թաւադների և ազնաւուրների սերունդները թափում էին իրանց արիւնը ուստական գործի համար և իրանց արիական քաջութեամբ նպաստում էին ուստական զէնքի աջողութեան։ Քիչ չեն այն վրացական իշխանական և ազնուական անունները, որոնց պատմութիւնը մտցրել է ուստական գորքի անթառամ փառորով պատ-

ուած զօրավարների ցանկը. այդպիսի անուններ յայտնի են և այն անձերի թւում, որոնք յարգանք են վաստակել ժամանակակիցների կողմլց և բարի յիշատակ թողել յետնորդներին իրանց օգտաւէտ գործունէութեամբ քաղաքացիական վարչութեան մէջ:

Արգարացի կերպով ուշադրութեան առնելով վրաց ազնուականութեան մատուցած պետական ժառայութիւնները Ռուսաստանին, որոնք արժանացել են շատ անգամ իմ Նախորդների ողորմած գնահատութեան, Ես յայտնում եմ նրան իմ Կայսերական և Արքայական բարեհաճութիւնը: Այս բարեհաճութեան իբրև տեսանելի ապացոյց թնդ ծառայէ այն, որ Ես իմ Ներկայացուցիչ ընտրեցի ներկայ տօների ժամանակ Զեր Կայսերական Բարձրութիւնը, Կայսերական Տան Աւագագոյն անդամին, որ կարողացել է իր երկարամեայ փառաւոր և բարեցակամ վարչութեան ժամանակ Կովկասեան երկրում ներչնչել նրա ազգաբնակութեան մէջ անկնեղ սէր և անձնուիրութիւն դէպի ինքը:

Կամենալով նշանաւոր կացուցանել Վրաստանի Ռուսաստանի հետ միանալու հարիւրամեայ տարեդարձը մի քանի միշտ ջոցների ձեռնարկութեամբ, որոնք կարող են ապահովել վրաց ժողովրդի ստիպողական կարիքների գոհացումը, Ես բարւոք համարեցի.

1) Հիմնել Վլադիկավլիազում կադէտների կօրպուս և այս միջոցով աւելացնել ձրիավարժների տեղերի թիւը, որոնք տըրաւում են պետութեան՝ կադէտների կօրպուսների մէջ թիֆլիսի և Քութայիսի նահանգների տոհմական ազնուականների որդիներին:

2) Իբրև նպաստ Թիֆլիսի և Քութայիսի նահանգների ազնուականներին՝ մատաղ սերունդի կրթութեան և դաստիւրակութեան գործում, տալ իւրաքանչիւր տարի պետական գանձարանից քառասուն հազար ոուրի երկու նահանգների համար, յանձնելով տեղական նահանգական ազնուականնութեան ժողովներին՝ յայտնել իրանց ցանկութիւնը յիշեալ գումարի գործածութեան մասին և ներկայացնել իրանց մտադրութիւնները այս առարկայի վերաբերմամբ Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետին՝ ըստ ընդունուած կարգի նրանց ընթացք տալու համար:

3) Թիֆլիսի և Քութայիսի նահանգներում տոհմական ազնուականութեան պատկանած հողերը, որոնք կառավարիչ Սենատին 1900 թուականի յունիսի 12-ին տուած Անուանական Հրամանագրով ազատուած են պետական հողային հարկից ներ-

կայ եռամնակի ընթացքում, սկսած 1901 թուից, ազատել և հետևեալ 1904—1906 եռամնակի ընթացքում յիշեալ հարկի վճարումից:

4) Տալ Թիֆլիսի նահանգական ազնուականութեան ժողովին իրաւունք կարգադրել Թիֆլիսի ազնուականութեան հողային բանկի զուտ արգիւնքների այն մասերը, որոնք համաձայն նրա կանոնագրութեան, յատկացւում են Թիֆլիսի նահանգի հողատէր և հողագործ ազգաբնակութեան հասարակական կարիքները լրացնելու և տեղական ազնուականութեան համար գիւղատնտեսական գրամագլուխ կազմելու նպատակով՝ այն պայմանով, որ ժողովի որոշումները հասարակական կարիքների համար յատկացուող գումարների մասին ներկայացուեն Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետի հաստատութեանը:

5) Տալ նոյն ազնուականութեան, Թիֆլիսի ազնուականութեան հողային բանկի լիկվիդացիսից յետոյ մնացած գումարները բաժանելիս, համաձայն այն աղբիւների, որոնցից նրանք ստացուած են, սեփականութեան իրաւունք այդ գումարների և այն մասի վրայ, որ բաժին կ'ընկնի ի Տէր հանգուցեալ Ալեքսանդր II Կայսրի հրամանով բանկին տուած գրամագլիսին, և

6) Ներել արքունական պալատների հաշումը ցոյց տուած մինչև 1901 թուի յունուարի 1-ը գանձարանին հասանելիք այն տուրքերի և տուգանքների ապառիկները, որոնք վերացուած են՝ 1900 թուի յունիսի 12-ին Պետական Խորհրդի հաստատած կարծիքով, ջնջելով այդ ապառիկները և տուգանքները հաշուներից:

Տալով մինիստրներին համապատասխան ցուցմունքներ իմ այդպիսի կամքը կատարելու համար, ես յանձնարարում եմ Զեր Կայսերական Բարձրութեանը յայտարարել այդ բանի մասին Թիֆլիսի և Քութայիսի նահանգների ազնուականութեանը և Անդրկովկասեան երկրի ամբողջ ազգաբնակութեանը:

Մնում եմ գէպի Զեզ առ միշտ բարեհաճ

իսկականի վրայ Նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով գրուած է՝

և ի սրտէ Զեզ սիրող  
ՇնիկօլԱթ»:

Կոմպիեն,

1901 թ. սեպտեմբերի 7.

## ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Գեղջկուիին Արարատեան դաօթում

Հետևելով տարբեր տեղերում մեր ժողովրդի կեանքին, մենք եկել ենք այն եզրակացութեան, որ կնոջ դիրքը այն տեղերում, ուր պարսիկ տարրը սակաւ է, աւելի բարձր է: Օրինակ՝ Նոր-Բայազէտի, Դարաշիշագի և Աբարանի շրջաններում, ուր ազգաբնակութիւնը համարեա բացառապէս բազկացած է հայ տարրից, կինը աւելի յարդ ունի, նրա պատիւը, նրա իրաւունքները աւելի են գնահատուում, քան այլ տեղեր, և չը նայած այդ շրջանների բնութեան ազքատութեան, հետևապէս տնտեսական ծանր պայմաններին, կինը դաշտային աշխատանքներին մասնակցում է այն չափով, ինչ չափով ներում են նրա ֆիզիկական ոյժերը: Մինչդեռ Արարատեան դաշտում, բերքերով հարուստ այդ տափարակի վրայ, ուր պարսիկ տարրը բը-նակեցրած է մեծ չափով, տղամարդը իւրացրել է ծուլութիւնը, իսկ կինը դաշտային աշխատանքներ է կատարում: և այդպիսով կազմուել է բանուոր կանանց մի դասակարգ:

Հայ կնոջ վիճակը ծանր վիշտ և կարեկցութիւն է պատճառում տեսնողին: Նրա վրայ է ոչ միայն գիւղական ամբողջ տունը իր բոլոր հոգսերով, այլ և դաշտային աշխատութիւնների մի մեծ մասը:

Գիւղ ասած տեղում, մանաւանդ դաշտային աշխատանքների ժամանակի, գիւղացին ոտքի է կանգնում շատ վաղ, նոյն իսկ կէս գիշերին: Այդ ժամանակի ոտքի է կանգնում և գեղջկուեին, որ ամուսնուն դաշտ ծանապարհելուց յետոյ կուժը առած շտապում է աղբիւր, ասկա կովերը կթում և տաւարը քը-շում դէպի նախիրը: Արեւ դեռ նոր ծագած, գիւղի խրճիթներից ծուխը բարձրանում է դէպի վեր, իսկ գեղջկուեին շտապով հունցում է սովորական չափով խմոր և մի երկու ժամ անց թոնզիրը բաշած և տաք լաւաշները ու մի կովկիթ էլ մածուն կամ թանով առած՝ շտապում է դէպի ամուսինը: Այնաել

Նա օգնում է ամուսնուն խուրձեր կապելում, փոյխ անելում, նոյն իսկ սայլը բարձելում: Նա վերադառնում է տուն մի փոքր վաղ—նախիրը կը գայ, կովերը պիտի կթել, խուրձերը կապելու կեմեր պատրաստել յաջորդ օրուայ համար: Կասելը աննշան բացառութեամբ նոյնպէս կատարում է գեղջկուհին. իսկ ձմեռը շարունակ նոյն ջուրն ու խմորը, նոյն թոնիրն ու թանովը, նոյն տունն ու հոգար դրա վրայ աւելացրած տնայնագործութեան մի քանի ճիւղերը, ինչպէս՝ գուլպա, կարպերտ, ջէջիս, շալ գործելը: Այսքանով համարեա վերջանում է լեռնու մասերում կնոջ աշխատանքը, եթէ չը հաջուենք դաշտային մի ծանր աշխատանք բացառուալիս երաշտ տարիներում, երբ հացահատիկների ցողունը շատ կարծ աճելով պիտի արմատից հանել կամ ժողովրդական բառով, վիևել, որ կատարում են կանաք:

Այլ պատկեր է ներկայացնում Արարատեան դաշտը: Այստեղ գիւղատնտեսութիւնը բազմակողմանի լինելով, բարդ պայմանների մէջ է դրել դաշտեցի կողը:

Բացի լեռնային մասերում մշակուող բերքերից, Արարատեան դաշտում մշակւում են նաև խաղող, բրինձ և բամբակ, իսկ սրանցից իւրաքանչիւրը առանձին վերցրած՝ աւելի խնամք և հոգացողութիւն է պահանջում, քան միւսները միասին: Սակայն տեսնենք թէ ինչ չափով դաշտեցին պատրաստուել է առհազին աշխատանք պահանջող գիւղատնտեսական իր պարապմունքներին:

Արարատեան դաշտը կլիմայական ամնպաստ դրութեամբ մեծապէս ազգել է տղամարդու ֆիդիկականի և բնաւորութեան վրայ, միացնելով նրա մէջ այն աշխուժութիւնը, որ յատուկ է լեռնային մասերում ապրող ժողովրդին, բացի այդ խաղողի մշակութիւնը և գինու առատութիւնը բաւական նպաստել են հարքեցողութեան տարածման այդ ժողովրդի մէջ: Եւ ահա այս բոլորը միասին դաշտեցուն ընտելացրել են ծուլութեան, նրա հետ միաժամանակ նաև հարքեցողութեան:

Ով եղել է հնձի ժամանակ, երևանից 30 վերստ հեռաւոթեամբ, Գեւառնի Բասարի գիւղերում, անշուշտ նկատած կը լինի, թէ ինչպէս գիւղացին՝ ինքը անընդունակ աշխատելու, այս և այն կողմ ընկած հարցնում է «կոօյլին», այսինքն սարեցուն և թաթին կամ պարսկաստանցի հնձուորին՝ իր արտը հնձել տալու համար: Եւ յաճախ կը պատահէք տեղացիների, որոնք անգործ շրջելով չեն համաձայնում նոյն իսկ մի ոռւբլով աշխատելու, մինչդեռ այդ միևնոյն ժամանակ կանանց և աղջըկերանց խումբը փռուած տափարակ և տաք դաշտերում աշխատում են օրնիբուն ուրիշների համար մի չնչին վարձով:

Դաշտեցի կինը բացի այն որ կատարում է սարեցու կնոջ կատարածը, միենոյն ժամանակ հսկում է խաղողի այգու վրայ, հնձում և շալակով տուն է կրում այգու ահազին խոտը, կատարում է բամբակի ցանքերի քաղհանելու ծանր և տեղական աշխատանքը և վերջապէս նրա վրայ է ընկած բամբակ ժողովելու կամ կոկոնից հանելու գործողութիւնը։ Այս աշխատանքներին տղամարդը համարեա մօտ չի գնում։

Կինը գնում է բժար (քաղիան)։ Բայց ինչ է բժարը։ Բամբակի բոյսը բաւական զգայուն է. նա սերմանելու օրից, այն է ապրիլի վերջերից, պահանջում է մեծ հոգայողութիւն։ Ցանելուց 10—15 օր յետոյ յայտնում են բոյսի առաջին ծիւլերը, նրանց հետ միաժամանակ նաև զանազան վնասակար խոտեր, որոնք խանգարում են բամբակի բոյսի կանոնաւոր աճման, և ահա այդ վնասակար բոյսերից ցանքը պիտի ազատել, այլ խօսքով քաղհանել։ Այդ գործողութիւնը 15 օրը մի անգամ կը ըկնում է այնքան, մինչև որ բոյսը բաւականին աճում, զարգանում է, այնպէս որ այս աշխատանքը ամենամեծ և ամենատեղականն է, այն էլ մայիս, յունիս և յուլիս ամիսների սարսափելի շոքերին։ Համարեա անխտիր՝ հարուստ թէ աղքատ, բացառապէս կամայք և օրիորդներ ամառուայ ընթացքում գեռ վաղ առաւօտից վերցնելով մի-մի երկարակոթ ուրագ, քաղհանելու միակ գործիքը, ուսներին դրած՝ խումբ-խումբ դուրս զալով գիւղերից, ցրւում են ընդարձակ դաշտերը։ Համելով արտին, մինչև գետինը կուացած ուրագները իջեցնում են հողի մէջ և բաւական վարժութեամբ հանում թէ վնասակար խոտերը և թէ խիտ բուսած տեղերում նոյնիսկ բամբակի բոյսերը, որոնք կարող են խանգարել կանոնաւոր աճման։ Այսպէս շարունակ գնալով և համելով արտի միւս ծայրը, նորից վերադառնում և նորից շարունակում են վաղ առաւօտից անընդհատ, մինչև երեկոյ։ Այս աշխատանքը շատերին թերես հեշտ երեայ, սակայն բաւական է տեսնել յունիս ամսում բոցեղէն ճառագայթների տակ կուացած և քրտինքի մէջ կորած արանցի չարքաշ կնոջը, որ մարդ համոզուի թէ այդպիսի ծանր աշխատանքին ընդունակ է միմիայն դաշտեցի կինը։

Դաշտեցին ընդարձակ խոտատեղիներ չունի, ինչպէս սարեցին, այլ նրան խոտ մատակարարում է նրա այգին։ Եւ այդ խոտը մեծ մասամբ հնձւում և տուն է կրում կնոջ ձեռքով։

Դաշտային գիւղերում արեգակը մտնելուց յետոյ այգիներից և դաշտերից գառնում է տուն կանանց խումբը՝ շալակներին մի-մի բեռ կանաչ խոտ։ Նրանցից շատերը այնքան մեծ

շալակ են վերցնում, որ ծանրութեան տակ կուցած, ձեր գութն են շարժում:

Պակաս ծանր աշխատանք չէ նաև «չանաքը»: Բամբակը հասնում և հաւաքւում է սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին, երբ Արարատեան դաշտին յատուկ բնութիւնը միանգամից փոխուելով, երեկոները և առաւօսները դաշտ գուրս գալլ ցրտից և խոնաւութիւնից անտանելի է դանում: Զը նայած այդ հանգամանքին, չանաքը կամ բամբակ հաւաքելը, որ մէկ երկու անգամով չի վերջանում, ամբողջովին ընկել է կնոջ վրայ և չանաքը կանայք գոգնոցները կապած սառը տունկերի և ահագին շաղի մէջ թրջուած, դողդողալով և սառած մատերով գուրս են քաշում բայցուած կոկոններից բամբակ, շարունակելով այդ մինչև հոկտեմբերի վերջը, յաճախ նոյն իսկ նոյեմբեր ամիսը:

Բամբակի ինչպէս քաղհանելը, այնպէս էլ չանաքը պահանջում է շուտափոյթ աշխատանք, այդ պատճառով յաճախ չունեոր մարդիկ նոյն իսկ վարձում են մշակներ: Եւ ահա տանտիկնոյն յետեկո դէպի արան են գնում կանանց և օրիորդների մի շաբք. որը այրի է կամ որք, որի ամուսինը հարբեցող է կամ ծոյլ, մի խօսքով բոլորը՝ թշուառներ և բախտից հալածուածներ: Նրանց գէմքը արտայայտում է վիշտ ու թախիծ, նրանց հագուստը՝ չքաւորութիւն: Դաշտեցի կինը յաճախ իր ծծի երեխան զրկած է զիմում դաշտ, տարի օրուայ դժոխային աշխատանքը կատարելու, բայց թէ վարձատրութեան որպիսի խղճուկ չափով, այդ երեխակայել չէք կարող: 20—15 նոյնիսկ 10 կոպէկը սովորական չափ է բանուոր կնոջ օրուայ աշխատանքը վարձատրելու համար...

Տղամարդուց աւելի սրաբածանաչ կինն է, աշխատող և բարեխիղձ՝ գարձեալ նու, սակայն նրա վարձատրութեան չափը այնքան չնչին է, որ զրանով միմիայն կարելի է չափել թէ կնոջ նշանակութիւնը որ աստիճան ընկած է այդ շրջաններում: Այն միջոցին, երբ սարեցին կամ թաթ հնձուորը ստանում է 80 կոպէկից սկսած մինչև 1 ոսուբի օրավարձ, կնոջ օրավարձը այդ վարձի մի քառորդից չի անցնում: Եւ այս հանգամանքը բաւական էր կնոջ ինքնասիրութիւնը վիրաւորելու մինչև սրտի խորքը: Որքան էլ այս սովորական երեսոյթների կարգը անցած լինի, բացարձակ տրանզիների տեղիք չը դառնալով, բայց շատ բաւական է, որ ընտանեկան կարիքի և հոգսի տակ կանանցի զգայուն սիրտը շատ գառնացած լինի:

Հոգեկան ոչ մի զրութիւն այնքան ուժեղ կերպով չի արտայայտուել մարդու գէմքի վրայ, խօսակցութեան և երդի մէջ, որքան վիշտն ու տանջանքը: Տղամարդը Արարատեան դաշ-

տում բնաւորութեամբ անտարբեր, դէմքով ինքնարաւական, երգում է այն ժամանակ, երբ զինու ազդեցութեան տակ է գտնում, լաւ տրամադրութեան մէջ է: Նա երգում է հնուց մնացած թուրքերէն երգեր, որոնք իրանց բովանդակութեամբ փառէվանների և հիւրի-փէրինների պատմուածքներից այն կողմը չեն անցնում: Բացառութիւն կազմում են չքաւորութեան մատնուած այն գիւղացիները, որոնք իրանց սև օրը մի զոյգ եղների հետ քարշ տալով, զիտեն օդը լցնել մի ծանր, վշտոտ և մելամաղձոտ գեղջկական երգով, որի մի քանի ազքատիկ բառերը պարտում են իր սաշպարութեան, եղան ու գոմէչի, մի խօսքով իր տանջանքի շուրջը:

Սակայն այլ է կնոջ հոգեբանութիւնը այս դաշտում: Դաշտեցի կնոջ տխուր զիմապիծը մենք չենք տեսնել և ոչ մի տեղ, արեգակից սեացած հոգս ու վիշտը արտայայտող դէմքը, կարծէք կրում է իր վրայ բարձր շղթաներով շրջապատուած նեղ հորիզոն և դաշտեցուն յատուկ մելամաղձոտութեան կնիքը: Նրա խօսակցութիւնը մեղմ, տոնը տխուր, նրա երգը այնպիսի վիշտ է արտայայտում, որ այդ վշտով համակւում էք և դուք:

Ֆիզիկական ծանր աշխատանքը, տնտեսական ծանր դրութիւնը, մերկ ու քաղցած երեխաները, անգութ վաշխառուն, անխիղճ պարտատէրը,—այս բոլորը վիշտ են պատճառում, վիշտ են երգել տալիս գեղջկուհուն:

Դաշտեցու կնոջ պօէզիան շատ հարուստ է, բայց հարուստ իր մելամաղձոտութեամբ, իր տխուր, նոյն իսկ վշտոտ մելոդիայով: Դաշտն ու գործը—ահա ուր և երբ է սկսում գեղջկուհին, սկսելով ծանր աշխատանքը և խորասուզուելով վշտերով լի իր կեանքի յիշողութիւնների մէջ, անգիտակցօրէն դնդնալ, համար տալ տխուր և ուրախ բոպէները, մինչն որ զգացմունքները եռալով գուրս են թափում սրտից հեղեղից էլ ուժեղ մի փղձկումով:

Մենք դաշտեցի կնոջ ամենածանր աշխատանքի միջոցին, այն է յունիս, յուլիս ամիսներում, երբ սկսում է բամբակի քաղհանը, եղել ենք Արարատեան դաշտում և լսելով բանուոր կանանց բերանից հնչող գեղջկական պօէզիան իր տխուր մնալողիայով, այնպէս զգացուել ենք, որ այդ տանջանքի բոպէին հնչող վիշտը սեփական վշտի պէս ծանրացել է մեր սրտի վրայ, բայց այդ վշտի մէջ որքան դառնութիւն, այնքան էլ քաղցրութիւն զգալով, չենք ուզեցել անջատուել նրանից:

Հնդարձակ տափարակի վրայ միմեանցից հեռու երևում են բանուոր կանանց խմբեր, որոնց լէլէներաի ձայնը յնկարծ

ելեէջներով ձեր ականջին է զիպչում։ Մեղմիկ փչող հովը այնքան արագութեամբ փոխւում է և մի այլ ուղղութեամբ փչում, բերելով իր հետ երբեմն ցած, երբեմն բարձր գեղգեղանք, որ մարդ ակամայ ինկնամոռացութեան մէջ ընկնելով, մի բոպէ մոռանում է շրջապատը և ընկնելով վերացական մի աշխարհ, զգում է իրան՝ լսելիքը փաղաքշող մի եթերի մէջ։ Բայց նորից ձեր տեսողութեան առաջ ցցւում է իրականը իր հոգսերով ու վշտերով։ Եւ ձեր ականջին կրկին հասնում են այդ վշտերի հեծեծանքները։

Թալանն էկաւ թալնեց տարաւ մեր մալը,  
Ղօշունն էկաւ վերյրեց տարաւ իմ եարը։  
Թալանն էկաւ թալնեց տարաւ մեր մալը,  
Թուրքը էկաւ սրի քաշեց իմ եարը։

Մի այլ վարիանտ։

Տարան, տարան իմ եարը,  
Տարան իմ մէկ ու ճարը.  
Սալդաթ տարան իմ եարը,  
Բա ոնց կը լինի իմ ճարը։

Միրահարական երգեր էլ երգւում են գեղջկական պօէզիայի մէջ, բայց նրանք երգւում են նոյնակս տխուր և հնչւում վշտի մելօդիայով։

Տուն արի, տուն արի, տուն արի, եար,  
Մթնել ա, տուն արի, անջիգար եար.  
Ղարսայ բերթը բլերայ,  
Եարս տակին քնել ա։

Պօէզիայի այդպիսի ձեեր և սիրտը խօսեցնող այդ օրինակ մօտիւները հնարաւոր են այնտեղ, ուր վշտի և հոգսերի հետ ձեռք ձեռքի տուած գնում է մի անարդարութիւն, իսկ ոչ մի տեղ մարդը այնքան անարդար չէ դէպի իր ամուսինը—կինը, հրքան Արարատեան դաշտում։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Շուղօթ Վիրիսօվ իբրև մարդկութեան կատարեալ տիսպար.—Ռւտօպիաների նշանակութիւնը.—Վերխօվի քաղաքացիական առաքինութիւննելը.—Վիրիսօվի մի հակասառակերը.—Միսս Ստոֆնի առևանգումը իբրև մակեդոնացիների բողոք քաղաքակիրթ աշխարհի անտարբերութեան դէմ:

Պրօֆէսօր Շուղօթ Վիրիսօվի ծննդեան ուժսունամեակի տօնախմբութիւնը Բերլինում, հոկտեմբերի 12-ին (նոր. տոմ.), շատ սրտաշարժ և վեհ տեսարան էր բացում համամարդկային բարօրութեան իդէալներով բարախող իւրաքանչիւր սրտի համար: Քաղաքակիրթ աշխարհի բոլոր ծայրերից, առանց կրօնի և ազգի խարութեան, տեղում էին անկեղծ հիացմունքով և յարգմաքներով լի չնորհաւորութիւններ: Այդքան մեծ ժողովրդականութիւն վայելող զիտնականի անձնական տօնը այդպիսով զառնում էր ազգերի եղբայրութեան գաղափարի մի յաղթանակ: Թէև այդ գաղափարը այժմ էլ գեռ և ուտօպիա է, ցնորք է, բայց այդ գեռ չի նշանակում, որ անիրագործելի է նա:

Կան մարդիկ, որոնք գին չեն տալիս ուտօպիաներին, մինչդեռ խէք մարդկութիւնից ապագայ երջանիկ օրերի երազմնքը, ուտօպիան, և դուք կը մեռյնէք նրա մէջ՝ ապրելու, գաղափարի համար մաքառելու տեսչը և միշտ դէպի առաջ մղող ոգեսորութիւնը: Նրա կեամքը կը զրկուի իր հրապոյներից, մաքի և հոգու թոփշներից և կը ասհմանափակուի մերկանտիլ, ողորմելի, նեղ, եաական գործունէութեամբ:

Որ ուտօպիաներից շատերը շը մնացին անիրագործելի, զրան ապացոյց արդի քաղաքակրթութիւնը իր բազմաթիւ լուսաւոր կողմերով: Ճիշտ է, զեռ մնում են շատ ստուերներ, մութ կէտեր այդ գաղաքակրթութեան մէջ, բայց մարդկութեան լաւագոյն ներկայացուցիչների ստեղծած ուտօպիաները հէնց ուղղուած են եղել այդ ստուերներն ու մութ կէտերը վերացնելու դէմ...

Պէտք է անուղղելի յոռետես լինել նշանակութիւն չը տալու համար գիտութեան և հասարակական կեանքի մէջ կատարուած և կատարուող առաջադիմութեան։ Այդ առաջադիմութեան ամենավիթխարի գործիչներից մէկն է Ռուդօլֆ Վիրխովը, որի ծննդեան օրը համաշխարհային ցնծութեան մի անկեղծ արտայայտութիւն դառաւ։

Ովկ է Ռուդօլֆ Վիրխովը, ինչ արաւ նա որ արժանայաւ այդքան մեծ պատիւների։ Մեր նպաստակից դուրս է տալ այստեղ նրա մանրամասն կենսագրութիւնը և մենք միայն ուզում ենք շեշտել նրա գործունէութեան մի քանի բնորոշ գծերը։ Մի հասարակ գերմանացի փաճառականի զաւակ Ռուդօլֆը՝ իր անխոնջ աշխատասիրութեամբ, իր բնածին ընդունակութիւններով ու անսպասու ևռանդով, իր անկախ, չփակ ու մարդասէր սրտով, գործելով միայն խաղաղ-կուլտուրական ասպարէզում, արաւ շատ աւելի, քան զանազան թագաւորներ, իշխաններ, զօրապետներ իրանց ահազին բանակներով։ Վիրխովը ինքնուրոյն և անկախ մտածող մի գեմօկրատ պրօֆէսօր դառաւ, որի համար հասարակական և քաղաքական կեանքը պակաս կարենոր չէր, քան զուտ գիտական զբաղմունքները։ Իբրև գիտնական նա նոր ճանապարհներ բացեց իր մասնագիտութեան մէջ, վերանորոգեց բժշկական գիտաութեան ամենակարենոր մասները։ Իբրև մեծ գիտնական, նա չը փակուեց իր մասնագիտութեան խիսունջի մէջ, այլ ջանք գործ գրեց գործնական կեանքի մէջ իրակործել ժողովրդի առողջապահական պահանջները։ Բերլինը իր բարեկարգութեամբ ամբողջապէս նրան է պարտական։ Իբրև պրօֆէսօր, նա չը բաւականացաւ իր պաշտօնական դասաւանդութիւններով, այլ նաև կազմակերպեց ու մասնակցեց ժողովրդական դասախոսութիւններին։ Նեղ մասնագիտութիւնը չէր կարող գոհացնել այդ մեծ գիտնականի լայն մտաւոր պահանջներին, և նա հնախօսութիւննով պակաս չէր հետաքրքրում, քան անատօմիայով, մարդաբանութեան մէջ պակաս գիւտեր չէր անում, քան առողջապահական գիտութեան մէջ։

Գիտութեան ամենափայլուն ներկայացուցիչ լինելով հանդերձ Վիրխովը իր պարտականութիւնն էր համարում եռանդուն մասնակցութիւն ցոյց տալ նաև հասարակական և քաղաքական կեանքում։ Նա առաջնակարգ պատգամաւոր էր թէ Բերլին քաղաքի ինքնավարութեան մէջ, թէ պրուսական պալատում և թէ գերմանական ույսատագում։ Տաք անկիւնը և լաւ պաշտօնը չէին կարող լրեցնել նրան, երբ նա տեսնում էր ազատութեան, արդարութեան և մասսայի բարօրութեան դէմ ուզզած որ և է

վտանգ։ Բիսմարկները անզօր էին լուեցնել համարձակ պրօֆէսօրին, որ չէր թագյուռում երբէք իր հանրապետական և ղետօկրատիական համակրութիւնները։ Շօվինիզմը հեռու էր նրա սրտից, թէև ոչ մի գերմանացի չէր կարող աւելի հայրենասէր համարուել, քան Վիրխովը։ Սակայն նա այնպիսի հայրենասէրներից չէր, որոնք երկու կշիռ և երկու չափ ունեն. մէկը զրսեցիների համար, մէկը ներսըցիների։ Դեռ իր երիտասարդ հասակում, իր գիտնական կարիքը սկզբում, նա քաջութիւն ունեցաւ Վիրխին Սիլեղիայի լեհ ազգաբնակութեան ցաւերը այնպիսի գոյներով նկարագրել, որ պրուսական կառավարութիւնը չէր կարող սպասել նոյն իսկ ամենաազգասէր լեհից։ Համաճարակ տիֆի պատճառը նա տիրող հասարակական և վարչական վատ կարգերի մէջ տեսաւ և պահանջում էր աղէտի դէմ հիմնական միջոցներ։ Միկոտուրաներով և հարերով չէր կարելի արմատախիլ անել մի աղէտ, որի պատճառները շատ խոր են և բղխում են հասարակական-քաղաքական վատ կարգերից, ուստի Վիրխովը պահանջում էր արմատական բեֆօրմներ. ժողովրդի կրթութիւն, տեղական լայն ինքնավարութիւն, հարկերի կրծատում և արդար բաժանում, միջոցներ՝ երկրագործութիւնը, ճանապարհները բարուրեկու, էժան կրեդիտ բանալու, ընկերակցութիւններ կազմելու դիւրութիւններ և այլն և այլն։ Ահա ինչ էր առաջարկում այդ բժիշկը։ Սակայն ըբժշկական» այդ խորհուրդները դիւր չեկան պրուսական կառավարութեան, որ պաշտօնից հեռացրեց համարձակ քննադատին։ Բայց Վիրխովը փոքր Բաւարիայի համալսարաններից մէկում էլ շարունակեց իր թէ գիտական և թէ քաղաքացիական անդուլ գործունէութիւնը, մինչև որ Նօլենսոն Պրուսիան զարձեալ ստիպուած եղաւ Բեռլին հրաւիրել հոչակաւոր գիտնականին և հաշտուել նրա ազատ մտածողութեան և անխորտակելի հասարակական համոզմունքների հետ։ Այդպէս ահա յանձին Վիրխովի գերմանական ազգը տուաւ մարդկութեան ամենակատարեալ տիպերից մէկը, որի մէջ զարմանալի ներդաշնակութեամբ միացած են խոր գիտական միավը, վեհ մարդասիրութիւնը, ազատութեան համար անվեհեր մարտընչողի համարձակութիւնն ու եռանդը։ Վիրխովը ցոյց է տալիս թէ ինչպէս կարող են լինել ժողովրդասէր «գերմարդիկ», հակառակ նիշշէական իդէալին։

Այդ փայլուն դէմքից այժմ դարձէք իլլուզ-Քէօզկի կալանաւորի ճիւաղային կերպարանքին՝ հասկանալու համար թէ ինչ ծայրայեղութիւնների են համուռ մարդկային հոգու թէ լաւ և թէ վատ կողմերը...

Սուլթան Համիդի երկրից երբէք լաւ լուրեր ոչ ոք չի սպա-

սում ի հարկէ։ Վերջերումս Եւրոպայում մեծ սենսացիա է արել միսս Հեղինէ Ստօնի առևանգումը։ Անշուշտ նոր բան չէ այդ առևանգութիւնը թրքական իրականութեան մէջ։ Նոր է միայն այն որ առևանգուածը մի որ և է հայուհի չէ, այլ ամերիկուհի, այն էլ միսսիօնարուհի։ Նոր է այն որ այդ առևանգումը տեղի է ունենում ոչ թիւրքաց Հայաստանի պէս յետ ընկած մի երկրում, այլ Եւրոպայում, նրա այն մասում, որ գեռ տանջւում է թրքական լուծի տակ, այսինքն Մակեդոնիայում, ուր 20—30 հոգուց բաղկացած աւազակային մի խումբ լեռներն է փախչնում միսս Ստօնին ու Բիտոլի բողոքական պաստօրի կնոջ, և փրկանք է պահանջում 25,000 ոսկի, սպառնալով որ, եթէ թիւրքաց կառավարութիւնը փորձի զինուորական ոյժի զիմել՝ ազատելու համար առևանգուածներին—կը սպանուեն այդ վերջինները։ Շատ հաւանական է համարւում, որ այդ «աւազակները» մակեդոնացի յեղափոխականներ են և ուզեցել են իրանց այդ յանդուգն քայլով ներգործել քաղաքակիրք պետութիւնների վրայ։ «Քանի որ չէք ուզում ոյժ բանացնել սուլթանի դէմ և մտցնել տալ մեր երկրում խոստացած բարենորոգութիւնները», երեք ասում են այդ քաղաքական աւազակները, «դէ այժմ ձեր հարազատ զաւակների վրայ տեսէք թրքական բեժիմի բարիքները և, ստիպուած, տուէք մեզ ձեր անսպառ հարըստութիւններից միջոյներ—գոնէ մեր սեփական ոյժերով մաքառելու համար մեր ոխերիմ թշնամու դէմ»...

Լ. Ա.

## ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

„Կավազսկի Ենտուք“<sup>1</sup>, օդուտուու Պ. Կօնտաննեսնի ճանապարհորդութեան շարունակութիւնը. „Մարաշը կոտորածների ժամանակ շազատուեց տառուր վիճակից. 1895 թ. նոյեմբերի 18-ին այդ քաղաքում կոտարուեցան 822 հայ (որոնցից 575 լուսաւորչական), այրուեցին 160 և կողուպտուեցան 1500 տներ. Մարաշի գազանութիւնների մանրամասնութիւնները յայտնի են ֆրանսիական զօրքի գնդապես զը-վիելարի յայտագրից, որ զետեղուածէ „Դեղին գրքի“ մէջ: Հասնելով Մարաշ, մինչև հոգու խորքը վըրդովուած տեղի ունեցած գազանութիւններից, թիւրք վարչութեան անբարեխողնութիւնից և լրտութիւնից, Վիելար ժողովեց մութեսարիփին (շրջանի կառավարչին) և պաշտօնեաներին — սպանութիւնների գլխաւոր զեկավարներին—նոյնպէս և թիւրք օֆիցերներին և հրապարակով դատապարտում էր վարչութեան գործութիւնները. իսկ օֆիցերներին Վիելար դիմեց խիստ խօսքերով, յանդիմանեց նրանց որ իրանց զէնքը այսքան զզուելի կերպով են զործ ածել, չէնքը տուածէ ձեզ, ասում էր քրանսիացին, հայրենիքը պաշտպանելու համար, նա ձեզ համար պիտի լինի պատուի նշանաբան, ձեր հայրերը այդ զէնքով մեզ հետ կողք կողքի տուած կուռում էին Նրիմում, իսկ դուք գործ ածեցիք նրան կանանց և երեխաներին կոտորելու համար։ Ցեսարանը, ինչպէս պատմում են

ականատեսները, ցնցող էր. խոնարհեցրուծ իրանց զլուխները, օֆիցերները, զինուարներն ու պաշտօնեաները լասում էին Վիելարի խիստ յանդիմանութիւնները. Սրդականիկերը մեր յիշողութեան մէջ զարթեցրեց մի ուղիշը, երբ խաչակրաց արշաւանքների ժամանակ, ֆրանսիական ասպետները արև իսկ տեղերում հաշիւ էին պահանջում սարակինուններից՝ քրիստոնեաների հալածանքների պատճառով։ Սկզբանակ չը կար եւրոպական պետութիւնների կոնցերտ, կար քըրիստոնէութիւն, որի անունով նւրուպան զնում էր մահմեդական գազանութիւնների գէմ։

«Մարաշից մէկ ու կէս իջևան հեռու, համարեա անմատչելի լեռների լարիւրինթոսում, գտնուում է Զէլթունը որ յաւիտեան փառաւոր կը մնայ հայ տարեգրութիւնների մէջ. հոդի այդ կտորի պատմութիւնը — անբնդառ հերոսական կախի է իսլամի գէմ։

«1895 թուի հոկտեմբերի 24-ին Զէլթունի շրջանի ապստամբուած հայերը բարձրացրին ազատութեան զրօշակը. Ծոկտեմբերի 29-ին հայերը գրաւեցին թրքական զօրանոցը Զէլթունում, ուր 700 հոգուց բազկացած մի զօրաբաժին կար։ Զէլթունի շորջը, մօտիկ և հեռաւոր շրջականերում, բորբոքուեց պատերազմը։

«Մահմեդական ազգաբնակութեան օգնութիւն հասան կանոնաւոր զօրքերը և սկեցին կողուպտել ու կո-

տորել հայերին առանց գաւանութեան խտրութեան։ Կանոնաւոր զօրքերը, Մազար-բէշի հրամանստարութեամբ, սպանեցին, ի միջի այլոց, հայր Սալվատորին, պահանջելով նրանից՝ մահմեղականութիւն ընդունել Ֆուլնուզում թիւրքերը, օգոստ քաղելով տղամարդկանց բացակարութիւնից, որոնք շնացիլ էին պատերազմի, բռնեցին հարիւրաւոր կանանց, ոմանց բռնաբարելով և ոմանց սպանելով։ Զէլթունի կանալք լուր առնելով ալդ ոռոկալի դէպքի մասին, բարձակուեցան գերի զինուորների վրայ և դանակներով 400 մահմեղական մորթեցին։

Զէլթունի պաշարումը տեսց գեկուեմբերի 14-ից մինչեւ լունուարի 5-ը. նա զադարեց միայն այն ժամանակի, երբ միջամտեցին եւրոպական պետութիւնները։ Զը պէտք է մոռանալ, որ Զէլթունի պաշտպանները ընդամենը 6000 հոգի էին. մինչդեռ պաշարողների թիւը հասնում էր 60,000-ի, այդ թում և 25,000 կանոնաւոր զօրք։ Զէլթունի անունը մինչեւ ալժմ էլ ահ է ազդում մահմեղականներին։ Մեր բարեկաններից մէկը, որ ճանապարհորդել էր Մարաշից Հալէպ, հանդիպել է ճանապարհին նորակոչ արար զինուորների, որոնք հարցնում էին ճանապարհորդներին — արդեօք դեռ չէ՞ շարունակում կրիւը Զէլթունի մօս, նրանք ասում էին որ եթէ կախու շարունակուելիս լինի, իրանք պիտի փախչեն։

Այնուհետև հեղինակը քննում է այն հարցը, թէ ո՞վքեր էին կոտրածների պատճառը։ Հայերը թիւրքերին են մեղալրում, թիւրքերը՝ հայերին։ Բայց այսպիսի վէճերի տեղիք չը կայ։ Այն ազատական շարժումը, որ սկսուեց Բալկաննեան թերակղզում, չէր կարող սահմանափակուած մնալ այդ տեղում, չանցնել Ասիական թիւրքիա։ Անկառկած է, որ ժամանակակից գաղա-

փարների ոգին տարածուեց և հայ ազգի մէջ ու ներշնչեց նրան միտք, պահանջել հաւասար իրաւունքներ և սօցիալական աւելի լաւ պայմաններ՝ գոլութիւն պահպանելու համար։ Նատ ենթաղրութիւններ կալին, շատ ծրագիրներ և լոյսեր էին ոգեսում հայերին։ Ալստեղ կարելի է չիշատակել այն ֆանտաստիկական ծրագիրը, որին նայած՝ Հայաստանի գլխաւոր օգնականները պիտի լինէին անգլիացիները, որոնք, նրանց պայտում գտնուող հայկական կօմիտէտների աջակցութեամբ լեզավուսութիւն կը պատրաստէին Հայաստանում։ Զէնքերը անգլիացիները պիտի հասցնէին Ալեքսանդրէտի վրայով։ Ընտրուած էր Սուլիալէ անունով փոքրիկ ծովափնեալ նաւահանդիսուը, Ալեքսանդրէտից դէպի հարաւ, որ կենտրոն պիտի գտնապրադրութիւն էր զէնքերի առաջին կարաւանը։ Ալպտամուած հայերի լենակէտ ընտրուած էր Կաստար գիւղը։ Կազիուս սարի ստորոտում, ինչպէս ծովի հետ յարմար հազորդակցութիւն ունեցող մի տեղ, նոյնափոխ մի տեղ էլ, փոքր Հայաստանի կենտրոնի հետ հազորդակցութիւն պահպանելու համար, ընտրուած էր Զօխ-Մարցիման գիւղը, որ յարմար է Զէլթունի, Ֆուրնուափի, Հաջինի, Սիսի և Մարաշի հետ հազորդակցութիւն պահպանելու համար։ Այսպիսով ենթաղրում էր միանգամից ոոքի կանգնեցնել Կիլիկիայի ամրող հայ ազգաբնակութիւնը։

Քայց հեղինակը ցնորական է համարում այս ծրագիրը, որովհետեւ հայերը ցրուած են ապրում, շրջապատուած մահմեղական ազգաբնակութեամբ։ Կայ և այն, որ բացի կտրիճ զէլթունցիներից, հայերը, մանաւանդ քաղաքներում ապլուները թույլ են և վախկու։

Կային, ասում է հեղինակը, և աւելի զգուշ հայեր, որոնք առա-

ջարկում էին փող հաւաքել և փողով գնել պիլիկիայի այն ազատ հողերը, որ ծախում էին թիւրքերի ձեռքով. այդպիսով Խուրինեան Նախին թագաւորութեան մէջ կը ստեղծուէր մի կենտրոն Զերնօգօրիայի նման:

Յամենայն դէպս, հայկական հարցը մի խոր վէրք է, որ լափում է թիւրք պետութիւնը և կարող է նորից ծագել սուրճնով Նթէ թիւրքիայում այրող հարցերը չը կարդարութեան ոյժերի օգնութեամբ, դիպլօմատիան, յամենայն դէպս, պիտի իրագործէ դեսպանների ծրագրած այն րէֆօրմները, որոնք մշակուած են հայկական հինգ վիլայէթների համար: Աւա՛զ, սուլթանը համաձայնութիւն տուեց գեւպանների Ներկալացրած այդ ծրագրին, բայց դրանից մի շաբաթ անցած սկսուեց հայկական կոստրածների սոոկալի օրդիկան Ներոպայի և նրա դեսպանների աչքի առաջ, 1896 թուի հոկտեմբերին Գրանսիական դեսպան Կամբօն հաւաստիացրեց, որ ոչ մի րէֆօրմ չէ էլ սկըսուած. Նոյն այդ ժամանակ անդիական կառավարութիւնը դիմեց Գրանսիականին, առաջարկելով պահանջել թիւրքաց կառավարութիւնից խոստացած րէֆօրմների իրագործումը, բայց դժբախտաբար, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Հանօտո պատասխանեց թէ Գրանսիան թիւրքաց կայսրութեան անձեռնմխելութեան կողմն է և հակառակ է որ և է պետութեան թէ հաւաքական և թէ առանձնական միջամտութեան: - Հանօտօիք այդ պատասխանից յետոյ դիպլօմատիական շրջաններում հալոց հարցը մատնուեց մեռելային լուութեան»...

Այսուհետեւ հեղինակը զատողութիւններ է անում թէ ինչպէս կարելի է լուծել հայկական հարցը, այսինքն ինչ միջոցներով կարելի է այնպէս անել, որ հայ ազգը չը տանչուի, գանէ հանդատութիւնն Հայերի

ընդհանուր թիւը նա ընդունում է 3,093,779 հոգի: Այդ թուից՝ Ասիական Թիւրքիայում 1,333,779, Եւրոպական Թիւրքիայում 250,000, Խուսաց Հայաստանում, Կովկասում և Խուսաստանում 1,500,000, Պարսից Հայաստանում 150,000, միտ Երկիրներում (Հնդկաստանում Ամերիկա և ալլն) 60,000: Ընդհանուր թուից պէտք է հանել 1895—1896 թուականների գազանութիւնների զոհերին — 300,000 սպանուած, հիանգութիւններից և աղքասութիւնից մեռած և բռնի մահմեղական դարձրած: Ասիական Թիւրքիայում ապրող հայերի թիւը պէտք է ընդունել 1,930,586 հոգի: Պ. Կօնտանսօն Երկար խօսում է և մահմեղական աղքաբնակութեան, զանազան ցեղերի մասին:

#### «Կավազսկի Եղետնիկ», № 10.

Հոկտեմբերի: Ամսագրի այս համարում կան հալոց կեանքին և գրականութեան վերաբերուած մի քառանի լոգուածներ, որոնց մէջ յիշատակում ենք Վիկտոր Լանգլուայի գրութիւնը՝ Վենետիկի Միիթարեան վանքի և միաբանութեան մասին, որ թարգմանուած Գրանսից և այս գրքում գեռ չէ վերացած: Խոանձին լաւելուածի մէջ տպուած է պ. Կ. Եղեանի մի նոր աշխատութիւնը — Եջմիածնի կաթողիկոսական գահի ոռուաց կառավարութեան հետ ունեցած լարսերութիւնների սկիզբը: Այդ սկիզբը մօտ լիտուն տարուայ մի պատմաթիւն է, XVIII տարի Երկրորդ կեսից սկսած մինչև այն ժամանակ, երբ ուսաց տիրապետութիւնը հաստատուեց Անդրկովկասում և վերջանում է Յովսէփի կաթողիկոս Արդութեանի մահով: Նոր բան պ. Եղեանի ալս աշխատութեան մէջ շատ քիչ կայ: Եղլոր աղբիւրները, որոնցից նա կազմել է այդ համառու տեսութիւնը, յայտնի են և

մատչելի նոյն իսկ և ոչ մասնագէտին։ Դրամածքը տեղենցիօդ բնաւորութիւն ունի։ Եշխառելով բարձրացնել էջմիածնի նշանակութիւնը, պ. Եղեան այն աստիճան անտես է անում պատմական ճշմարտութիւնը, որ Գանձասարի կաթողիկոսների մասին ասում է. «Ծառուելով էջմիածնի կաթողիկոսութեան ճնշուած դրութիւնից, հայ երարխիալի մի քանի փառասէր ներկայացուցիչներ ճգում էին կազմել եկեղեցական անկախ կենդրոններ, տեխականացնելով կաթողիկոսի տիտղոս Ալապիսի ճանապարհով առաջ եկան և Գանձասարի կաթողիկոսները Պարսկաստանում, որոնք գոյութիւն պահանջին մինչև Ղարաբաղի խառնութիւնը Ռուսաստանին միացնելը»։ Մինչեռ Գանձասարի կաթողիկոսներն էլ անուանում էին Աղուանից կաթողիկոսներ, իսկ Աղուանից կաթողիկոսութիւնը քրիստոնէութեան սկզբից անկախ աթոռ էր—նոյն իսկ էջմիածնի կաթողիկոսներն էլ Գանձասարի աթոռը ճանաչում էին Աղուանից կաթողիկոսները, իսկ Աղուանից կաթողիկոսութիւնը քրիստոնէութեան աթոռ։

Въстникъ Иностранной Лите-ратуры, հոկտեմբеръ: XVIII դարի սկզբում Գարիմի Բաստիլ բանտում վախճանուեց մի կալանաւոր, որի դէքը ամբողջ ժամանակ ծածկուած էր երկաթէ դիմակի տակ։ Ով էր այդ խորհրդաւոր մարդը—Ոչ ոք չը գիտէր, նա Բաստիլ բերուեց 1698 թուին և այցուել էլ մեռաւ հինգ տարուց լետոր Ոչ ոք չը տեսաւ նրա դէքը, ոչ ոք չը լսեց նրա խօսքը, Բանտի պատերը այդ գաղտնիքը պինդ էին պահում իրանց մէջ։ Բայց դրսեցիների հետաքրքրութիւնը շատ զրգուեց այդ երկաթէ դիմակը։ Շատերը փորձեցին իմանալ թէ ով էր անյալու կալանաւորը։ Եւ սուեդուեցին բազմաթիւ պատմութիւններու Ալդ պատմութիւններից մէկն էլ դրեց ոմն

կավալէր դը-ծոլէս, Վօլուէրի բարեկամը նա ապացուցանում էր որ երկաթէ դիմակով մարդը հայոց պատրիարք Աւետիքն էր։ Բոլոր հանգամանքները այդ Էնթագրութեան կողմն էին։ Եւ Աւետիքի անձնաւորութիւնը աւելի ևս հետաքրքրական դարձաւ Սկուցին քրիստու արիւները՝ հայոց պատրիարքի պատմութիւնը պարզելու համար։ Թէև Տօւէսի ենթագրութիւնը սխալ դուրս եկաւ, թէև պաշտօնական տեղեկութիւնները հաստատեցին որ այն ժամանակ, երբ երկաթէ դիմակով մարդը մեռաւ Բաստիլում, Աւետիքը դեռ պատրիարք էր Կ. Պօլում, բայց և այնպէս, բոնութեան զոհ դարձած այդ եկեղեցականի պատմութիւնը կապուած մնաց երկաթէ դիմակի պատմութեան հետ։ Առա ամսագիրն էլ մի լոգուածում տալիս է երկաթէ դիմակի պատմութիւնը, հետեւաբար պատմում է և Աւետիքի կեանքը։

Ինչպէս յայտնի է, 1706 թուականին Կ. Պօլսի հայոց Աւետիք պատրիարքը, պաշտօնանկ լինելով ուղարկուեց աքսոր։ Ճանապարհին նա մի անլուր բռնութեան զոհ դարձաւ։ Քիոս կզզում, ափ իշնելիս, նա յափշտակուեց Գրանսիական զեսպան Ֆէրիոլի մարդկանց ձեռքով, մտցրուեց յատկապէս վարձուած մի նախ մէջ և ուղարկուեց Մարսէլլ Ալդտեղից նրան տեղափոխեցին Ֆրանսիայի հիւսիսային ափերի մօտ զոնուող մի ամայի, Ժայռու կզզի, ուր մի վանք կար։ Բայց Գրանսիական կասավարութիւնը այդքանն էլ բաւական չը համարեց։ Աւելի մեծ ապահովութեան համար Աւետիքը փոխագրուեց Բաստիլի բանտը։ Ելդտեղ նրան առաջարկուեց ապատութիւնն, եթէ նա դաւանափոխ կը լինի։ Տերունի, տանջուած, հիւսնդու հայ եպիսկոպոսը ստիպուած եղաւ կաթոլիկութիւն ընդունել և դուրս գալով բանտից, մեռաւ Պա-

րիգում 1711 թուականի լուլիսի  
21-ին:

Խոհջն էր Աւետիքի յանցանքը  
և ինչո՞ւ արդքան զգուշութիւններ  
էին բանեցնում նրա վերաբեր-  
մամբ:

Աւետիքի պատմութիւնը յայտնի  
է մեր ընթերցողներին՝ „Սուրճի“  
ալս տպուայ առաջին համարնե-  
րից: Նրան վիճակուած էր աւելի և  
սուր կերպարանք տալ այն կուր-  
ներին և վէճերին, որոնք սկսուած  
էին Կ. Պօլսում, լուսատրչական և  
կաթոլիկ հայերի մէջ: Կ. Պօլսում  
բոյն գրած եղուիտները աշխատում  
էին, կաթոլիկական պրոպագանդայի  
աջողութեան համար, սատկացնել  
խռովութիւնները, թոյլ չը տալ կա-  
թոլիկ հայերին որ Նրանք մօտենան  
իրանց ազգակից հայերին: Ֆրանսի-  
ական գեսապան Ֆէրիոլ, մի ար-  
կածախնդիր և կոռաւասէր մարդ,  
գործիք գարձաւ եղուիտների ձեռ-  
քին և աշխատում էր տապալել Ա-  
ւետիքի պատրիարքին: Խական Աւե-  
տիքն էլ, ին կողմն ունենալով իր  
ժողովրդի համակրութիւնը և թիւրք  
շէլիսուլիսամի բարեկամութիւնը,  
համարձակ կուռամ էր իր հակառա-  
կորդների դէմ և հալածում էր հայ  
կաթոլիկներին: Թէ ինչ չափերի  
էր հասել այդ կրօնական երկպա-  
ռակութիւնը, երեւում է հէնց նրա-  
նից, որ լուսատրչական հայերը,  
թիւրք իշխանաւորներին կաշառելու  
և նրանց միջոցով կաթոլիկներին  
դիմադրելու համար, հաւաքիցին ի-  
րանց մէջ 200 հազար ոռորդու մի  
գումար: Վերջի վերջու Ֆէրիոլ զի-  
մեց վայրենի և զգուելի միջոցի:  
Նա, ինչպէս ասացինք, զողանալ  
տուեց հայոց պատրիարքին և ու-  
ղարկեց Ֆրանսիա: Հայերը, ի հար-  
կէ, իրար անցան և դիմեցին թիւրք  
կառավարութեան, խնդրելով ար-  
դարագատութիւն: Կառավարու-  
թիւնը ոչինչ չը կարողացաւ իմա-  
նալ դեսպան Ֆէրիոլից: Նա թագ-

յնում էր, բաւականանում էր ասե-  
լով թէ ոչինչ չը գիտէ: Ֆրանսիա-  
կան կառավարութիւնը ալդ միջոց-  
ներում բարեկամական յարաբերու-  
թիւններ էր պահպանում Թիւրքիայի  
հետ: Ես որովհետեւ Ֆէրիոլի վայրենի  
արարքը կարող էր սառնութիւն  
մողնել ալդ յարաբերութիւնների  
մէջ, ուստի նա աշխատում էր ցոյց  
տալ թէ ինքն էլ ոչինչ չը գիտէ  
Աւետիքի մասին և այդ պատճառով  
էլ այնքան մեծ զգուշութիւններով  
էր պահպանում անմեղ կալանաւոր  
Աւետիքին:

Պէտք է ասելու ուստի ամսագրի  
յօդուածը նորութիւն չէ մեզ հա-  
մար: Աւետիքի պատմութիւնը, որ  
գրել է Մարիուա Տօրէն, թարգ-  
մանուած է և տպուած Կ. Պօլսում  
գեռ 1870 թուականին:

„Միք Եօջլ“, սեպտեմբերի:  
Դրեմ առանձին յաելուած, տպագր-  
ում է ֆրանսիացի պլոֆէսօր Եղու-  
արդ Դրիօի Շնկուպալի պատմութիւն  
XIX դարի վերջում: Հեղինակը  
խօսում է ժամանակակից անցքերի  
մասին: Բերում ենք այն կոորը, որ  
վերաբերում է հայոց հարցին.

«Հայերը, ինչպէս մեզ թում է,  
արդէն բաւականաչափ քաել են  
իրանց այն մեղքը, որ քրիստոնեալ  
են մասցել մահմեդական զիշատիչ-  
ների մէջ՝ Քրդերը, նրանց հարե-  
ւանները, կանոնաւոր կերպով խլում  
են նրանց հունձը, այրում են նրանց  
աները, կտոր-կտոր են անում նը-  
րանց երեխաններին, բռնաբարում  
են նրանց կանանց և սպանում են,  
եթէ ալս բանը նրանց դուր է զա-  
լիս Հայաստանը, այսպիսով, սուլ-  
թանը տուել է իր հաւատարիմ  
Քրդերին՝ զուարճութեան համար:  
Քրիստոնեալ մեծ պետութիւնները  
հարկադրուած էին շատ անգամ հայ-  
երի պաշտպան հանդիսանալ և  
յաճախ պահանջում էին սուլթանից  
պաշտօնական խոստում, թէ նա

վերջ կը դնէ իրերի այսպիսի դրութեանն։ Սուլթանը խոստանում էր կառարիլ այն ամենը, ինչ նրանից սրահանջում էր և, ի հարկե, ոչինչ չէր անում։

Յոյս զնելով Խորոպայի պաշտպանութեան վրայ և ուժաւագող դրանուղիվ նոր զարթեած մահմետական փանատիկոսութեան տանձանքներից, հայերը փորձեցին պաշտպանուել և մի քանի րաւ զուսիր տուին քրդերին։ Ելն ժամանակ սուլթանը գրվերի օդուութեան ուղարկեց կանոնաւոր զօրքեր, որպէս զի կարգ պահպանուի և Հայաստանը ամբողջութին ողազուեց արինուով և կրակով։ Այս նողկալի խմբական կոտորածները շարունակուեցին 1894-ից մինչև 1896 թուականը ընդամենը մօտ 150,000 զոհեր եղան, կամ, ուրիշ ազրիներին նայելով, նոյն իսկ 300,000, չը հաշուելով նրանց, որոնք մնուան ոսպից այդ քարուքանդ արած երկրում։ Այս բոլոր սարսափիները ամենաամօթալի սկանզալ էին XIX դարի վերջում։ Յայց Խորոպան ի՞նչ վճռեց ձեռք առնել այդ ժամանակի Խորոպին ոչինչ։ Կառավարութիւնները յամառութեամբ լռում էին առելի քան երկու տարի, առելի հանդիսաւոր կերպով յատարաբելով, քան երբ և իցէ, Օսմաննեան պատութեան անրաժանիլութեան սկզբունքը ժիշտ է, կատարուեց քննութիւն, կազմակերպուեցին միջազգային լանձնադուղմները և Երրորդական պետութիւնների գեուստնները բասականաշափ պաշտօնական առաջադրութիւններից պարին թ. Դռան և նոյն իսկ բաւական պարզ կերպով կերպեց վերանորոգել այդպիսի մի յօդուած։

բանները, ի հարկէ, չափազանց շնորհազարա կը լինեն երազական մինիատրներին), բայց յանցաւորները և մասնաւորապէս ինքը, սուլթանը, չը պատժուեցին։

«Ծառ զէպքում եւրոպական կոռավարութիւնները հետեւում էին և մի ուրիշ սկզբունքի, այն է—չը խառնուել Օսմաննեան պիտութեան նահանգների ներքին կառավարութեան մէջ։

«Ապահովթիւնները, այսովիսով, դասուեցան ներքին կառավարութեան հարցերի մէջ, ուստի և նրանց առաջն առնելը եւրոպական պետութիւնների մրցակցավթիւնից դուրս էր նրանք նոյն իսկ չը պահանջեցին որ պահպանուեն այն իսկ դաշնադրութիւնները, որոնց տակ դըրսուած են նրանց ներկայացուցիչների ստորագրութիւնները։ Այսպէս ներքինի զաշնադրութեան 61 յօդուածով պետութիւնները իրանք պարտաւորուել են հետեւ բարենորոգումների իրազործման։ Յայց մինչև այժմ, զոյնէ այն բոպէին, երբ եւ զրում եմ, հայկական հարաւը դեռ էլի բաց է մնում։ Կոսովանիները, ճիշտ է, դատարեցրած են՝ զոյնէ դրանց մասին այլ ևս չեն խօսում, բայց հայերը այնպէս էլ չը կարողացան լուրջ ապահովութիւններ և որ և է բէֆօրմ ձեռք բերել։ Ենրիխի զաշնադրութեան 61 յօդուածը մնում է մեռած տառ և նրանց ստորագրած պետութիւնների վրայ ծանրացած է այն լանցանքը, որ նրանք թուլ տուին կատարել Յայտնի է նոյն իսկ, որ նրանք ոչ մի զէպքում չէին համաձայնուի նորից վերանորոգել այդպիսի մի յօդուած։

Անտէառ պատմութիւնն է մնում նահատակների միակ սպաշտպանը։

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ \*)

«Մուրճն-ի համար պատրաստելով մի համառօտ տեսութիւն «Սալմաստի հայերի ներկայ վիճակի» մասին, մենք յաւակնութիւն չենք ունեցել կարծելու որ մեր յօդուածը մի աշնավիսի նիւթի մասին, որպիսին մեր ընտրածն է, թերութիւններից զուրկ կը լինի: Այս աշակէս խոստովանելոց յետով, ստիպուած ենք խոստովանել և այն, որ մենք չենք սպասում լսել այնպիսի անբովանդակ և չարամիտ քննադատութիւն մեր յօդուածի մասին, որպիսին մենք առիթ ունեցանք կարդալու «Ճարագա շարաթաթերթի Հ 26-ում:

Յիշեալ թերթում ոմն Սո. գեռ մեր յօդուածի հազիւ թէ կէս մասը կարդացած, շտապել է ի լուր «Ճարագի» ընթերցողների բացականչել և յայտաբարել՝ «Պարոնի յօդուածի ո՞ր երեսից սկսենք, ո՞րտեղից օրինակներ բերենք, քանի որ և ոչ մի նախադատութիւն ճշտութիւններ չի արտայալում»:

Ինչպէս տեսնում էք, մեր պ. քննադատը չի ընդունում «որ գոնէ մի ճիշտ նախադատութիւն կարող է դանուել մեր յօդուածի մէջ»: Այս թէ ինչպիսի փաստերով է հաստատում նա իր ճարտասանական ոճով յախարած ճշտութիւնները:

Մեր յօդուածում փոխանակ «Երկաթագործ»-ի ապուել է «Երկրագործ» դաստիարական սիման է և ուղղաւել է «Մուրճի» յաջորդ համարում: Մեր քննադատը առիթից օգոստելով սկսել է ինքնազո՞հ սրովիօսութիւններ անել:

Այսինքն անելու առիթը ձեռքից չը փախցնելու համար պարոնը մեր հետեւալ խօսքերից՝ «Աւրմիոյ լճակի ափերը մօտ 5 կիրստուչափ բարձրանում են», դուրս է բերում իրակ թէ մենք տաել ենք՝ Աւրմիոյ լճակի ջուրը 5 վերտառաչափ սոզզահայեաց վեր է բարձրացել:

Քայլ պ. քննադատը չի բաւականանում միայն ալդ սրախօսութիւններով:

Մեր յօդուածում տաել ենք թէ քրիստոնեաները իրբե ոչ ուղղա-

\*) Մեր խմբագրութիւնը նոյն հարցի մասին ստացել է, և սարմատեցի պ. Զ.ք. Մհ.-Ղազարեանի շատ աւելի խիստ ոճով գրած պատասխանը «Ճարագի» քննադատի դէմ: Պ. Զ. Մհ.-Ղազարեանը հաստատում է պ. Դարբինեանի ասածները: Աւելորդ ենք համարում երկար կանոն առնել Սու. -ի «քննադատութեան» վրայ, ուստի չենք տպում պ. Զ. Պ. Ղ. -ի նամակը:

փառներ իրաւոնք չունենալով հարկաւոր եղած դէպքում ել ու մուտք գործել պարսիկ պաշտօնեաների մօմ՝ խնդրեցին կառավարութիւնից որ իրանց համար քրիստոնեայ կառավարիչ նշանակուի Քրիստոնեաների խնդիրը կառարաւոց և այլն \*), Պ. Քննադառ բացականչում է՝ ժն՛չ երանելի բաներ կան Ստումաստում և ամբողջ հայ ազգը զրանց մասին և ոչ մի տեղեկութիւն չունի: Կիլիկիայում Զէլթունցիք այնքան տանջանք-ների հնթարկուելոց յատոց, հազիր քրիստոնեայ կառավարիչ ունենալու արժանացուն, այնինչ հայոց ազգին անյայտ է որ սալմաստեցի հայը մի խնդրագրով այդ բախտին է արժանացել...»: Պ. Քննադառ, եթէ մեր խօսքը սխալ է, եթէ քրիստոնեաների խնդիրը չի լարգուել, եթէ Սալմաստի նախկին սարփարաստները քրիստոնեայ չեն եղել, զուք պարտաւոր էք փաստերով ապացուցանել, բայց զուք այդ չէք արել և դրա փոխարէն բացականչութիւններով համեմատում էք Սալմաստը Զէլթունի հետ:

Մենք ասել էինք որ Աստրապատականի առաջնորդները իրանց երբեմնակի բողոքներով կարողանում են պաշտօնանել իրանց հօտը պարսիկ պաշտօնեաների ուննձգութիւններից և իրքն ապացուց մենք լիշել էինք սրբ. Սյվատեանի անունը, ասելով թէ նա մի տարում պաշտօնանկ արաւ երեք սարփարաստի: Մենք այդ փաստը բառկապէս լիշել էինք, որովհետև այդ ժամանակ մենք Սալմաստում էինք, երբ սրբ. Սյվատեանը Սալմաստի գործակալ քահանափի միջնորդ և իր անձամբ հաւաքած տեղեկութիւնների հիման վրաց բողոքելով ուր որ հարկն էր, պաշտօնանկ անել տուաւ Միրզա-Հիւաէին Խան, չէշմէթ և Միրզա-Ալի-Խան սարփարաստներին:

Մեր պ. Խո. Կրկին փոխանակ փաստերով մեր սխալը ուզդելով բացականչում է. ժն՛չի՞ էք խեղաթիւրում փաստերը, ե՞րբ են պարսիկ կառավարողները առաջնորդին մտիկ տուել և մի սարուայ մէջ նրան հաճուանալու համար, երեք սարփարաստ էն պաշտօնանկ արել:

Պ. Խո. Դուք ասացէք, անմտութիւն չէ ձեր այդ հարց տալը: Մենք արդէն թէ առաջնորդի անունը լիշել ենք մեր յօդուածում և թէ ժամանակն յայտնի է: Ձեր այդ հարցը անտեղի չէ: Բայց աւելի տարօրինակ է պարոնի հետեւել հարցը՝ «մ' առաջնորդը կարողացել է պաշտպան կանգնել յողովրդին և ստիպել վարչութեան գալիքի առամմերը վշշելու: Ով զիտէ, զուցէ պ. Խո. ձեր սկզբունքը պահանջում է ամեն տեղ հաւատացնել, որ Աստրապատականի առաջնորդներից և ոչ մէկը չի կարողացել իր հօտին պաշտպան հանդիսանալ, բայց ասացէք խնդրեմ, մի՞թէ մենք կարող ենք ի սէր ձեր սկզբունքի իրողութիւնը խեղաթիւրել: Փոխանակ ձեր այդ հարցը մեզ տալու, յա չէ՞ր լինի արդեօք, որ թարիղցիներից հարցնէիք—ինչո՞ւ Միրթարեան հավիսկուպոսի տապանաքարի վրաց արձանապըլ էք «Պաշտպան պարսկահայերից խօսքելը, կամ թէ ինչո՞ւ տառանորդի ընտրութեան համար զուր տեղ այդքան աղմուկ էք հանում, քանի որ Աստրապատականի առաջնորդները իրանց զիխաւոր պարտականութիւնը կատարելու անկարող են:

Մեր յօդուածում ասուած է «Յորենի բերքը ջրարբի մասերում տալիս է մէկին 8—10, դէմերում (լեռնացին անջրտի մասերում) մէկին 15—20 և էլ աւելի»:

\*) Այս տողերը գրելիս ձեռքի տակ չունենալով մեր յօդուածը, բառականանում ենք պ. Խո. յօդուածում բերուած մեր յօդուածի կտորներով և մեր լիշողութեամբ:

Պարոնը էլի չի հաւատում մեր խօսքին և էլի բացականչում է զրականապէս՝ ռթալտնի բան է, ամեն մի ընթերցող կարող է բացականչել. «Ա՛յ յիմար սալմաստեցիներ, էլ ինչի՞ էք ջրում արտերը: Խնչո՞ւ այդքան նեղութիւն քաշելով առու էք փորում և ջորը բարձրացնում հանդերը, քանի որ անջրդի արտերից կարող էք կրկնակի, եռապատիկ աւել բերք ստանալ, առանց այնքան տաժանների աշխատանքի և դրամագլուխ փշացնելու»:

Որ մեր խօսքերի մէջ չը կատ ամենաաշնչին չափազանցութիւն, որ Սալմաստի լեռնալին մասերում հացահատիկի բերքը կրկին անզամ արդիւնաւոր է քան դաշտացին մասերում, զա գիտէ ամեն մի սալմաստեցի, իսկ պ. Առ այդ չը գիտէ, այնուամենանիւ չի քաշում մի տարօրինակ միտք յայտնելու նրա խորհրդով, պէտք է օր. Հաւթուան, Սարա, Դրլիման, Փայաջուկ, Ղալասար, Ղզլա, Եխտախանա ևալն ևալն գիտերի բնակիչները, որոնք զուրկ են դէմերից և որոնց արտերը բոլորն էլ ջրարդի են, ալլես չը ջրեն իրանց արտերը, որպէս զի պ. Առ. և նրա հետ համաձայնող ընթերցողների կողմից ցիմար» չը կոչուեն:

Խնչ էք ուզում ասել պ. քննադատ. եթէ Սալմաստի դէմերում ցորենի բերքը ամելի լաւ է քան դաշտացին մասերում, ուրեմն սալմաստեցիք էլ դաշտացին մասերը չը մշակեն:

Բայց Պարոնի քննադատութեան ո՞ր մէկ կէտը յիշենք, կարծում ենք սա էլ բաւական է երկու ասակ տակ մտած մեր ճարտասանի քննադատական ոլժն ու ոգին ճանաչելու և միամիտ ընթերցողներին մոլորութիւնից ազատելու համար:

Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆ

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ե Ր

Բարձրավանի. Դ. 8.-Դ. — Ճիշտ են ձեր դիտողութիւնները, սակայն ի՞նչ օ  
դուտ, որ զբանց վրայ ոչինչ չի ազդում:

Մեւեկէսէր. Ա. 9.—Զրի չի ուղարկում: Գրուածքը անլարմար է:

Ռիզո. 2. Դ. — Կիւթը հնացած է:

Ժրմիւ. Միք. 3.—Անկարող եղանք ուղել:

Պարփակ. Գր. վ. — Սաացանք ձեր լողուածը բնգունում ենք ձեր առաջարկը:

Խմբագիր-հրատարակիչ՝ Կ. ԿՐԱՍԻՆԻԿԵՍՆ

Վ Բ Ի Պ Ա Կ Ն Ե Ր

«Մուրճի» սեպտեմբերի համարում մտել է ի միջի այլոց  
հետեւեալ վրիպակը.

Երես Տաղ Տաղուած և Պետք կ լինի  
218 16 Օուսաստանի Վրաստանը Օուսաստանի հետ

ՀԵԽՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Հ Ե Խ Ո Ն 8 Ա Կ

(Հրապարակախօսական խոհեր)

ԳԻՆՆ Է ՅՕ ԿՈՊԵԿ

Ծախւում է Թիֆլիսում «Մուրճի» խմբագրատանը:  
Օտարաքաղաքացիները դիմում են. Տիֆլիս, Կենտրալ-  
նայ Կույանա Տորգովլա.

**ՄԱՅՐԵՆԻ ԽՈՍՔ**

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԶԵՌՆԱՐԿ

Կրսուեր դասարանների համար

Համառոտ բառգրքով:

Կազմեցին

Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆ և Լ. ՍԱՐԳՍԵԱՆ

Գինն է 70 ԿՈՊ.

Դիմել՝ Թիֆլիս, Կենտրոնական և «Գուտտենբերգ»  
գրավաճառանոցները:

«Մուրճի» խմբագրատանը, «Թիֆլիսի Կենտրոնական» և  
«Գուտտենբենբերգ» գրավաճառանոցներում ծախւում է  
Խօզէ Էջեգարայի՝

**„Մ Ա Ր Ե Ա Ն Ա“**

գրաման, թարգ. Արսեն Կրասիլնիկեանի:

Գինն է 1 ՌՈՒԲԼԻ

Հրատարակութեան վաճառման արդիւնքը յատկացուած է  
«Եղբայրական օգնութեան»:

3—3

Լ Ե Օ**ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ**

Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում

**Հատուր առաջին: — XVI — XVII դար**

**Գին է 1 թիվի 50 կղեկ**

Մայսւում է Թիֆլիսում, «Մշակ» խթագրուտանը:

**Պատրաքաղաքացիները դիմում են. Տիֆլիս, բակալավրական 5—2**

Ա. ԾԱ. ՑՈՒՐԵԱՆ

**ԳՐՉԻ ՀԱՆԱՔՆԵՐ**

տօխատութիւնը:

Գրքի երեսը զարդարուած է նկարիչ վ. Առուրէնեանցի նկարով:

**Գին է 50 կղեկ**

Դիմում հեղինակին՝ Մոսկայ-Կարետնա, մեծ.  
կոմ. Խոսալյսկаго, Ալ. Պատուանու. 3—3

ՆՈՐ ԲԱՑՈՒԱԾ

**„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“**

**ԳՐԱՎԱՀԱՅԱՆԱԳՐԻ**

Վաճառուում են ամեն տեսակ գրքեր, պատկերներ, ալբոմներ,  
ատլասներ և այլ տեսակ հրատարակութիւններ: Վենետիկում,  
Վիեննայում, Կ. Պոլսում և Զմիւռնիայում տպուած դրքերից  
ցանկացողներին կարող ենք ուզարկել: Գումարով գնողներին  
զիջումն կը լինի:

Գրավաճառանոցը ընդունում է վաճառելու համար  
գրեւ:

Գրավաճառանոցի հետ գործ ունեցածները պէտք է զիմեն՝

Տիֆլիս, Կույսանութիւն «Գյուտենբերգ», Գալուստ  
Գալուստյան. 3—3

# КОНКУРСЪ

по составленію эскизного проекта народнаго дома имени Константина Яковлевича Зубалова, въ г. Тифлисѣ.

Комитетъ по постройкѣ народнаго дома въ г. Тифлисѣ, состоящій при тифлисскомъ обществѣ трезвости, объявляетъ конкурсъ для всѣхъ желающихъ на составленіе эскизного проекта народнаго дома на слѣдующихъ условіяхъ:

1) Народный домъ предположено построить въ X участкѣ г. Тифлиса, на углу Кирочной и Великоніжеской улицъ, на участкѣ мѣрою 563 квадр. саж. Участокъ безъ накатки, горизонтальный. Ширина участка, безъ тротуаровъ—пять саженъ. Ширина тротуаровъ—два арш. Длина фасадовъ участка: по Кирочной улицѣ—23,82 саж., а по Великоніжеской—23,6 саж. Планъ участка составленъ городскимъ землемѣромъ Ларіоновымъ.

2) Народный домъ долженъ вмѣстить въ себѣ: а) залъ со сценой на 600 человѣкъ: залъ этотъ долженъ служить для сценическихъ представлений, чтеній, а также для танцевальныхъ и дѣтскихъ и т. п. собраний. При сценѣ должны имѣться всѣ необходимыя помѣщенія, связанныя съ сценическими представлениями: уборныя и т. п. Помѣщенія эти могутъ быть расположены и подъ сценой; б) чайную на 200 человѣкъ; в) читальныи залъ на 50 человѣкъ съ отдѣльными помѣщеніями для библіотеки и книжного склада; г) помѣщеніе для сторожей. При проектированіи должно имѣть въ виду расширение зданія въ будущемъ устройствомъ народной столовой съ кухней.

3) На постройку дома ассигновано наследниками К. Я. Зубалова семьдесятъ тысяч рублей.

Фасадъ съ главнымъ входомъ примыкаетъ непосредственно къ улицѣ. Фасадъ по другой улицѣ долженъ отступать на четыре сажени для устройства садика. Между зданиями народнаго дома и границами соседнихъ участковъ должны быть оставлены проѣзды минимальной требуемой стр. установки шириной.

4) За лучшіе проекты наследники К. Я. Зубалова устанавливаютъ двѣ преміи: въ пятьсотъ и триста рублей. Преміи эти будутъ выданы по постановленію особаго жюри въ Тифлисѣ, гдѣ состоится конкурсъ. Въ члены жюри не будутъ входить ни жертвователи, ни члены комитета, и рѣшеніе назначеннаго жюри по присужденію премій будетъ окончательное.

5) Конкурсъ можетъ состояться только по представленіи не менѣе трехъ проектовъ, при чмъ жюри имѣть право признать конкурсъ несостоявшимся, если найдеть представленные проекты неудовлетворяющими требованиямъ, предъявляемымъ къ народнымъ домамъ вообще, или по другимъ причинамъ.

Жюри имѣть право подраздѣлить первую премію на двѣ равныя или неравныя части по своему усмотрѣнію, если изъ представленныхъ проектовъ не пайдетъ достойнаго первой преміи. Составъ жюри будетъ объявленъ по образованію его.

6) Всѣ премированные проекты поступаютъ въ полную собственность комитета. Непремированные проекты могутъ быть приобрѣты комитетомъ по свободному соглашенію послѣдняго съ авторами ихъ, если таковое приобрѣтеніе призвано будетъ желательнымъ комитетомъ.

7) Автору первого премированного проекта, а за отказомъ его—автору второго комитетъ предложитъ разработку окончательнаго проекта по постройкѣ дома съ правомъ пользоваться всѣми премированными проектами, при условіи внесенія въ эскизные проекты всѣхъ измѣненій, какія найдеть нужными комитетъ. Вознагражденіе за этотъ трудъ комитетъ назначаетъ въ размѣрѣ 10/о съ ассигнованныхъ 70,000 руб. Что касается техническаго надзора за производствомъ работы по постройкѣ, то выборъ лица для этого всецѣло зависитъ отъ наследниковъ К. Я. Зубалова, принимающихъ на себя всесцѣло хзяйственную и финансовую сторону осуществленія постройки, съ участіемъ одного члена комитета по выбору послѣдняго.

8) Эскизный проектъ долженъ состоять изъ фасадовъ, плановъ, разрѣзовъ—въ установленномъ масштабѣ, съ пояснительной запиской и краткой сметой.

9) Конкурсъ состоится въ г. Тифлисѣ, при чмъ всѣ проекты должны быть представлены не позже 12 часовъ дня 2 февраля 1902 года на имя члена комитета Георгія Михайловича Туманова по адресу: г. Тифлисъ, Барятинская улица, домъ кн. Туманова.

Всѣ чертежи, записки и сметы должны быть ясно помѣщены девизомъ или знакомъ. Подъ тѣмъ же девизомъ или знакомъ представляется въ нахлухо запечатанномъ конвертѣ—звание, имя, отчество и фамилія автора, а также его подробный адресъ.

10) Преміи выдаются комитетомъ въ двухнедѣльный срокъ со дня объявленіи комитету рѣшенія жюри.

11) Жюри имѣть право пригласить въ свои засѣданія по оцѣнкѣ проектомъ всѣхъ лицъ, коихъ оно найдеть полезными для себя, но безъ права голоса.

12) Желающіе участвовать въ конкурсе могутъ получать копіи плана мѣста и другія свѣдѣнія отъ Георгія Михайловича Туманова.

13) Непремированные проекты возвращаются авторамъ по предъявленіи расписокъ почтовыхъ или выданныхъ комитетомъ, безъ вскрытия конвертовъ. Г. 3—2

- Համապատասխան օրէնքները Հրատարակելով.—Մինչեւ  
այդ, կարելի է օգոստել համաշնքների լայն իրաւոնք-  
ներից, բայց անելով հարկերը համարնքի հայեցաղոթեամբ.  
—Մեր ինտելիգենցիացի գերբ հարկացին խնդրի բարե-  
կարգման գործում, Ա. Զուաւենսի 200
13. ԳԵՂԱՔՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԵՅՑ, Հայոց թատրոն, Լ. Ա. 220
14. ՏՆԱՅՆԱԴՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՄՈՒՄ, Ե. Թ. 224
15. ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆ. Խօսք և զործ, —Ցուցահանդէսի առ-  
ոփթով կայացոծ ժողովներ, —Իրաւուանական օդնու-  
թին ազգարնակութեան, —Փեղարուեառական զարոցի  
նշանակութիւնը, —Բազուի առեւրական զարոցը, —Մեր  
հասարակութեան քնքոչ վերաբերմունքը դէպի կեզծ  
անանկները, —Հազարազակցական միջոցների պակասու-  
թիւնը մեր երկրում, —Հեզուկ վառելիքի անմատչելիու-  
թիւնը մեր գոտուական զործարանների համար, —  
„Ազգային“ շարաթաթերթի խոպանումը, —Բարձրագոյն  
բէսկրիպտ, Անոնի Սարգսեան 238
16. ԳԱԽՈՒԱԿԱՆ ԿԵՍՆՅ. Գեղջկուճին Արարտահան  
գաշտում, Ա. —ԳՕ 246
17. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պաղօլի Վիրիօլի իրքի մարդ-  
կութեան կատարեալ տիպար, —Առօսդիաների նշանա-  
կութիւնը, —Վիրիօլի քաղաքացիական առաքինութիւն-  
ները, —Վիրիօլի մի հակապատկերը, —Միստ Ատօնի ա-  
ռեանդումը իրքի մակեդոնացիների լողոք քաղաքա-  
կիրթ աշխարհի անսարբերութեան դէմ, Լ. Ա. 252
18. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՔՈՒԹԻՒՆՆԵՐ. . . . . 256
19. ՆԱՄՈՒԿ ԿՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ. . . . . 263
20. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. . . . . 266
21. ՅԱԽԵԼՈՒԱԾ. «ՅԱՐՈՒԹԻՒՆ», վէպ Լ. Տօլստօյի, թարգ.  
8. Յովիաննիստանի. . . . . 289—336

ՀԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է 1901 թ. ԲԱԺԱՆՈՐԴՎԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱԿՐ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱՎԱՆ ԵՒ ՔԱՂՈՔԱԿԱՆ

## ԱՐԱԿԱԳԵՒ

Խմբագրութեան անդամներին եղան որպէս լեկտոն ՍԱՐԳՍՅԱՆ, և լիո

ԲԱԺԱՆՈՒԹԻՎԻՑ

Առաջարկությունը տարեկան 30 պար. Աշխատավայր՝ 12 պար.

ԿԵՐ ՄԱՐԻՆ 6 7

" 1 *ամսուան* 1 " "

«Մուրճ» ամսաղբին կարելի է գրուել

## (Գանովսկայա փողոց)

Чајчигурбаші аял сөңгірінің шұларға է қиімділ. Тиғливісъ, въ ре-  
зюме „Марш“.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ** Tiflis. Rédaction de la revue. Mous

BRITISH ORTHOPAEDIC ASSOCIATION

» ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒԹԻՒՆՆԵՐ գետեղելու համար պի

Մի երես բռնող լարտարարութեան համար . 15 ս.

$\frac{1}{2}$        $\rightarrow$        $\eta$        $\rightarrow$        $\pi^+$        $\rightarrow$        $\pi^+$        $\pi^-$        $\pi^+$        $\pi^-$        $\pi^+$        $\pi^-$        $\pi^+$        $\pi^-$

10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45 46 47 48 49 50 51 52 53 54 55 56 57 58 59 60 61 62 63 64 65 66 67 68 69 70 71 72 73 74 75 76 77 78 79 80 81 82 83 84 85 86 87 88 89 90 91 92 93 94 95 96 97 98 99 100

**ԱՊԱՌԻՆ կամ ԶԲԻ ոչ ովի և ուղարկելով պարզ:**

ԵՐԵՎԱԳԵՐԿԻՆ ԿՐԴՈՒՄՆԵՐ

1. Խերաբը թիւնը խնդրում է քողուածագիւներից՝ դրել պարզ, մասնաւոնդ թուերը, չատուել անուններն ու օտարք բառերը, և թերթի միայն մի երեսի դրաւ:

2. Ελληνοποιείναι δε μέτρο γοητείας δύναμης είναι το μεγάλωσις της αρχαίας φύσης, που προστατεύεται από την αρχαία φύση της γης.

3. Գրասենյակի վարձատրութեան շաբաթորում է Կմանակութեան

4. Խմբագլութիւնը իրան է վերասպառում ուղարկուած լողաւածները վստիսելու համ կրծասելու իրաւունքը:

5. „Մուրմի“ համարը չը ստուգելու պէտքում պէտք է խմբագրութեան տեղեկութիւն տալ մինչև լաջորդ համարի լուս տեսնելը։ Այդ տեղեկութեան անհրաժեշտ է կցել տեղական պատասխան դրասենեակի հաւաստափը (վծօտօքերութեան), որ ամսադրի համարը չի լայնանուած զանգատաւարին։